ՎԱՀԱՆ ԱՍՅԱՆԵՑՈՒ

ՀԱՅ ԲԱՐԵԱՎԱՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

938793

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

1102868

ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 2014

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.2 Հ
Կ 280

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոսներ՝
բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լ. Շ. Հովհաննիսյան
բանասիր. գիտ. թեկնածու Ն. Գ. Հովհաննիսյան

Պատասխանատու խմբագիր՝
բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ե. Սարգսյան

Կաւավալյան Վ.
Կ 280 Հայ բարբառագիտության հարցեր/ Վիկտոր Կաւավալյան.-Եր.:
«Հայաստան» հրատ. («Գրական հայրենիք» ՓԲԸ), 2014թ., 232 էջ:

Գրքում զետեղված հոդվածներում քննվում են հայ բարբառագիտության տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք հարցեր: Անդրադարձ է կատարվում բարբառի վերաբերյալ պատկերացումներին, լեզվի գրաւորման այդ եղանակի հիմնական բնութագրերին, դիտարկվում են հայ բարբառների հնչյունաբանական ու ձևաբանական մի շարք հատկանիշներ: Գրքի մաս կազմող «Մեսրոպյան է, ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը» աշխատանքում տրվում է մեսրոպյան է, և գրերի գործառական նկարագիրը, ներկայացվում են այդ տառերի ուղղագրական յուրահատկությունները դրաբարում: Հնչյունահնչույթաբանական վերլուծությունների չնորհիվ և բարբառների նյութի օգտագործումով, բարբառներում դիտարկված օրինաչափությունների հիման վրա հնարավոր է դառնում ճշգրտել այդ տառերի հնչյունական արժեքը բառի տարբեր դիրքերում: Վեր է հանվում է, և գրերի ներկայացած հնչյունական իրողությունների զարգացման հետագա ընթացքը հայերենում:

Գիրքը հասցեագրվում է մասնագետներին, սովորողներին, մանկավարժներին և առհասարակ հայերենագիտությամբ հետաքրքրվողներին:

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.2 Հ

ISBN 978-5540-02359-7

© Կաւավալյան Վիկտոր, 2014թ.:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գրքում ի մի են բերված պարբերականներում և գիտաժողովներում[1] արդեն հրապարակված հոդվածներ ու զեկուցումներ և առանձին լույս տեսած մեկ աշխատություն[2], որոնք, կարծում ենք, ամբողջություն են կազմում թե՛ հեղինակի բարբառագիտական ըմբռնումները ամփոփելու և թե՛ քննարկվող հարցերի փոխկապակցվածության առումներով: Հոդվածների մի մասում քննվում են հայ բարբառագիտության համար արդիական մի շարք տեսական խնդիրներ, մյուս հոդվածներում դիտարկվում են լեզվական առանձին իրողություններ, որոնք վերաբերում են կա՛մ բարբառային հայերենին ընդհանրապես, կա՛մ էլ բարբառների որոշակի խմբի: Բարբառագիտական հարցերի քննությանը նվիրված այս գրքում «Մեսրոպյան է, ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը» աշխատության ընդգրկվելը պայմանավորված է նրանով, որ այն պարունակում է բարբառային հնչյունական իրողությունների վերլուծություններ, և նրանում առավելաբար բարբառների ընձեռած նյութի չնորհիվ և դրանցում գործող օրինաչափությունների բացահայտմամբ ու հաշվառմամբ են կատարվել եզրահանգումներ:

Ներկայացվող նյութը հրատարակության պատրաստելիս ենթարկել ենք անհրաժեշտ մասնակի փոփոխությունների և չակումների:

Հեղինակ

---

[1] Պատմաբանասիրական հանդես, 2007, 3. Լեզու և լեզվաբանություն, 2008, 2. Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, 2008, 1. Ջահուկյանական ընթերցումներ հանրապետական գիտաժողով, 2008. Հայկազյան հայագիտական հանդես (Բեյրութ), 2011. Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան ՊԼՀ-ի, 2012, 2(23). Բանբեր Մատենադարանի, 2012, 19. Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն, 2012,137.2. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով (Երևան), 2013. Հայ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, Իջևան, 2014:

[2] «Մեսրոպյան է,ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը». եր., 2006:

ՄԱՍ 1

ՀԱՑ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Որևէ լեզվի գոյության հիմնական նախապայմանը իբրև կենդանի խոսք նրա գործառությունն է, այսինքն՝ լեզուն կա, գոյություն ունի, եթե գործառում է իբրև որոշակի հանրության հաղորդակցման միջոց, ընդ որում՝ այս առումով ավելի կարևոր է լեզվի՝ բանավոր հաղորդակցման միջոց լինելը: Լեզուն նախ և առաջ դրսևորվում և զարգանում է բանավոր եղանակով, իսկ գրավոր խոսքը ձևավորվում է հետագայում և մշակվելով ու կանոնակարգվելով հիմք է դառնում գրական լեզվի առաջացման: Գրական լեզվի գոյությունը պայմանավորված է հասարակության զարգացման մակարդակով և հասարակական պահանջարկով, մինչդեռ բանավոր խոսքը տվյալ լեզվական հանրության հաղորդակցական պահանջմունքի բնական արտահայտություն է: Բանավոր խոսքը նախ և առաջ դրսևորվում է բարբառների ձևով, որոնք ներկայացնում են լեզվի բնական, անմշակ վիճակը: Բարբառների հիմքի վրա էլ ձևավորվում են լեզվի ժողովրդախոսակցական և գրական տարբերակները. հասկանալի է, որ առանց բարբառային, բնական հիմքի՝ նշված տարբերակները գոյություն ունենալ չեն կարող, ինչպես որ չի կարող լինել սերուցքն առանց կաթի կամ հացն առանց ալյուրի: Ասել կուզի՝ լեզվի բնական վիճակը ներկայացնող բարբառները այն նյութն են, որի մշակումով ստեղծվում և որից սնվելով՝ գոյատևում է գրական լեզուն. չլինի նյութ՝ չի լինի և նրանով պատրաստվող ու նորոգվող առարկա: Տվյալ առարկան ճանաչելու, նրա էությունը ճիշտ հասկանալու համար նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել այն նյութը, որից պատրաստվել և պատրաստվում է այդ առարկան: Հետևում է, որ հայերենի բարբառների ուսումնասիրությունը կարևորվում է նախ և առաջ ոչ թե այն պատճառով, որ բարբառները իբր թե բռնել են անհետացման ուղին, այլ այն պատճառով, որ բարբառները լեզվի բնական վիճակն են ներկա-

յացնում, և հայերենի մասին լիարժեք պատկերացում անհնար է կազմել՝ առանց բարբառների համակողմանի ուսումնասիրության: Բարբառները իրենց մեջ կրում են հայերենին հատուկ բոլոր ընդհանուր հատկանիշները, միաժամանակ նրանք պարունակում են յուրահատկություններ, որոնք դարձյալ գործում են հայերենի շրջանակներում, բայց հայերենի բոլոր դրսևորումներին հատուկ չեն: Այնուամենայնիվ, մասնավոր, բարբառային այդ հատկանիշները ևս ընդհանուր առմամբ հայերենին բնորոշ հատկանիշներ են:

Հայերենը, իհարկե, դեռևս հին ժամանակներից սկսած եղել է և է տարաբնույթ ուսումնասիրությունների առարկա ինչպես տարաժամանակյա, այնպես էլ համաժամանակյա կտրվածքներով, ինչպես զուտ հայագիտական, այնպես էլ ընդհանուր լեզվաբանական հայեցակետերով: Հայ և օտարազգի լեզվագետները բացահայտել և նկարագրել են գրաբարի, միջին հայերենի և գրական աշխարհաբարի լեզվական բազում իրողություններ և օրինաչափություններ, բազմաթիվ հետազոտություններ են կատարվել հայերենի զարգացման ընթացքը դիտարկելու ուղղությամբ: Բնականաբար, ուսումնասիրության առարկա են դարձել նաև հայերենի բարբառները: Այս բնագավառում աշխատանքները հիմնականում ընթացել են հետևյալ ուղղություններով. ա)բարբառների առանձնակի ուսումնասիրում և նկարագրում, բ)բարբառների դասակարգում, գ) բարբառային հատկանիշների վերհանում և ուսումնասիրում լեզվաբանական աշխարհագրության մեթոդով, հայերենի բարբառագիտական ատլասի ստեղծում, դ) բարբառների համեմատական քննություն: Նշված բոլոր ուղղություններում կատարված աշխատանքները անշուշտ հիմք են հետագա և ավելի ամբողջական ուսումնասիրությունների համար:

Պետք է նշել, որ առանձին բարբառների ուսումնասիրությամբ զբաղվող հեղինակները հաճախ իրենց աշխատանքները կատարել են ոչ ճիշտ կանխադրույթներից ելնելով: Նախ՝ նման աշխատանքներում բարբառը չի դիտվում իբրև լեզվի կենդանի, բնական և զարգացող գոյավիճակ, որի ուսումնասիրությունը կարող է նպաստել հայերենի ամբողջական քննությանը: Սովորաբար

բարբառները համարվել են գրաբարի քայքայման, գրական լեզվի աղավաղման արդյունք, հետևաբար բարբառային իրողությունները դիտարկվել են իբրև չեղումներ՝ գրաբարյան և գրական լեզվի իրողությունների համեմատությամբ: Մյուս կողմից՝ բարբառները դիտվել են իբրև վերացող, անհետացող լեզվավիճակներ (հատկապես՝ գրական լեզվի տարածման և ազդեցության մեծացման պատճառաբանությամբ): Առանձին դեպքերում նույնիսկ վիճակն այնպես է ներկայացվել, թե իբր հայ գյուղացին օրեցօր ավելի ու ավելի է մոռանում իր բարբառը, որի հետևանքով բարբառը գործածական է մնում հիմնականում տարեց գյուղացիների միջավայրում: Այստեղից էլ, կարծես թե արդարացնելով բարբառներին կատարվող անդրադարձը, բարբառագետները իրենց աշխատանքը կարևորում են նրանով, որ նպատակ ունեն անդառնալի կորստից փրկել անհետացող այս կամ այն բարբառի նկարագիրը[3]*: Փաստորեն, բարբառները ընկալվում են իբրև զարգացում չունեցող, ընդհանուր լեզվի ընթացքից դուրս լեզվավիճակներ: Մինչդեռ բարբառները լեզվի կենդանի, բնական վիճակն են, որի վրա հիմնվում և որի հետ մեկ լեզվական միասնություն են կազմում ժողովրդախոսակցական և գրական լեզուները: Լեզվական այս ամբողջությունը ունի միասնական ընթացք, զարգացում, բայց և նրա յուրաքանչյուր դրսևորում՝ բարբառ, խոսակցական կամ գրական լեզու, ունի զարգացման իր յուրահատկությունները, միաժամանակ՝ այդ լեզվավիճակները փոխադարձաբար ազդում են միմյանց վրա: Գրական լեզվի զարգացումը դիտարկելի է գրավոր հուշարձանների առկայությամբ, մինչդեռ բարբառները սովորաբար գրավոր հուշարձաններում չեն արտահայտվում, որը և հնարավորություն չի տալիս տեսնելու նրանց զարգացման ընթացքը որոշակի տևական ժամանակահատվածում: Իհարկե, բարբառների պատմահամեմատական ուսումնասիրությունը կարող է որոշակի պատկերացում տալ նրանց զարգացման ընթացքի վերաբերյալ: Օրինակ՝ բառապաշա-*

[3] Նման մեկնաբանությունը ճիշտ է միայն այն դեպքերում, երբ պատմական ճակատագրի բերումով տվյալ բարբառը կրողները այլևս իրենց բնօրրանում չեն, քիչ թե շատ հոծ զանգված չեն կազմում և ապրում են լեզվական այլ միջավայրում:

րի տարբեր շերտերի դիտարկումները ցույց են տալիս, որ Պարսկահայքի և Վասպուրականի բարբառները նախապես չեն ունեցել հ չփական բաղաձայն (հինհայերենյան բառաշերտում այդ բարբառները հ – ի դիմաց բոլոր դիրքերում ունեն խ), սակայն բառասկզբում ընդհանուր հայերենում տեղի ունեցած յ > հ անցման, այդ նույն դիրքում ձայնավորներից առաջ հավելական չունչ առաջանալու հետևանքով, ինչպես նաև արաբաթուրքական փոխառությունների ազդեցությամբ հիշյալ բարբառների հնչյունական համակարգ է մուտք գործել հ չփականը: Բարբառներում ավելի կարճ ժամանակահատվածում կատարված որոշ փոփոխություններ կարելի է դիտարկել՝ նաև համագոյակից տարբեր սերունդների լեզվական առանձնահատկությունները վեր հանելով[1]: Որևէ լեզվի կամ լեզվավիճակի ուսումնասիրությունն ու նկարագրությունը երբեք չի կարող ավարտված լինել, որովհետև լեզուն ամբողջության մեջ և նրա դրսևորումները իրենց հերթին շարունակ զարգանում ու փոփոխվում են, և յուրաքանչյուր նոր սերունդ ունի լեզվական համակարգի ուսումնասիրության իր խնդիրները: Որևէ բարբառի ուսումնասիրություն ևս չի կարող ավարտվել մեկանգամյա նկարագրությամբ. ամեն մի այդպիսի նկարագրություն կարող է հետագա ուսումնասիրությունների համեմատության եզր դառնալ:

Հայագիտության մեջ բարբառների տարբեր դասակարգումներ են տեղի ունեցել: Նախնական՝ աշխարհագրական դասակարգմանը հաջորդել է ձևաբանական դասակարգումը, որը հետագայում լրացվել է հնչյունաբանական դասակարգմամբ: Ի վերջո հայ լեզվաբանական միտքը հանգել է բարբառների բազմահատկանիշ դասակարգման գաղափարին, որը թույլ է տալիս առավել հստակ ու համակողմանիորեն որոշել բարբառային միավորների միջև եղած հարաբերությունները: Գ.Ջահուկյանի կատարած

[1] Հասկանալի է, որ բարբառագետը այս դեպքում պետք է կարողանա զանազանել պրական լեզվի ուղղակի ազդեցությունը բարբառի բնական զարգացման ընթացքից, որին կարող է նպաստել տարբեր սերունդների կրթական ըստ հնարավորին ցածր մակարդակ ունեցող բարբառախոսների խոսքի գրանցումը: Բարբառագետը միաժամանակ կարող է դիտարկել կրթական որոշակի մակարդակ ունեցող բարբառախոսների խոսքը, որը թույլ կտա որոշել պրական լեզվի ազդեցության աստիճանը և առանձնացնել բարբառային առավել կայուն, ազդեցության չենթարկվող կամ քիչ ենթարկվող հատկանիշները:

բազմահատկանիշ դասակարգումը, ինչ խոսք, հայ բարբառագիտության զարգացման մի նոր փուլ էր սկզբնավորում: Սակայն այդ նոր փուլը չի նշանավորվել բազմահատկանիշ դասակարգման հետագա զարգացման աշխատանքներով: Մինչդեռ այդ դասակարգումը թույլ է տալիս կատարել բարբառային միավորների հարաբերությունների տարաբնույթ դիտարկումներ, համեմատական հետազոտություններ՝ միաժամանակ կատարելով ընտրված բարբառային հատկանիշների որակական, քանակական, ինչպես նաև դրանց՝ բարբառային միավորներում դրսևորման ճշգրտումներ: Օրինակ, Գ.Ջահուկյանի բերած տվյալներն օգտագործելով՝ Արարատյան բարբառի համեմատությունը Թբիլիսիի, Կարնո, Մշո, Դիադինի, Բայազետի, Վանի, Խոյ-Մարաղայի բարբառների հետ երևան է հանում այսպիսի պատկեր. Արարատյանի հետ ավելի շատ ընդհանրություններ ունի Բայազետի բարբառը (19), այնուհետև հաջորդում են Խոյ-Մարաղայի (16), Դիադինի (15), Թբիլիսիի և Վանի (12,5), Մշո (11), Կարնո (10,5) բարբառները: Այսպիսով՝ նշված խմբում իր դրական հատկանիշներով Արարատյանին առավել մերձավոր է Բայազետի բարբառը, և թվում է՝ որոշակի հիմք կարող էին ունենալ այն լեզվաբանները, որոնք Բայազետի բարբառային միավորը համարում էին Արարատյան բարբառի ենթաբարբառ: Գ.Ջահուկյանն էլ, թերևս այդ հանգամանքը նկատի ունենալով, Բայազետի բարբառը տեղադրել է Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբում՝ Արարատյան, Ջուղայի, Ասպարանի, Արդվին-Թբիլիսիի բարբառների հետ միասին: Սակայն, մյուս կողմից, Բայազետի բարբառը առավել մերձակցություն է հանդես բերում Վասպուրականի և Պարսկահայքի բարբառների հետ: Այսպես, Բայազետի բարբառը ավելի շատ ընդհանրություններ ունի Դիադինի բարբառի հետ (30), այնուհետև հաջորդում են Խոյ-Մարաղայի (26,5), Մշո (25), Վանի (24), Կարնո (20,5) բարբառները: Մինչդեռ Արարատյան և Թբիլիսիի բարբառների հետ ընդհանրությունները նկատելիորեն սակավ են, համապատասխանաբար՝ 19 և 14: Ակնհայտ է, որ տարբեր բարբառախմբերի հետ հարաբերություններում Բայազետի բարբառի դիրքը ճշգրտելու խնդիր կա:

Թերևս որոշակի ճշգրտումների կարիք ունեն բազմահատկանիշ դասակարգման հիմքում ընկած հարյուր հատկանիշները: Թվում է՝ որոշ դեպքերում խմբավորվել և իբրև մեկ հատկանիշ են ներկայացվել բոլորովին տարբեր իրողություններ: Այսպես՝ ձայնավորային հատկանիշներից մեկը (ըստ թվային հաջորդականության՝ 46 – րդը) ձևակերպված է իբրև «Ա - ի շրթնայնացածություն», ընդ որում՝ այս հատկանիշի դրսևորման տարատեսակներ են դիտվում ա ձայնավորի շրթնային (ա) արտասանությունը, ա - ի դիմաց օ կամ ու ձայնավորի առկայությունը շեշտակիր վանկում, ռնգայիններից առաջ, նաև՝ հետնալեզվային շփականներից առաջ[5]: Ակնհայտ է, որ ա ձայնավորի շրթնայնացած արտասանությունը չի կարող համարժեք համարվել որևէ դիրքում այդ ձայնավորի փոխարեն օ կամ ու ձայնավորի հանդես գալուն: Այն, որ այս իրողությունները միմյանց չեն առնչվում, կարելի է տեսնել՝ համեմատելով բարբառային երկու տարբեր իրավիճակներ: Այսպես, Բայազետի բարբառն ունի շրթնայնացած ա ձայնավոր, որը ա հնչույթի տարբերակն է և ա հնչյունի հետ դանվում է լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ. ա - ն հանդես է գալիս բացարձակ բառասկզբում, բառի առաջին վանկում (բնականաբար նաև միավանկ բառերում) խուլ բաղաձայններից (բացի խ շփականը) և մ, ն ձայնորդներից հետո՝ ախճի, աթօռ, ակ, պատ, պաներիր, կա, կատու, տալ, տանիս, ծառ, ծաղիկ, ճաշ, ճամփա, փառ, փառասունդա, սար, սաքան, չալ, չանչու, մատ, մատքի, նալ, նամակ և այլն, իսկ մյուս դիրքերում հանդես է գալիս ա հնչյունը՝ բ'ան, բ'անակ, գ'առ, գ'էրան, դ'աս, դիվանի, ձ'ավար, ջ'առթել, վազնել, զառթընել, ժամ, խաց, խառնիս, հ'ալ, հ'ավէս, հ'առավոտ, փագ, փալնըվել, քամի, թախտել, Չ'էրէվան, մըկավա, ցախս, ցամաք, չար, չօբան և այլն:

Նշված հատկանիշով բնութագրվող այլ բարբառներում ա - ի դիմաց առկա է օ (օրինակ՝ Հաջընի, Ագուլիսի, Համշենի բարբառները) կամ ու (օրինակ՝ Սվեդիայի բարբառը): Ըստ Հ.Մուրադյանի՝ ա - ի շրթնային արտասանությունը սկզբնավորվել է

[5] Տե՛ս Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 65:

նախ մ շրթնայինից առաջ միավանկ բառերում, ապա այդ յուրահատկությունը դրսևորվել է նաև ն – ից առաջ, ուստի և դիտակցվել է իբրև ընդայիններից առաջ կատարվող վոփոխություն: Տարբեր վայրերում հնչյունափոխական այս երևույթը ունեցել է դրսևորման յուրահատկություններ. մի դեպքում հնչյունափոխության պայման է դարձել ընդայիններին նախորդող դիրքը (օր. Համշենում), մյուս դեպքում՝ բառի միավանկությունը (օր. Ադուլիսում), երրորդ դեպքում՝ վանկի շեշտակրությունը (օր. Հաջընում, Սվեդիայում)[6]:

Եթե Բայազետի բարբառում, այսպիսով, շրթնայնացած ա̈ - ի հանդես գալը ա հնչույթի արտասանական դիրքային առանձնահատկություն է, ապա այլ բարբառներում գործ ունենք այս կամ այն գործոնով պայմանավորված ա > օ կամ ա > ու հնչյունափոխության հետ, այսինքն՝ եթե առաջին դեպքում երևան են գալիս նույն հնչույթի տարբերակային դրսևորումներ, ապա երկրորդ դեպքում առկա է մի հնչույթի դիմաց այլ հնչույթի դրսևորում: Կարծում ենք՝ «Ա - ի շրթնայնացածություն» ձևակերպումը պետք է նշանակի ա ձայնավորի արտասանություն՝ շրթնային հնչարանի առկայությամբ և որոշակի շրթնային երանգով, այլ ոչ թե ա - ի փոխարեն օ կամ ու հնչյունի արտասանություն (որն իր հերթին կարող էր ներկայացվել իբրև առանձին ձայնավորական հատկանիշ՝ «Ա - ի դիմաց օ կամ ու ձայնավոր» ձևակերպումով): Այս երկու իրողությունները էականորեն միմյանցից տարբերվում են, չեն կարող ներկայացվել իբրև նույն ձայնավորական հատկանիշի արտահայտություններ, այդ տարբեր իրողությունները չեն կարող բարբառային միավորների միջև առկա ընդհանրության ցուցիչ լինել: Մեր համոզմամբ՝ ձայնավորական հատկանիշների ընտրության հարցում հարկ է խուսափել անհիմն ընդհանրացումներից, մանավանդ որ, ինչպես նշում է Գ.-Ջահուկյանը, հայ բարբառագիտության մեջ տեղ գտած թերություններից է նաև այն, որ «Նկատի չի առնվում, որ ձայնավորների տարբերությունները երբեմն շատ ավելի անհասկանալի են դարձնում բարբառը, քան բաղաձայններինը. համմտ. օրինակ, Ա-

[6] Տե՛ս Հ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Ե., 1982, էջ 111 – 112:

դուլիսի բարբառը»[7]: Հետևաբար, բարբառների հատկապես ձայնավորական հատկանիշները պետք է հստակորեն առանձնացվեն և ըստ հնարավորին ճշգրիտ սահմանվեն, որպեսզի դրանց հաշվառումով հնարավոր լինի ներկայացնել բարբառային տարբեր միավորների փոխհարաբերությունների իրական պատկերը:

Հայերենի բարբառների՝ Գ.Ջահուկյանի առաջադրած բազմահատկանիշ դասակարգումը կամ, ինչպես հեղինակն է անվանում, վիճակագրական բարբառագիտությունը, ունենալով իր խնդիրները, որոշակիորեն գաղափար տալիս է բարբառային միավորների և հատկանիշների տարածական բաշխման մասին: Սակայն, ինչպես նշում է Հ. Մուրադյանը, վիճակագրական բարբառագիտությունը «լեզվաբանական աշխարհագրություն չէ, քանի որ բարբառային միավորները իրար հետ միավորող կամ իրարից տարբերակող հատկանիշները ներկայացվում են ոչ թե տարածականորեն՝ քարտեզների վրա, այլ աղյուսակներում՝ քանակական ցուցանիշներով»[8]: Բացի այդ՝ այս մեթոդը հնարավորություն չի տալիս դիտարկելու «հնչյունաքերականական տարբերակիչ հատկանիշների ներքին շարժումը՝ կապված ժամանակի ու տարածության հետ»[9]: Այսպիսով, վիճակագրական բարբառագիտությունը կոչված չէ փոխարինելու լեզվաբանական աշխարհագրությանը, բայց կարող է արդյունավետ կերպով զուգորդվել վերջինիս հետ՝ առավել ամբողջական դարձնելով բարբառային հատկանիշների և միավորների տարածական բաշխման պատկերը:

Բարբառագիտական ուսումնասիրություններում լեզվաբանական աշխարհագրության մեթոդի կիրառումը և դրա միջոցով բարբառագիտական ատլասի կազմումը խիստ կարևոր նշանակություն ունեն յուրաքանչյուր լեզվի ուսումնասիրության համար, և պատահական չէ, որ աշխարհի շատ լեզուներ արդեն ունեն բարբառագիտական ատլասներ: Անցյալ դարի 70 - ական թվականներից Հայաստանում սկսվել են հայերենի բարբառագիտական ատլասի ձևավորման աշխատանքները. կազմվել և հրատարակվել է «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի

[7] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 27:
[8] Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 1, Ե., 1982, էջ 19:
[9] Նույն տեղում:

հավաքման ծրագիրը»[10]*, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցների ջանքերով հավաքվել և մշակվել է բարբառային մեծածավալ նյութ, հրատարակվել են «Հայերենի բարբառագիտական ատլաս» երեք ժողովածուներ*[11]*, որոնք պարունակում են բարբառագիտական արժեքավոր ուսումնասիրություններ և նյութեր: Բացի այդ՝ կատարվել են բարբառագիտական քարտեզագրման մի քանի փորձեր*[12]*: Սակայն, ինչպես ժամանակին ցավով նշել է հայ բարբառագիտության հմուտ մշակներից մեկը՝ Ա. Խաչատրյանը, «Հայերենի ուսումնասիրությունը այս առումով բավական ետ է մնացել. լեզվաբանական աշխարհագրությունը, որպես բարբառագիտության կարևոր ու անհրաժեշտ ենթաճյուղ, հայերենագիտության մեջ դեռևս ամուր արմատներ չի ձգել»*[13]*: Ցավոք, բնական ու հասարակական աղետները, կյանքի գրեթե բոլոր ոլորտներն ընդգրկած հեղաբեկումները խոչընդոտ դարձան նաև հայերենի բարբառագիտական ատլասի ձևավորման ուղղությամբ աշխատանքների հետագա բարեհաջող ծավալման համար: Հարկ է այդ աշխատանքներին նոր շունչ հաղորդել՝ նյութերի հավաքման գործում ներգրավելով ոչ միայն մասնագետ բարբառագետների, այլ նաև բոլոր տարածաշրջանների ուսումնական հաստատությունների բանասեր մասնագետներին, ուսանողությանը, մանավանդ որ «Հայերենի ատլասի համար ամենաճիշտ սկզբունքը՝ անխտիր բոլոր հայախոս բնակավայրերը հարցման ենթարկելն է անկախ այն բանից, թե այդ բնակավայրերը կմտնեն քարտեզի մեջ, թե ոչ»*[14]*: Կարծում ենք՝ անհրաժեշտության դեպքում տեղական ուժերի օգտագործումով և մասնագետ բարբառագետի ղեկավարությամբ կարելի է նախ ձևավորել առանձին տարածաշրջանների (ասենք՝ Սևանի ավազանի, Շիրակի,*

---

[10] «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր», ե., 1977:
[11] Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 1. Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2, ե., 1985. Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, ե., 2010:
[12] Տե՛ս Ռ.Բալրամյան, Դերսիմի բարբառային քարտեզը, ե., 1960. Կ.Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, ե., 1966. Ա.Վարդանյան, Նախիջևանի բարբառային քարտեզը, Վիեննա, 2000. Ա.Սարգսյան, Հայոց լեզվի բարբառային ատլաս, պրակ Ա., ե., 2008:
[13] Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2, էջ 5:
[14] Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 1, էջ 21:

Արարատյան դաշտավայրի, Լոռու, Սյունիքի և այլն) բարբառային ատլասներ և ապա դրանց հիման վրա կատարել ընդհանրացումներ: Պետական ու հասարակական անհրաժեշտ հոգածության և մասնագիտական լրջագույն վերաբերմունքի առկայությամբ հայերենը կարող է ունենալ բարբառագիտական ատլաս, որի կարևորությունը հայերենագիտության համար հիմնավորումների կարիք չի զգում:

Բարբառագիտական հետազոտությունների կարևորագույն և հետաքրքրական բնագավառ է համեմատական բարբառագիտությունը: Հայ իրականության մեջ բարբառների համեմատական ուսումնասիրություն ասելով հիմնականում հասկացվել է բարբառի լեզվական իրողությունների համեմատությունը գրաբարի կամ արդի գրական հայերենի հետ[15]: Այս առումով՝ ցանկացած բարբառի առանձնակի ուսումնասիրություն պարունակում է համեմատական մեթոդի գործադրում: Ա. Ղարիբյանը իր «Հայ բարբառագիտություն» աշխատության բաժիններից մեկը վերնագրել է «Հայերենի համեմատական բարբառագիտություն»[16] և այդ բաժնում ըստ հնարավորին ներկայացնում է լեզվական յուրաքանչյուր իրողության բարբառային բոլոր դրսևորումները՝ սովորաբար կատարելով ընդհանրացումներ և եզրակացություններ: Թերևս համեմատական բարբառագիտության մերօրյա խնդիրներից է պատմաաշխարհագրական առումով մերձավոր բարբառների համեմատական քննությունը, որը ոչ միայն թույլ կտա վեր հանել համեմատվող բարբառային միավորների ընդհանրություններն ու տարբերությունները, հնարավորության դեպքում բացահայտել դրանց առաջացման պատճառներն ու ուղիները, այլ նաև մի շարք դեպքերում հնարավորություն կտա հասկանալու բարբառային տվյալ իրողության էությունը: Մերձավոր բարբառների համեմատական քննությունը թույլ կտա այնուհետև կատարել առանձին բարբառախմբերի համեմատական քննություն, որն էլ իր հերթին հիմք կդառնա աշխատանքներ կատարելու հայերենի բարբառների ընդհանուր համեմատական քննության բնագավառում:

---

[15] Տե՛ս Ա.Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, ե., 1957, էջ 517:
[16] Տե՛ս Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, ե., 1953, էջ 107:

ԲԱՐԲԱՌԻ ԸՄԲՌՆՈՒՄԸ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բարբառ իրողությունը համակողմանիորեն բնութագրելու համար անհրաժեշտ է անդրադառնալ տեսական մի շարք հարցադրումների, ինչպիսիք են՝ ա) բարբառի սահմանումը, բ) բարբառ և ընդհանուր լեզու փոխհարաբերությունը, գ) բարբառների առաջացումը, դ) բարբառների զարգացման միտումները, ե)գրական լեզու և բարբառ փոխհարաբերությունը, զ) հասարակության վերաբերմունքը բարբառների հանդեպ:

Լեզվաբանական գրականության մեջ բարբառը ներկայացվում է իբրև լեզվի տարածական տարբերակ և սահմանվում է հետևյալ կերպ. բարբառ է կոչվում ընդհանուր լեզվի ճյուղավորումը հանդիսացող այն համակարգը, որն իր յուրահատկություններով ընդհանուր է հասարակության այս կամ այն հատվածի համար՝ որոշ տարածքի վրա[17]:

Իրրև բարբառի այսպիսի ըմբռնման պարզաբանում՝ նշվում է, որ բարբառն ունի իր բառային հիմնական ֆոնդն ու քերականական կառուցվածքը և սպասարկում է որևէ ժողովրդի ավելի փոքր հատվածի[18]:

Այսպիսով, բարբառի սահմանման մեջ կարևորվում է երեք հանգամանք. ա) բարբառը ընդհանուր լեզվի ճյուղավորում է, բ)բարբառն ունի հնչյունական, բառապաշարային և քերականական յուրահատկություններ, գ) բարբառը չունի տարածական լայն ընդգրկում և սպասարկում է ժողովրդի փոքր հատվածի:

Համընդհանուր ընդունելությունն գտած վերոբերյալ սահմանումը, մեր կարծիքով, իրականում չի բացահայտում բարբառ երևույթի բուն էությունը և մոտավոր պատկերացում է տալիս դրա մասին: Հարց է ծագում՝ ի՞նչ պետք է հասկանալ ճյուղավորում ասելով, յուրահատկություններ ունեցող ամեն մի տարածական լեզվավիճակ արդյո՞ք բարբառ է, և ի վերջո ո՞րն է տարածական ընդգրկման լայնության չափանիշը: Այն, որ նման

[17] Տե՛ս Է.Ադայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 92:
[18] Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 9:

սահմանումը իսկապես թերի է, նկատելի է հենց հայերենի օրինակով: Այսպես, աշխարհաբար գրական հայերենն ունի երկու ճյուղ՝ արևելահայերեն և արևմտահայերեն, որոնք ունեն հնչյունական, քերականական և բառապաշարային յուրահատկություններ, տարածական սահմանափակ ընդգրկում, սակայն ոչ ոք այդ ճյուղավորումները հայերենի բարբառներ չի համարում:

Է.Աղայանը այնուամենայնիվ փորձել է մեկնաբանել բարբառի էությունը՝ գրելով, թե հենց այն, ինչը որ առանձնացնում, տարբերում է բարբառը ընդհանուր լեզվից՝ կազմում է բարբառի էությունը[19]*:*

Փաստորեն, բարբառի էությունը պարզաբանվում է այլ, ավելի ընդհանուր իրողության նկատմամբ ունեցած փոխհարաբերությամբ: Ներկայացնելով ընդհանուր մոտեցումը՝ Է.Աղայանը պնդում է. «բարբառները իրենց քերականությամբ, բառապաշարով ու հնչյունական համակարգով ոչ այլ ինչ են, եթե ոչ ընդհանուր լեզվի ձևափոխված վիճակը՝ այս կամ այն տարածքային հատվածում»[20]*: Մեզ մնում է եզրակացնել, որ լեզվաբանի կարծիքով նախ գոյություն է ունեցել միասնական քերականություն, բառապաշար ու հնչյունական համակարգ ունեցող ընդհանուր մի լեզվավիճակ, որը այս կամ այն տարածքում ենթարկվել է ձևափոխությունների: Մյուս կողմից՝ թվում է, որ Է.Աղայանի պատկերացրած ընդհանուր լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ գրական լեզուն, որովհետև միասնական քերականությունը, բառապաշարն ու հնչյունական համակարգը նորմավորված, գրական լեզվի հատկանիշներ են: Գրական լեզու և ընդհանուր լեզու հասկացությունների չփոթումը երևում է նաև այն դատողության մեջ, թե իբր ընդհանուր լեզուն կարող է մահանալ, և նրա փոխարեն որևէ բարբառի հիմքի վրա կարող է առաջանալ նոր ընդհանուր լեզու*[21]*:*

Ասվածը դաղափար է տալիս նաև բարբառների առաջացման վերաբերյալ եղած պատկերացումների մասին. ակնհայտ է, որ բարբառների առաջացումը պայմանավորվում է ընդհանուր լեզ-

---

[19] Տե՛ս Է.Աղայան, նշվ աշխ., էջ 93:
[20] Նույն տեղում:
[21] Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 93-94:

վի ձևափոխություններով[22]: Կարծիք է եղել նաև, թե իբր պարտված, մահացող լեզուները, ենթարկվելով և խառնվելով հաղթած լեզվին, առաջացնում են նրա բարբառները[23]: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ բարբառները հնադույն շրջանում առաջանում են տոհմերի, ցեղերի սրոհման, բաժանման միջոցով, հետագայում՝ դրանց միացման ճանապարհով և այլն[24]:

Բարբառների առաջացման վերաբերյալ եղած բոլոր այս տեսակետներն էլ հիմնվում են այն ըմբռնման վրա, որ բարբառները միշտ չէ, որ գոյություն են ունեցել և անշուշտ միշտ չէ, որ գոյություն կունենան: Համարվում է, որ հասարակության զարգացմանը զուգընթաց մեծանում է գրական լեզվի ազդեցությունը, և բարբառները աստիճանաբար վերանում են: Փաստորեն, բարբառները հակադրվում են գրական լեզվին: Ճիշտ է, հաճախ ընդգծվում է, որ բարբառները գրական լեզվի հարստացման աղբյուր են, կարևոր դեր ունեն ընդհանուր լեզվին առնչվող բազում հարցեր պարզաբանելու առումով, բայց միաժամանակ նշվում է, որ եթե գրական լեզուն ընդհանուր լեզվի բարձրագույն դրսևորում է, ապա բարբառները լեզվի ստորին ձևեր են և բռնել են մահացման ուղին[25]: Գրեթե նույն տեսակետին է նաև Գ.Ջահուկյանը: Չնայած նա գտնում է, որ բարբառների գոյությունը պատմական անհրաժեշտություն է և բոլորովին էլ կախված չէ մեր կամքից, նշում է, որ բարբառները հաջողությամբ սպասարկում են այս կամ այն վայրի հաղորդակցման կարիքները, գրական լեզվի բազան են, հաճախ օգտագործվում են գեղարվեստական գրականության մեջ խոսքը ավելի կենդանի դարձնելու համար, ունեն կարևոր գիտական արժեք, սակայն միաժամանակ բարբառների գոյությունը յուրատեսակ խանգարիչ գործոն է համարում միասնական լեզվի, հատկապես միասնական գրական լեզվի գոյության ու զարգացման համար: Լեզվաբանի կարծիքով՝ երբ ուժեղանում են լեզվի կենտրոնացման միտումները, թուլանում են բարբառների տարբերակման և գոյության հիմքե-

---

[22] Այդ տեսակետն են պաշտպանել նաև Հ.Հյուբշմանը, Ա.Տոմսոնը, Ա.Մեյեն, Հ.Աճառյանը:
[23] Այս մասին տե՛ս Ա.Ղ.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 39:
[24] Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 56:
[25] Տե՛ս Ա.Ղ.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 3-4, Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 44-46:

1098659

րը, առեղծվում են բարբառային տարբերությունների վերացման պայմանները[26]*:*

Լեզվաբանական գրականության մեջ բարբառ երևույթի նման ըմբռնումը որոշակիորեն առաջ է բերել հասարակության մերժողական, երբեմն էլ՝ քամահրական վերաբերմունք բարբառների նկատմամբ, որը ոչ միայն չի արդարացվում, այլ նաև առանձին դեպքերում կարող է խանգարել լեզվի ուսումնասիրությանը, լեզվական դիտելիքներ ձեռք բերելուն:

Մեր կարծիքով՝ բարբառ երևույթի այսպիսի ընկալումը չի արտացոլում իրերի իրական վիճակը առաջին հերթին այն պատճառով, որ ճիշտ չի ներկայացվում բարբառի բուն էությունը: Բարբառի ամենաէական հատկանիշը մենք համարում ենք նրա՝ լեզվի կենդանի, բնական և չնորմավորված վիճակ լինելը: Բարբառը բնութագրվում է հնչյունական, բառապաշարային և քերականական ներքին անմիջականությամբ, ձևերի բազմազանությամբ, բազում անկանոնություններով. այն լեզվի չկարգաբերված վիճակն է, որը, բնականաբար, տարածքից տարածք հանդես է բերում զանազանություններ: Բայց այդ ամենով հանդերձ՝ բարբառը չի դադարում համակարգ լինելուց: Բարբառները ամենևին էլ հեղհեղուկ, անկայուն ու կամայական իրողություններ չեն: Դարերի ընթացքում սերունդները ինքնաբերաբար պահպանել ու զարգացրել են իրենց բարբառը՝ առանց գիտակցական միջամտության ու վերահսկողության, բայց յուրաքանչյուր բարբառախոսի համար նկատելի է բարբառային խոսքից ցանկացած շեղում, տվյալ բարբառը կրողները որպես կանոն հնչառությամբ ընկալում են խոսվածքային տարբերությունները, որոշում խոսողի ծագումը և բնակության վայրը:

Իրավացի է անգլիացի լեզվաբան Ջոն Լայոնզը, երբ, մատնանշելով եվրոպական լեզուների ուսումնասիրությունների արդյունքները, գրում է, թե բարբառները բոլորովին էլ կանոնական գրական լեզվի անկատար ու աղավաղված տարբերակները չեն, չնայած առավել կամ պակաս ինքնուրույն են զարգանում: Քերականական կառուցվածքի, արտասանության և բառապաշարի առումներով բարբառները նույնքան համակարգային են և

[26] Տե՛ս Գ.Ջահուկյան, Ձրույցներ հայոց լեզվի մասին, ե., 1992, էջ 117 – 119:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

նույնքան պիտանի հաղորդակցման համար, որքան գրական լեզուն[27]:

Պետք է նկատի ունենալ նաև, որ տարածքից տարածք բարբառները տարբերվում են ոչ թե իրենց բոլոր հատկանիշներով, այլ բարբառային հատկանիշների յուրահատուկ զուգորդումներով:

Ասվածից ելնելով՝ առաջարկում ենք բարբառի այսպիսի սահմանում. բարբառ է կոչվում տվյալ լեզվի բնական, չնորմավորված ու չկարգաբերված վիճակը ներկայացնող համակարգը, որը, չնայած ներքին անմիօրինակությանը, իր հիմնական հատկանիշների յուրահատուկ զուգորդումներով տարբերվում է նույն լեզվի՝ այլ տարածքներում գրսևորվող համանման համակարգերից:

Բարբառները ընդհանուր լեզվից դուրս գտնվող իրողություններ չեն: Ընդհանուր լեզուն բարբառներից վեր և նրանց նախորդող իրողություն չէ, այն ոչ այլ ինչ է, եթե ոչ բարբառների, խոսակցական և գրական լեզուների ամբողջություն, ընդ որում՝ լեզվի այդ դրսևորումները, տարբերություններ ունենալով հանդերձ, ունեն հնչյունական, բառապաշարային և քերականական միևնույն հիմքը,ատաղձը, որով և միավորվում ու կազմում են մեկ ընդհանուր լեզու:

Ընդհանուր լեզուն կարող է տրոհվել, և այդ դեպքում բարբառները կվերածվեն նոր, ինքնուրույն լեզուների: Այլ բան է ընդհանուր լեզվի մահը. այդ կնշանակի նրա բոլոր վիճակների և դրսևորումների, այդ թվում և՝ բարբառների վերացում:

Բարբառի՝ մեր առաջարկած սահմանումը թույլ է տալիս մեկնաբանել բարբառների առաջացման հարցը: Իբրև բարբառների առաջացման պատճառներ՝ հաճախ նշվում են ցեղերի անջատումն ու միացումը, ֆեոդալական մասնատվածությունը, աշխարհագրական ու տարբեր բնույթի այլ գործոններ, սակայն իրականում դրանք բարբառային տարբերությունների խորացման պայմաններ են ընդամենը: Բարբառների առաջացման բուն

[27] Տե՛ս Дж. Лайонз, Введение в теоретическую лингвистику, Москва, 1978, стр. 52.

պատճառը լեզվի բնական վիճակի անմիօրինակությունն է: Յուրաքանչյուր լեզու իր սաղմնային վիճակում արդեն պարունակում է բարբառային տարբերություններ, որոնք համապատասխան պայմանների առկայությամբ խորանում են և ժամանակի ընթացքում կարող են հանգեցնել նորանոր բարբառների, ապա և՝ լեզուների առաջացման: Մյուս կողմից՝ որոշակի պայմանների առկայությամբ բարբառային տարբերությունները կարող են թուլանալ, առանձին բարբառներ կարող են և վերանալ, բայց այդ չի կարող նշանակել ընդհանրապես բարբառ երևույթի վերացման հնարավորություն, որովհետև յուրաքանչյուր լեզվի բնական վիճակի մահը կնշանակի ոչ թե լեզվի մահ ընդհանրապես:

Յուրաքանչյուր բարբառ ինքնուրույն համակարգ է ընդհանուր լեզվի շրջանակներում, և բարբառի ներսում տեղի են ունենում ինչպես միայն այդ բարբառին կամ բարբառների խմբին վերաբերող, այնպես էլ ընդհանուր լեզվին վերաբերող զարգացումներ: Այնպես որ, ժամանակի ընթացքում բարբառներում նկատվող փոփոխությունները բարբառների վերացում չեն կանխորոշում. ուղղակի սերնդից սերունդ լեզուն թե՛ իր բնական և թե՛ կարգաբերված վիճակներով փոփոխվում ու զարգանում է:

Գրական լեզուն և բարբառները զարգանում են՝ փոխադարձաբար միմյանց վրա ազդելով: Լեզվի այս երկու վիճակները հակադիր իրողություններ չեն: Բարբառները նման են կենդանի, անմշակ բնությանը, և ինչպես բնության մի հատվածի մշակումով ունենում ենք պարտեզ, այնպես էլ բարբառային վիճակի զարգացման ընթացքով և գիտակցական մշակումով ձևավորվում է գրական լեզու: Ինչպես որ կենդանի բնության մեջ ամեն քայլափոխի առկա է բազմազանություն, այնպես էլ տարածքից տարածք լեզուն հանդես է բերում դրսևորման տարբերություններ, և ինչպես նկատում է Հ.Աճառյանը՝ «Լեզուն ներկայացնում է անթիվ անհամար դանագանությունների մի շարք, որոնք մի կետից սկսելով քանի հեռանում, աստիճանաբար ու ավելի են չեշտվում»[28]*:*

[28] Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2 – րդ մաս, Ե., 1951, էջ 324:

Բարբառները գրական լեզուն կենդանի պահող, այն սնուցող երակներ են: Բարբառի իմացությունը չի խանգարում գրական լեզվի յուրացմանը և գործածությանը, ինչպես որ մայրենին չի խանգարում որևէ օտար լեզու սովորելուն: Յուրաքանչյուր հաղորդակցական իրադրություն որոշում է խոսողի լեզվական վարքը. խոսողը ըստ իրադրության գործածում է իր իմացած անհրաժեշտ լեզուն, այդպես է վարվում նաև, երբ իրադրությունը թելադրում է գրական լեզվի կամ բարբառի գործածություն:

Հայտնի ճշմարտություն է՝ աշխարհում չկան լավ և վատ լեզուներ. յուրաքանչյուր լեզու ծառայում է որոշակի լեզվական հանրության հաղորդակցման իրականացմանը: Բարբառները ևս ունեն իրենց գործառույթը և լավ կամ վատ լինել չեն կարող: Ինչպես որ վայրի բնությունը պարտեզի համեմատությամբ ստորին դրսևորում չէ, այնպես էլ բարբառները լեզվի ստորին ձևեր չեն և արժանի չեն մերժողական, առավել ևս՝ քամահրական վերաբերմունքի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Մարդկային լեզուն դրսևորվում է առանձին լեզուների ձևով, որոնցից յուրաքանչյուրը մյուսներից տարբերվում է հնչյունական համակարգով, բառապաշարով և քերականական կառուցվածքով: Միաժամանակ, տարբեր լեզուներ հանդես են բերում առավել կամ պակաս ընդհանրություններ: Լեզուների համեմատական ուսումնասիրությունը վեր է հանում նրանց թե՛ տարբերությունները, թե՛ ընդհանրությունները, որը թույլ է տալիս կատարել տիպաբանական ու ցեղակցական դասակարգումներ:

Անցյալ դարի վաթսունական թվականներից սկսած՝ լեզվաբանության մեջ կարևորվել է լեզվական այնպիսի հատկանիշների վերլուծության անհրաժեշտությունը, որոնք միավորում են լեզուների որոշակի բազմություն կամ աշխարհի բոլոր լեզուները: Լեզվաբանության պատմության մեջ հարցադրումը նորություն չէր: Լեզուների ընդհանրությունները այս կամ այն չափով դիտարկվել են՝ դեռևս հին ժամանակներից սկսած: Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ դրեթե բոլոր դարաշրջաններում էլ լեզվաբանները զեկավարվել են լեզուներում որոշակի երևույթների ընդհանրականության վերաբերյալ պատկերացումներով[29]: Նոր ժամանակներում դրանց հանգամանորեն անդրադարձել են Պոր – Ռոյալի քերականության (17 – րդ դար) հեղինակները, որոնք նպատակ էին դրել «սահմանել բոլոր լեզուների քերականական ընդհանուր սկզբունքները և նրանց հիմնական տարբերությունների պատճառները»[30]: Լեզուների ընդհանրությունները ժամանակակից լեզվափիլիսոփայության ու ընդհանուր լեզվաբանության հիմնադիր Վիլհելմ ֆոն Հումբոլդտին թույլ են տվել անելու այսպիսի դատողություն. «Լեզվի մեջ այնքան հրաշալի կերպով է համաձայնեցված անհատականը համընդհանուրի հետ, որ միանգամայն ճիշտ է ասել, թե ողջ մարդկային սեռը խոսում է մեկ լեզվով և որ յուրաքանչյուր մարդ ունի իր լե-

[29] Տե՛ս Новое в лингвистике, выпуск V, М., 1970, с. 5.
[30] Տե՛ս Գ.Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1960, էջ 253:

զուն»[31]: 20 – րդ դարի երկրորդ կեսին ընդհանրական երևույթների վերլուծությունը պայմանավորված էր լեզվաբանական տիպաբանության զարգացմամբ, որի խնդիրն էր աշխարհի լեզուները դասակարգել ու խմբավորել նրանց քերականական կառուցվածքի ընդհանրությունների հիման վրա[32]: Այդ նպատակին հասնելու համար առաջադրվում է լեզվական հանրույթների (ունիվերսալիաների) խնդիրը, հրապարակվում է «Լեզվական հանրույթների մասին հուշագիրը», որի հեղինակները նշում են. «Աշխարհի լեզուների անսահման ու ապշեցուցիչ բազմազանության հետևում թաքնված են նրանց բոլորի համար ընդհանուր հատկություններ: Բոլոր անսահման տարբերություններով հանդերձ՝ պարզվում է, որ լեզուները ստեղծված են կարծես մեկ միասնական օրինակով»[33]: Լեզվական հանրույթը (ունիվերսալիան) Ջ. Հոկետը սահմանում է հետևյալ կերպ. «Լեզվական հանրույթը որևէ հատկանիշ է կամ հատկություն, որը հատուկ է բոլոր լեզուներին կամ լեզվին՝ ամբողջությամբ վերցրած»[34], իսկ ընդհանուր առմամբ՝ լեզվական հանրույթ են համարվում նաև այն օրինաչափությունները, որոնք ընդհանուր են լեզուների բացարձակ մեծամասնությանը, այսինքն՝ ոչ բոլոր լեզուներին[35]: Լեզվական հանրույթների ուսումնասիրությունը, վերջին հաշվով, նպատակ ունի պատասխանելու հետևյալ հարցերին. ա) ընդհանրապես ի՞նչ կարող է լինել և ի՞նչ չի կարող լինել լեզվում, բ) այս կամ այն լեզվի կառուցվածքում հետաքրքրություն ներկայացնող ի՞նչ յուրահատկություն կա[36]:

Կարծում ենք՝ լեզվական հանրույթների հասկացությունը կիրառելի է նաև մեկ լեզվի շրջանակներում, եթե նկատի ունենանք տվյալ լեզվի բոլոր դրսևորումներում հանդես եկող հատկանիշ-

---

[31] Տե՛ս նշվ. աշխ., էջ 343:
[32] Տե՛ս Общее языкознание (Внутренняя структура языка), М., 1972, с. 545. Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 687:
[33] Меморандум о языковых универсалиях, Новое в лингвистике, выпуск V, М., 1970, с. 31.
[34] Ч. Хоккетт, Проблема языковых универсалий, Новое в лингвистике, выпуск V, с. 45.
[35] Տե՛ս Новое в лингвистике, выпуск V, с. 10.
[36] Տե՛ս նշվ. աշխ., էջ 10-11:

ռուցվածքի ամբողջությունը»[37]: Այսպիսով, եթե նկատի ունենանք, որ առանձին լեզվի ցանկացած դրսևորում իր մեջ զուգորդում է ընդհանուրը և մասնավորը, հումբոլդտյան վերը բերված արտահայտությունը հայերենի դեպքում կարող ենք վերաշարադրել հետևյալ կերպ. միաժեսակ ճիշտ է ասել, թե ողջ հայությունը խոսում է մեկ լեզվով և թե՝ յուրաքանչյուր բարբառախոս հայ խոսում է իր բարբառով:

Պետք է նշել, որ հայ լեզվաբանության մեջ առավելաբար ուշադրության արժանացել են հայերենի տարբերակների լեզվական առանձնահատկություններն ու տարբերությունները: Այսպես, գրական լեզվի ուսումնասիրությանը նվիրված աշխատություններում ներկայացվում ու մեկնաբանվում են այդ լեզվավիճակի նորմատիվ իրողությունները, և առանձին դեպքերում մերժվում են հանդիպող սխալ, ոչ գրական իրողությունները, իսկ բարբառներին նվիրված ուսումնասիրություններում շեշտը դրվում է լեզվական տարբերությունների վրա, ընդ որում՝ այդ տարբերությունները վեր են հանվում կա՛մ գրաբարի, կա՛մ արդի գրական հայերենի համեմատությամբ: Բարբառներում դրսևորվող այդպիսի յուրաքանչյուր լեզվական տարբերություն համարվում է բարբառային հատկանիշ, ու բարբառները բնութագրվում են նման հատկանիշների ամբողջությամբ: Վերջին հարյուրամյակում առանձին բարբառների ուսումնասիրությանն ու նկարագրությանը նվիրված հայագիտական աշխատություններում ներկայացվում է տվյալ լեզվական համակարգը՝ իր տարբերակիչ հատկանիշներով, և այդ հատկանիշների հաշվառումով էլ կատարվել են բարբառների ձևաբանական, հնչյունաբանական դասակարգումներ: Առավել ընդգրկունը, իհարկե, Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգումն է՝ հնչյունական և ձևաբանական հարյուր բարբառային հատկանիշների ընդգրկումով, որը լեզվաբանին թույլ է տվել, իր խոսքերով ասած, խուսափել միակողմանիությունից, «բարբառները, ենթաբարբառներն ու խոսվածքներն առանձնացնելիս ելնել օբյեկտիվ չափանիշներից և հնչյունաբանական ու քերականական առանձնահատկություն-

[37] Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 92:

ները բաշխել ըստ պատմաաշխարհագրական սկզբունքների»[38]: Նշենք նաև, որ Գ.Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունը թե իր մեթոդի ու սկզբունքի նորությամբ և թե բերած հսկայական նյութով նոր հեռանկարներ է բացում հայերենի բարբառների հետագա ուսումնասիրության համար:

Լեզվական տարբերությունները, տվյալ դեպքում՝ բարբառային հատկանիշները ներկայացնելիս, ինչպես նշում է Գ.Ջահուկյանը, պետք է ունենալ համեմատության որոշակի եզր: «Հայ բարբառագիտության մեջ մինչև հիմա սովորաբար այդպիսի եզր է ծառայել գրաբարը, երբեմն էլ արևելահայ կամ արևմտահայ գրական լեզուն»[39],- գրում է Գ.Ջահուկյանը և ապա եզրակացնում. «Այսպիսով, ստացվում են տարբեր դեպքերի համար տարբեր էտալոններ, և կորչում է մի կողմից՝ բարբառային միավորների առանձնացման ընդհանուր չափանիշը, մյուս կողմից՝ միևնույն միավորների տարբեր կողմերի նկարագրության միասնականությունը»[40]: Ելքը մեկն է՝ «ընդհանուր դասակարգում կատարելիս բոլոր դեպքերում ունենալ համեմատության միևնույն էտալոնը», բայց հարց է ծագում՝ «ո՞րը պետք է լինի այդ էտալոնը»[41]: Գ.Ջահուկյանը առաջարկում է այսպիսի լուծում. «որոշել բարբառային հատկանիշները և դրանց հետևողական բացառմամբ հասնել մի վերացական «ոչ բարբառային» վիճակի, որ կբնութագրվի բոլոր դեպքերում որպես ոչ նշանակիր անդամ: Այդ վերացական «ոչ բարբառային» վիճակը բոլոր 100 հատկանիշների համար կունենա միայն բացասական (զրո) նիշեր, իսկ դրական լեզուները և բարբառները՝ նաև դրական նիշեր՝ 1 – ից մինչև 100-ի սահմաններում (ավելի ճիշտ մի քանիսից մինչև մի քանի տասնյակ), ընդ որում դրական լեզուները՝ սովորաբար ավելի քիչ չափով»[42]: Ի դեպ, այդ վերացական «ոչ բարբառային» վիճակը Գ.Ջահուկյանը անվանում է նաև «իդեալական վիճակ», որին և դրական լեզուներին, նրա կարծիքով, որ-

[38] Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 28:
[39] Նշվ. աշխ., էջ 39:
[40] Նույն տեղում:
[41] Նույն տեղում:
[42] Նշվ. աշխ., էջ 40:

քան ավելի կմոտենան բարբառները, այնքան ավելի մաքուր կլինեն[43]: Փաստորեն, Գ.Ջահուկյանի նշած «ոչ բարբառային, իդեալական» վիճակը գրական լեզուն է՝ առանց իր համար հիմք դարձած բարբառի բարբառային հատկանիշների: Այստեղից էլ հետևում է մեր կարծիքով ոչ ճիշտ դիտարկումը բարբառների մաքրության մասին: Բարբառը, ինչպես և գրական լեզուն, լեզվական համակարգ է, որը մաքուր կամ անմաքուր լինել չի կարող[44]: Կարելի է խոսել ընդամենը գրական լեզվին տվյալ բարբառի մերձակցության մասին, որը բարբառի համար՝ իբրև լեզվական համակարգի, գրական կամ բացասական բնութագրման ու գնահատման չափանիշ լինել չի կարող:

Կարծում ենք՝ բարբառային հատկանիշները որոշելիս և ներկայացնելիս համեմատության եզր կարող են դառնալ հենց համահայերենյան լեզվական հատկանիշները կամ հանրույթները, որոնց ամբողջական վերհանումն ու նկարագրությունը թույլ կտան ունենալու հայերենի հիմնական և ընդհանուր բնութագիրը՝ ավելի ամբողջական տեսքով: Ունենալով համեմատության նման ճշգրիտ ու միասնական եզր՝ ավելի որոշակի կարելի կլինի ներկայացնել գրական ու խոսակցական լեզուների, բարբառների յուրահատկությունները:

Ընդհանրությունները կարելի է որոշել և՛ համաժամանակյա, և՛ տարաժամանակյա կտրվածքներով: Համաժամանակյա մոտեցման դեպքում թերևս ճիշտ կլինի ուսումնասիրության ոլորտում ունենալ միայն բարբառները, որովհետև գրական ու խոսակցական լեզուների ընդհանուրհայերենյան բոլոր հատկանիշները գալիս են հենց բարբառներից: Տարաժամանակյա մոտեցման դեպքում ուսումնասիրության ոլորտում կարող են լինել հայերենի բոլոր դրսևորումները:

Հարցը համաժամանակյա կտրվածքով դիտարկելիս, կարծում ենք, կարելի է առանձնացնել լեզվական հատկանիշների այսպիսի խմբեր.

---

[43] Նույն տեղում:

[44] Գրական լեզվի կամ որևէ բարբառի մաքրության ցուցանիշ թերևս կարող է լինել միայն օտար անհարկի փոխառությունների սակավությունը:

ա) հատկանիշներ, որոնք հատուկ են հայերենի բոլոր բարբառներին, այսինքն՝ ընդհանուրհայերենյան են.

բ) հատկանիշներ, որոնք հատուկ են բարբառների բացարձակ մեծամասնությանը և իրենց բնույթով նույնպես ընդհանուրհայերենյան են, ուղղակի ինչ-ինչ հանգամանքների բերումով բացակայում են մեկ-երկու բարբառներում.

գ) հատկանիշներ, որոնք բնորոշ են տարբեր բարբառների, բարբառների որևէ խմբի և կարող են բնութագրիչ լինել այդ խմբի համար.

դ) հատկանիշներ, որոնք բնորոշ են առանձին բարբառների և կարող են բնութագրական լինել դրանց համար:

Հատկանիշների նշված չորս խմբերի համար հերթականությամբ բերենք մեկական օրինակ.

ա) հայերենի բոլոր բարբառները բառասկզբում ունենում են փ,թ,ք,ց,չ բաղաձայններ.

բ) հայերենի գրեթե բոլոր բարբառներում միավանկ բառերի սկզբնային և - ից առաջ առկա է յ – ի հավելում[45].

գ) Վասպուրականի և Պարսկահայքի բարբառներում հինհայերենյան հ – ի դիմաց առկա է խ.

դ) Բայազետի բարբառում շրթնային ու ձայնավորը ունի դերհնչույթի արժեք. այն մի դեպքում ա հնչույթի տարբերակն է, մեկ այլ դեպքում ներկայացնում է երկբարբառային արտասանության: Օրինակ՝ բարբառումս բացարձակապես նույն հնչումն ունեն չար (չարել) և չոր (հագուստ), պան (համբույր) և պոչ (ագի) բառազույգերը:

Հատկանիշների վերջին երեք խմբերը կարելի է ձևավորել՝ նկատի ունենալով Գ.Ջահուկյանի ներկայացրած հարյուր հատկանիշները, ինչպես նաև նորանոր բարբառային տվյալների հաշվառումով: Ինչ վերաբերում է հատկանիշների առաջին խմբին, ապա այն կարելի է ձևավորել ըստ հնչյունական, բառապաշարային և քերականական մակարդակների՝ առանձնացնելով այն ընդհանուրը, որը դրսևորվում է ուսումնասիրության ենթակա բոլոր բարբառներում: Բերենք այս կարգի հանրույթների մեկական օրինակներ՝ ըստ լեզվի տարբեր մակարդակների.

---

[45] Տե՛ս նշվ. աշխ., էջ 63 – 81:

ա) հնչյունաբանական - հայերենի բոլոր բարբառներն ունեն ա,է,ի,օ,ու,ը ձայնավորները.

բ) քերականական – հայերենի բոլոր բարբառներն ունեն եր հոգնակերտ մասնիկ[46]*.*

գ) բառապաշարային – հայերենի բոլոր բարբառներն ունեն հայր, մայր, քույր, ես, երկու և նման բազմաթիվ այլ բառեր[47] *:*

Կրկին անդրադառնալով լեզվական հատկանիշների վերը բերված չորս խմբերին՝ նշենք, որ դրանցից առաջին երկուսն ունեն ընդհանուր բնույթ և կազմում են լեզվի բուն միջուկը, իսկ վերջին երկուսն ունեն մասնավոր բնույթ և կազմում են բարբառային հատկանիշների ամբողջությունը: Ի դեպ, բարբառային հատկանիշների հետ համեմատելի են գրական լեզուների առանձնահատկությունները՝ իբրև դրանց տարբերակիչ հատկանիշներ, որոնք նույնպես ակնհայտ կդառնան գրական լեզվից ընդհանուրհայերենյան հատկանիշները առանձնացնելուց հետո:

Արդի հայերենում դրսևորվող լեզվական բոլոր հատկանիշների վերհանումը, դրանց տարբերակված քննությունն ու դասակարգումը, այսպիսով, թույլ կտան ոչ միայն համալրել մեր լեզվի մասին եղած գիտելիքներն ու պատկերացումները, այլ նաև կնպաստեն հայերենի յուրաքանչյուր տարբերակի առանձնահատկությունները ճանաչելուն, դրանց ուսումնասիրությանն առնչվող մի շարք հարցեր ճշգրտելուն:

---

[46] Ա.Ր. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 137:

[47] Քերականական և բառապաշարային մակարդակներում հնչյունական զանազանությունները էական չեն:

ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ԲԱՐԲԱՌԻ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՏԿԱՆԻՇ

Ինչպես մարդկային լեզուն ընդհանրապես, այնպես էլ ամեն մի կոնկրետ լեզու գործառում է որպես բազմազանությունների, տարբերակային ձևերի մի ամբողջություն[48]: Տարբերակայնությունը լեզվի կարևորագույն հատկանիշներից է, և իրականության մեջ լեզվական ցանկացած համակարգ ու լեզվի ցանկացած մակարդակի միավորներ հանդես են գալիս տարբերակային ձևերով[49]: Լեզվական միավորների տարբերակային դրսևորումները դիտարկելի են ինչպես համակարգի գործառութեյան ներսում, լեզվական նույն հանրույթի լեզվագործածութեյան մեջ՝ առանց խոսողների չերտավորման, այնպես էլ նույն համակարգի տարբերակային դրսևորումները (հասարակական և տարածական) համեմատելիս: Տարբերակայնությունը, այսպիսով, ունենում է ներհամակարգային և արտահամակարգային արտահայտութեյուններ: Ներհամակարգային տարբերակայնությունը նույն լեզվական արժեքով և իմաստով մեկից ավելի համազոր ձևերի զուգահեռ գործածութեյունն է նույն լեզվակիրների խոսքում, իսկ արտահամակարգային տարբերակայնությունը լեզվի տարածական ու հասարակական դրսևորումներում նույն լեզվական արժեքով և իմաստով տարբեր ձևերի գործառութեյունն է տարբեր լեզվակիրների խոսքում[50]: Այսպիսով, եթե առաջին դեպքում լեզվական տարբերակայնությունը դրսևորվում է նույն լեզվակիրների խոսքում, ապա երկրորդ դեպքում տարբերակայնությունը դրսևորվում է տարբեր լեզվակիրների խոսքում: Տարբերակայնությունը արտահայտվում է և՛ գրական լեզվում (թե՛ գրավոր, թե՛ բանավոր), և՛ ժողովրդախոսակցական լեզվում, սակայն տարբեր ծավալներով: Գրական լեզուն, հասկանալի է, ձգտում է

[48] Տե՛ս Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 90-92:

[49] Խոսքը ոչ թե լեզվի համակարգային նույնաբժեք ձևերի մասին է, որոնք գոնվում են լրացուցիչ բաշխման հարաբերութեյունների մեջ և իրար փոխարինել չեն կարող, այլ նույն իրողութեյան ձևային զուգահեռ դրսևորումների մասին է, որոնք ազատ իրար փոխարինում են համակարգի նեյսում կամ համարժեք են համակարգի տարբեր դրսևորումներում:

[50] Երկու դեպքում էլ նկատի չունենք ոճական զուգաձևութեյունները:

ձևերի ըստ հնարավորին միօրինականացման, ուստի այստեղ տարբերակայնության ծավալմանը խանգարում է նորմավորման գործընթացը: Ժողովրդախոսակցական լեզվում տարբերակայնությունը դրսևորման ավելի լայն հնարավորություններ ունի, սակայն ընդհանուրի կողմից հասկանալի և ընդունելի լինելու մղումը, այնուամենայնիվ, որոշակի սահմանափակումների պատճառ է դառնում: Երևույթը առավել ազատ դրսևորվելու հնարավորություններ ունի բարբառային խոսքում, որտեղ լեզվական ցանկացած ձև կարող է գոյատևել, եթե հասկանալի է տվյալ լեզվական հանրությանը և այս կամ այն չափով գործածական է լեզվական այդ միջավայրում: Այլ կերպ ասած՝ բարբառում, ինչպես կենդանի բնության մեջ, իրողությունները զանազանությունների ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան լեզվի այլ գոյավիճակներում: Տարբերակայնությունը պայմանավորված է լեզվի էությամբ, խոսքային յուրաքանչյուր դրսևորման դեպքում անհատական դրոշմ կրելու յուրահատկությամբ: Միաժամանակ, լեզվի կենդանի գործառության ընթացքում լեզվակիրների ֆիզիկական, մտավոր, հոգևոր, սեռատարիքային ու այլ հատկանիշների հետ տարբերակվածության ու բազմաձևությունների առաջացմանը նպաստում են նաև լեզվական հանրության տարածական որոշակի անմիասնականությունը, լեզվի զարգացման տարաբնույթ գործընթացները, ժողովրդի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, ներքին ու արտաքին լեզվական ազդեցությունները և այլն: Այսպիսով, որևէ լեզու, լինելով միասնական ու կայուն գործառող համակարգ, միաժամանակ իր դրսևորումներում տարբերակային միավորների ու հատկանիշների մի ամբողջություն է:

Որևէ տարածքի լեզվական հանրության խոսքում տվյալ լեզվի մեջ եղած տարբերակային միավորների ու հատկանիշների ոչ գիտակցական, պատմականորեն ձևավորված յուրօրինակ համատեղումը առաջ է բերում համակարգի մասնավոր ու ինքնատիպ դրսևորում՝ բարբառ: Հայ լեզվաբանությունը անդրադարձել է բարբառային տարբերակվածությանը նպաստող միայն արտալեզվական հանգամանքներին (ցեղերի տրոհում ու միավորում, ֆեոդալական մասնատվածություն, գրագիտության պակաս և

այլն)[51]*, և անտեսվել է լեզվի բուն էությունից բխող տարբերականությունը՝ իբրև բարբառի առաջացման գլխավոր պայման: Պետք է նկատի ունենալ, որ տարբերակային են ոչ միայն լեզվական միավորները, այլ նաև հատկանիշները, և բարբառը ընդհանուր լեզվի մի դրսևորումն է դառնում նախ և առաջ նրանով, որ ունի այդ լեզվում գործառող տարբերակային հատկանիշների միայն իրեն հատուկ փունջ, երբեմն էլ՝ միայն իրեն հատուկ հատկանիշներ: Հատկանիշների յուրաքանչյուր նման փունջ, այսպիսով, բարբառային առանձին միավոր է, տարբերակային մի համակարգ ընդհանուր լեզվի շրջանակներում: Բարբառում հատկանիշները զուգորդվում են լեզվակիրների կամքից անկախ, ընդ որում՝ բարբառի ներսում յուրաքանչյուր իրողություն կամ հատկանիշ կարող է իր հերթին ունենալ տարբերակային դրսևորումներ: Սակայն այդ համընդհանուր տարբերակայնությունը չի նշանակում, թե բարբառներում քաոս է, և ամեն կարգի շեղում ու տարբերակ կարող է գործառել: Յուրաքանչյուր բարբառային միավորի շրջանակներում հստակ գիտակցվում են թույլատրելի տարբերակները, որոնք հասկանալի ու գործածական են լեզվական հանրության անդամների կողմից: Այլ կերպ ասած՝ բարբառային խոսքում տարբերակայնությունը չի խոչընդոտվում, բայց ամեն մի կոնկրետ պահի գործառում են հանրության կողմից ընդունված և հասկանալի տարբերակները: Ընդ որում՝ տարբերակային ձևերը անհատական բնույթ չունեն և գործածական են շատերի կողմից, բայց, մյուս կողմից էլ, զուգաձևությունների գործածությունը պարտադիր չէ բոլոր լեզվակիրների համար:*

Տարբերակայնությունը դրսևորվում է լեզվի թե՛ հնչյունական, թե՛ բառապաշարային և թե՛ քերականական մակարդակներում: Բայազետի բարբառի ընձեռած նյութի միջոցով անդրադառնանք հնչյունական զուգաձևություններին[52]*:*

---

[51] *Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 64-65. Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 49-57:*

[52] Հասկանալի է, որ հնչյունները ինքնին իմաստակիր միավորներ չեն, ուստի հնչյունական տարբերակայնությունը նպատակահարմար է դիտարկել բառային մակարդակում, երբ բառային նույն միավորը նույն իմաստով դրսևորվում է հնչյունական այս կամ այն տարբերակներով: Իհարկե, յուրաքանչյուր հնչյուն ունի նաև արտաբերական ու ձայնաբանական տարբերակներ, սակայն դրանց մենք այստեղ չենք անդրադառնում:

Հնչյունական տարբերակայնություն դիտարկվում է, երբ զուգահեռ գործառում են՝

1) նույն բառային միավորի հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը, ընդ որում՝ հնչյունափոխված եզրը կարող է ներկայացնել հնչյունափոխական զանազան իրողություններ, ինչպես՝

ա) հավելում. կըճեփ - կըռճեփ, ղըրկել – հըղըրկել, լիքը – լինքը, քըսանըխինգ – քըսաննըխինգ, տըսնութ – տըսնըութ, ճիրել – ճիրքել, բալա - բալամ և այլն.

բ) անկում. խիվընդնալ - խիվընննալ, հառավտընէ – հառավնէ, բըխկըռտալ- բըկըռտալ, հիմանալ - հիմնալ, ժօղվել – ժօղել և այլն.

գ) դրափոխություն. ծըղղալ – ծըղղալ, չըվլաղ – չըլվաղ, զըգվալ - գըվգալ, լըվասկ – վըլասկ, սօվրել - սօրվել, փըշրել- փըրշել, կէսրար – կէրսար և այլն.

դ) առնմանում. ըսպիչկա - ըշպիչկա, դ՛ալար - դ՛ալալ, հ՛ավել – հ՛էվել, ըզգուշ – ըշկուշ և այլն.

ե) տարնմանում. զուլըլել – զուլըրել, լուլկա – լուրկա, հ՛էրես – հ՛իրես, հ՛էդեվ – հ՛իդեվ և այլն.

զ) դիրքով պայմանավորված այլ փոփոխություններ. կօղրել – կօյրել, պըռծընել - պըռզնել, հընցընել – հրնանել, ջըղիզ - ջըղինճ և այլն.

է) համաբանություն. չինել - չիքել, ուցուն – ութանասուն, յօթանասուն – յօցուն և այլն.

ը) կրճատում. բ՛առցէք – բ՛առց, հ՛ըլը - լը, մէ փշուր – մէշու, մէ փըշուր էլ – մէշօլ, քառասունմէկ – քառմէկ, յեռասունէրկու – յեռկու և այլն.

թ) մասնավոր այլ փոփոխություններ. բ՛արլուս - բ՛այլուս, մեռլի – մեռնի, սըխալ - սըղալ, գ՛ըթալ - գ՛ըթէլ, գ՛իշեր - գ՛ըշեր, գիժ - գէժ, դ՛ըրկից - դ՛ըրկեց, դ՛էմ - դ՛եմ, քէռթել - քըռթել և այլն.

ժ) հաջորդական փոփոխություններ.

ժա) երբ հնչյունական մի փոփոխության հետևանքով բառի մեջ կատարվում է մեկ այլ փոփոխություն ևս. կըմըշտել – կըժ-

մըթել, հընցըցընել – հընսցընել, ըզդիզ - ըզդինձ, պըռձընել - պըռզնել, թըզբեխ – թըզբէս, ըշպիշկա – իպիշկա և այլն.

ժբ) երբ հնչյունական մի փոփոխության ուղղակի հաջորդում է մեկ այլ փոփոխություն. հէդեվանց – հիդեվանց – հիդվանց, հէբեսանց – հիբեսանց – հիբսանց, հէբեսօվ – հիբեսօվ – հիբսօվ, հէբեսատեղ - հիբեսատեղ – հիբսատեղ և այլն.

2) նույն նախնական ձևին հանգող և տարբեր զարգացման ընթացք ներկայացնող տարբերակներ. հարիր – հարուր (հարեւր), ղըրկել - հըղըրկել – հօղըրկել (յուղի արկանել), հըղեղ – հըղօղ (ուղեղ), չընոխկ – չընորք (չնորհք), տըսնէրկու – տըսվէրկու (տասնուերկու), յեռթում – հօռթում (երդումն), գիդալ - գինալ (գիտենալ) և այլն.

3) փոխառյալ բառի հնչյունափոխական տարբեր ձևեր. Աբէլանցի - Ապէրացյա, ըշհուդ - ըշվուդ, մըխաՍո – մուխաՍո, մուրազ - մուրադ, տէլէվիզըր – տէլէվիզօր և այլն.

4) գրական լեզվի ազդեցությամբ առաջացած և բուն բարբառային ձևեր. խառնիս – հառասանիք, խառնըսվոր – հառասանքավոր, խավսար – հավասար, չընոխկ – չընորք, օխտ – յոթ, լուս – լույս, խանդիստ – հանդիստ, խանէլուկ – հանէլուկ, խօքի – հօքի և այլն:

Ինչպես տարբեր են հնչյունական տարբերակայնության առաջացման ուղիները, այնպես էլ նույնական չեն այդ իրողությունը պայմանավորող մասնավոր գործոնները: Բերված օրինակներից երևում է, որ հաճախ տարբերակայնություն դրսևորվում է հնչյունափոխական գործընթացների հետևանքով, երբ նախնական ձևը չարունակում է գործածվել հնչյունափոխված ձևին զուգահեռ: Դեպքերի մի մասում լեզվական հանրության մտապատկերում և խոսքում անհնչյունափոխ ձևի պահպանումը կարող է պայմանավորված լինել բառի բաղադրիչ ձևույթի՝ այլ պայմաններում անհնչյունափոխ գործածությամբ: Օրինակ, խիվընդնալ - խիվըննալ, հառավտընէ – հառավնէ, սօվրել – սօրվել, մեռլի – մեռնի և բառի աճմամբ պայմանավորված նման այլ դեպքերում անհնչյունափոխ ձևերի գործածությունը թերևս պայմանավորված է խիվանդ, հառավոտ, սօվոր, մեռել ձևերի գի-

տակցմամբ և հաճախակի գործածությամբ (նաև՝ այլ կազմություններում, ինչպես՝ խիվընդնդերի, հառավտուն, սօլօրուտի, մեռըլնդերի): Ամբողջական և կրճատ ձևերի զուգահեռ գործածությունը թերևս պայմանավորված է առաջինների՝ անհրաժեշտության դեպքում իմաստը առավել ամբողջական և տարբերակված արտահայտելու ունակությամբ (բ՛առդէք – բ՛առդ, մէ փշուր – մէշու, մէ փըշուր էլ – մէշօլ, քառասունմէկ – քառմէկ, յեռասունէրկու – յեռկու): Խոսքի տեմպը, իմաստը ընդգծելու մղումը, շեշտադրությունը նույնպես կարող են հիմք դառնալ տարբերակների գոյության: Օրինակ, հընցըցընել – հընսցընել կարդի դեպքերում դեր է խաղում խոսքի տեմպը. առաջինը բնորոշ է դանդաղ, երկրորդը՝ արագ տեմպին: Խոսքային իրադրությունը ևս կարող է պայմանավորել տարբերակներից մեկի ընտրությունը. օրինակ, խոսողի բուռն ցանկությունը և Աստծուն ներկայացվող ի սրտե խնդրանքը կարող են պայմանավորել Աստըված ձևի գործածությունը (Ա՛աստըված, էնենց Աըա՝ մեզի փոռցանք ռասա չիք՛ա), մինչդեռ սովորական հիշատակման դեպքում գործածական է Աստված ձևը (Աստված յեղ ու յեռուն Աննա): Նախնական ձևի գործառության չարունակումը կարող է պայմանավորված լինել նաև լեզվական հանրության մեջ արտասանական ավանդույթների պահպանմամբ, հնի և նորի միջև իմաստային տարբերության բացակայությամբ: Թերևս այդ պատճառով է, որ հանդիպում են այնպիսի զուգաձևություններ, ինչպիսիք են՝ հ՛էրես – հ՛իրես, հ՛էդեվ – հ՛իդեվ, գ՛իշեր – գ՛ըշեր, դ՛էմ – դ՛եմ, քէռթել – քըռթել, լիքը – լինքը, գ՛ըթալ – գ՛ըթթել և այլն: Երբեմն տարբերակայնության առկայությունը կարող է պայմանավորված լինել բառի հնչյունական ձևավորման ոչ հստակ պատկերացմամբ և այս կամ այն ձևի գործածությունը առանձնապես չկարևորելով, ինչպես՝ զուլըլել – զուլըրթել, լուլկա – լուրկա, խալալ – խալար, չըփլաղ – չըլփաղ, թըզբեխ – թըզրէս և այլն:

Նույն նախնական ձևին հանգող և տարբեր զարգացման ընթացք ներկայացնող տարբերակների առկայությունը թերևս կարող է պայմանավորված լինել բարբառի շրջանակներում խոսվածքային տարբերակների ընդհանրայնացմամբ և զուգահեռ

գործածութեամբ, նաև բարբառային այլ միավորներից կատարված ներթափանցումներով, ինչպես՝ կար – կէր, հարիր – հարուր, պիդալ – գինալ, պանդրաստ – պայրաստ, կօղրել – կօյրել, հիրար – հիրուր *և այլն:*

Բանավոր փոխառութիւնների պարագայում տարբերակայնութեան առաջացմանը նպաստում են օտար բառերի հնչապատկերների տարատեսակ յուրացումներն ու ընկալումները, ինչպես՝ կանտուրկա – կանտըրուլկա – կանտըրուտկա, ըզհուդ – ըզվուդ, տէլէվիզըր – տէլէվիզօր, մուրազ – մուրադ, կալբաս – կալբաստ *և այլն: Զուգաձևութիւններ առաջ են գալիս նաև այն դեպքում, երբ նոյն բառը բարբառ է մուտք գործում և՛ խոսակցական, և՛ գրական աղբիւրներից (կանպեկ – կօպէկ, չանկալաթ – չօկօլաթ, պամադօր – պամիդօր): Տարբերակայնութիւն առկա է նաև այն դեպքում, երբ գրական լեզուից բարբառ մուտք գործած ձևը դեռևս լիովին չի փոխարինել համարժեք նախնական, բարբառային ձևին, ինչպես՝* հառսանիք – խառնիս, չընորք – չընոխկ, յօթ – օխտ, հավատալ – ևվատալ, կայծակ – կէծակ *և այլն:*

Շատ դեպքերում տարբերակայնութիւնը կարող է բացատրվել մեկից ավելի գործոններով: Օրինակ, պանկասութուն – պանքասութուն *զուգի դեպքում առաջին ձևի գործառութիւնը կարող է պայմանավորված լինել* պանկաս արմատի *(նաև՝* պանկասավոր *և նման այլ կազմութիւնների) առկայութեամբ, խոսքի դանդաղ տեմպով, բառի արմատական իմաստը ընդգծելու մղումով, արմատի վրա երկրորդական շեշտ ընկնելու հանգամանքով և այլն:*

Նշենք, որ խոսքը վերաբերում է զուգահեռ ձևերի գոյութեան հիմունքներին ընդհանրապես, բայց շատ դեպքերում բարբառային խոսքին հատուկ այս կամ այն ձևի ընտրութիւնը կարող է լինել ակամա, առանց որևէ նախադրյալի, այսինքն՝ եթե բարբառախոս միջավայրում տարբերակային ձևերը չըջանառում են, ապա դրանցից որևէ մեկի օգտագործումը կարող է և տեղի ունենալ առանց որևէ հիմունքի:

Պետք է նկատի ունենալ, որ տարբերակայնութիւն ներկայացնող ձևերը միշտ չէ, որ հավասարաչափ գործածական են:

Հաճախ դրանցից մեկը պակաս գործածական է և, թվում է, դուրս է մղվում նոր սերնդի խոսքից: Օրինակ, հետևյալ տարբերակային ձևերում առաջին եզրը ներկայացնում են նման ձևեր. խաղար – հազար, չընոխկ – չընորք, օխտ – յօթ, կէծակ – կայծակ, տըսվէրկու – տըսնէրկու, հօռթում – յեռթում և այլն: Սակայն այդ դուրսմղումը բավականին դանդաղ է ընթանում, որովհետև բարբառային խոսքը գիտակցական կանոնարկման չի ենթարկվում, և տարբերակային այս կամ այն ձևը շարունակում է գործառել լեզվական հանրության առանձին հատվածներում: Ի դեպ, այսօր Բայազետի բարբառում գործառում են տարբերակային ձևեր, որոնք դեռևս միջինհայերենյան շրջանից են գալիս[53]*: Օրինակ, միջին հայերենի յղրկել – յողրկել զուգաձևությանը համապատասխանում են բարբառային հըղրկել – հօղըրկել տարբերակները, այդպես նաև՝ միջ. հյ. մուրազ / մուրատ / մուրազ – Բ. մուրազ / մուրազ, միջ. հյ. ջհուտ / ջֆուտ – Բ. ջըհուդ / ջըվուդ, միջ. հյ. սֆաթ / սիֆաթ – Բ. սըֆաթ / սիֆաթ, միջ. հյ. սովրիլ / սորվել – Բ. սօվրել / սօրվել, միջ. հյ. տափկիլ / տափկնալ – Բ. տափկել / տափկընալ և այլն:*

Ինչպես արդեն նշել ենք, բարբառում տարբերակային ձևերի զուգահեռ գործածությունը տարատեսակ դրսևորումներ ունի նաև բառապաշարում և քերականական համակարգում, ներհամակարգային տարբերակայնությունը զուգորդվում է տարածական և հասարակական տարբերակայնությամբ, ուստի բարբառի համար տարբերակայնությունը պետք է համարել էական և բնութագրիչ հատկանիշ:

[53] Տե՛ս Ռ.Ղազարյան, Հ. Ավետիսյան, Մինչին հայերենի բառարան, ե., Հ. Ա. – 1987, 420 էջ, Հ. Բ – 1992, 472 էջ:

ՄԱՍ 2

Ա ՋԱՅՆԱՎՈՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ԵՎ «ԱՃԱՌՅԱՆԻ ՕՐԵՆՔԸ»

Բայազետի բարբառում ընդհանուրհայերենյան ա ձայնավորից բացի գործառում են նաև քմային արտասանությամբ ը և շրթնային արտասանությամբ ու հնչյունները:

Քմային ը-ն առաջնային շարքի ստորին բարձրացման ձայնավոր է, որ արտասանությամբ նույնանում է հայերենի այլ բարբառներում հանդիպող համապատասխան ձայնավորին: Ա.Ղաբրիբյանը նշում է, որ այսպիսի հնչյուն «ունեն հիմնականում մեր արևելյան բարբառները, համարյա բոլոր այն բարբառները, որոնք ունեն ձայնեղների խլացում»[54]: Ըստ Հ.Մուրադյանի՝ ինչպես ը հնչյունը, այնպես էլ քմային մյուս ձայնավորները (օ և ու հնչյունների՝ առաջնային շարքի, քմային տարբերակները) հատուկ են հատկապես Վասպուրականի, Սյունիքի ու Արցախի տարածքի բարբառներին[55]: Նշվում է նաև, որ կենտրոնական և հարակից բարբառները (Արարատյան, Մուշի, Կարնո, Նոր Ջուղայի, Սասունի, Թբիլիսիի, Արդվինի, Մալաթիայի և այլն) հիմնականում կա՛մ քմային ձայնավորներ չունեն, կա՛մ էլ ունեն միայն փոխառյալ բառերում և այն էլ, որպես կանոն, դրանցից միայն մեկը[56]:

Շրթնային ու-ի արտասանության սկզբում շրթունքները լարվում են և ձգվում առաջ, ձևավորվում է շրթնային հնչարան, որի հետևանքով ստացվում է սերտ օա արտասանություն: Հայ բարբառագիտության մեջ նշվել է, թե այս հնչյունը ստորին բարձրացման կամ կոշտ ա է, որը որոշակիորեն ունի շրթնայնաց-

[54] Ա.Ղաբրիբյան, նշվ. աշխ., էջ 107:
[55] Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 33:
[56] Տե՛ս նշվ. աշխ., էջ 44:

ման երանգ[57]*: Ըստ Ա.Ղաբիբյանի՝ այս հնչյունն «ունեն Երևանի ենթաբարբառին պատկանող Բայազեդի, ինչպես և Մարտունու շրջանի գյուղերի խոսվածքները»*[58]*: Հ.Մուրադյանը գրում է, որ այն հատուկ է Բայազետի և Մոկսի բարբառներին, իսկ որոշ բարբառներում շրթնայնացած ա - ն վերածվել է օ - ի (Հաջընի, Ագուլիսի, Համշենի բարբառները) կամ ու - ի (Սվեդիայի բարբառ)*[59]*: Մյուս կողմից՝ հայ բարբառագիտության մեջ որոշ չափով շրթնայնացած ա դիտարկվել է Վասպուրականի բարբառային միավորներում: Այսպես, Հ.Աճառյանը Վանի բարբառում դրսևորվող այդ հնչյունի մասին գրում է. «Ա-ն արտասանվում է (հատկապես շեշտի տակ) փակ ձևով, անգլիական å ձայնի նման, բայց նրանից մի քիչ բաց.- հյ. ա և օ ձայնավորների միջին աստիճանն է»*[60]*, իսկ Մ.Մուրադյանը իր «Շատախի բարբառը» աշխատության մեջ բարբառային այդ միավորում հանդես եկող ա ձայնավորի մասին գրում է, որ այն «ունի կոշտ, որոշ չափով շրթնայնացված արտասանություն՝ լեզվի ստորին բարձրացմամբ: Կատկային ձայնավոր է»*[61]*: Ժ.Միքայելյանի կարծիքով՝ Վանի, Շատախի, Մոկսի խոսվածքներում գործառող խնդրո առարկա ձայնավորը «հետին շարքի ստորին բարձրացման հնչյուն է, որի արտասանությանը շրթունքները գրեթե չեն մասնակցում: Նրա արտաբերման տեղը, գրական հայերենի ա-ի համեմատությամբ, ավելի հետնալեզվային և ստորին բարձրացման է... Այն, իհարկե, տարբերվում է Բայազետի բարբառում գործառող շրթնայնացած ա-ից, որի արտասանությանը շրթունքները, իրոք, մասնակցում են»*[62]*: Թվում է՝ Բայազետի բարբառի ա-ն, այսպիսով, միջին դիրք է գրավում նվազ շրթնայնացած ա - ի (Վասպուրականի խոսվածքներ) և խիստ շրթնայնացման արդյունքում օ կամ ու դարձած տարբերակների միջև (Հաջընի, Ագուլիսի, Համշենի, Սվեդիայի բարբառներ):*

---

[57] Տե՛ս Ա.Ղաբիբյան, նշվ. աշխ., էջ 45, Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 34:
[58] Ա.Ղաբիբյան, նշվ. աշխ., էջ 108:
[59] Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 109:
[60] Հ.Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Ե., 1952, էջ 14:
[61] Մ.Մուրադյան, Շատախի բարբառը, Ե., 1962, էջ 28:
[62] Ժ.Միքայելյան, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն), Ե., 2009, էջ 16 – 17:

Շրթնային ու ձայնավորի առկայությունը Բայազետի բարբառի ձայնավորական համակարգի առավել ցայտուն յուրահատկությունն է: Սակայն բարբառիս հպանցիկ անդրադառնալով՝ ուսումնասիրողները բարբառային խոսքում այս հնչյունի բաշխման որևէ օրինաչափություն չեն արձանագրել, և բերված օրինակներից էլ այնպիսի տպավորություն է ստացվում, թե այն կարող է հանդես գալ ցանկացած դիրքում, կամ էլ թե՝ Բայազետի բարբառում ա ձայնավորը գրեթե միշտ շրթնային է[63]*: Մասնավորապես, Հ.Մուրադյանը գրում է. «Նոր Բայազետի (Կամոյի) ու Մարտունու շրջանի գյուղերի խոսվածքներին հատուկ ա - ձայնավորը ա - ի արտասանական ազատ տարբերակն է, որ կարող է հանդես գալ համարյա բոլոր դիրքերում, որպես այդ խոսվածքների արտասանական բազային հատուկ ձայնավոր»*[64]*:*

Մեր դիտարկումները, սակայն, ցույց են տալիս, որ իրականում Բայազետի բարբառում ա և ա հնչյունները գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, որը դրսևորվում է հետևյալ կերպ[65]*.*

1. ա հնչյունը հանդես է գալիս՝

ա) բացարձակ բառասկզբում, օրինակ՝ աբրանք, ատամ, ախճիկ, աթոռ, աստղ, ամբ, ալուր, ածիկ, աղանձ, աճառ, աճ *և այլն (բացառություն են կազմում սակավաթիվ բառեր, որոնք սկսվում են ա ձայնավորով, ինչպես՝* այ, ահա, այսի, այտի, այնի, այտենց, այսենց, առուա, ախար, ա հա հա, այմառթ*).*

բ) բառասկզբի խուլ բաղաձայններից (բացառությամբ խ չփականը) և մ, ն հպական ձայնորդներից հետո. օրինակ՝ պանտ, պաննիր, տանկ, տանվար, կանր, կանտու, ծանփ, ծանրավ, ճանր, ճանգար, փանռ, փանյտոն, սանր, սանդգա, չանտ, չանբաչ, մանտ, մանքուր, նանվ, նանմակ, կան , պան (պանալա) *և այլն (բացառություն են մի երկու ձայնարկություններ՝* պա՛ պա՛ պա՛, պա՛հօ՛, պա՛հ, տա՛շ, ա՛յմառթ*).*

---

[63] Տե՛ս Ա.Ղալիբյան, նշվ. աշխ., էջ 108, 229. Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 82:
[64] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 41:
[65] Այս պարագայում նկատի չենք ունենում նոր և նորագույն այն փոխառությունները և հարևան բարբառների ազդեցությունն ներկայացնող այն դեպքերը, որոնցում հանդես է գալիս ա հնչյունը:

2. ա հնչյունը հանդես է գալիս՝

ա) բառասկզբի ձայնեղ, չնչեղ ձայնեղ և չնչեղ խուլ բաղաձայններից, խ խուլից, ձայնորդներից (բացի մ և ն հպականները) հետո, օրինակ՝ բալա, բ՛անցըր, գայկա, գ՛առ, դադ, դ՛ար, ձ՛ավար, ջան, ջ՛առթել, փապ, քար, թան, ցավ, չար, հ՛ավէս, հ՛առէչ, խաց, խափել, լալ, լակոտ, ռաստ, ռաֆադա, յարա, յան, յա, խա, հ՛ա՛, քա և այլն. այս դիրքում ա հնչյունը բացառված է.

բ) երկվանկ և բազմավանկ բառերի ոչ բառասկզբի վանկերում. գ՛էրան, բօստան, չինական, ջ՛օչընալ, գ՛ազանավարի, տըղա, ծառա և այլն (բացառություն են այն բաղադրությունները, որոնցում ա հնչյուն ունեցող արմատը սկզբից ստանում է որևէ ձևույթ, ինչպես՝ լեղապատառ, ջըրծաղիկ, տընակալ, անտանչ և այլն[66]):

Այսպիսով, քանի որ Բայազետի բարբառում ա և ա հնչյունները ունեն իրենց գործառական հստակ ոլորտները և որևէ դիրքում հակադրական զույգ չեն կազմում ու իմաստատարբերակիչ դեր չունեն, ուրեմն դրանք ա հնչույթի դիրքային տարբերակներն են, ընդ որում՝ չրթնային ա հնչյունը դիրքային պարտադիր տարբերակ է բացարձակ բառասկզբում և բառասկզբի որոշակի բաղաձայններից հետո, իսկ բառասկզբում այլ բաղաձայններից հետո և բառի մյուս դիրքերում հանդես է գալիս ոչ չրթնային ա տարբերակը:

Դիրքային նման հստակ բաշխվածությունը և ա-ի գործառական սահմանափակվածությունը թույլ են տալիս ենթադրել, որ ա-ի հանդես գալը կարող է պատճառաբանված լինել որևէ գործոնով, որը իր բացատրությունը կարող է ստանալ հետևյալ երկու իրողությունների դիտարկումով.

ա) ա հնչյունը հաջորդում է որոշակի բաղաձայնների և չի կարող հաջորդել մյուս բաղաձայններին,

---

[66] Եթե նման կազմությունների բաղադրիչները առանձին հստակ չեն գիտակցվում, ապա դրսևորվում է ա ձայնավորը. բ՛ացակա, ջ՛ըրտար, վըսկապ և այլն:

բ) ա հնչյունը հանդես է գալիս միայն բառասկզբում (բացարձակ և բաղաձայնահաջորդ):

Առաջին իրողությունը ենթադրում է, որ շրթնային ա - ի գործառությունը դեպքերի մի մասում պայմանավորված է նախորդող բաղաձայնի որակով: Այլ կերպ ասած՝ ա - ին նախորդող բաղաձայնները թերևս ունեն ընդհանուր հատկանիշ, որն էլ այդ դիրքում ա հնչույթի շրթնային տարբերակի դրսևորման պայման է, իսկ մյուս բաղաձայնները, որոնցից հետո շրթնային տարբերակը բացառվում է, չունեն այդ հատկանիշը: Այդպիսով, իրար են հակադրվում՝ ա) խուլ բաղաձայնները (բացի խ - ն), մ, ն ձայնորդները և բ) ձայնեղները, շնչեղ ձայնեղները, շնչեղ խուլերը, ձայնորդները (բացի մ - ն և ն - ն), խ խուլը: Ուրեմն, այս երկու խմբերը միմյանցից զատող հատկանիշով էլ հենց պետք է պայմանավորված լինի ա - ի դրսևորումը: Բաղաձայնական այդ հատկանիշը չի կարող վերաբերել արտաբերության եղանակին կամ տեղին, որովհետև խմբերում ընդգրկված հնչյունները արտաբերական այդ յուրահատկություններով միմյանց չեն հակադրվում: Այդ հատկանիշը կարելի էր բխեցնել բաղաձայնների մեջ ձայնի, աղմուկի և շնչի դրսևորումների տարբերություններից, եթե առաջին խմբում լիներին միայն խուլ բաղաձայնները, իսկ երկրորդ խմբում՝ մյուս բաղաձայնները, սակայն նման մոտեցմանը հակասում են մ, ն ձայնորդների առկայությունը առաջին խմբում և խ խուլի առկայությունը երկրորդ խմբում: Ուրեմն, հիշյալ երկու խմբերը կարող է սահմանազատել այնպիսի մի հատկանիշ, որով խուլերը տարբերվում են մյուս բաղաձայններից, մ և ն ձայնորդները՝ մյուս ձայնորդներից, իսկ խ խուլը՝ մյուս խուլերից:

Թվում է՝ այս դեպքում էական դեր է խաղում բաղաձայնների որակը ըստ լարվածության հատկանիշի, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ խուլ բաղաձայնները, ինչպես նշում են ուսումնասիրողները[67], հայերենի առավել լարված հնչյուններն են, իսկ ձայնորդները, ձայնեղները և շնչեղ խուլերը լարվա-

[67] Տե՛ս Է.Ադայան, նշվ. աշխ., էջ 203. Ա.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Ե., 1988, էջ 91:

ծուլության առումով թուլ բաղաձայններ են[68]: Այնուհետև, ձայնորդների մեջ մ և ն հնչյուններն առանձնանում են նրանով, որ հալականներ են, ինչը ենթադրում է ավելի մեծ լարվածություն, քան ունեն մյուս ձայնորդները, որոնք արտաբերության եղանակով չփական են: Մինչդեռ խ չփականը մնացած խուլերից առանձնանում է պակաս լարվածությամբ՝ այդպիսով հարելով բաղաձայնների՝ ոչ լարված արտասանություն ունեցող խմբին: Այս բաղաձայնի թուլ լարվածության մասին են վկայում Ա.Խաչատրյանի հետևյալ դիտարկումները. խ – ի «ինտենսիվությունը ավելի թուլ է մյուս չփականների համեմատությամբ», «խ – ն ու ղ – ն ավելի շատ իրենք են ազդվում հարևան ձայնավորներից՝ իրենց սպեկտրային էներգիայի կազմավորմամբ նմանվելով նրանց»[69], «խ – ն և ղ – ն ավելի հետնալեզվային կազմություն ունեն, քան կ, գ, ք – ն», և, վերջապես, շրթունքները խ – ի և ղ – ի արտասանության ժամանակ «չեզոք ձևով բացված են և այդ հնչյուններին լրացուցիչ երանգավորում չեն տալիս»[70]: Այսպիսով, մ, ն հալականները, լինելով առավել լարված ձայնորդներ, ընդհանրություն ունեն խուլերի հետ, իսկ, խ խուլը ընդհանրություն ունի ձայնեղների, ձայնորդների, չնչեղ խուլերի հետ՝ պակաս լարված լինելով:

Հետևում է, որ վերը բերված բաղաձայնական երկու խմբերը իրապես տարբերվում են լարվածության հատկանիշով, և քանի որ այդ հատկանիշով բնութագրվում են առաջին խմբի, այսինքն՝ շրթնային ա̈ - ին նախորդող բաղաձայնները, ուրեմն ավյալ դիրքում ա – ի շրթնային տարբերակի հանդես գալու պայման է նախորդ բաղաձայնի արտասանական լարվածությունը:

Շրթնային ա̈ հնչյունի դրսևորմանն առնչվող երկրորդ իրողությունը՝ միայն բառասկզբում (բացարձակ կամ բաղաձայնահաջորդ) նրա հանդես գալը, վկայում է, որ այդ հնչյունի գործառությունը ընդհանրապես պայմանավորված է բառասկզբի դիրքով, ավելի ճիշտ՝ Բայազետի բարբառի բառասկիզբի արտասա-

[68] Նույն տեղերում:
[69] Ա.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 182:
[70] Նշվ. աշխ., էջ 181:

նական յուրահատկությամբ: Այդ յուրահատկությունը հասկանալուն կարող է նպաստել վերն ասվածից բխող հետևյալ պնդումը. Բայազետի բարբառում բառասկզբում (բացարձակ կամ բաղաձայնահաջորդ) որպես կանոն հանդես է գալիս ա հնչույթի չրթնային տարբերակը, բացառությամբ այն դեպքերի, երբ բառն սկսվում է ա - ին նախորդող թուլլ լարվածություն ունեցող բաղաձայնով: Այսինքն՝ ա - ի չրթնային արտասանությունը բացառվում է բառասկզբում արտասանական անհրաժեշտ լարվածության բացակայության պատճառով, ուրեմն՝ դրա արտասանությանը նպաստում է լարվածության առկայությունը: Հետևում է, որ Բայազետի բարբառում բառասկիզբը ընդհանրապես բնորոշվում է արտասանական որոշակի լարվածությամբ, որը, սակայն, որոշակիորեն թուլանում է, երբ բառն սկսվում է լարվածության առումով թուլլ հնչյունով, և ա - ի դրսևորման համար անհրաժեշտ լարվածության բացակայությունը բացառում է այդ դիրքում նրա հանդես գալը: Այդ է վկայում նաև հետևյալ հանգամանքը. բառասկզբում բացառության կարգով սովորական ա ունեցող բառերը (այ, ահա, այսի, այտի, այնի, այտենց, այսենց, առա, ախար, ա հա հա, պա պա պա, պահօ, պահ, տաշ, այմառթ) ունեն մեկ ընդհանուր հատկանիշ, այն է՝ բոլորն էլ անբռնազբոս, ակամա արտասանվող բառեր՝ ձայնարկություններ, ձայնարկության արժեք ստացած բառեր կամ այ ձայնարկությամբ բաղադրված ցուցականններ են: Հասկանալի է, որ ակամա արտասանությունը ենթադրում է արտասանական լարվածության թուլացում կամ բացակայություն, որն էլ ա հնչույթի ոչ չրթնային տարբերակի արտասանության պայման է դառնում:

Այսպիսով, վստահաբար կարելի է պնդել, որ Բայազետի բարբառում ա հնչյունի դրսևորումը պայմանավորված է բառասկզբի արտասանական որոշակի լարվածությամբ, և այդ առումով հետաքրքրական է նաև Ռ.Բաղրամյանի մի դիտողությունը: Համարելով, որ Բայազետի բարբառում ա և ա հնչյունները ա ձայնավորի փոփոխություններն են ներկայացնում՝ ուսումնասիրողը գրում է. «Թե ինչ կանոններ կան դրանց համար, չկարողա-

ցանք գտնել»[71], *սակայն քիչ անց նկատում է. «Ա < ա փոփոխության համար նկատեցինք միայն մեկ պայման, այն է՝ երբ տրամաբանական շեշտը դրվում է ա - ով սկսվող կամ նախավանկում ա ունեցող բառի վրա, ապա այդ ա - ն դառնում է ա, որով այս փոփոխությունը տարածվում է ավելի շատ բառակազմի առաջին, քան երկրորդ կամ հաջորդ վանկերում գտնված ա - ի վրա»*[72]: *Ստացվում է, որ, չլինելով Բայազետի բարբառը կրող, ուսումնասիրողը ա հնչյուն նկատել է տրամաբանական շեշտով ընդգծված, այսինքն՝ առավել լարված դիրքում*[73], *որն իր հերթին դալիս է հավաստելու Բայազետի բարբառի բառասկզբի լարված արտաբերության (և դրա հետևանքով ա ձայնավորի չրթնայնացման) վերաբերյալ մեր դիտարկման ճշմարտացիությունը: Այդ առումով հետաքրքրական է նաև բարբառիս բառասկզբում չնչեղ ձայնեղ բաղաձայնների առկայությունը: Ինչպես նշում է Ա.Խաչատրյանը, հայերենի բառասկզբում չնչեղ ձայնեղների առկայությունը որոշակիորեն կապվում է առաջին վանկի ուժգին արտասանության հետ*[74]: *Հնչյունաբանը նշում է նաև, որ «Բայազետի չնչեղ ձայնեղները, ի տարբերություն Ալաշկերտի, ավելի ուժեղ են»*[75]: *Բայց եթե բառասկզբի արտաբերական ուժգնության (կամ լարվածության) պատճառով այդ դիրքում ունենք ձայնեղների համեմատ ավելի լարված չնչեղ ձայնեղ բաղաձայններ, ապա վերջիններս խուլերի համեմատ այնուամենայնիվ պակաս լարված, ուրեմն և թուլ հնչյուններ են, ուստի նրանցից հետո, անհրաժեշտ լարվածության բացակայության պայմաններում, ա - ի չրթնային արտասանությունը բարբառումս բացառվում է: Տեղին է նշել նաև, որ հնչյունաբանական փորձառական ուսումնասիրությունները հաստատել են, որ լարված հնչյունների ժամանակ բերանի մկանները ավելի ակտիվ են գործում, քան*

---

[71] Ռ.Բալրամյան, Հայերեն բարբառներ, ե., 1972, էջ 15:
[72] Նույն տեղում:
[73] Բայազետի բարբառում տրամաբանական շեշտն ընկնում է բառի առաջին վանկի վրա: Ի դեպ, այստեղ տեղին է նաև հիշել Վանի բարբառի ա-ի չրթնային արտասանության մասին Հ.Աճառյանի՝ վերը բերված այն դիտողությունը, թե հատկապես շեշտի տակ է այդ արտահայտվում:
[74] Ա.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 146-147: Տե՛ս նաև Վ.Առաքելյան, Ա.Խաչատրյան, Ս.Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, ե., 1979, էջ 149:
[75] Ա., Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 146:

ոչ լարվածների ժամանակ, սակայն լարվածության հատկանիշը ունի ոչ թե երկակի, այլ հարաբերական բնույթ, որը կարող է բնորոշվել պակաս կամ ավելի հակադրությամբ[76]:

Կարող է հարց ծագել, թե ինչու արտասանության ուժգնությամբ կամ լարվածությամբ պայմանավորված հիշյալ իրողությունները (ա – ի շրթնային արտասանությունը կամ բաղաձայնների չնչեղ ձայնեղ արտասանությունը) չեն դրսևորվում բազմավանկ բառերի շեշտակիր, այսինքն՝ արտասանության ուժգնությամբ առանձնացող վանկում: Հարցի պատասխանը գտնելուն օգնում են հայերենի շեշտի վերաբերյալ կատարված փորձառական ուսումնասիրությունները[77]: Պարզվել է, որ հայերենում շեշտակիր վանկը, ունենալով ուժային բնույթ, իր ուժգնությամբ ամենաուժեղը չէ, սակայն նախորդող վանկի համեմատությամբ այն գրեթե միշտ ունի ավելի մեծ ուժգնություն: Մյուս կողմից՝ հայերենում բառասկիզբը ուժեղ դիրք է, և այդ դիրքի վանկը բառամիջի ու բառավերջի վանկերի համեմատությամբ ունի ուժգնության ավելի բարձր արժեքներ[78]: Ահա հայերենի բառասկզբի այս հատկության յուրօրինակ մի դրսևորումն է այն, որ Բայազետի բարբառում բառասկիզբն ավելի լարված արտասանություն ունի, քան նույնիսկ շեշտված վանկը:

Իհարկե, արտասանական լարվածությունն ինքնին չի ենթադրում հնչյունի շրթնային արտասանություն, սակայն այն կարող է ընդգծել այդ հնչյունի՝ խոսվածքին հատուկ արտաբերական յուրահատկությունը՝ ավյալ դիրքում առաջ բերելով հնչույթի շրթնայնացած տարբերակ: Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզու ունի իրեն հատուկ ոչ միայն հնչյունները, այլև դրանց յուրահատուկ արտասանությունը. բնականաբար սովածը վերաբերում է նաև բարբառներին: Վերևում արդեն հիշատակել ենք, որ Բայազետի բարբառին պատմաչխարհագրականորեն մերձավոր Վասպուրականի խոսվածքներում դրսևորվում է ա հնչյունի մի տարբերակ, որի արտաբերական յուրահատկությունը ուսումնասիրողներին թույլ է տալիս այն համարել որոշ չափով շրթնայնացած ձայնավոր: Կարծում ենք՝ ա – ի արտասանական նման

[76] Տե՛ս նշվ. աշխ., էջ 123:
[77] Տե՛ս Ռ.Թոխմախյան, Ժամանակակից հայերենի շեշտի բնույթը, «Լեզվի և ոճի հարցեր», պրակ 3, Ե., 1975, 123-207 էջ:
[78] Տե՛ս Վ.Առաքելյան, Ա.Խաչատրյան, Ս.Էլոյան, նշվ. աշխ., էջ 122:

յուրահատկությունը հատուկ է և Բայազետի բարբառին, որտեղ այն զուգորդվում է բարբառի արտասանական մեկ այլ առանձնահատկության՝ բառասկզբի արտաբերական զգալի լարվածության հետ և առաջ է բերում այդ դիրքում ա - ի շրթնային արտասանությունն՝ համաձայն վերը նշված օրինաչափությունների: Պետք է կարծել նաև, որ Վասպուրականի խոսվածքներում դիտարկված որոշ չափով շրթնայնացած ա - ն Բայազետի բարբառի ա - ի պես հստակ շրթնայնացած արտասանություն չունի հենց այն պատճառով, որ այդ խոսվածքների բառասկզբին հատուկ չէ Բայազետի բարբառին բնորոշ արտասանական լարվածությունը, որի արտահայտությունն է նաև այդ խոսվածքներում շնչեղ ձայնեղների բացակայությունը: Մյուս կողմից՝ Բայազետի բարբառին պատմաաշխարհագրականորեն մերձավոր Դիադինի բարբառը չնայած ունի շնչեղ ձայնեղ հպականներ և հպաշփականներ (որը բառասկզբի ուժգին արտասանություն է վկայում), սակայն, ի տարբերություն Վասպուրականի խոսվածքների և Բայազետի բարբառի, իր արտասանական բազայում չունի ա ձայնավորի այն որակը, որը, զուգորդվելով արտասանության որոշակի լարվածությանը (կամ ուժգնությանը), պետք է առաջ բերեր շրթնայնացած ա ձայնավոր:

Նկատենք, որ Բայազետի բարբառի բառասկզբում շնչեղ ձայնեղներ հանդես են գալիս հինհայերենյան բառաշերտում, լեզվաբանները ավելի հակված են կարծելու, որ գրաբարյան բառասկիզբն ուներ ոչ թե ձայնեղ, այլ շնչեղ ձայնեղ բաղաձայններ, իսկ Գ.Ջահուկյանն էլ համարում է, որ 5-րդ դարի հայ բարբառներին հատուկ հատկանիշներից են «Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ ձայնեղությունը» և «Ա - ի շրթնայնացման երևույթի առկայությունը»[79]: Այսինքն՝ կարող ենք ենթադրել, որ Բայազետի բարբառի բառասկզբի լարվածության և ա - ի շրթնային արտասանության հատկանիշները գալիս են հնագույն ժամանակներից, դեռևս նախագրաբարյան շրջանից: Այն հանգամանքը, որ բարբառիս բառասկզբի դիրքում նոր և նորագույն փոխառություններում գործառում են միայն մաքուր ձայնեղ հպականներ ու հպաշփականներ, վկայում է այդ

[79] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 163 - 165:

դիրքի արտաբերական յուրահատկություններում հետագայում տեղի ունեցած որոշ տեղաշարժերի մասին, սակայն իրողության նման սահմանափակվածությունը, այնուամենայնիվ, նշանակում է, որ արտասանական նախկին սովորությունները բավականին կայուն են (ոչ միայն հինհայերենյան որևէ բառի կամ արմատի սկզբի շնչեղ ձայնեղ բաղաձայնի արտասանությունը չի փոխել, այլ նաև դրանցով ձևավորված նորակազմություններում կամ գրական լեզվից կատարված փոխառություններում պահպանվում է շնչեղ ձայնեղ արտասանությունը, ինչպես՝ դ՛ասապրան, բ՛առցըրագույն, բ՛ընութագիր, գ՛օձարան, ձ՛եռագիր, ջ՛ըրագ՛իծ և այլն): Մյուս կողմից՝ համապատասխան դիրքերում ա հնչյունի կայուն դրսևորումը նաև նոր և նորագույն փոխառություններում (ադաշ, աղգուն, անջախ, ասլան, մադրալ, չանջու, չապկա, սալաթ, սալըխ, սաղըր /թրք./, ապիվկա, ադյալ, ակուշկա, մալէրօվնի, մալյար, նանակի, կալիգօր, կամանդ, կառզինգա, կամպուտըր, պագրիչկա, պադվալ /ռուս./) վկայում է, որ Բայազետի բարբառում այսօր ևս բառասկիզբը բավականին լարված է, շարունակում է այդ դիրքում դրսևորվել ա - ի չրթնային արտասանության արտաբերական միտումը, և բարբառիս արտասանական բազան իրեն է հարմարեցնում փոխառյալ բառերի արտասանությունը:

Ա. ձայնավորի մյուս՝ քմային տարատեսակը՝ ա հնչյունը, Բայազետի բարբառում հանդիպում է և՛ բառասկզբում, և՛ բառամիջում, և՛ բառավերջում, ընդ որում՝ հիմնականում նոր փոխառյալ բառերում[80] *(խոսքը ոչ միայն այլ լեզուներից, այլ նաև արտասանական բազայում ա հնչյուն ունեցող հարևան բարբառներից կատարված փոխառությունների մասին է), որը նշանակում է, որ այդ հնչյունը պայմանավորված չէ բարբառիս արտասանական բազայի առանձնահատկությամբ, և դրա դրսևորումը բարբառիս հնչյունական օրինաչափություններից չի բխում: Փաստորեն, Բայազետի բարբառում փոխառյալ բառերի արտասանությունը տվյալ դեպքում չի ենթարկվել արտասանա-*

[80] Այս հատկանիշով Բայազետի բարբառը հարում է հայերենի կենտրոնական բարբառներին:

կան բազայի յուրահատկություններին, փոխառությունները պատճենվել են իրենց բնիկ արտասանությամբ, և բարբառի արտասանական բազան ընդհանուր առմամբ չի խանգարել նոր արտասանությանը: Ավելին՝ որոշ դեպքերում հարևան բարբառների ազդեցությամբ ա հնչյունն է ի հայտ եկել նաև հինհայերենյան բառաշերտի բնիկ և փոխառյալ բառերում (ինչպես՝ գաթիկ, թաթիկ, թանանք, ժանգ, ժաժել, լաց, խայլի, կիրակի, հ՛ացկ, հ՛առէչ, հ՛առու, միյնակ, չիտակ, վըրա, տէքարկընիկ, փառ, փէսա, քառի և այլն): Իբրև արդյունք՝ բարբառային խոսքում ի հայտ է եկել նոր հնչյուն, որը, սակայն, ա հնչույթի՝ բարբառի արտասանական բազայի որևէ առանձնահատկությամբ պայմանավորված տարբերակ չէ:

Իհարկե, Բայազետի բարբառում ա - ի բաշխումը հիմնականում պայմանավորված է փոխառյալ բառերի հնչյունական կազմությամբ, բայց բարբառում այդ հնչյունի դրսևորումները հետաքրքրություն են ներկայացնում նաև ըստ բառապաշարի պատմական շերտերի և հնչյունական համակարգի զարգացման, ինչպես նաև առանձին դեպքերում արտասանական բազայի հնարավոր դիմադրության առումով: Ըստ այդմ՝ բացարձակ բառասզբում ա հնչյուն հանդիպում է մի շարք բառերում՝ ձայնեղ և ձայնորդ բաղաձայններից առաջ, օրինակ՝ ադաթ, ագիվ, աժբանես, աջալ, ալք, արաբի, ամանկ, այիբ, անգալ, ավալ, աջալ և այլն: Այս դիրքում, ըստ մեր ունեցած տվյալների, ա ձայնավորը խուլ հնչյունի նախորդում է միայն ախկ, ափաչկարա, ասըլ բառերում: Բառասկզբի բաղաձայնահաջորդ դիրքի ա - ին ավելի հաճախ նախորդում են ձայնեղներ և ձայնորդներ (բաբա, բաչ, գադա, դարակ, դանաս, ձաձա, ջայէլ,

վ՛ախկ, ղ՛այլա՛, ղ՛ա՛ նել, ժ՛անգ, հ՛աչկ, հ՛առու, հ՛այվան, հ՛ադգա՛, լ՛աց, ռ՛անգ, նա՛զար, մ՛այլա՛, յ՛ախկ, յ՛աքա՛), նաև չնչեղ խուլերը (թ՛ազա՛, թ՛առս, փ՛ա՛ռ, փ՛ա՛ռչ, ք՛ա՛ր, ք՛ա՛ռթու, չ՛ադըր, չ՛անա՛), խուլ շփականները (չ՛ա՛ռ, չ՛ավա՛, ս՛աքա՛ր, ս՛ա՛ռթ, խ՛անա՛ք, խ՛աքանդա՛զ, խ՛այլի, ֆ՛այմ, ֆ՛անդ):

Բառասկզբի չնչեղ ձայնեղներից հետո ա՛ ձայնավոր հանդիպում է միայն դ՛անակ, դ՛ա՛ռը, դ՛արման, ձ՛ա՛ք բառերում[81]*, իսկ խուլ հպականներից, հպաշփականներից հետո՝ միայն ճա՛պ (ճա՛պանակի), կա՛ժ, կա՛ռ բառերում*[82]*: Հաճախ խուլ հպական կ – բաղաձայնին ա՛ հաջորդում է փոխառյալ այն բառերում, որոնցում այդ կ – ն ծագում է ավագ սերնդի խոսքում տակավին դրսևորվող օտար կ՛ հնչյունից, օրինակ՝ կա՛ստու, կա՛րիբ, կա՛լիբ, կա՛միչ, կա՛լը և այլն: Սակայն նման այլ դեպքերում այդպիսի կ – ից հետո առկա է չբ՛նային ա, ինչպես՝ կ՛ազան, կ՛ափաղ, կ՛ազ, կ՛ալչա, կ՛ամազ, կ՛ավուրմա, կ՛ալմակալ, կ՛աչաղ, կ՛ալին և այլն*[83]*:*

---

[81] Բայազետի բարբառում չնչեղ ձայնեղներ դրսևորվում են միայն հինհայերենյան բառաշերտում. մինչդեռ ա՛ հնչյունը բարբառ է թափանցել հիմնականում նոր փոխառությունների՛ուստի այս ձևերը ակնհայտորեն արդյունք են իրենց արտասահմանական բազայում այդ հնչյունն ունեցող հարևան բարբառների, հատկապես՝ Դիադինի բարբառի ազդեցության, որտեղ ա՛ ձայնավորին բառասկզբում չնչեղ ձայնեղ հպականներ ու հպաշփականներ նախորդում են:

[82] Դիադինի բարբառում ևս, որտեղ բառասկզբի խուլ հպականներից ու հպաշփականներից հետո հանդես է գալիս ա՛ ձայնավորը, այս բառերն իրենց կազմում ունեն քմային ա, և քանի որ քմային արտասանությունը հատուկ է Դիադինի բարբառին, ուրեմն Բայազետի բարբառը այս դեպքում ևս կրել է Դիադինի կամ հարևան մեկ այլ բարբառի ազդեցությունը:

[83] Նման մի շարք դեպքերում ա՛ չի դրսևորվում նաև Խոյի և Դիադինի բարբառներում (կ՛ավուրմա, կ՛աչաղ, կ՛ամմազ, կ՛ալին, կ՛ազ), որը կարող է նշանակել նաև փոխառու լեզվում կամ բարբառում այդ բառերում ա՛-ի բացակայություն:

Բավական հաճախ է ա հնչյուն հանդես գալիս բառի մյուս վանկերում, օրինակ՝ ագռաժաժաժ , ալվադ, բարաքաթ, բըլագ, բըլաղուկ, գուզամ, գուլաչ, գօդան, գ՛անակ, գարակ, գօչակ (գէչակ), զավզակ, թուխթակ, ժէշտանէչի, չըլակ, չիտակ, պէնջակ, սիֆտակ, օրինակ, թամբալ, թալաք, լաչառ, խօնար, կաչանգ, կէյրաթ, կուլաք, հ՛ալբաթ, հափսաթաթիկ, հունար, ճըղանգ, մինդար, նաֆաս, մըխտառ, նօքար, չըչկառ, ռումաթ, տէքարկընիկ, քարաք, քօռափայմ, բուզա, գիվա, գիլլա, գօրա, զուզա , թիքա, թուլա, կըսա, չուչա /չիչա, սըբա, փուքա, փէսա, փուզա, քուֆտա /քիֆտա *և այլն:*

Ա *ձայնավորի դործածութեյան առումով նկատելի է նաև, որ մեկից ավելի ա ունեցող բազմավանկ բառի առաջին* ա *- ին սովորաբար հաջորդում են նույնպես քմային* ա *- եր, ինչպես՝* բաբա, դասատա, թանկագին, հ՛առակաջօ, ձաձա, ճապանական, մասալա, չանա, ջայլանակ, քաստանա *և այլն: Բայց բառի աճման դեպքում այս կանոնը կարող է և չգործել, օրինակ՝* կաբիբական, ազըզամեռ, դանական, զայլատարիկ, հ՛աչկացավ *և այլն: Նույն բառի մեջ* ա *(կամ* ա*) և* ա *հնչյուններ կարող են հանդիպել նաև, եթե* ա *ունեցող բառը սկզբից ստանա* ա *- ի այլ տարբերակ պարունակող ձևույթ, ինչպես՝* անգուման, անդադ, աներ ձ՛աք, գ՛եղավըրա, թամախքար, թափթաղա, լալուկառ *և այլն: Մյուս կողմից, հաստակ գործում է այն օրինաչափությունը, որ* ա *կամ* ա *հնչյուններից հետո արմատի կազմում կամ նրան հաջորդող երկրորդական ձևույթում* ա *հանդես գալ չի կարող,*

օրինակ, անանուն, բ՛աժակ, բ՛անակ, բ՛արակ, դադաստան, անտամ, կանթել, բալա, դ՛աթա, դ՛առատակ, կանթաք, դաղավոր և այլն:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Բայազետի բարբառում ա հանդիպում է հիմնականում ա հնչյունի դիրքերում (բառասկզբում ձայնեղ բաղաձայնների հարևանությունն, բառի ոչ բառասկզբի վանկեր), մինչդեռ ա հնչյունի դիրքերում, հատկապես՝ բառասկզբի խուլ հպականներից ու հպաշփականներից հետո, արտասանական բազան դիմադրում է, այսինքն՝ այդ դիրքի արտասանական լարվածությունը որոշակիորեն խանգարում է ոչ չրթնային, ավյալ դեպքում՝ քմային ա - ի արտասանությանը: Նկատելի է, որ եթե բարբառիս հինհայերենյան բառաշերտում հարևան բարբառների ազդեցությամբ ա դրսևորվում է հիմնականում բառի ոչ առաջին վանկերում և որպես կանոն չի հանդիպում բացարձակ բառասկզբում, բառասկզբի խուլ և շնչեղ ձայնեղ հպական ու հպաշփական բաղաձայններից հետո, ապա նոր բառապաշարի փոխառյալ բառերում այդ հնչյունը հանդիպում է նաև բացարձակ բառասկզբում, բառասկզբի ձայնեղ հպականներից ու հպաշփականներից հետո, և միայն բառասկզբի խուլ հպականներին ու հպաշփականներին հաջորդող դիրքն է ա - ի դրսևորման համար մնում ոչ նպաստավոր: Այսպիսով, եթե շնչեղ ձայնեղներին հաջորդող դիրքում ա - ի բացակայությունը (բացառությամբ մի երկու դեպքերի) բացատրվում է պատմական գործոններով (երբ Բայազետի բարբառի բառասկզբում բոլոր ձայնեղ հպականներն ու հպաշփականները նաև շնչեղ էին, դեռևս ա - ի ներթափանցումը զանգվածային բնույթ չէր կրում և պայմանավորված կարող էր լինել հարևան բարբառների որոշ ազդեցությամբ), ապա բառասկզբի խուլ հպականներին ու հպաշփականներին հաջորդող դիրքում թե՛ հինհայերենյան և թե՛ նոր բառապաշարում ա - ի բացակայությունը բացատրելի է բարբառիս արտասանական բազայի յուրահատկությամբ, համաձայն որի՝ այդ դիրքի արտասանական լարվածությունը առաջ է

բերում ա ձայնավորի չրճնային արտասանություն և բարենպաստ չէ քմային արտասանության համար:

Ասվածից կարելի է ենթադրել, որ առանձին դեպքերում Բայազետի բարբառում նախապես ա ձայնավոր կարող էր գործածել արտասանական բազայում այդ հնչյունն ունեցող հարևան բարբառների ազդեցությամբ, սակայն ա -ն զանգվածաբար Բայազետի բարբառ է ներթափանցել առավելաբար նոր՝ արաբաթուրքական ու պարսկական փոխառություններում, այսինքն՝ 11–րդ դարից սկսած:

Ինչևէ, բարբառումս լինելով ազդեցությունների հետևանք՝ քմային ա ձայնավորը ունի հնչույթի արժեք, քանի որ ա հնչույթի հետ կարող է կազմել հակադրական զույգեր և ունենալ իմաստատարբերակիչ դեր, օրինակ, բանդ (պատնեշ) - բանդ (կալանատուն), թաթ (ձեռքի թաթ) – թաթ (անհասկացող), թափուկ (անասունի ոտքի հարված) - թափուկ (թափված), լարել (հետապնդել) - լարել (գործի դնել), չաու (զրպարտություն) – չաու (գունդ) և այլն: Այլ դեպքերում, երբ ուղղակի հնարավոր չէ կազմել հակադրական զույգեր՝ համապատասխան բառեր չունենալու պատճառով, ա - ի փոխարինումը ա -ով առաջացնում է ոչ թե իմաստի փոփոխություն կամ շփոթ, այլ բարբառի արտասանական նորմայից շեղում և գրական արտասանության տպավորություն (օր. դ՛աուը - դ՛առը, թանաք – թանաք, ժանդ – ժանդ), մինչդեռ հակառակ գործողությունը՝ ա - ի փոխարինումը ա - ով, բառը վերածում է անիմաստ հնչյունախմբի:

Այսպիսով, եթե Բայազետի բարբառում չրճնային ա ձայնավորի դրսևորումը պայմանավորված է արտասանական բազայի երկու յուրահատկությունների (Վասպուրականի տարածքին ևս հատուկ՝ ա - ի որոշ չափով չրճնային արտասանության երանգ և բառասկզբում արտաբերական ուժգնություն ու լարվածութ-

յուն) գուգորդմամբ, ու տվյալ դիրքում ա - ն ա հնչույթի պարտադիր տարբերակ է, ապա քմային ա ձայնավորը որևէ կերպ բարբառիս արտաբերական յուրահատկություններով պայմանավորված չէ, օտարամուտ հնչյուն է, որ ունի առանձին հնչույթի արժեք:

Բայազետի բարբառում թե՛ ա և թե՛ ա հնչյունների գործառութեան վերաբերյալ արված այս դիտարկումները հնարավորություն են տալիս անդրադառնալ Հայերենի մի շարք բարբառների արտասանական բազայում ա հնչյունի դրսևորումներին և «Աճառյանի օրենքին» ու փորձել նորովի մեկնաբանել իրողությունը:

Ինչպես հայտնի է, հայերեն որոշ բարբառների հնչյունական համակարգերին հատուկ ա հնչյունի գործառության վերաբերյալ առաջին անգամ օրինաչափություն է դիտարկել և օրենք սահմանել Հ.Աճառյանը Վանի բարբառի հնչյունական համակարգը քննելիս: Ըստ Աճառյանի օրենքի՝ «Վանի բարբառում ա ձայնավորը, գտնվելով գրաբարի թրթռուն պայթականից առաջացած խուլի մոտ, դառնում է ա, իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է ա»[84]: Հետագա չարադրանքից պարզ է դառնում, որ Աճառյանի կարծիքով՝ ա ձայնավորը ա - ի է վերածվել նախորդ բաղաձայնի ձայնեղ լինելու պատճառով և նախքան դրա խլանալը[85]: Օրենքի գործողություն Աճառյանը տեսնում է նաև Մարաղայի, Խոյի, Սալմաստի, Ղարաբաղի, Շամախիի բարբառային միավորներում[86]: Նա նկատում է, որ իր հայտնաբերած օրենքին Վանի բարբառում ենթարկվում է նաև օ - ն[87], Ղարաբաղի բարբառում՝ ու - ն[88]: Հետագայում Հ.Մուրադյանը արձանագրում է, որ «Աճառյանի օրենքը» գործում է բավականին մեծ տարածքի վրա՝ Վասպուրականից դեպի Սյունիք՝ մինչև Արցախ, և վերա-

[84] Հ.Աճառյան, նշվ.աշխ, էջ 20:
[85] Նույն տեղում:
[86] Տե՛ս նշվ. աշխ., էջ 21:
[87] Տե՛ս նշվ. աշխ., էջ 40:
[88] Տե՛ս նշվ. աշխ., էջ 21:

բերում է ոչ թե միայն ա ձայնավորին, այլ առհասարակ հետին շարքի բոլոր ձայնավորներին, որոնք ձայնեղ պայթականներից հետո դառնում են առաջնային շարքի ձայնավորներ[89]: Լեզվաբանը «Աճառյանի օրենքը» վերաձևակերպում է այսպես. Վասպուրական – Սյունիք - Արցախ տարածքի բարբառներում հին հայերենի բառասկզբի ձայնեղ պայթականներից հետո գտնվող հետին շարքի ձայնավորները (ա, օ, ու) փոխարկվում են առաջնային շարքի համապատասխան ձայնավորների[90]: Ըստ Հ.Մուրադյանի՝ ա > ա̈ փոփոխության դրդապատճառները միշտ չէ, որ հայտնի են, սակայն Վասպուրական – Սյունիք - Արցախ տարածքի բարբառներում այդ փոփոխությունը պատճառաբանվում է այսպես. «Այստեղ այն կատարվել է հին ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ընկած դիրքում և պայմանավորված է այդ բաղաձայնների երբեմնի ունեցած հնչարտասանական մի ինչ-որ առանձնահատկությամբ, որը մեզ անհայտ է»[91]: Այնուհետև ուսումնասիրողները նկատում են, որ «օրինակ, Ղարաբաղի բարբառի խոսվածքներում, որտեղ օրենքը չատ հետևողականորեն է գործել, խնդրո առարկա դիրքում բոլոր ձայնավորներն են ստացել առաջնալեզվային կամ փակ արտասանություն» [92] : Կատարելով Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորների համաժամանակյա և տարաժամանակյա հանգամանալից քննություն՝ Ժ.Միքայելյանը եզրակացնում է, որ հայերեն բարբառների մի որոշակի խմբի պատմականորեն հատուկ է եղել ձայնեղ բաղաձայնի և նրան հաջորդող ձայնավորի փոխազդեցական կապ, որի հետևանքով ոչ առաջնային շարքի ձայնավորը քմայնացել է: Նա առաջարկում է «Աճառյանի օրենքը» սահմանել այս կերպ. «Հայերեն որոշ բարբառներում դրաբարյան ձայնեղ (հպական, կիսաշփական, շփական) բաղաձայններին համապատասխանող հնչյուններից հետո ձայնավոր-

[89] Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 92-93:
[90] Տե՛ս նշվ. աշխ., էջ 93:
[91] Նշվ. աշխ., էջ 106-107:
[92] Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 62-63, տե՛ս նաև Ա.Ե.Խաչատրյան, Բարբառների քննության Աճառյանի սկզբունքները, ՊՐՀ, թ. 1, ե., 1976, էջ 153, Մ.Աղաբեկյան, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, ՀՐԱ., պրակ. 3, ե., 2010, էջ 72:

նները ձեռք են բերել առաջնալեզվային արտասանություն»[93]: Ժ.Միքայելյանը նկատում է, որ Վանի բարբառում հինհայերենյան ձայնեղ բաղաձայններից հետո առաջընթաց արտասանություն ստանում են ոչ միայն հետին շարքի ձայնավորները, այլ նաև միջին շարքի ը - ն[94]: Նա նշում է նաև, որ Վասպուրականի տարածքի բոլոր խոսվածքներում ձայնավորների քմայնացում դիտվում է և այլ դեպքերում, ինչպես՝ բառասկզբի ձայնեղ հ՛ հաղագից հետո, բառի տարբեր դիրքերում նաև ձայնորդներից հետո[95]: Հետաքրքրական է նաև Ժ.Միքայելյանի այն դիտարկումը, թե ձայնավորների քմայնացման առումով ռնգայիննները տարբերվում են մյուս ձայնորդներից, և «Վասպուրականի բարբառային քիչ միավորներում է դիտվում այդ հնչյունների ազդեցությամբ ձայնավորների քմայնացում, այն էլ հաճախ՝ ոչ կանոնական ձևով: Խնդրո առարկա դիրքում ձայնավորները առաջնալեզվայնություն են ստանում մեծամասամբ ներդաշնակության օրենքի գործառության հետևանքով»[96]:

Այն, որ քմային ա հնչյուն Վանի բարբառում հանդիպում է նաև իր սահմանած օրենքից դուրս գտնվող դիրքերում, նկատել է և Աճառյանը՝ բերելով բառերի օրինակներ, որոնցում քմային այդ հնչյունը դրսևորվում է բացարձակ բառասկզբում, բառասկզբի ձայնեղ և խուլ չփական, շնչեղ խուլ, ձայնորդ բաղաձայններից հետո, բառի ոչ առաջին վանկերում[97]: Համանման օրինակներ Ուրմիայի (Խոյի) բարբառում դիտարկել է Մ.Աստարյանը[98]: Միաժամանակ, նկատվել է, որ Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի և հարակից բարբառներին հատուկ են քմային պ,կ,ք պայթականներ, որոնց դրսևորումը հաճախ պայմանավորված չէ հաջորդող ձայնավորի բնույթով: Ինչպես նշում է Հ.Մուրադյանը, «Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում հիշյալ քմայինները հանդես են գալիս նաև բառավերջի դիրքում, երբ

[93] Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 69:
[94] Տե՛ս նշվ. աշխ., էջ 86-87:
[95] Տե՛ս նշվ. աշխ., էջ 91-106:
[96] Նշվ. աշխ., էջ 107:
[97] Հ.Աճառյան, նշվ. աշխ, էջ 24-26:
[98] Տե՛ս Մ.Աստարյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962, էջ 24:

այլևս բաղաձայնին հաջորդող ձայնավոր չկա»[99], *իսկ Վանի, Մոկսի, Դիադինի և Հարակիից այլ բարբառներում առկա է բառասկզբի ք - ի ուժեղ ու արտահայտված քմայնացում, որը նույնպես պայմանավորված չէ հաջորդող ձայնավորի բնույթով*[100]: *Ի վերջո Հ.Մուրադյանը եզրակացնում է. «Նման բաղաձայնի արտասանությունը, որը պայմանավորված չէ հնչյունական դիրքով ու պայմաններով, կարող է բացատրվել ենթաշերտային կամ այլ կարգի, մեզ անհայտ, պատճառներով»*[101]:

Այսպիսով, հայերենի մի շարք բարբառներում ձայնավոր հնչյունների քմային արտասանության վերաբերյալ մի կողմից ունենք «Աճառյանի օրենքը», որը ներկայացնում է երևույթի արտահայտությունը մասնավոր (թեկուզ և առավել ցայտուն) դիրքում և ինչպես Աճառյանի, այնպես էլ հետագա ուսումնասիրողների կողմից պայմանավորվում է ձայնեղ բաղաձայնների ազդեցությամբ, իսկ մյուս կողմից՝ ունենք քմայնացման ավելի լայն ընդգրկում, երբ հետին (նաև՝ միջին) շարքի ձայնավորների, նաև հետնալեզվային գ,կ,ք պայթականների քմայնացում դիտվում է ամենատարբեր դիրքերում, հնչյունական տարբեր միջավայրերում: Լեզվաբանները ձայնեղների՝ քմայնացում առաջացնող հատկության հետ միասին փորձում են երևույթը բացատրել նաև առանձին հնչյունների (հ,լ,ր) արտաբերական յուրահատկություններով, ձայնավորների ներդաշնակության օրենքով և համաբանությամբ[102], *իսկ գ,կ,ք – ի քմայնացման դեպքում, ինչպես վերևում տեսանք, երևույթի պատճառը համարվում է անհայտ: Փաստորեն, քմայնացման երևույթը, մասնավոր դեպքում պայմանավորվելով նախորդող բաղաձայնի ձայնեղությամբ, ընդհանրության մեջ ամբողջական ու համոզիչ բացատրություն չի ստանում, մանավանդ որ ունենք, օրինակ, Տիգրանակերտի բարբառին բնորոշ այնպիսի իրավիճակ, երբ բարբառում ձայնավորի քմայնացում առկա է դրաբարյան թե՛ ձայնեղ*

---

[99] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 311:

[100] Տե՛ս նշվ. աշխ., էջ 311-312:

[101] Նշվ. աշխ., էջ 312:

[102] Տե՛ս Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 91-116, Ա.Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Ե., 1978, էջ 33:

և թե՛ խուլ ու չնչեղ խուլ հպականներին ու հպաշփականներին համապատասխանող բաղաձայններից հետո, որի արդյունքում «ա – ի քմայնացումը բարբառում դրեթե չի ճանաչում սահմաններ և չի ենթարկվում որևէ կայուն օրինաչափության»[103]:

Այնպես որ, հայերենի բարբառներում քմայնացման դրսևորումները շատ ավելի ընդգրկուն իրողության արտահայտություն են, քան ներկայացվում է «Աճառյանի օրենքի» տարբեր սահմանումներով, և դրանք, մեր համոզմամբ, չեն կարող մեկնաբանվել այդ օրենքից բխող՝ ձայնավորների վրա նախորդող բաղաձայնների ազդեցության վերաբերյալ դրույթով ու կարիք ունեն ընդհանուր, բոլոր դեպքերին վերաբերող բացատրության, մանավանդ որ, ինչպես նկատում է Գ.Ջահուկյանը, «բարբառային փոփոխությունները կատարվում են ոչ թե «ատոմային» ձևով, այլ համակարգորեն»[104]:

Կարծում ենք՝ հայ բարբառային խոսքում, մասնավորապես՝ Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում, ձայնավորների քմայնացման իրողությունը կարող է բացատրվել, եթե հանդես բերենք հարցի քննության՝ Բայազետի բարբառի ձայնավորների առնչությամբ վերը կիրառված մոտեցումը: Այսինքն՝ հարկ է նախ և առաջ դիտարկել այն հարցը, թե որ դիրքերն են հստակ սահմանազատվում քմայնացման դրսևորման և բացակայության իմաստով[105]:

Վերն ասվածից կարող ենք բխեցնել նշված բարբառներում քմային և ոչ քմային ձայնավորների բաշխման ընդհանրական պատկերը՝ մանրամասն չանդրադառնալով բոլոր դիրքերին և խոսվածքներում երևան եկող առանձնահատկություններին[106]:

Իհարկե, նախ և առաջ նկատելի է դեռևս Աճառյանի դիտարկած այն իրողությունը, որ քմային ձայնավորներ օրինաչափո-

---

[103] Ա.Հանևյան, նշվ. աշխ., էջ 32:

[104] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 68:

[105] Օրենքի աճառյանական սահմանումը մասնանշում է այդ սահմանազատումը (ձայնեղից առաջացած խուլի մոտ քմայնացում կա, իսկ խուլից առաջացած խուլի մոտ չկա), սակայն հետագա սահմանումներում այդ իրողությունը անտեսվում է:

[106] Վասպուրականի խոսվածքներում քմային ձայնավորների դրսևորման առանձնահատկությունները հանգամանորեն ներկայացրել է Ժ.Մկրտչյանը իր «Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները» աշխատության մեջ:

բեն հանդես են գալիս նախկին ձայնեղ պայթականներից ու հպաշփականներից առաջացած խուլերին հաջորդող դիրքերում, ընդ որում՝ ապացուցված է, որ քմայնացումը տեղի է ունեցել նախքան ձայնեղների խլացումը, այսինքն՝ քմայնացում տեղի է ունեցել ոչ թե խուլերից, այլ ձայնեղներից հետո: Մինչդեռ բուն խուլերից հետո ձայնավորները քմայնացումից ազատ են: Եթե երևույթը սահմանափակվեր միայն այս հակադրությամբ, և քմայնացումը ընդգրկեր միայն հիշյալ մասնավոր դիրքը, ապա գուցե և կարելի կլիներ հնչյունական այդ իրողությունը պայմանավորել դիրքի առանձնահատկությամբ՝ նախորդ պայթական կամ հպակաշփական բաղաձայնի ձայնեղությամբ: Սակայն ձայնավորների քմայնացում կանոնավորապես առկա է նաև ձայնեղ շփականներից, բառասկզբի ձայնեղ Հ՝ հադադից, ձայնորդներից հետո (բացի մ,ն ունգայիններից), քմային ձայնավորներ ոչ շատ հաճախ, բայց հանդիպում են նաև բացարձակ բառասկզբում, բառասկզբի խուլ շփականներից ու շնչեղ խուլերից հետո: Եթե հավելենք նաև այն իրողությունը, որ քմային ձայնավորներ հանդիպում են բառամիջի ու բառավերջի զանազան բաղաձայնական շրջապատներում, ապա պետք է արձանագրենք, որ դեպքերի գոնե մի մասում քմայնացումը նախորդ բաղաձայնի ձայնեղությամբ բացատրվել չի կարող:

Իրականում ուրվագծվում է առաջընթաց արտասանության կամ քմայնացման ընդհանուր միտում (հիշենք նաև գ,կ,ք - ի քմային արտասանությունը), որը կարող է բացատրվել ոչ թե այս կամ այն դիրքով, այլ արտաբերական համակարգում, ապա և արտասանական բաղայում տեղի ունեցած տեղաշարժով:

Ավելի հաճախ առանձնանում է այն դիրքը, որտեղ ձայնավորները քմայնացման չեն ենթարկվում, այսինքն՝ խուլ պայթականներին ու հպաշփականներին, ինչպես վերևում տեսանք՝ նաև մ,ն ձայնորդներին հաջորդող դիրքը: Այլ կերպ ասած՝ նկատվում է իրողության ընդհանուր դրսևորում (ավյալ դեպքում՝ քմայնացման, այսինքն՝ բերանի հետին մասից առաջին մասը ձայնավորների տեղաշարժի միտում), և առանձնանում է այդ իրողությունը խոչընդոտող մասնավոր դիրք: Վերևում տեսանք, որ ընդհանուրի և մասնավորի նման զուգորդում առկա է Բայազետի

բարբառում, որտեղ ա ձայնավորի ոչ չրթնային տարբերակը ունի ընդհանուր գործառութիւն՝ բացառութիւամբ մասնավոր բնոյթ ունեցող այն դիրքերի, որոնցում ա - ն ունի չրթնային արտասանութիւն: Եվ եթե Բայազետի բարբառի դեպքում մասնավոր դիրքի դիտարկումը թույլ է տալիս բացահայտել երևույթի (չրթնայնացման) դրսևորման պատճառը, ապա Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի խոսվածքներում մասնավոր դիրքի դիտարկումը թույլ կտա բացահայտել երևույթի (քմայնացման) տարածումն առավել խոչընդոտող իրողութիւնը: Ու քանի որ չրթնայնացմանը նպաստող և քմայնացումը խոչընդոտող իրողութիւնները ունեն ընդհանրութիւն (խուլ պայթականներին, հպաշփականներին, մ և ն ձայնորդներին հաջորդող դիրք), ուրեմն կարող ենք փաստել, որ եթե Բայազետի բարբառում առավել լարված հնչյունները բառասկզբում իրենցից հետո պայմանավորում էին ա - ի չրթնայնացում, ապա դիտարկվող տարածքի խոսվածքներում նույն այդ լարված հնչյունները խոչընդոտում են ձայնավորների քմայնացումը: Ուրեմն, քմայնացում դիտարկելու մեկնակետը փոխելով, նախ և առաջ անհրաժեշտ է սահմանել, որ դիտարկվող խոսվածքներում ձայնավորների քմայնացում տեղի չի ունեցել առավել լարված բաղաձայններից հետո: Հետևում է, որ լարվածութիւնը տվյալ դեպքում խանգարում է քմայնացմանը: Ի դեպ, այն, որ արտասանութիւան լարվածութիւնը կամ ուժը կարող է հակադարձ հարաբերութիւան մեջ լինել քմայնացման հետ, երևում է նաև Շատախի բարբառի օրինակով, որտեղ շեշտակիր վանկի ա - ն, շեշտից զրկվելով ու թուլանալով, կարող է վերածվել ա̈ - ի, ինչպես՝ տուն – տան - ա̈ննդըկին, և ընդհակառակը՝ երկվանկ կամ բազմավանկ բառի շեշտակիր վանկում ձայնեղ շփականից հետո ենթադրվող ա̈ - ի դիմաց առկա է ա, ինչպես՝ զա̈վակ, շիվար, ծա̈վար, ա̈վա̈զակ, խա̈րա̈զան և այլն[107]:

[107] Մ.Մուրադյան, նշվ.աշխ., էջ 32-33: Այս երևույթը Ժ.Միքայելյանը բացատրում է նշութավորման կանոնով: Տե՛ս Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 123:

Նշանակում է՝ բնական է, որ ձայնավորների քմայնացումը ավելի տարածված է պակաս լարված բաղաձայններից՝ ձայնորդներից (բացի մ – ն և ն – ն) ու ձայնեղներից, նաև ձայնեղ հ՝ հագագից հետո: Բայց պետք է նկատի ունենալ մեկ այլ հանգամանք ևս. հնչյունաբանները գտնում են, որ ձայնեղ բաղաձայնների արտասանության ժամանակ լեզվի արմատը ինչ-որ չափով առաջընթաց դիրք է դրավում[108], մանավանդ «ձայնեղ հպականների արտաբերման համար լեզվի արմատի առաջ շարժվելը անխուսափելի է»[109], որը և ձայնեղներին հաջորդող դիրքը առավել նպաստավոր է դարձնում ձայնավորների քմայնացման միտումի դրսևորման համար:

Այսպիսով, մեր կարծիքով, Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի բարբառների արտասանական բազայում ինչ-որ ժամանակ սկսվել է առաջընթաց արտասանության արտաբերական միտում, որին իբրև հետևանք՝ քմայնացման են ենթարկվել ինչպես ձայնավորները, այնպես էլ պ,կ,ք բաղաձայնները: Ձայնավորների քմայնացման միտումը այս կամ այն չափով ընդգրկել է տարբեր դիրքեր, բայց հատկապես՝ ձայնեղ բաղաձայններից հետո դիրքը, որի համար պայման է եղել այդ բաղաձայնների թուլությունը լարվածության առումով (ի դեպ, առաջին շարքի ձայնավորները ևս իրենց արտասանությամբ պակաս լինտենսիվ են, քան հետին շարքի ձայնավորները), այլև՝ թերևս դրանց արտաբերական մեկ այլ յուրահատկությունը՝ արտասանության ժամանակ լեզվի արմատի առաջընթաց դիրքը: Մյուս կողմից՝ քմայնացման միտումին խանգարում է խուլ հնչյունների, նաև՝ մ,ն ձայնորդների արտասանական լարվածությունը:

Ուրեմն՝ ձայնեղները (նաև ոչ հպական ձայնորդները, հ՝ չփականը) ոչ թե պատճառ են դառնում քմայնացման կամ ինքնին քմայնացնող հատկանիշ ունեն, այլ նպաստավոր պայման են հաջորդող ձայնավորի քմայնացման համար, իսկ խուլերը իրենց լարված արտասանությամբ խանգարում են արտասանական բազայում գործող քմայնացման միտումին: Մնացած դիրքերը

---

[108] Տե՛ս Ժ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 68:

[109] Vaux Bert, The Phonology of Armenian, Clarendon press, Oxford, 1998, p. 178:

քմայնացման համար ոչ այնքան նպաստավոր են, բայց և այդ իրողությունը չեն բացառում:

Իհարկե, առաջընթաց կամ քմային արտաբերության միտումը բարբառից բարբառ կարող է տարբեր ընդգրկում ու ուժ ունենալ, դրսևորվել՝ տարբեր իրողությունների հետ պայմանավորված, բայց որքան էլ ուսումնասիրողները փորձեն քմայնացման՝ «Աճառյանի օրենքից» դուրս մնացող դեպքերը մեկնաբանել համաբանության, ներդաշնակության կամ նշույթավորման կանոններով, շեշտափոխական իրողություններով, միևնույն է, քմայնացման բոլոր այդ երևույթները (նաև «Աճառյանի օրենքով» բացատրվողները) կարող են դրսևորվել, եթե տվյալ խոսվածքում առկա է առաջընթաց արտաբերության կամ քմայնացման միտում, որը կարող է առաջանալ տվյալ խոսվածքը կրողների արտաբերական համակարգում ու արտաբերական սովորույթներում տեղի ունեցած ինչ-ինչ տեղաշարժերով: Հասկանալի է՝ արտաբերական միտումի առկայությամբ հնչյունական փոփոխությունների վրա կարող են իրենց ազդեցությունը թողնել նաև հնչույթաբանական գործոնները:

Ինչ վերաբերում է «Աճառյանի օրենքին», ապա այն թերևս ավելի ճիշտ կլինի կարևորել ոչ միայն քմայնացման առավել բնորոշ դիրքը նշելու, այլ նաև (և գուցե ավելի չափ) քմայնացումից ազատ մնացած դիրքը մատնանշելու առումով:

Կարելի էր ապասել, որ հաջորդող ձայնավորի քմայնացումից հետո խլացած ձայնեղները, արդեն խուլ լինելով, պետք է խոչընդոտեին այդ ձայնավորի քմային արտասանությունը: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ խլացումը, այնուամենայնիվ, չի նշանակում խլացած ձայնեղների և բուն խուլերի լիակատար նույնացում: Օրինակ, Շատախի բարբառի վերաբերյալ Մ.Մուրադյանը նկատում է, որ ձայնեղ պայթականներից ու հպաշփականներից առաջացած խուլերը ունեն ձայնեղության որոշ երանգ, իսկ գրաբարյան խուլերին համապատասխանող խուլերը նման երանգ չունեն[110]: Մյուս կողմից՝ հայտնի է, որ ձայնեղներից առաջացած խուլերը բուն խուլերից

[110] Մ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 29:

տարբերվում են՝ դրանց համեմատ լինելով ավելի թուլ, այսինքն՝ ունենալով պակաս լարվածություն[111], որն էլ չի խոչընդոտում հաջորդ ձայնավորի արդեն սովորական դարձած քմային արտասանությունը, ինչպես որ չեն խոչընդոտում մյուս դիրքերը (խուլ պայթականներին ու հպաշփականներին հաջորդող դիրքից բացի):

Ամփոփելով հայերեն բարբառներում ա ձայնավորի շրթնայնացման ու քմայնացման (այս դեպքում՝ նաև մյուս ձայնավորների քմայնացման) մասին վերն ասվածը՝ կարող ենք արձանագրել, որ երկու դեպքում էլ հնչյունական յուրահատուկ իրողության դրսևորումը պայմանավորված է տվյալ դիրքերում լարվածություն/թուլություն հատկանիշի գործողությամբ: Եթե շրթնայնացման դեպքում բառասկզբի, ինչպես նաև այդ դիրքում նախորդ բաղաձայնի լարվածությունը պայման է դառնում ձայնավորի արտաբերական յուրահատկության ընդգծման ու շրթնային տարբերակի դրսևորման, ապա քմայնացման դեպքում արտասանական միտումի գործողությանը նպաստում է նախորդ բաղաձայնի թուլությունը, և խոչընդոտում՝ լարվածությունը: Այլ կերպ ասած՝ դիտարկված նյութի շրջանակներում ի հայտ է գալիս հնչյունական օրինաչափության ձևավորման երկու ուղի՝

ա) երբ հնչյունի արտաբերական որևէ հատկանիշ բառային որոշակի դիրքի ընդհանուր հատկանիշի ազդեցությամբ ձեռք է բերում նոր որակ, և դրսևորվում է նույն հնչույթի դիրքային մեկ այլ տարբերակ.

բ) երբ արտաբերական համակարգում տեղի ունեցած տեղաշարժի հետևանքով սկիզբ առած արտասանական միտումի ծավալման համար հնչաշղթայում առկա են նպաստող և խոչընդոտող պայմաններ:

[111] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 49:

Հ ~ Ø ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Հայերենի հնչյունական համակարգի դրսևորումներում հետաքրքրական իրողություն է մի շարք բարբառներում դրաբարյան Հ կոկորդային շփականի դիմաց հետնալեզվային խ շփականի հանդես գալը: Բարբառային այս հատկանիշը ընդգրկում է խիստ որոշակի տարածք և բացարձակապես չի դրսևորվում այլ տարածքների բարբառներում: Ինչպես նշում է Հ.Մուրադյանը, «Նրա սահմանները անցնում են Ոզմ, Մոկս, Շատախ, Վան, Ուրմիա, Մարաղա, Թավրիզ, Սալմաստ, Խոյ, Մակու, Բայազետ, Դիադին, Մանազկերտ բնակավայրերով և այնուհետև Վանա լճի հյուսիս - արևմտյան ծովեզրով ձգվում դեպի հարավ՝ ներառնելով Արճեշ, Արծկե, Խլաթ, Բաղեշ բնակավայրերը»[112], իսկ Գ.Ջահուկյանը գրում է, որ «երևույթը տարածված է հատկապես Վասպուրականում և Պարսկահայքում»[113]: Հ ~ Ø համապատասխանությունը, այսպիսով, միավորում է պատմաաշխարհագրական առումով հարևան Վանի, Խոյ — Մարաղայի, Բայազետի, Դիադինի բարբառները մեկ խմբում[114] և դառնում այդ բարբառախմբի համար տարբերակիչ հատկանիշ, որի ծագումնաբանական ակունքների բացահայտումը կարևորվում է ոչ միայն ընդհանրապես պատմական քերականության համար, այլ նաև վերոհիշյալ բարբառների փոխհարաբերությունները ճշգրտելու առումով:

Բայազետի, Վանի, Դիադինի և Խոյ — Մարաղայի բարբառներում Հ ~ Ø համապատասխանությունը բացարձակ է և բարբառային փոխազդեցությունների հետևանք լինել չի կարող: Ջնայած հետազոտողները երբեմն մատնանշում են միայն բառասկզբի դիրքը[115], բայց այդ համապատասխանությունը հին հայերենից ավանդված բառերում առկա է բոլոր դիրքերում: Այսպես, բառասկիզբ՝ հայր — Ø էր, հաց — Ø ացս, հինգ - Ø ինգ (Բ.), հիւանդ

---

[112] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 264:

[113] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 267:

[114] Այս բարբառներից դուրս մնացող խոսվածքները մեր ուսումնասիրության ոլորտում չեն:

[115] Տե՛ս նշվ. աշխ., էջ 267:

- խիվանդ, հին – խին, հարիւր – խարիր *(Վն.)*, համարել – խամբրէլ, հարսանիք – խառնիս, հանել – խանէլ *(Ղ.)*, հայելի – խայլի, հարցանել – խառցուցել, հատանել – խատնել *(Դ.)*, *բառամեջ՝* չնորհաւոր – չընախասվոր, պահել – պախել, զարհուրել - զախախօրել *(Բ.)*, պատուհան - պատխան, քահանա - քյախանա, օրհնել - օխնել *(Վն.)*, չնորհավոր – չընախասվոր, պահել – պախէլ, օրհնել – օխնէլ *(Ղ.)*, ջրօրհնեք – ջըրօխնէք, պահել – պախել, սանահայր – սանախէր *(Դ.)*, *բառավերջ՝* բահ - բ՛ախ, դռեհ - դըռեխ, սրահ – սըրախ *(Բ.)*, ահ - ախ, դեհ - դեխ, մահ – մախ *(Վն.)*, ճանապարհ - ճամբախ, չահ – չախ, բահ – պախ *(Ղ.)*, բահ - բ՛ախ, դռեհ - դ՛ըռեխ, մահ – մախ *(Դ.)* և այլն:

Ընդհանուր առմամբ՝ Մշո բարբառին հատուկ չէ հ - ի դիմաց խ - ի դրսևորումը. այն արտահայտվում է այդ բարբառի առանձին բառերում[116]*, բայց օրինաչափորեն հանդես է գալիս Արճեշի, Արծկեի, Խլաթի և Բաղեշի խոսվածքներում: Այս իրավիճակը թույլ է տալիս ենթադրել, որ Մշո բարբառում հ ~ խ համապատասխանությունը կա՛մ արդյունք է վանի բարբառի ազդեցության, կա՛մ ենթաշերտային երևույթ է:*

Դիտարկվող հատկանիշը բնորոշ չէ նաև Արարատյան բարբառին: Ճիշտ է, Ռ.Մարկոսյանը իր «Արարատյան բարբառ» աշխատանքում հ - ի դիմաց խ արձանագրել է Արարատյան բարբառի Գառնո, Գեղաշենի, Ակունքի, Կոտայքի, Կաթնաղբյուրի, Բալահովտի խոսվածքներում և այդ հատկանիշը վերագրել Արարատյան բարբառին[117]*, սակայն անտեսվել է այն հանգամանքը, որ նշված գյուղերի բնակիչների նախնիները ամբողջովին կամ մասամբ գաղթել են Խոյից, Բայազետից կամ դրանց հարակից շրջաններից*[118]*, հետևաբար այդ բնակավայրերում հ - ի դիմաց խ արտասանությունը գալիս է կա՛մ Խոյի, կա՛մ Բայազետի բարբառից, և ուրեմն այդ հատկանիշը Արարատյան բարբառին բացարձակապես հատուկ չէ:*

Հետազոտողները որպես կանոն հ ~ խ համապատասխանությունը դիտարկել են իբրև հնչյունափոխության արդյունք և

---

[116] Ս.Բաղդասարյան - Թափալեյան, Մշո բարբառը, Ե., 1958, էջ 66:

[117] Ռ.Մարկոսյան, Արարատյան բարբառ, Ե., 1989, էջ 74-75:

[118] Տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարանի համապատասխան բաժինները:

այն մեկնաբանել այդ տեսանկյունով: Հարցին անդրադարձող հեղինակները համոզված են, որ հայերենի նախնական հ բաղաձայնը պատմական որոշակի ժամանակահատվածում վերոհիշյալ տարածքի խոսվածքներում վերածվել է խ - ի: Այսպես, Հր.Աճառյանը իր «Քննություն Վանի բարբառի» աշխատությունում գրում է. «Վանի բարբառի հ > խ ձայնափոխությունը իրոք հին է և տեղի է ունեցած արաբների արշավանքից հետո և թուրքերի տիրապետությունից (ԺԱ. դար) ավելի առաջ: Այս շրջանին են պատկանում այն փոխառությունները, որոնք ցույց են տալիս հ > խ ձայնափոխությունը»[119]: Երևույթն իբրև հնչյունափոխություն են մեկնաբանում նաև Մ.Աստուրյանը[120], Վ.Խաչատրյանը[121], Ռ.Մարկոսյանը[122]: Հարցին ավելի հանգամանորեն անդրադառնում է Հ.Մուրադյանը[123], որը փորձում է պարզել, թե «հ-ից փոփոխությունը որ ժամանակի ծնունդ է և ծագումնաբանական ինչ ակունքներ ունի»[124]: Մատնանշելով միջնադարյան գրավոր աղբյուրներում հանդիպող հ > խ փոփոխության օրինակները՝ Հ.Մուրադյանը եզրակացնում է. «Գրավոր առաջին նման տեղեկությունը կա Մագիստրոսի «Մեկնությիւն քերականին» աշխատության մեջ, որտեղ հայերենի բարբառներում առկա հնչյունական չեզումների շարքում նշվում է նաև հ - ի փոխարեն խ - ի գործածությունը: Մագիստրոսը 11-րդ դարի հեղինակ է, ուստի պետք է ընդունել, որ հ > խ անցումը 11-րդ դարից առաջ կատարված երևույթ է»[125]: Մյուս կողմից՝ Հ.Մուրադյանը դեմ է այն ենթադրությանը, թե հ > խ փոփոխությունը կյանքի է կոչվել դեռևս հայերենի նախագրային շրջանում: Նա համամիտ չէ Ա.Ղարիբյանի և ապա նաև Գ.Ջահուկյանի այն կարծիքին, թե հ - ի դիմաց խ - ի առկայությունը ենթաշերտային երևույթ է, ուրարտերենի ազդեցություն: Այդ մասին Հ.Մուրադյանը գրում է. «Այս վարկածը, ինչպես տեսնում ենք, խարսխված է սոսկ այն

---

[119] Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 67:
[120] Տե՛ս Մ.Աստուրյան, նշվ. աշխ., էջ 52:
[121] Տե՛ս Վ.Խաչատրյան, Վարդենիսի բարբառը, Ե., 2004, էջ 51:
[122] Տե՛ս Ռ.Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 75:
[123] Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 262-267:
[124] Նշվ. աշխ., էջ 264:
[125] Նշվ. աշխ., էջ 264:

դիտողության վրա, որ նշված երևույթը հատուկ է ուրարտերեն լեզվին և որ նույն օրինաչափությունն ունեցող հայ բարբառների զբաղեցրած տարածքը հիմնականում համընկնում է Ուրարտական պետության և նրան հարակից շրջանների հետ: Կարծում ենք, որ այդքանը բավարար հիմք չի կարող ծառայել նման մի ծանրակշիռ եզրակացության համար»[126]: Իրավացիորեն անհամոզիչ համարելով Աճառյանի տեսակետը հնչյունափոխության կատարման ժամանակի վերաբերյալ՝ Մուրադյանը հավանական է համարում, որ «Հ > խ հնչյունափոխությունը գործել է այնպիսի ժամանակահատվածում, որի ավարտի ժամանակ դեռևս չատ քիչ արաբական բառեր կային հայերենում և դրանք են, որ ընկել են Հ > խ հնչյունական օրենքի տակ: Հ-ով արաբապարսկական ծագման մյուս բառերը այս տարածքի բարբառներում մուտք են գործել այդ հնչյունական օրենքի գործառության դադարից հետո և, բնականաբար, Հ-ն չեն փոխել խ-ի»[127]: Տրամաբանական այս դիտողությունից հետո Հ.Մուրադյանը հանգում է անհամոզիչ եզրակացության. «Անկախ այս բոլորից, քանի որ Հ > խ հնչյունափոխությանը ենթարկվում են հին հայերենից Հ - ով ավանդված բոլոր բառերը, այդ թվում նաև հին փոխառությունները, ինչպես նաև արաբական փոխառությունների մի մասը, հիշյալ հնչյունական օրենքը ժամանակագրորեն ավելի հին լինել չի կարող, քան արաբական տիրապետության սկիզբն է»[128]: Եվ ապա շարունակում է. «Հ > խ հնչյունափոխության գործառության մոտավոր ժամանակը կարելի է դնել 6-8 - րդ դարերի սահմանագծում»[129]: Անհասկանալի է մնում, թե ինչու հնչյունական օրենքը չէր կարող իր գործառությունը սկսել ավելի վաղ և դադարել արաբական տիրապետության շրջանում:

Ինչպես արդեն երևաց վերը շարադրվածից, Ա.Ղարիբյանը և Գ.Ջահուկյանը Հ - ի դիմաց խ - ի առկայությունը համարել են ենթաշերտային ազդեցության հետևանք: Մասնավորապես, Ա.Ղարիբյանը այդ մասին գրում է. «Վանի, Ուրմիայի, Խոյի, Մարաղայի, Դիադինի բարբառներում, Մշո բարբառի հյուսիս -

[126] Նշվ. աշխ., էջ 264 – 265:
[127] Նշվ. աշխ., էջ 266:
[128] Նույն տեղում:
[129] Նշվ. աշխ., էջ 267:

արևելյան հատվածում, Բայազեդի ենթաբարբառում և Նոր Ջուղայի բարբառի քաղաքի խոսվածքում «Հ» բաղաձայնի դիմաց արտասանվում է եռնալեզվային չփական «խ» բաղաձայնը:... «Հ» բաղաձայնը խ - ի վերածելու մեջ հետևողական է միայն Վանի բարբառը: Մյուս բարբառները որոշ դեպքերում չեղումներ են կատարում: ... հնչյունական այդ երևույթը Վանի բարբառը ժառանգություն է ստացել խալդական լեզվից, որն ըստ երևույթին չի ունեցել «Հ» բաղաձայնը, ինչպես այժմ Վանի բարբառը: Պատահական չէ, որ հնչյունական այդ երևույթը գոյություն ունի բոլոր այն բարբառներում, որոնք չրջապատում են Վանի բարբառը, այսինքն՝ այդ հատկությունը ունեցել են բոլոր այն տոհմական լեզուները, որոնք չրջապատած են եղել Բիայնայի լեզուն և դանվել են նրա խիստ ազդեցության տակ: Մենակ այդ հատկությամբ չէ, որ այդ բարբառները նման են Վանի բարբառին և նրա միջոցով նաև Բիայնայի լեզվին»[130]*: Այս տեսակետին համահունչ է Գ.Ջահուկյանի կարծիքը. «Բառասկզբի Հ - ի դիմաց խ - ի առկայությունը, անշուշտ, ենթաշերտային, թերևս, ինչպես կարծում են, ուրարտական ազդեցության արդյունք է, մանավանդ որ այդ երևույթը տարածված է հատկապես Վասպուրականում և Պարսկահայքում»*[131]*: Նշանավոր լեզվաբանների այս տեսակետը, կարծում ենք, բավականին ուշագրավ է և կարող է հիմք դառնալ երևույթը նորովի մեկնաբանելու համար:*

Մեր կարծիքով, բարբառներում դիտարկվող Հ - խ համապատասխանությունը իրոք գալիս է հայերենի նախագրային չրջանից, ավելին՝ այն կարող է ուղղակի ժառանգություն լինել նախալեզվից: Հասկանալի է, որ հնդեվրոպական նախալեզվից առանձնանալու չրջանում հայերենը դեռևս չէր կարող ներկայանալ իբրև միասնական հնչյունական և քերականական համակարգ ունեցող լեզու. այդպիսին կարող է լինել գրավոր մշակման որոշակի ճանապարհ անցած լեզուն միայն (ի դեպ, մերօրյա որևէ բարբառ ևս չի կարող բնութագրվել լեզվական բոլոր իրողություննների միասնականությամբ): Իրավացի է Գ.Ջահուկյա-

[130] Ա. Ղալթչյան, նշվ. աշխ., էջ 131:
[131] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 267:

նը, երբ գրում է. «Զևավորվելով հնդեվրոպական լեզվի ընդերքում որպես առանձին բարբառ՝ հայերենը պիտի ունենար խոսվածքային ներքին տարբերություններ, որոնք պիտի պահպանվեին և նույնիսկ մեծանային նրա լեզվական անկախ գոյության՝ վաղնջահայերենի շրջանում»[132]: Այնպես որ, նախալեզվից առանձնանալու շրջանում հայերենը ընդհանրություններ, բայց և որոշակի յուրահատկություններ ունեցող խոսվածքների ամբողջություն կարող էր լինել ընդամենը: Խոսվածքները հնդեվրոպական ընդհանրությունից իրենց հետ բերած յուրահատկություններով անշուշտ կտարբերվեին իրարից: Նման առանձնահատկություններից մեկն էլ, կարծում ենք, որոշ խոսվածքներում (որոնց հիմքի վրա հետագայում ձևավորվել են Վասպուրականի և Պարսկահայքի բարբառները) հ - ի բացակայությունը և դրա դիմաց խ - ի գործածությունն է եղել: Այս տեսակետը պնդելու համար թերևս կարևոր փաստարկ է այն, որ հնդեվրոպական լեզուներում գոյություն չունի կայուն և պարտադիր հ - խ հակադրություն: Օրինակ, ռուսերենը չունի հ, իսկ ֆրանսերենը՝ խ: Փաստորեն, գտնում ենք, որ քննարկվող բարբառները հայերենի այլ բարբառների հ - ի դիմաց խ ունեցել են ի սկզբանե, և այս դեպքում հնչյունափոխության մասին խոսք լինել չի կարող: Ա.Ղարիբյանի նշած «Բիայնայի լեզուն» իրականում թերևս Վանի բարբառն է՝ իր հնագույն վիճակում: Լինելով Վանի թագավորության կենտրոնական բարբառ՝ Վանի հնագույն բարբառը իրոք կարող էր որոշակիորեն ազդել իր հարևան բարբառների վրա, սակայն հ - խ համապատասխանության առումով դժվար է հարցը հանգեցնել ազդեցություններին, որովհետև իրականում ոչ թե միայն Վանի բարբառը, այլ նաև Բայազետի, Խոյ — Մարաղայի, Դիադինի բարբառները ևս հ - ի դիմաց խ ունեն բավականին հետևողականորեն[133]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Վանի, Բայազետի, Խոյ — Մարաղայի, Դիադինի բարբառները ծագումնաբանական որոշակի ընդհանրություն ունեն:

---

[132] Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 252:

[133] Տե՛ս այդ բարբառների ուսումնասիրությանը նվիրված վերը նշված աշխատությունները:

Այսպիսով, կարծում ենք, նշված բարբառները հ չփական չեն ունեցել ի սկզբանե: Այդ բարբառներում խ - ի առկայությամբ հ բաղաձայնի առաջացումը թերևս արդյունք է ընդհանուր հայերենում կատարված հնչյունափոխական գործընթացների: Ընդ որում՝ այդ գործընթացները կատարվել են ինչպես լեզվի ներքին զարգացման արդյունքում, այնպես էլ արտաքին ազդեցության: Այսպես, հայանի է, որ հինհայերենյան բառասկզբի յ - ն միջին հայերենի շրջանում արդեն վերածվել էր հ - ի: Հենվելով Ս. Ավագյանի տվյալների վրա[134] Հ.Մուրադյանը եզրակացնում է, որ այդ երևույթի «թերևս ամենահնագույն վկայությունը կարելի է համարել Երերույքի 1028թ. մի արձանագրության մեջ խ/յ/ նախդիրի փոխարեն, ըստ արտասանության, հ գրությունը»[135]: Հայերենի բոլոր բարբառներն ընդգրկած բառասկզբի յ > հ անցումը կրել է համընդհանուր բնույթ և որևէ բացառություն չի ճանաչում: Կարևոր հանգամանք է, որ չունենք որևէ օրինակ, որտեղ յ - ից առաջանար խ, կամ առաջացած հ - ն դառնար խ: Մեզ հավանական է թվում Գ.Ջահուկյանի այն ենթադրությունը, թե հնարավոր է, որ բառասկզբում հայոց լեզվի զարգացման հին շրջանի վերջերից առաջացել է հավելական չունչ[136], որի հետևանքով էլ տեղի է ունեցել յ > հ անցում: Յ – ից առաջացած հ - ն բոլոր բարբառներում էլ խուլ է, որին նպաստել է հավելական չնչի ազդեցությամբ յ - ի խլացումը[137]: Հավելական չնչի առաջացումը արտահայտվել է նաև ձայնավորով սկսվող մի շարք բառերում հ՛ - ի ավելացմամբ. օրինակ՝ հ՛առու, հ՛իրկուն, հ՛էրկէն, հ՛ուս (Բ), հիւնթ, հըմէն, հէր, հէ՞ր (Վն), հանդ՛աճ, հախպուր, հըմէն, հաչկ (Դ.), հըմմէն, հընգնել, հառչի (Մ.): Շնչի հավելման գործընթացը այլ բարբառներում պետք է որ ավելի վաղ սկսված լինի, քան խ-ախոս (այսուհետ պայմանականորեն այսպես ենք անվանում գրաբարյան հ – ի դիմաց խ ունեցող բարբառները) բարբառներում: Այդ են վկայում ալևոր և ապանել

---

[134] Տե՛ս Ս.Ա.Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Ե., 1973, էջ 325:

[135] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 229:

[136] Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 266:

[137] Բայազետի բարբառում այսօր էլ կա չունչ + յ խուլ կապակցություն, որն արտասանվում է իբրև դժգոհության արտահայտություն:

բառերի ձևերը Բայազետի (խալխվոր, խաքնել), Վանի (խալխվոր, խայնել), Խոյ – Մարաղայի (խալվոր, խահյնել), Դիադինի (խալխվոր, խաք'նել) բարբառներում. թերևս ապանել և ալևոր բառերը, այլ բարբառներում ստանալով հավելական չունչ, ներթափանցել են խ-ախոս բարբառներ՝ ենթարկվելով արտասանական բազայի ազդեցությանը, երբ այդ բարբառներում դեռևս չկար հ - ի արտասանությունը և դիտակցումը:

Ի դեպ՝ բարբառներում ձայնավորով սկսվող բառերի սկզբում ավելացող հ - ն կարող էր լինել խուլ կամ ձայնեղ: Այս առնչությամբ հետաքրքիր դիտողություն ունի Հ.Մուրադյանը: Նա նշում է, որ տարբեր տարածքների հայերեն բարբառներում բառասկզբում ավելացել են երկու տարբեր հագագներ. մեկը՝ խուլ, իսկ մյուսը՝ ձայնեղ: Խուլ հ - ի հավելումը տիպական է արևելյան բարբառներին, իսկ ձայնեղ հ՛ - ի հավելումը հատուկ է Աբարատյան, Կարնո, Մշո, Բայազետի և հարակից այլ շրջանների բարբառներին[138]: Ընդհանրապես, այս առումով դրսևորվում է հետաքրքիր մի օրինաչափություն, որը նկատել է Գ.Ջահուկյանը. «...կարևոր է նշել, որ մի շարք խոսվածքներում մենք ունենք ձայնեղ հ (յ), որ հանդիպում է հատկապես չնչեղ ձայնեղ բաղաձայններ ունեցող խոսվածքներում. սա ենթադրել է տալիս դրանցում չնչեղ սկիզբ՝ և՛ ձայնավորով, և՛ ձայնեղներով սկսվող դեպքերի համար»[139]: Լեզվաբանի կարևորած այս իրողությանը կարող ենք զուգադրել ոչ պակաս կարևոր մեկ այլ իրողություն. բառասկզբում խուլ հ - ի հավելում նկատում ենք հատկապես այն խոսվածքներում, որոնք բառասկզբում բ,պ,դ,ձ,ջ ձայնեղների դիմաց ունեն խուլ պ,տ,կ,ծ,ճ, որը դրանցում ենթադրել է տալիս խուլ սկիզբ: Պարզ է դառնում, որ բարբառների բառասկզբում խուլ կամ ձայնեղ հ - ի հավելումը պայմանավորված է բարբառում բառասկզբի արտասանական յուրահատկությամբ. եթե բարբառի բառասկզբում ձայնեղ հպականներն ու հպաշփականները չնչեղ են, ապա հավելական հ - ն ձայնեղ է (ձայնեղ հ-ն ոչ այլ ինչ է, եթե ոչ չունչ և ձայն), իսկ եթե վերոհիշյալ բաղաձայնները խլացել են, ապա խուլ է և հավելական հ - ն: Ե-

[138] Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 315:
[139] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 266:

թե հավելական ձայնեղ հ - ն բավականին կայուն հանդես է գալիս Մշո և Բայազետի բարբառներում (սրանցում բառասկիզբն ունի շնչեղ ձայնեղ հպականներ և հպաշփականներ), ապա հավելական խուլ հ - ն Վանի և Խոյ — Մարաղայի բարբառներում (սրանց բառասկզբում ձայնեղ հպականների և հպաշփականների դիմաց առկա են պարզ խուլերը) ավելի քիչ բառերում է հանդես գալիս, իսկ առանձին դեպքերում էլ նկատվում է բառասկզբի արմատական հ - ի անկում. օրինակ՝ հաւատալ - աւատալ (Վն., Խ.), հիւս - ուսի (Վն.), հայվան (արաբ) - այվան (Վն.), հավար (քրդ.) - ավար (Վն.), հունձ — ունձ (Խ.): Կարծում ենք, որ այս բառերը բարբառներում սկսել են գործառել այն ժամանակներից, երբ այդ բարբառներն արդեն ունեին հ հնչյուն, սակայն բառասկզբում այդ հ - ն դեռևս անկայուն էր, կարող էր արտասանվել կամ ոչ, ուստի և նշված բառերում արմատական հ - ն չփոթվել է հավելական հ - ի հետ և ընկել: Ասվածին իբրև ապացույց կարող են ծառայել Վանի բարբառի ավատալ, հավատալ, խավատալ ձևերը[140]: Ի դեպ, հավատալ բառը հ - ի անկումով արձանագրվում է նաև Արարատյան, Մուշի, Բայազետի և Դիադինի բարբառներում, ընդ որում՝ հավատալ ձևին զուգահեռ: Ինչպես նշում է Ս.Բաղդասարյան-Թափալցյանը, Մշո բարբառում հավատալ ձևը գործածվում է կրոնական իմաստով, իսկ ավատալ ձևը՝ սովորական իմաստով[141] : Այս բառում հ - ի անկմանը հավանաբար նպաստել է նաև իմաստային տարբերակման պահանջը:

Ինչպես նշում է Հ.Մուրադյանը, ժամանակագրորեն խուլ հ - ի հավելումը նախորդել է ձայնեղ հ՛ - ի հավելումին: Իբրև հիմնավորում իր այս տեսակետի՝ լեզվաբանը մատնանշում է բարբառներում արբենալ, ագանել, ալեւոր, արօր բառերի կրած փոփոխութիւնները: Պարզվում է, որ թե՛ արևելյան, թե՛ արևմտյան տարածքներում այդ բառերի սկզբում առկա է հավելական խուլ հ, իսկ խ-ախոս բարբառներում այդ հ - ն վերածվել է խ - ի: Նշվում է նաև, որ ձայնեղ հ՛ - ի հավելում ունեցող բառերը խ -

[140] Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 65:
[141] Ս.Բաղդասարյան - Թափալցյան, նշվ. աշխ., էջ 262:

ով համապատասխանություններ չունեն[142]: Հետևում է, որ բառասկզբում հավելական հ - ի (անկախ խուլ կամ ձայնեղ լինելուց) առաջանալը սկիզբ է առել արևելյան տարածքներում և ապա ներթափանցել խ-ախոս բարբառներ: Այս իրողության գիտակցումը թույլ է տալիս բացատրել հ - ի համապատասխանության դրսևորման որոշ տարբերությունները Բայազետի, Դիադինի, Վանի բարբառների և Խոյ - Մարաղայի բարբառի միջև: Այդ տարբերություններն արտահայտվում են բարբառային և փոխառյալ բառերում, որոնցում Խոյ – Մարաղայի բարբառը նախնական հ - ի դիմաց ունի հ, իսկ Բայազետի, Վանի, Դիադինի բարբառները՝ ս. օրինակ՝ Խոյ – Մարաղայի բարբառի հանապ՝, հանք (չունչ), թամահ (արաբ.), հալալ (արաբ.), հարամ (արաբ.) ձևերին Բայազետի բարբառում (այդպես նաև՝ Վանի և Դիադինի բարբառներում) համապատասխանում են խաննաք, խանք, թամախ, խալալ, խարամ ձևերը: Այս իրողությունը կարող է նշանակել, որ Խոյ – Մարաղայի բարբառում հ - ի դործառույթը ավելի վաղ է սկսվել, ուստի վերոհիշյալ բառերում հ > խ անցում չի կատարվել, մինչդեռ Բայազետի, Վանի, Դիադինի բարբառներում այդ անցումը կատարվել է, քանի որ այստեղ հ - ն ավելի ուշ է դրսևորվել:

Վասպուրականի և Պարսկահայքի խ-ախոս բարբառներում հ առաջանալու գործընթացին նպաստել են նաև արաբական, թուրքական և պարսկական ազդեցությունները: Հետաքրքրական է, որ սակավաթիվ արաբական փոխառություններում բնիկ հ - ի դիմաց ունենք ս. օրինակ՝ հալալ – խալալ (Բ., Վն.), հարամ – խարամ (Բ., Վն.), հեքիմ – խէքյիմ (Վն.), հինա - խինա (Բ.,Վն.) և այլն: Արաբական փոխառությունների բացարձակ մեծամասնության մեջ հ - ի դիմաց ունենք հ համեմատվող բոլոր բարբառներում. օրինակ՝ հաղըր (Բ.,Վն.), հայվան (Բ.,Վն.), հարիփ (Բ.,Վն.), հալ (Բ.,Վն.,Դ.), հալբաթ (Բ.,Խ.,Դ.), համբալ (Բ.,Խ.,Դ.), հասար (Բ.,Խ.) և այլն: Այս դեպքում ևս սկզբնական շրջանում, երբ խ-ախոս բարբառները չեն ունեցել հ, արտասանական բազա-

[142] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 314 - 321:

յի ազդեցությամբ սակավաթիվ բառերում հ > խ անցում կատարվել է, բայց աստիճանաբար բարբառներում սովորական է դարձել հ - ի արտասանությունը, որի հետևանքով էլ հ > խ անցումը դադարել է: Արաբական փոխառություններին զուգընթաց կատարվող կամ հաջորդող պարսկական նոր և թուրքական կամ միջնորդավորված փոխառություններում հ > խ փոփոխություն տեղի չի ունեցել, որովհետև խ-ախոս բարբառներում արդեն սովորական էր նաև հ - ի արտասանությունը, օրինակ՝ հալվա (արաբ., պրսկ.), հախ (արաբ., պրսկ.), համ (պրսկ.), հայաթ (պրսկ., թրք.), հավէս (արաբ., պրսկ., թրք.), հէքիմ (արաբ., պրսկ., թրք.), հէչ (պրսկ.), հուներ (պհլ., պրսկ.) և այլն[143]*:*

Այնուամենայնիվ, խ-ախոս բարբառներում հ գոյանալու հարցում հիմնական դերը խաղացել է բառասկզբում շնչի հավելումը, որի վկայություն կարող է լինել այն հանգամանքը, որ, օրինակ, Բայազետի բարբառում բառամիջի և բառավերջի դիրքերում հետգրաբարյան գրական և օտար փոխառություններում համեմատական դեպք հ հնչյուն այդպես էլ մուտք չգործեց. նշված դիրքերում նախնական հ - ի դիմաց ունենք ո՛չ խ և ո՛չ էլ հ, այլ յ կամ ոչինչ. օրինակ՝ ագահ - ագայ, գոհ - գ՛օյ, դահլիճ - դ՛այլիճ, զահլա - զայլա, զահրումար - զայրումար, թահմըլնել - թայմըլնել, թագուհի - թաքույի, մահլա - մայլա, նախագահ - նախակա, շահ - շայ, պահեստ - պայեստ, ջահել - ջայել, սահման - սայման, դժգոհ - տըժգօ, շահի - շայի, փահլեվան - փայլեվան և այլն: Այսպես է վիճակը նաև Դիադինի բարբառում[144]*: Ի դեպ՝ Խոյ – Մարաղայի բարբառում այս կարգի բառերում նախնական հ - ի դիմաց հանդես է գալիս հ հնչյունը կամ հյ*

[143] Առանձին դեպքերում բառի հնչյունական կազմից երևում է, թե հավանական որ լեզվից է կատարվել փոխառությունը: Օրինակ, Բայազետի բարբառի հավէս բառի դիմաց ունենք արաբ. havas, պրսկ. havas և թրք. haves, հէքիմ բառի դիմաց ունենք արաբ. hakim, պրսկ. hakim և թուրքերեն hekim: Ակնհայտ է, որ բարբառիս փոխառու լեզուն տվյալ դեպքերում թուրքերենն է:

[144] Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 147 - 150:

կապակցությունը. օրինակ՝ ակահ, պահյըլմաը, մահյլա, ջահել, շահի, փահյլեվան և այլն: Սա ևս մեկ անգամ հաստատում է, որ Խոյ – Մարաղայի բարբառում հ հնչյունը ավելի վաղ է դրսևորվել, քան, օրինակ, Բայազետի բարբառում: Նշենք նաև, որ Բայազետի բարբառում բառամիջում կամ բառավերջում հ հնչյունի դրսևորումը հնարավոր է դարձել միայն նոր գրական և պարսկական փոխառություններում. օրինակ՝ ԱհակԼին, մըՀանա (պրս.), պըՀա (պրս.), պԱՀակ, զէՀ (պրս.), նըՀախ (պրս.) և այլն:

Ասվածից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Վանի, Բայազետի, Խոյ – Մարաղայի, Դիադինի բարբառներում գրաբարյան շրջանի բառաշերտում հ ~ ի դիմաց խ – ի առկայությունը հնչյունափոխության հետևանք չէ:

2. Նշված բարբառները հ ~ ի դիմաց խ ունենալու իրենց հատկանիշը ժառանգել են Թեղուտ հայերենի հնագույն շրջանից գործածառող բարբառային վիճակից, որը հ բաղաձայն չի ունեցել:

3. Արարատյան և Մշո բարբառները իր սկզբանե ունեցել են և՛ հ, և՛ խ բաղաձայններ: Մշո բարբառի որոշ խոսվածքներ ենթարկվել են խ-ախոս բարբառների ազդեցության: Հնարավոր է նաև, որ այդ խոսվածքները կրողների նախնիները եղել են Վանի բարբառի կրողներ, բայց հայտնվելով բարբառախոս այլ միջավայրում՝ հարմարվել են դրան՝ պահպանելով, սակայն, խ-ախոսության հատկանիշը:

4. Խ-ախոս բարբառներում հ բաղաձայն առաջացել է աստիճանաբար՝ ընդհանուր հայերենի բառասկզբում կատարված չնչի հավելումով և յ > հ հնչյունափոխության հետևանքով, ինչպես նաև հ ~ ոլ սկսվող փոխառյալ բառերի ազդեցությամբ: Ընդ որում՝ Բայազետի բարբառում հ ~ ի առաջացումը նախապես ընդգրկել է միայն բառասկզբի դիրքը, և միայն նոր գրական ու պարսկական փոխառություններում է, որ այլ դիրքերում ևս կարող է հանդես գալ հ:

5. Եթե իբրև հավելական չունչ դրսևորված հ ~ ն առանձին դեպքերում դարձել է խ, ապա յ ~ ից առաջացած հ ~ ն երբեք խ չի դարձել: Այս հանգամանքը ևս մեկ անգամ գալիս է հաստատելու, որ հայերենի բառասկզբում նախ տեղի է ունեցել չնչի

հավելում, որի հետևանքով էլ հետագայում տեղի է ունեցել յ > հ անցում:

6. Այն հանգամանքը, որ վիմագիր արձանագրություններում յ - ի փոխարեն հ գրություն դրսևորվել է 11-րդ դարի սկզբներին, վկայում է, որ հայերենում, հետևաբար և խ-ախոս բարբառներում, յ > հ անցումը սկսվել է 11-րդ դարից առաջ:

7. Բառասկզբում ձայնավորից առաջ հ - ի հավելումը և յ > հ անցումը նույն գործընթացի՝ բառասկզբում չնչի հավելման դրսևորումներ են: Գործընթացն սկսվել է արևելյան բարբառներում և աստիճանաբար տարածվել դեպի արևմուտք: Խուլ բառասկիզբ (բ,պ,փ,ձ,ջ – ի փոխարեն՝ պ,տ,կ,ծ,ճ) ունեցող բարբառներում, իբրև արտասանական բազայի ընդհանուր հատկության դրսևորում, ձայնավորից առաջ ավելացող հ - ն ևս խուլ է, այսինքն՝ թուլլ և հաճախ անկայուն: Թուլլ է նաև յ - ից առաջացած հ - ն, որն առանձին դեպքերում ընկնում է: Այն տարածքներում, որտեղ բառասկիզբը ունի չնչեղ ձայնեղներ, հավելական չունչը ձայնեղ է և կայուն: Այսպիսով, հավելական հ - ի խուլ կամ ձայնեղ լինելը պայմանավորված է տվյալ բարբառի բառասկզբի արտասանական յուրահատկությամբ:

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայ բարբառագիտության համար ձևային, ձևաբանական և կիրառական առումներով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ցուցական այս, այդ, այն և սա, դա, նա դերանունների բարբառային դրսևորումները: Ընդհանրապես այդ դերանունները թե՛ հայերենի զարգացման տարբեր շրջաններում, թե՛ բարբառներում ունեն բազմազան արտահայտություններ, բայց դրանց բոլորի համար ընդհանուր են արմատական ս, դ(ա), ն հնչյունները և դերանվանական համապատասխան իմաստները:

Գրաբարում ցուցական դերանունները ենթարկվում էին դերանվանական հոլովման՝ եզակի սեռական և տրական հոլովներում ունենալով տարբեր ձևեր: Սա, դա, նա դերանունները եզակի սեռականում ավարտվում էին րա հնչյունախմբով (սորա, դորա, նորա), անկախ էին և գոյականների հետ չէին գործածվում, իսկ այս, այդ, այն դերանունները եզակի սեռականում ավարտվում էին ր ձայնորդով կամ որ հնչյունախմբին հաջորդող իկ մասնիկով (այսր, այսորիկ, այդր, այդորիկ, այնր, այնորիկ), գոյականների հետ գործածվում էին: Միջին հայերենում ցուցականների սեռականն ու տրականը արդեն տարբեր ձևեր չունեին, և երկուսն էլ ունեին ր հոլովակազմիչ, իսկ մյուս հոլովները կազմվում էին տրականից: Այս շրջանում այս, այդ, այն, սա, դա, նա դերանունների հետ գործառում էին նաև իսա, իդա (իտա), ինա ցուցականները, որոնք ունեին միայն ուղղական և հայցականհոլովներ[145]*:*

Բոլոր բարբառներում գործառում են այս, այդ, այն դերանունների համապատասխան ձևեր, իսկ սա, դա, նա դերանունների ձևեր շատ բարբառներում չկան[146]*: Նաև այս, այդ, այն դերանունների բարբառային ձևերը ավելի բազմազան են և՛ կազմությամբ, և՛ քերականական հատկանիշներով:*

---

[145] Ս.Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981, էջ 249:
[146] Ա.Ղաբիբյան, նշվ. աշխ., էջ 153:

Իհարկե, անհրաժեշտ եզրահանգումներ կատարելու համար կարիք չկա անխտիր դիտարկել ցուցական դերանունների բարբառային բոլոր դրսևորումները և դրանց բոլոր հատկանիշները, բայց մյուս կողմից՝ բարբառային իրողությունների հետազոտումը ավելի արդյունավետ և մեկնաբանությունը ավելի հավաստի կարող է լինել տարբեր բարբառախմբերի բարբառների տվյալների համադրմամբ և համեմատությամբ, ուստի ցուցական դերանունների բարբառային ձևերի որոշ առանձնահատկություններ դիտարկում ենք հիմնականում արևելյան խմբակցության Արարատյան, Բայազետի, Խոյ-Մարաղայի և արևմտյան խմբակցության Վանի, Դիադինի, Մշո բարբառների, առանձին դեպքերում՝ նաև մի երկու այլ բարբառների ընձեռած նյութի շրջանակներում:

Ցուցական դերանունների բարբառային յուրահատկությունները դրսևորվում են նախ և առաջ ուղիղ ձևերում, հոլովվելիս՝ նաև սեռական հոլովի ձևերում, որոնցից էլ համապատասխան վերջավորություններով կազմվում են մնացած հոլովաձևերը: Հետևաբար, այդ դերանունների ձևային և ձևաբանական հիմնական հատկանիշները դիտարկվում են հենց ուղիղ և սեռականի ձևերի համադրմամբ:

Վերոհիշյալ բարբառներում ցուցականները ունեն հետևյալ ուղիղ ձևերը. Արարատյան բարբառ՝ էս, էտ, էն և սա, դա, նա, Բայազետի բարբառ՝ էս, էտ, էն, էսի, էտի, էնի, էսիկ, էտիկ, էնիկ, էսա, էտա, էնա, էսակ, էտակ, էնակ, Խոյ-Մարաղայի բարբառ՝ էտ, էն, էտիկյ, էնիկյ, Վանի բարբառ՝ էս, էսի, էտ, էտի, էն, էնի, էսա, էտա, էնա, էսիկ, էտիկ, էնիկ, Մշո բարբառ՝ իդա, ինա, ըդի, ընի, Դիադինի բարբառ՝ էս, էտ, էն, էսի, էտի, էնի, էսան, էտան, էնան:

Ինչպես երևում է, միայն Արարատյան բարբառն ունի սա, դա, նա ձևերը[147]*, մինչդեռ բոլոր բարբառներն էլ ունեն այս, այդ, այն խմբի համապատասխանությունները՝ էս, էտ, էն հիմքերով: Մշո բարբառի ձևերը առանձնանում են բառասկզբի ձայնավորի տարբերությամբ՝ իդա, ինա, ըդի, ընի: Խոյ-Մարաղայի և Մշո*

[147] Այս ձևերին չենք անդրադառնա, որովհետև Արարատյան բարբառում դրանք դրսևորվում են այնպես, ինչպես գրական հայերենում:

բարբառներում այս ցուցական դերանվան իմաստով հատուկ ձևեր չկան. սա, սակայն, չի նշանակում նաև իմաստի բացակայություն. էտ, էտիկյ ձևերը Խոյ-Մարաղայի բարբառում և իղա, ըդի դերանուննները Մշո բարբառում գործառում են նաև այս դերանվան իմաստով:

Այս, այդ, այն ցուցական դերանունների զուգահեռները բարբառներում հանդես են բերում կազմության զանազանություններ. դրանք կա՛մ պարզ են, կա՛մ հավելվածավոր: Ըստ այդմ՝ դիտարկվող բարբառները բաժանվում են երեք խմբի.

ա) միայն պարզ կազմության դերանուններ ունեցող. այսպիսին է Արարատյան բարբառը (էս, էտ, էն).

բ) միայն հավելվածավոր կազմության դերանուններ ունեցող. այսպիսին է Մշո բարբառը (իդա, ինա, ըդի, ընի).

գ) և՛ պարզ, և՛ հավելվածավոր կազմության դերանուններ ունեցող. այսպիսիք են Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադինի և Բայազետի բարբառները (էս, էսա, էսի, էսիկ, էսակ, էսան):

Դիտարկումները ցույց են տալիս, որ դերանվանական հավելվածները բարբառներում կարող են ունենալ տարբեր դեր: Այսպես, եթե ի, իկ կամ ակ հավելվածը Բայազետի բարբառում դերանվանը տալիս է կիրառական և քերականական յուրահատկություններ, ապա ա հավելվածը ունենում է սոսկ իմաստային՝ ցուցականությունը ընդգծող արժեք[148]: Այստեղ և՛ էս, էտ, էն ձևերը, և՛ էսա, էտա, էնա ձևերը խոսքում գառնում են միայն որոշիչ և չեն հոլովվում (էս գ՛իրքը վէռցա - էսա գ՛իրքը վէռցա), այսինքն՝ ունեն ածականական գործածություն: Մինչդեռ ի կամ իկ, ակ հավելվածով ձևերը իրենց դրսևորում են սա, դա, նա դերանունների օրինակով և իմաստով, ունեն միայն գոյականական գործածություն: Սրանք խոսքում որոշիչ չեն գառնում, ի հավելվածով ձևերը հոլովվում են և կատարում գոյականին հատուկ դերեր, իսկ իկ կամ ակ հավելվածով ձևերը գործածվում են միայն եզակի թվի ուղղական և հայցական հոլովներով (էտիկ հընգավ. էտիկ դ՛ի տեղը, էտակ էթում. էտակ տու ընձի): Ի դեպ,

[148] Հետաքրքրական է, որ Բայազետի բարբառում ա հավելվածը ցուցականությունն ընդգծող դերով ներմուծվում է ցուցականների բոլոր հոլովաձևերում և ձևավորում է զուգահեռ ձևեր, ինչպես՝ ըստու - էսաստու, ըստուց - էսաստուց, ըստունք - էսաստունք, ըստունցից - էսաստունցից և այլն:

Հ.Աճառյանը նկատել է, որ հայերենի բարբառներում իկ մասնիկով բոլոր ցուցականները էլ չեն հոդվվում և հոդնակի չունեն, և ավել է հետևյալ բացատրությունը. «Իկ նշանը դրվում է դերանունը ածականի հետ չշփոթելու համար. շփոթությունը կարող է տեղի ունենալ միմիայն եզակի և անհոլով դեպքում, այն է՝ եզ. ուղ. և հյց., հետևաբար -իկ մասնիկը դրվում է միայն այս դեպքերում, ուրիշ խոսքով՝ անհոլով է»[149]:

Բարբառներում դերանունների գործառական յուրահատկություններին անդրադառնալով՝ Հ.Աճառյանը նշում է, որ ցուցական դերանունները կարող են ունենալ ինչպես դերանվանական, այնպես էլ ածականական կիրառություն, այսինքն՝ խոսքում կարող են հանդես գալ նաև իբրև որոշիչ: Ըստ նրա՝ հայերենի բարբառները պարզ ձևերը (այս, սա) դարձրել են ածական (այսինքն՝ որոշչային կիրառություն ունեցող), իսկ սրանց վրա հավելելով -իկ մասնիկը՝ վերածել են դերանվան, որտեղից էլ վերջաձայն կ - ի կրճատումով առաջացել են ի մասնիկով ավարտվող ձևերը, ինչպես՝ ասի, ադի, անի, իսի, իդի, ինի և այլն[150]: Բարբառային ցուցականների իկ հավելվածը, կարծում ենք, առնչվում է դրաբարյան այս, այդ, այն ցուցական դերանունների հոլովական երկար ձևերում հանդես եկող իկ մասնիկին (այս, այսոքիկ, այսմիկ, այսոքիկ, այսոցիկ և այլն): Այդ մասին դիտողություն ունի նաև Գ.Ջահուկյանը. «Ցուցական դերանունների իկ - ը ամենայն հավանականությամբ հին հայերենի համապատասխան ձևերի մնացորդն է»[151]:

Բարբառներում ցուցական դերանունները և դրանց սեռական հոլովաձևերը երևան են հանում հետևյալ պատկերը.

Վանի բարբառ
Եզակի թիվ

Ուղղ.	էս, էսի, էսա	էտ, էտի, էտա	էն, էնի, էնա
Սեռ.	իսոր	իտոր	ինոր

[149] Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, ե., 1954, էջ 235:
[150] Տե՛ս նշվ. աշխ., էջ 195-196:
[151] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 87:

Հոգնակի թիվ

Ուղղ.	իսոնքյ	իտոնքյ	ինոնքյ
Սեռ.	իսոնց	իտոնց	ինոնց

Մշո բարբառ
Եզակի թիվ

Ուղղ.	-	իդա	ինա ընի
Սեռ.	-	իդոր	ընդոր ընդրա

Հոգնակի թիվ

Ուղղ.	-	իդոնք	ընդոնք ընդոնք
Սեռ.	-	իդոնց	ընդոնց ըն/դ/ոնց

Խոյ – Մարաղայի բարբառ
Եզակի թիվ

Ուղղ.	-	էտ, էտիկյ	էն, էնիկյ
Սեռ	-	տ̈ր	դ̈ր

Հոգնակի թիվ

Ուղղ.	-	տ̈նքյ, տ̈նքյիկյ	դ̈նքյ, դ̈նքյիկյ
Սեռ	-	տ̈նց	դ̈նց

Դիադինի բարբառ
Եզակի թիվ

Ուղղ.	էսան	էտան	էնան
Սեռ.	ըստոր	ըտոր	ընդոր

Հոգնակի թիվ

Ուղղ.	(է)ըատոնքʲ	(է)ըտոնքʲ	(է)ընդոնքʲ
Սեռ.	(է)ըատոնց	(է)ըտոնց	(է)ընդոնց

Արարատյան բարբառ

Եզակի թիվ

Ուղղ.	էա	էտ	էն
Սեռ.	(է)ըատուր	(է)ըտուր	(է)ընդուր

Հոգնակի թիվ

Ուղղ.	(է)ըատօնք	(է)ըտօնք	(է)ընդօնք
Սեռ.	(է)ըատօնց	(է)ըտօնց	(է)ընդօնց

Բայազետի բարբառ

Եզակի թիվ

Ուղղ.	էսի	էտի	էնի
Սեռ.	ըատու	ըտու	ընդու

Հոգնակի թիվ

Ուղղ.	/ը/ատոնք	ըտոնք	ընդոնք
Սեռ.	/ը/ատոնց	ըտոնց	ընդոնց

Դերանունների սեռական հոլովաձևերը բարբառներում ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Նախ և առաջ նկատելի է եզակի թվում այդ հոլովում ը տարրի առկայությունը բոլոր բարբառներում (իսոր, իդոր, տաՙր, ըսատոր, ըսատուր), բացի Բայազետի բարբառը: Ընդհանրապես հայերենում դերանունների հոլովման մեջ սեռական հոլովում ը տարրը տարածված իրողություն է (մենք — մեր, դուք — ձեր, ինքը — իր,

սա – սորա, դա – դորա, նա – նորա, սոյն – սորին, դոյն – դորին, նոյն – նորին, այս – այսր, այսորիկ, ո – ոյր, զի՞ – է՞ր, ոմն – ուրումն, ոք – ուրուք, իմն – իրիք), հետևաբար՝ դիտարկվող ձևերում ր – ի առկայությունը հայերենի դերանվանական համակարգին բնորոշ ընդհանուր իրողության արտահայտություն է: Թերևս Բայազետի բարբառում ցուցական դերանունների եզակի սեռականում տեղի է ունեցել ր – ի անկում, մանավանդ որ Աբարատյան բարբառի համապատասխան ձևերը Բայազետի բարբառի ձևերից տարբերվում են միայն ր – ի առկայությամբ՝ ըստուր, ըտուր, ընդուր (Աբ.) – ըստու, ըտու, ընդու (Բ.): Այդ անկմանը հավանաբար նպաստել է այն հանգամանքը, որ դերանունները ուղիղ ձևում ավարտվել են ի հնչյունով (էսիկ, էտիկ, էնիկ > էսի, էտի, էնի)՝ այդպիսով նմանվելով ՈՒ հոլովման ենթարկվող բառերին և հոլովվելով դրանց պես:

Այսպիսով, դիտարկվող բարբառներում ցուցական հիշյալ դերանունները եզակի թվում ենթարկվում են դերանվանական հոլովման, բացառությամբ Բայազետի բարբառի, որտեղ դրանք ենթարկվում են անվանական ՈՒ հոլովման: Հոգնակի թվում ցուցական դերանունները բոլոր բարբառներում ենթարկվում են Ց անվանական հոլովման:

Եթե մի կողմ թողնենք Բայազետի բարբառի ձևերը, մյուս բարբառներում ցուցական դերանունները եզակի սեռականում ունենում են որ, ուր մասնիկներ: Վանի, Մշո և Դիադինի բարբառներում հանդես է գալիս որ մասնիկը (իսոր, իդոր, ըստոր), Արարատյան բարբառում՝ ուր մասնիկը: Կարծում ենք՝ այս երկու մասնիկներն էլ առնչվում են հինհայերենյան որ մասնիկին (այսորիկ, այդորիկ, այնորիկ)[152]: Ի դեպ, ժամանակին համանման կարծիք Վանի բարբառի ձևերի վերաբերյալ հայտնել է Ա.Ղաբիբյանը. «սեռականը ստանում է «որ» վերջավորությունը, որ դտնում ենք գրաբարյան սորա, դորա, նորա, այսորիկ, այդորիկ, այնորիկ ձևերի մեջ»[153]: Թվում է՝ Արարատյան բարբառում որ –

[152] Հ.Աճառյանը կարծում է, թե իսոր, իդոր, ըստոր, ըստուր և այլ կարգի մյուս սեռականները առաջացել են դրաբարյան այսր, այդր, այնր ձևերից, և բարբառային ձևերում ո և ու ձայնավորները ներմուծված են ներպաշնակության համար և իրար հետ կապ չունեն: Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 227 – 230:
[153] Ա.Ղաբիբյան, նշվ. աշխ., էջ 386:

ի դիմաց ուր մասնիկի դրսևորումը արդյունք է Ոի հոլովման ազդեցության, մանավանդ եթե նկատի ունենանք բացառականի ձևը՝ ըստուց:

Ինչ վերաբերում է Խոյ – Մարաղայի բարբառի տԱր, դԱր սեռականներին, ապա դրանք ստացել են տարբեր մեկնաբանություններ: Հ.Աճառյանը գտնում է[154], որ այդ սեռականները կազմվում են ոչ թե ուղղականի էտ, էտիկ, էն, էնիկ ձևերից, այլ սա, դա, նա դերանուններից: Ըստ նրա՝ որոշ բարբառներում (ինչպես նաև Մարաղայում) սա, դա, նա դերանունների սորա, դորա, նորա սեռականներում ո ձայնավորը վերածվել է ա – ի, և առաջացել են սարա, դարա, նարա ձևեր, որոնց վերջածայն ա – ի անկումով էլ ձևացել են Մարաղայի տԱր, նԱր (դրա, նրա) ձևերը: Մյուս կողմից՝ Աճառյանը գտնում է, որ նա դերանվան նրա սեռականում դ հնչյունի հավելումով ստացվել է նդրա, ապա ընդրա, և այդպես ձևացել են ոչ միայն Ղարաբաղի բարբառի ընդըրա, ընդըրան ձևերը, այլ նաև Մարաղայի ինդԱր, ինդԱրԱն, ինդԱրԱն ձևերը, իսկ ին մասի անկումով էլ ստացվել է Ուրմիայի դԱր ձևը[155]: Այլ տեսակետ ունի Ա.Ղարիբյանը, որը Ուրմիայի էն դերանվան դԱր սեռականը բխեցնում է նախնական ամբողջական էնդԱր ձևից, որի ն հնչյունի ձայնեղացնող հատկությամբ էլ պայմանավորում է բառասկզբում ձայնեղ չունեցող բարբառում դԱր ձևի սկզբում ձայնեղ դ – ի առկայությունը[156]:

Կարծում ենք, որ Խոյ – Մարաղայի բարբառում դերանունների սեռական հոլովաձևերը (տԱր, դԱր) իրենց կազմում ունեն Ար բաղադրիչը, որը համապատասխանում է այլ բարբառների որ մասնիկին (հնարավոր է՝ այս բարբառում որոշ դեպքերում

---

[154] Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 227:
[155] Տե՛ս նշվ. աշխ., էջ 228:
[156] Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 347: Ի դեպ, համանման իրողություն ևս դերանվան հոլովման մեջ դիտարկել է և Հ.Աճառյանը Վանի բարբառում:

ո > ա՝ հնչյունափոխության միտում է եղել, եթե նկատի ունենանք ով > վա՛վ, ջով > ճա՛վ օրինակները): Նախնական ամբողջական ձևերի սկզբում տեղի ունեցած հնչյունական անկումների հետևանքով էլ առաջացել են Մարաղայի տա՛ր, նա՛ր և Ուրմիայի տա՛ր, դա՛ր ձևերը: Այլ կերպ ասած՝ մենք գտնում ենք, որ դիտարկվող սեռականները ոչ թե դա, նա, այլ էտ, էն (այդ, այն) դերանունների ձևերն են: Այս տեսակետը պնդելու համար ունենք հետևյալ փաստարկները.

ա) Բարբառներում, որպես կանոն, իկ հավելված ստանում են էս, էտ, էն (այս, այդ, այն) ցուցականները: Խոյ — Մարաղայի բարբառում իկ հավելվածով զուգահեռ ձևեր դրսևորվում են ոչ միայն եզակի ուղղականում (էտ, էտիկ էն, էնիկ), այլ նաև այլ հոլովներում, ինչպես՝ տր., հայց. տա՛րը — տա՛րիկը, դա՛րը - դարիկը, բաց. տա՛րէն - տա՛րիկէն, դա՛րէն - դա՛րիկէն, գործ. տարօվ — տա՛րիկօվ, դա՛րօվ - դա՛րիկօվ, և ինչպես տեսնում ենք, բոլորում էլ պահպանվում է ր տարրը: Ճիշտ է, սա, դա, նա դերանունները ևս առանձին բարբառներում երբեմն ունենում են հավելվածավոր ձևեր (սայիկա, դայիկա, նայիկա, սվիկա, դվիկա, նվիկա, սավիկա, դավիկա, նավիկա և այլն), բայց սրանց սակավադեպ հավելվածավոր թևք հոլովաձևերը իրենց կազմում երբեք ր չեն ունենում (դավգէ, դագէց, դըգէց, նագէ, նգէ, նվգէ /պլ./, սագից /ննխ/), այսինքն՝ սեռական-տրականից չեն կազմվում:

բ) Թե՛ գրաբարում, թե՛ միջին հայերենում և թե՛ բարբառներում այս, այդ, այն, էս, էդ, էն ցուցականների հոգնակի ուղղականը կազմվում է եզակի ուղղականից, ուստի այդտեղ բացակայում է սեռականի ր մասնիկը (այսք, այսոքիկ, այսոք, էսօնք, ըստոնք, էստունք, աստուք, իսօնք, իսոնք, ըսունք, ՈՒսիւնք, ասօնք և այլն, Խոյ-Մարաղայի բարբառում՝ տա՛նքյ, տա՛նքյիկյ, դա՛նքյ, դա՛նքյիկյ), մինչդեռ սա, դա, նա դերանունների հոգնակի ուղղականը բարբառներում և գրական արևելահայերենում, ի

տարբերություն գրաբարի, որպես կանոն կազմվում է եզակի տրականից, ուստի իր մեջ ունի սեռական-տրականի ը մասնիկը, ինչպես՝ նրա-նրան-նրանք (Թբ., Շմ.), տրա - տրան - տրանք (Աստրխ.), սօ(սա)-սրօ-սրուք (Ագլ.): Բացառություն են, օրինակ, Պոլսի և Նոր Նախիջևանի բարբառները, որոնցում սա, դա, նա դերանունները հոգնակի ուղղականի կազմում ը չունեն. փոխարենը դրանք կամ ակնհայտորեն գրաբարատիպ են (ինչպես՝ սաքա, դաքա, նաքա - ՆՆխ.), կամ իրենց կազմում «ներդաշնակության համար»[157] ունեն վ հնչյուն (ինչպես՝ սավօնք, դավօնք, նավօնք — Պլ.): Ի դեպ, Նոր Նախիջևանի սաքա, դաքա, նաքա հոգնակիների թեք հոլովներում այնուամենայնիվ ը հանդիպում է (ինչպես՝ սեռ.-տր. սարանց, դարանց, նարանց, բաց. սարանցմէն, դարանցմէն, նարանցմէն, գործ. սարանցմօվ, դարանցմօվ, նարանցմօվ): Մինչդեռ էս, էտ, էն դերանունները հոգնակի թվի որևէ հոլովում ոչ մի բարբառում (նաև՝ Խոյ-Մարաղայի բարբառում) իրենց կազմում ը չունեն:

Կարելի է նաև կարծել, որ, օրինակ, Մարաղայի նաը սեռականը համապատասխանն է Վանի բարբառի ինոր ձևի: Այդ է վկայում Մարաղայում առկա զուգահեռ ինդաը ձևը՝ դ - ի հավելումով, իսկ այս ձևն էլ ակնհայտորեն համապատասխանում է Մշո, Դիադինի բարբառների ընդոր ձևին:

Անդրադառնալով ցուցական դերանունների հոգնակի ուղղականի ձևերին՝ Աճառյանը գրում է, որ բարբառներում ամենատարածված սաոնք, ադոնք, անոնք ձևերի և դրանց բոլոր տարբերակների (իսոնք, իդոնք, ինոնք, ըսունք, ընունք, աստունք, ադունք, անունք և այլն) նախաձևերն են միջինհայերենյան «այսոք, այդոք, այնոք, որոնք առաջանում են գրբ. այսք, այդք, այնք ձևերից՝ ներդաշնակության համար ներմուծելով ո ձայնավորը», իսկ այնուհետև ավելացել է «ն (այսոնք, այդոնք, այնոնք)՝ նմանության համար բազմաթիվ այլ կարգի հոգնակիների անք, եանք, ունք՝ ինչ. հիմունք, չարժմունք և այլն»[158]: Հարկավ, բոլոր այս ձևերը՝ թե՛ գրաբարյան, թե՛ միջինհայերենյան և թե՛

[157] Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 198:
[158] Նշվ. աշխ., էջ 231:

բարբառային, միմյանց փոխկապակցված են և նույն իրողության տարատեսակ դրսևորումներն են՝ ներկայացնելով լեզվի զարգացման տարբեր փուլերը: Սակայն համոզիչ չէ միջինհայերենյան և բարբառային ձևերում ո կամ ու ձայնավորների առկայությունը ներդաշնակության համար իբրև ձայնավորական ներմուծում ներկայացնելը: Կարծում ենք՝ ավելի տրամաբանական կլինի միջինհայերենյան, ապա և բարբառային ձևերը առնչակցել հինհայերենյան այսոքիկ, այդոքիկ, այնոքիկ ձևերին, ինչպես որ եզակի սեռականի ձևերն են առնչվում հինհայերենյան այսորիկ, այդորիկ, այնորիկ ձևերին: Թվում է՝ երկու դեպքում էլ բարբառային ձևերում ո կամ ու ձայնավորի առկայությունը ներդաշնակության համար հետագա ներմուծում չէ, այլ արձագանք է հնագույն իրողության, որի մասին վկայում է հենց ինքը՝ Աճառյանը: Խոսելով ցուցական այս, այդ, այն դերանուններիր հինհայերենյան կարճ ու երկար ձևերի մասին՝ նա գրում է. «Երկար ձևը ունի միշտ -իկ վերջավորությունը, որ պատճառ է դառնում նախորդ ձայնավորի պահպանման.- այսպես՝ երկար ձևն է այնորիկ, կարճը՝ այնր, որ առաջացել է նախավոր *այնոր ձևից»[159], ապա և համաձայնում է Մեյեի տեսակետի հետ՝ այս, այդ, այն ցուցականների հին արմատներ համարելով այսո, այդո, այնո ձևերը[160]: Ուրեմն, բարբառային ցուցականների թե՛ եզակի, թե՛ հոգնակի ձևերի ո տարրը կամ դրա հնչյունափոխված տարատեսակը պետք է բխեցնել հենց այդ հին արմատների ո հնչյունից և ոչ թե համարել ներդաշնակության համար ներմուծված ձայնավոր:

Ցուցական դերանունների եզակի սեռականում կարևոր հատկանիշ է տ – ի ներմուծումը: Ա.Ղարիբյանը նշում է, որ Կը ճյուղի բարբառները «ցուցական դերանունների հոլովված ձևերի մեջ տ - ն չեն ունենում»[161]: Գ.Ջահուկյանի բերած փաստերը ևս վկայում են, որ տ - ի հավելումը հատուկ է արևելյան բարբառներին, իսկ արևմտյաններից այդ հատկանիշն ունեն Մուշն ու

[159] Նշվ. աշխ., էջ 174:
[160] Տե՛ս նշվ. աշխ., էջ 181:
[161] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 157:

Դիադինը[162]*: Մեր կողմից դիտարկվող բարբառներում, այսպիսով, տ – ի հավելում չունի միայն Վանի բարբառը:*

Այս հավելման վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Աճառյանը երևույթի սկզբնավորումը ներկայացնում է այսպես. «Ընդհանուր ձայնաբանական երևույթ է բոլոր լեզուների մեջ էլ՝ ղ ատամնականի հավելումը ն և ր բաղաձայնների միջև. հայերենից իբրև օրինակ հիշենք ծանր – ծանդր, մանր – մանդր: Այս օրենքի համաձայն՝ նրա դարձավ նդրա և հնչման հեշտության համար հենարանի հավելումով՝ ընդրա: Այսպես ձևացան Ղրբ. ընդըրա, ընդըրան, Մրղ. ինդՙր, ինդՙրա, ինդՙրՙն ձևերը»[163]*: Այդ նույն եղանակով, ըստ Աճառյանի, «այնր ձևից դ – ի հավելումով առաջացել է *այնդր > *էնդր. և որովհետև վերջաձայն երեք բաղաձայնների հանդիպումը դժվար հնչելի երևույթ է, մեջտեղում ավելացել է ու ձայնավորը»*[164]*: Արևելյան բարբառների այդ ու ձայնավորին կը ճյուղի բարբառներում համապատասխանում է աւոր, աւուր, անոր սեռականների ո – ն: Բայց այդ երկուսի միջև Աճառյանը կապ չի տեսնում և համարում է, որ դրանք անկախաբար ներմուծված են ներդաշնակության համար*[165]*: Ընդուր ձևի նմանությամբ էլ, ըստ Աճառյանի, առաջացել են էտուր, էտուր ձևերը: Ի վերջո, լեզվաբանը այս, այդ, այն (էս, էտ, էն) ցուցական դերանունների սեռականների ծագումը ներկայացնում է հետևյալ կերպ. «Այսպիսով էտուր, էտուր, էնդուր և աւոր, աւդոր, անոր միևնույն ձևերն են և հավասարապես ծագում են դրբ. այոր, այդր, այնր ձևերից, նախաձայնը (այ) դարձնելով մի տեղ է, մյուս տեղ ա, և բացի սրանից առաջին խմբի մեջ ներմուծելով դ, որ ն և ր բաղաձայնների հենարանն է, ինչպես նաև ներդաշնակության համար ավելացնելով մի տեղ ու, մյուս տեղ ո»*[166]*:*

Ցուցական դերանունների սեռականներում տ – ի ներմուծումը և ընդհանրապես այդ ձևերի կազմությունը բոլորովին այլ կերպ է բացատրում Ա.Ղարիբյանը: Նրա կարծիքով՝ «այդ տ – ն

---

[162] Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 88 – 99:
[163] Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 228:
[164] Նշվ. աշխ., էջ 229:
[165] Նույն տեղում:
[166] Նշվ. աշխ., էջ 230:

առաջ է եկել այն պատճառով, որ նախ հոլովվել է «այդ» դերանունը և ապա նրա վրա ավելացել են այս, այդ և այն դերանուններն ու կազմել հոլովում, այսինքն՝ էս, տուր, տուց, տօվ, տում, ապա՝

էս+տուր=էստուր, էս+տուց=էստուց, էս+տօվ=էստօվ, էս+տում=էստում»[167]:

Իր միտքը շարունակելով՝ լեզվաբանը, սակայն, գրում է, թե Ում ճյուղի բարբառներում «ցուցական դերանունների հոլովման հիմքը ընդհանուր հայերենի «դա» դերանվան սեռական ձևն է, որը Ղարաբաղի բարբառում սկզբից ստանում է «էս», «էտ», «էն» ձևերը և կորցնում «ո»-ն. էս + դորա > էսարա > ըսարա և այլն: Իսկ մյուս բարբառներում, ընդհակառակը, «դորա» ձևը կորցնում է «ա» - ն և սկզբից ավելացնում նույն էս, էդ, էն. էս + դորա > էսդոր > էստուր – ըստուր > էստու»[168]: *Ի վերջո լեզվաբանը եզրակացնում է, որ Ում ճյուղի բարբառները «պահել են ընդհանուր հայերենի այս, այդ, այն դերանունների ուղղական ձևը՝ կորցնելով մյուս հոլովները, իսկ սա, դա, նա դերանունների՝ մյուս հոլովները, կորցնելով ուղղական ձևը»*[169]: *Երևույթին Ա.Ղարիբյանը միանշանակ մեկնաբանություն չի տալիս նաև Կը ճյուղի բարբառների առնչությամբ: Նախ նա գրում է, որ այստեղ ցուցական դերանունների սեռականը կազմվում է՝ ուղղականի վրա ավելացնելով օր, որ, ուր կամ նույնիսկ ու վերջավորություն*[170]: *Սակայն քիչ անց անում է ասվածին հակասող հետևություն. «Ուրեմն «Կը» ճյուղի բարբառների ցուցական դերանունների հոլովումը տարբեր հիմքով է: Այստեղ հոլովման հիմք են դառնում սա, դա, նա դերանունների սեռական սորա, դորա, նորա ձևերը, որոնք կորցնում են վերջին «ա» - ն և սկզբից ստանում էս, էտ, էն»*[171]:

Կարծում ենք՝ բարբառներում թե՛ ցուցական դերանունների սեռականի ձևերի կազմությունն ընդհանրապես և թե՛ դրանցում տ կամ դ տարրի ներմուծումը կարիք ունեն նորովի մեկնաբա-

---

[167] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 157:
[168] Նշվ. աշխ., էջ 158:
[169] Նույն տեղում:
[170] Նույն տեղում:
[171] Նշվ. աշխ., էջ 159:

նուիյան: Նախ, ինչպես կարելի է ենթադրել վերն ասվածից, բարբառներում այս, այդ, այն դերանուններին համապատասխանող ձևերը (էս, էտ, էն, աս,ատ, ան, էսի, էտի, էնի և այլն) սեռական հոլովում ուղղականի վրա ստանում են օր, որ, ուր կամ ՝ր վերջավորություն: Դրանք բոլորն էլ, կարծում ենք, առնչվում են հինհայերենյան այսր (այդր, այնր) և հատկապես այսորիկ (այդորիկ, այնորիկ) ձևերին: Այսինքն՝ ցուցական դերանվան՝ բարբառներում հանդիպող սեռականի բոլոր ձևերը (իսոր, իտոր, ինոր, ասոր, ատոր, անոր, ըսոուր, ըտուր, ընդուր, ստուր, տուր, ընդուր, ըսուր, ընուր, անուր, ՚ասիւր, ՚ադիւր, ՚անիւր, աւօր, ադօր, անօր և այլն), որոնք ավարտվում են ր ձայնորդով[172] և նախընթաց որևէ ձայնավորով կամ երկբարբառով (օ, ո, ու, ՚ա, իւ), վերաբերում են այս, այդ, այն դերանուններին, և մեզ համար ընդունելի չէ Ա.Ղաբիրյանի այն դիտողությունը, թե այդ ձևերը (ցուցական դերանունների թեք հոլովաձևերը ընդհանրապես) վերաբերում են սա, դա, նա դերանուններին: Ջէ՞ որ կան բարբառներ, որոնք զուգահեռաբար պահպանել են սա, դա, նա դերանունները, և դրանց հոլովաձևերը կազմությամբ էականորեն տարբերվում են էս, էտ, էն դերանունների հոլովաձևերից՝ այդպիսով ևս մեկ անգամ հավաստելով մեր պնդումը: Այսպես, Ա-բարատյան բարբառում սա, դա, նա դերանունները, հենց Ա.Ղաբիրյանի վկայությամբ, հոլովվում են ըրականի պես[173], այսինքն՝ սեռականում ունեն սրա, դրա, նրա ձևերը, մինչդեռ էս, էտ, էն դերանունների սեռականներն են՝ ըսուր, ըտուր, ընդուր: Բերենք նաև այլ բարբառների դերանունների ուղղական և սեռական հոլովների զուգահեռ օրինակներ.

Պոլիս		Թբիլիսի		Ադուլիս		Նոր Նախիջևան	
սա	աս	սա	էս	սօ	աս	սա	աս
սըրա	աւօր	սըրա	էտու	սրօ	աստուր	սարա	աւօր

[172] Երբեմն այդ բ-ն ընկնում է:
[173] Տե՛ս նշվ. աշխ., էջ 153:

Մշո բարբառում ցուցական դերանվան երրորդ դեմքի համար զուգահեռ ինա (այն) և ընի (նա) ձևեր է արձանագրել Ս.Բաղդասարյան-Թափալցյանը[174]: *Այն և նա դերանուններին համապատասխանող այս ձևերը եզակի թիվ հոլովներում պահպանել են հոլովական օրինաչափությունները. ինա դերանվան սեռականը ունի որ կազմիչը (ընդոր), իսկ ընի դերանվան սեռականն ավարտվում է րա խմբով (ընդրա), որը հայերենում հատուկ է սա, դա, նա դերանուններին (սորա, դորա, նորա, սարա, դարա, նարա, սրա, դրա, նրա, ըսորրա, ըտրա, ընդրրա): Հոդնակի թվում այս դերանունները ձևավորման առումով նույնանում են՝ հանդես բերելով այն (էն, ինա) դերանվան հատկանիշներ, միայն ընի դերանվան դեպքում բառի կազմում կարող է լինել ղ կամ չլինել (ընդոնց կամ ընոնց), իսկ ինա դերանվան դեպքում զուգաձևություն չկա (ընդոնց): Ասվածը թույլ է տալիս հայերենի բարբառներում այս, այդ, այն և սա, դա, նա խմբերի զուգահեռները որոշելիս նկատի ունենալ հետևյալ տարբերակիչ հատկանիշները. ա) այս, այդ, այն խմբի դերանունների սեռական հոլովաձևերը որպես կանոն ավարտվում են ր բաղաձայնով և նախընթաց որևէ ձայնավորով կամ երկբարբառով (երբեմն ու - ից հետո հնարավոր է ր - ի անկում), իսկ սա, դա, նա խմբի դերանունների սեռական հոլովաձևերը ավարտվում են ր - ին հաջորդող ձայնավորով, բ) ցուցական դերանունների թեք հոլովներում ո հնչյունի ներմուծումը հատուկ է այս, այդ, այն խումբը ներկայացնող ձևերին:*

Իհարկե, կան դեպքեր էլ, երբ այս, այդ, այն և սա, դա, նա տիպերի դերանունների թեք ձևերը ազդել են միմյանց վրա, կամ էլ, կարելի է ասել, տեղի է ունեցել դերանվանական երկու տիպերի միաձուլում: Ի դեպ, այս, այդ, այն և սա, դա, նա դերանվանական խմբերի թե՛ միաձուլման, թե՛ փոխադարձ ազդեցությունների մի շարք օրինակներ է բերում Հ.Աճառյանը: Այսպես, ըստ լեզվաբանի՝ միջին հայերենի «իսա, իտա, ինա ձևացել են այս, այդ, այն և սա, դա, նա ցուցականների խառնուրդից»[175], *իսկ Պոլսի բարբառում աւօր, աղօր, անօր ձևերի ազդեցությամբ առաջա-*

[174] Ս.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 96:
[175] Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 188:

ցել են սավի, դավի, նավի դերանուննների սավօր, դավօր, նավօր սեռականները[176]:

Կարծում ենք՝ դերանվանական երկու խմբերի ազդեցության օրինակ է երևան բերում նաև Ղարաբաղի բարբառը, որտեղ, օրինակ, էս (այս) դերանունը թեք ձևերում իրեն բնորոշ տ - ի հետ ունենում է սա ձևին բնորոշ րա հնչյունախումբ.

	Եզակի թիվ	Հոգնակի թիվ		
Ուղղ.	էս	ըսաըՀանք	սըՀանք	ըսաըրանք
Սեռ.	ըսաըրա	ըսաըՀանց	սըՀանց	ըսաըրանց

Փաստորեն, այս, այդ, այն և սա, դա, նա ցուցական դերանունների փոխհարաբերությունների առումով հայերենի բարբառները կարող են ներկայացնել երեք կարգի վիճակ.

ա) Ցուցականների երկու տիպերի առկայություն՝ իրենց առանձին հոլովաձևերով: Այսպիսի վիճակ ներկայացնում են, օրինակ, Արարատյան, Թբիլիսիի, Պոլսի, Ագուլիսի, Նոր Նախիջևանի բարբառները:

բ) Միայն այս, այդ, այն տիպի դերանուններ ունեցող բարբառներ, ինչպիսիք են, օրինակ, Բայազետի, Խոյ-Մարաղայի, Վանի, Դիադինի, ընդհանուր առմամբ նաև Մշո բարբառները: Նկատենք, որ այս բարբառներում ցուցական դերանվան թեք հոլովաձևերը իրականում արտահայտում են սա, դա, նա ցուցականների իմաստ, իսկ ուղիղ ձևերը կարող են արտահայտել և՛ այս, այդ, այն, և՛ սա, դա, նա ցուցականների իմաստ: Ի դեպ, Բայազետի բարբառում եզակի ուղղականում երկու տիպերի ցուցականների իմաստային տարբերությունը դրսևորվում է ձևային տարբերությամբ. այս, այդ, այն դերանունների իմաստը արտահայտվում է էս, էտ, էն, էսա, էտա, էնա ձևերով, իսկ սա, դա, նա դերանունների իմաստը արտահայտվում է էսի, էտի, էնի, էսիկ, էտիկ, էնիկ, էսակ, էտակ, էնակ ձևերով:

գ) Ցուցականների երկու տիպերի խառնուրդ ունեցող բարբառներ, ինչպիսին է, օրինակ, Ղարաբաղի բարբառը:

[176] Տե՛ս նշվ. աշխ., էջ 228:

Բոլոր դեպքերում պարզ է, որ նշված ցուցական դերանուննե-րի թեք հոլովաձևերը բարբառներում միշտ ունեն առարկայա-կան, այսինքն՝ սա, դա, նա դերանունների իմաստ:

Ինչ վերաբերում է ցուցական դերանունների թեք հոլովաձևե-րում առաջնալեզվային պայթականի ներմուծման խնդրին, ապա կասկած չունենք, որ այն հնչյունական հավելում է և ոչ թե այդ կամ դա դերանվան հոլովաձևի արտահայտություն: Բայց չենք կարծում, թե այդ ներմուծումը սկիզբ է առել նրա կամ այնր ձևերից և ապա տարածվել նաև մյուս ձևերում:

Բայազետի բարբառում երևույթի դիտարկումը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ էսի և էնի դերանունների ըստու և ընդու սեռականներում առաջնալեզվային հավելական հնչյունի առկա-յությունը նախ և առաջ հետևանք է էտի դերանվան ըստու օրի-նաչափ սեռականի համաբանական ազդեցության, ընդ որում՝ ընդու ձևում ներմուծված պայթականի ձայնեղությունը ակն-հայտորեն հետևանք է ն ձայնորդի ազդեցության: Չենք բացա-ռում, որ պայթականի ներմուծման հարցում կարող է դեր խա-ղացած լինել և այն հանգամանքը, որ Բայազետի բարբառում (ինչպես և այլ բարբառներում) թե՛ ս, թե՛ ն հնչյուններից հետո նկատվում է տ – ի, դ - ի հավելման միտում, ինչպես՝ պէստ (պէս), կԱլբաստ (ռուս. калбаса), Հ՛ուստակ (հյուս), ծանդըր (ծանր), մանդըր (մանր), սանդըր (սանր), թունդիր (թոնիր): Սա-կայն առավել կարևորում ենք մեկ այլ իրողություն: Արդի գրա-կան արևելահայերենում մենք դիտարկում ենք հնչյունաբանա-կան մի այսպիսի օրինաչափություն. միայն ձայնավորից բաղ-կացած վանկ հնարավոր է երեք դեպքում. ա) բառասկզբում, եթե ձայնավորին հաջորդում է մեկ բաղաձայն (ասել, էջանշան, իմա-նալ, օտար, ուրախ), բ) որևէ դիրքում, եթե բառում իրար են հանդիպում երկու ձայնավորներ (էի, չէի, էակ, բերեի, կակաո, Լաոսի, Լաուրա), գ) միահնչյուն բառում (է,ու): Գրական հայե-րենում ը ձայնավորը երբեք մեկ այլ ձայնավորի չի նախորդում, բառասկզբում մեկ բաղաձայնից առաջ չի հանդիպում և առան-ձին իբրև բառ հանդես չի գալիս, հետևաբար՝ ը – ն երբեք ինք-նուրույն վանկ չի դառնում: Այդպես է և Բայազետի բարբա-ռում: Նշանակում է՝ էսի > ըստու, էնի > ընու ձևերը Բայազետի

բարբառում դառնում են անհնար՝ բարբառի օրենքներին հակասող վանկակազմության (ը – սու, ը - նու) պատճառով: Ահա թե ինչու՝ վիճակը չտկվել է տ - ի ներմուծման միջոցով ը – ից հետո բաղաձայնական խմբի ձևավորումով, որին նպաստել են նախորդ երկու հանգամանքները[177]: Մեր դիտարկման ճշմարտացիությունն է հավաստում Բայազետի բարբառի նաև հետևյալ իրողությունը. երբ էսի, էտի, էնի դերանունների՝ ը ձայնավորով սկսվող ձևերում (ըսուս, ըտու, ընդու, ըստունց, ըտունց, ընդունց և այլն) առաջին բաղաձայնից հետո ներմուծվում է ցուցականության ընդգծող ա տարրը, մեկ բաղաձայնից առաջ դիրքը ը - ի համար դառնում է անհնար, և այն փոխարինվում է է հնչյունով, իսկ ն - ից հեռացած դ - ին փոխարինում է նախնական տ - ն՝ էսատու, էտատու, էնատու, էսատունց, էտատունց, էնատունց և այլն: Ի դեպ, համանման իրողություն դիտարկում ենք և գրաբարում: Այսպես, երբ գրաբարյան ինն թվականի թեք ձևերում ի ձայնավորը շեշտից զրկվում էր, տեղի էր ունենում ի > ը փոփոխություն (ըննի, յընննէ, ընննից), բայց երբ ը - ն պիտի հայտնվեր մեկ բաղաձայնից առաջ, նման փոփոխություն տեղի չէր ունենում (ինունք, զինունս): Այդպես նաև բառասկզբի ի, ու շեշտակիր ձայնավորները, մեկ բաղաձայնից առաջ լինելով, շեշտազրկվելով չէին հնչյունափոխվում (իժ – իժի, իլ – իլոյ, ուխտ – ուխտի, ուլ - ուլու), իսկ երկու բաղաձայնից առաջ հնչյունափոխվում էին (իղձ – ըղձալ, ինձ – ընձենի, ումպ – ըմպել):

Բայազետի բարբառում ցուցական դերանունների սեռական հոլովաձևերում առաջնալեզվային պայթականի ներմուծման հանգամանքների վերհանումը թույլ է տալիս նույն տեսանկյունով անդրադառնալ այլ բարբառների իրողություններին: Այսպես, թվում է՝ սխալված չենք լինի, եթե նկատենք, որ Վանի բարբառի խսոր, ինոր սեռականներում առաջնալեզվային պայթականի ներմուծումը անհրաժեշտ չի եղել, քանի որ բառասկզբում առկա է ոչ թե ը, այլ ի: Մինչդեռ Դիադինի և Արարատյան

[177] Թվում է, թե ասվածին կարող են հակասել ըտու (ը - տու) սեռականը և դրանից կազմված ձևերը (ըտուց, ըտով, ըտունք ևլն), սակայն նախ այս դիրքը միակն է, որտեղ ը – ին հաջորդում է մեկ բաղաձայն (ուստի այն չէր կարող խանգարել ընդհանուր օրինաչափությանը), և բացի այդ՝ տ – ի հպման ամենափոքր երկարաձգումն իսկ կարող է ընկալվել իբրև ըտ – տու օրինաչափ վանկակառույց:

բարբառներում այդ ներմուծումը առկա է և ուղեկցվում է բառասկզբի ը ձայնավորով (ըստոր, ընդոր, ըստուր, ընդուր): Իսկ Մշո բարբառում իդա դերանվան իդոր սեռականում մեկ բաղաձայնից առաջ ունենք ի, մինչդեռ ինա դերանվան ընդոր սեռականում ի > ը փոփոխությունն ուղեկցվում է պայթականի ներմուծմամբ և բաղաձայնական խմբի ձևավորումով: Բնականաբար, տարբեր բարբառներում այս, այդ, այն տիպի դերանունների թեք ձևերում տ (դ) հնչյունի ներմուծումը կամ դրա բացակայությունը կարող է պատճառաբանված լինել տարբեր հանգամանքներով, սակայն Բայազետի և այլ բարբառների իրողությունները վկայում են, որ երևույթը հիմնականում պետք է պայմանավորել տվյալ բարբառի հնչյունաբանական յուրահատկություններով, հնչյունական փոխազդեցություններով:

Ասվածից եզրակացնում ենք, որ հայերենի բարբառներում ցուցական դերանունների՝ նախընթաց որևէ ձայնավորով (կամ երկբարբառով) և ը ձայնորդով ավարտվող սեռականի ձևերը (նաև մնացած բոլոր հոլովաձևերը), ինչպես նաև տ հնչյունի ներմուծում ունեցող ձևերը, որպես կանոն, վերաբերում են ցուցականների այս, այդ, այն խմբին, իսկ ը ձայնորդով և նրան հաջորդող ձայնավորով ավարտվող սեռականները (նաև մյուս հոլովաձևերը) վերաբերում են ցուցականների սա, դա, նա խմբին: Այս իմաստով ակնհայտ է առնչակցությունը դրաբարյան համապատասխան ձևերին՝ այս – այսր կամ այսորիկ, սա – սորա: Առանձին բարբառներում դիտարկվում են միաձուլված, ազդեցությունների հետևանքով առաջացած ձևեր: Այս, այդ, այն ցուցականների բարբառային ձևերում (ուղիղ և թեք) իրենց արձագանքներն ունեն հայագետների նշած հնագույն արմատական ձևերի ո հնչյունը, այդ դերանունների դրաբարյան երկար հոլովաձևերի որ և իկ կազմիչները: Ինչ վերաբերում է հիմնականում արևելյան բարբառներում այս, այն ցուցականների համապատասխան թեք ձևերում տ (դ) – ի ներմուծմանը, ապա այն ամենայն հավանականությամբ արդյունք է այդ դերանվան համապատասխան ձևերի համաբանական ազդեցության, որին թերևս նպաստում են նաև բարբառային հնչյունաբանական որոշակի իրողություններ:

ԲԱՅԻ ՍԵՌԸ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Բարբառներում բայի սեռի դրսևորման եղանակները ավելի բազմազան են: Սրանցում անցողականություն-անանցողականություն հակադրությունը թե՛ ըստ լծորդությունների և թե՛ ըստ բայաձևերի միշտ չէ, որ նշույթավորված է: Սեռի կարգը, ինչպես ցույց են տալիս դիտարկումները, կարող է ձևային որևէ ցուցիչ չունենալ և հասկանալի դառնալ միայն բայիմաստից, կարող է արտահայտվել ածանցմամբ, բայական համապատասխան վերջավորություններով և, վերջապես, շարահյուսական միջոցներով:

Բայազետի բարբառում բայի սեռը միայն բայիմաստով հասկանալի է երկու դեպքում.

ա) Երբ սեռային ցուցիչ չունեցող բայը ներկայացնում է ակտիվ ներգործության իմաստ ունեցող այնպիսի գործողություն, որը, ըստ խոսողի, ինքնին կատարվել չի կարող և պահանջում է կրող առարկա, օրինակ՝ ընել, առնել, բ՛ըռնել, բ՛ըրել, բ՛ըշտել, գ՛ըթնել, գ՛օվալ, գ՛օղնալ, դ՛առսել, զուքել, թօղել, լըցել, խառնել, ծախել, կախել, կաւռթալ, կըրել, Հ՛իմանալ, Հ՛իշկալ, ճ՛ևվել, ճարել, մօռթել, յերքել, նէրկել, շըպըռտել, չըռթել, պախել, Չ՛ըրել, սընդըխտել, տանել, ցանել, ուտել, փօրել, քանդել, օլըրել և այլն: Հասկանալի է, որ այս կարգի բոլոր բայերը ներգործական սեռի են:

բ) Երբ սեռային ցուցիչ չունեցող բայը ներկայացնում է ակտիվ ներգործության իմաստ չունեցող, ինչպես նաև, ըստ խոսողի, ինքնին կատարվող գործողություն, օրինակ՝ ածել, ասըռել, աբրել, բ՛օրվըսնել, բօռալ, բօյօվնալ, բ՛անցըրնալ, բըխկալ, գ՛ըխկըմել, դիբել, էրկվալ, թախկել, թավըլել, թըմբըրել, թըռնել, լօկընալ, խըռօվել, ծըղգալ, ծախկել, ծըլել, կաղդել, մօլըրել, վազնել, ցավալ, ափլօրնալ, բաբիշել, բըկըռտալ, գէժըռել, գ՛ըլխըվըրել, գաբընել, թէկկըտալ, լըփօփել, լօճել, կարկըմել, կըզել, Հ՛իշնել, ճըփտել, մըթնել, չըշմել և այլն: Պարզ է, որ այս կարգի բոլոր բայերն էլ չեզոք սեռի են:

Սեռի կարգը ածանցմամբ ևս ունի դրսևորման երկու եղանակ.

ա) Պատճառական ցն ածանցը առավելաբար ձևավորում է անցողական՝ ներգործական սեռի բայեր: Այս ածանցով սովորաբար չեզոք սեռի բայերը (իհարկե ոչ բոլոր) վերածվում են ներգործականների (թըռնել – թըռցընել), իսկ ներգործական սեռի բայերը, ստանալով այդ ածանցը, իրենց սեռը չեն փոխում (խըմել – խըմցընել):

բ) Կրավորական (երբեմն նաև՝ բաղադրական) վ ածանցի առկայությունը պայմանավորում է բայի կրավորական կամ չեզոք սեռ, այսինքն՝ վ ածանց ունեն միայն անանցողական բայերը (բ՛ըռվել, կըրվել, գըժվել): Ներգործական սեռի բայերը, այս ածանցը ստանալով, վերածվում են կա՛մ կրավորականների, կա՛մ չեզոքների (տըփել – տըփվել, նեղել – նեղվել):

Բայական վերջավորություններով սեռի կարգն արտահայտելը, ինչպես հայտնի է, բնորոշ էր գրաբարին, սակայն այդ իրողությունը համընդհանուր չէր (չէր ընդգրկում բոլոր ժամանակաձևերը և բոլոր լծորդությունները), և հաճախ խոնարհման ձևի և բայի սեռի միջև չկար համապատասխանություն[178]: Այդպես է իրավիճակը նաև Բայազետի բարբառում, որտեղ ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ տարբերակվում են անցյալ կատարյալում (ներգ. ի, իր, -/եց, ինք, իք, ին և կրավ. ա, ար, ավ, անք, աք, ան), ըղձական, ենթադրական և հարկադրական ապառնիների եզակի թվի երրորդ դեմքում (ներգ. ա և կրավ. ի), եզակի հրամայականում (ներգ. ա և կրավ. ի): Ընդ որում՝ այդ տարբերակումը չի վերաբերում Ա խոնարհման պարզ և բազմապատկական ածանց ունեցող բայերին (գ՛օվալ - գ՛օվացի, քէլալ - քէլացի, ծըմըրկըտալ - ծըմըրկըտացի): Այս խոնարհման ն (ան)[179], էն ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալում խոնարհվում են կրավորաձև, սակայն այդտեղ դեր է խաղում ոչ թե բայի սեռը, այլ կազմությունը, և ներգործական ու չեզոք բայերը խոնարհվում են նույն կերպ (խասկընալ - խասկըցա, մօտկընալ - մօտկըցա, ունէնալ - ունէցա, վախէնալ - վախեցա. ըղձ. խասկընա, մօտկընա, ունէնա, վախէնա): Ընդհանրապես, Ա

[178] Տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, ե., 1976, էջ 104-105:

[179] Համապատասխանում է գրաբարյան և արդի հայերենի ան ածանցին. խասկընալ – հասկանալ, հէրկընալ - երկյանալ:

խոնարհման բոլոր բայերը բոլոր ժամանակաձևերում, բացի անցյալ կատարյալը, խոնարհվում են ովյալ ժամանակաձևին հատուկ միանման ձևով: Փաստորեն, Ա խոնարհման բայերի խոնարհման համակարգում վերջավորութ յունները սեռի արտահայտման դեր չունեն: Այդպես է նաև Ե խոնարհման և ածանց ունեցող բայերի դեպքում, որոնք, սեռից անկախ, խոնարհվում են կրավորաձև (անց. կատ.՝ գ՛ըթա /գ՛ըթնել/, մըտա /մըդնել/. ըղձ.՝ գ՛ըթնի, մըդնի): Պատճառական ածանց ունեցող բոլոր բայերն էլ, անկախ սեռից, խոնարհվում են ներգործաձև (անց. կատ.՝ կուրցըրի, կուրցըրիր, կուրցըրեց. խասկըցըրի, խասկըցըրիր, խասկըցըրեց. դ՛օխծըրի, դ՛օխծըրիր, դ՛օխծըրեց. ըղձ.՝ կուրցընա, խասկըցընա, դ՛օխծընա): Այսպիսով, ներգործաձև և կրավորաձև վերջավորութ յունները սեռային տարբերակման դեր են կատարում Ե խոնարհման պարզ, բազմապատկական և կրավորական ածանց ունեցող բայերի դեպքում: Ըստ այդմ՝ պարզ և բազմապատկական ածանց ունեցող ներգործական սեռի բայերը խոնարհվում են ներգործաձև (անց. կատ.՝ թափի/թափէցի, թափիր/թափէցիր, թափեց. խափըռտի, խափըռտիր, խափըռտեց. ըղձ.՝ թափա, խափըռտա): Նույն այդ կարգի չեզոք սեռի բայերը խոնարհվում են կրավորաձև (անց.կատ.՝ մըռսա, մըռսար, մըռսավ. գէժըռա, գէժըռար, գէժըռավ. պ՛ատըռտավ, պ՛ատըռտան. թօռմըշտավ, թօռմըշտան, խընթըրվորա, խընթըրվորար, խընթըրվորավ. ըղձ.՝ մըռսի, գէժըռի, պ՛ատըռտի, թօռմըշտի, խընթըրվորի): Բացառութ յուն են կազմում երկու խումբ բայեր, որոնք, լինելով չեզոք, այնուամենայնիվ խոնարհվում են ներգործաձև: Նման բայերի առաջին խումբը կազմում են բնութ յան երևութ յներ ցույց տվող այնպիսի բայերը, որոնք դիմավոր ձևերում գործածվում են միայն եզակի թվի երրորդ դեմքով. ամբել, ամբըռտել, արեվել, ձ՛ընել, մըքըլկել, պ՛ռզել, մըթընդել: Թվում է՝ այստեղ դեր ունի մարդկանց նախնական պատկերացումը երկնային ուժերի վերաբերյալ, և, օրինակ, «Հէրէկ սա՛րերը ձ՛ընեց» տիպի նախադասութ յուններում ենթադրվում է երկնային ուժի գործողութ յուն, որն ունի կրող առարկա: Երկրորդ խումբը կազմում են այնպիսի բայեր, որոնց ցույց տված գործողութ յունը իբրև

հետևանք չի հանդեցնում առարկայի նոր վիճակի: Օրինակ, եթե նստել գործողության արդյունքը այդ գործողությունը կատարողի նստած վիճակն է, ապա գ՛անգըտել կամ Հ՛ԱՓսել գործողությունը այն կատարողի հետևանքային վիճակ չի ենթադրում: Այլ կերպ ասած՝ եթե «Ճիժը նըստավ» նախադասությունը հայտնում է, որ երեխան կատարել է նստելու գործողությունը և գտնվում է նստած վիճակում, ապա «Ճիժը հԱՓսեց» նախադասությունը ընդամենը վկայում է, որ երեխան չորեքթաթ քայլել է, բայց որևէ վիճակի մասին խոսք լինել չի կարող: Ձեզոք սեռի ներգործաձև խոնարհվող այս բայերից են՝ ԱչխատԵլ, գ՛անգըտել, բ՛անել, բ՛էտըռվել, բ՛ըլկել, գԱվգըլկել, թԱփկել, թըրքել, լօնքել, խընչել, խօքէսխընել, ծըլկել, կէյբըթել, հԱփսել և այլն: Այսպիսով, պարզվում է՝ ե խոնարհման չեզոք սեռի պարզ (մասամբ նաև՝ բազմապատկական ածանց ունեցող) բայերը կարող են խոնարհվել ներգործաձև կամ կրավորաձև՝ ըստ իրենց իմաստային յուրահատկության. եթե նման բայերը ենթադրում են համապատասխան դրություն կամ վիճակ, ապա խոնարհվում են կրավորաձև, իսկ եթե չեն ենթադրում, ապա խոնարհվում են ներգործաձև: Հետաքրքրական է նաև, որ կրավորաձև խոնարհվող բայերը ունենում են հարակատար դերբայի ձևեր և կարող են դառնալ որոշիչ կամ հանդես գալ դիմավոր ժամանակաձևի կազմում (քընուկ տըղա, քընուկ եմ), մինչդեռ ներգործաձև խոնարհվող և վիճակ ու դրություն չենթադրող չեզոք բայերը հարակատար դերբայի ձևեր չեն ունենում:

Կրավորաձև են խոնարհվում վ ածանց ունեցող բոլոր բայերը՝ իբրև անանցողական (չեզոք կամ կրավորական) բայեր (անց. կատ.՝ նեղվա, նեղվար, նեղվավ. բԱռօժվա, բԱռօժվար, բԱռօժվավ. տըփվա, տըփվար, տըփվավ. ըղձ.՝ նեղվի, բԱռօժվի, տըփվի): Այսպիսով, ներգործաձև և կրավորաձև խոնարհումները բայի սեռային պատկանելության ցուցիչ են դառնում միայն ե խոնարհման պարզ, բազմապատկական և կրավորական ածանց ունեցող բայերի խոնարհման համակարգում և այն էլ՝ ոչ բոլոր

կոտրվել): Այսպիսով, նման դեպքերում էլ բայի սեռը որոշվում է շարահյուսական հարաբերություններով:

Խոսքում կամ խոսքից դուրս բայի սեռի դրսևորման տարբեր եղանակները կարող են զուգորդվել: Օրինակ, անցյալ կատարյալ ժամանակաձևում վ կրավորական ածանցը միշտ զուգորդվում է կրավորաձև վերջավորություններով, նույն այդ ժամանակաձևում ներգործական և չեզոք սեռային իմաստները որոշակի դեպքերում արտահայտվում են համապատասխան վերջավորություններով, խոսքում երեք սեռերի հստակ արտահայտմանը հաճախ նպաստում են շարահյուսական հարաբերությունները:

*Բայազեսի բարբառում ներգործական սեռի են ե խոնարհման պարզ բայերի մեծ մասը (*ալծել, ածել, աղել, ասել, ավլել, ավիրել, բ՛ըռնել, բըշտել, բ՛ըրել, գ՛ըզել, գ՛ըթլել, դ՛առսել, դ՛իզել, թօղել, թալնել, լիզել, լըցել, խանել, խօրել, խուզել, ծախել, կըրընգել, կապել, հավքել, ճարել, մաքրել, շարել, չինել, չափել, պախել, ջ՛ըրել, սըղոցել, տըշել, ցանել, ուտել, փաղել, քանդել *և այլն), բազմապատակական ածանց ունեցող բայեր (*ը՛ըռթըռտել, թափըռտել, ժըխշըռտել, ժօղըռտել, լօխպըռտել, խափըռտել, ծակըռտել, կապըռտել, հ՛ավքըռտել, ճըղըռտել, պըշկըռտել, սըխմըռտել, սըռփըռտել, փըռըռտել, փաղըռտել, կըտըռտել, ճըմըռտել, սընդըխտել, ճանգըռթել, ծեսկել, կօղըռճել*), ն ածանց ունեցող բայեր (*անել, առնել, դ՛ըթնել, դ՛ընել, խաքնել, տանել*), պատճառական ածանց ունեցող գրեթե բոլոր բայերը, Ա խոնարհման սակավաթիվ բայեր (*ը՛ռնալ, պիդալ, լըվալ, կանթալ, խասկընալ, մօռնալ, խօստանալ, հիմանալ, ուրանալ, կըմկըմալ, հիշկըռտալ, ապրածալ, գ՛օվալ, լըսալ, կանալ*): Ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ տարբերակող ժամանակաձևերում ներգործական սեռի բայերը առավելաբար խոնարհվում են ներգործաձև: Կրավորաձև են խոնարհվում ե խոնարհման ն ածանց ունեցող բայերը (*անց. կատ.՝ առնել – առա, դ՛ըթնել – դ՛ըթա, խաքնել – խաքա, ըղձ. առնի, դ՛ըթնի, խաքնի*), միայն անցյալ կատարյալում՝ Ա խոնարհման ածանցավոր բայերը (խասկընալ –

խասկըցա, մօռնալ - մօռցա, խօստանալ - խօստացա, հիմանալ - հիմացա, ուրանալ - ուրացա) և մի շարք անկանոն բայեր (գիդալ- դիցա, կանալ – կառցա, խաղալ - խախծա):

Չեզոք սեռի են Ա խոնարհման պարզ և ածանցավոր բայերի մեծ մասը (ավատալ, ախլօրնալ, աղդունանալ, բօռբըռալ, բ՛անցըրնալ, բըշկըտալ, ծըմբըրկըտալ, ճըլճըլալ, խըռխըռալ, զըմփդըմփալ, դ՛առնալ, զարքանալ, զառընալ, զօրէնալ, էթալ, թաիօվնալ, թուլնալ, թօփլալ, լօկընալ, խըշխըշալ, ծաբվընալ, ծըղդալ, կաթալ, քէլալ և այլն), *և խոնարհման պարզ բայերի մի փոքր խումբ* (ախրել, ածել, բ՛ուսել, էրէցել, բ՛օրփըսնել, թախկել, թավըլել, թըմբըրել, թօռմել, խըռօվել, խընձըրել, խավրել, ծըլել, ծընել, կանդղել, կուրել, խառել, խընգըռել, մօլըրել, մըռսել, նեխել, ուռել, ցամքել, փըդել, բ՛անել, բաբիչել, բէզըրել, բըժըժել, գ՛ըխկըմել, գօլել և այլն), *ն ածանց ունեցող բայերի մեծ մասը (հըլնել, հիշնել, մըդնել, թըռնել, մեռնել, փախնել, հընցնել, հընգըննել, խասնել), վոր ածանց ունեցող բոլոր բայերը* (ախղըդվորել, գըլթըգվորել, ծանդըրվորել, կըսկըծվորել, մըռթըշվորել, խընթըրվորել և այլն), *ցն ածանց ունեցող սակավաթիվ բայեր (բըլբըլցընել, խըռըցընել, դ՛օխծընել, փընչըցընել, ֆըշֆըշցընել), բաղադրական վ ածանց ունեցող բայերը (բաառօժվել, գըժվել, զըխմըվել, թաառսըվել, օցիփըշվել, զըխաբփըշվել, քամբըխվել, ճըրըղվել, թէդրաֆօխվել, լըռճըկվել, հանդըռակըվել, մէգնըվել, մօմըգվել):* Բայագետի բարբառում չատ ներգործական բայեր, ստանալով վ ածանց, առավելաբար արտահայտում են չեզոք սեռի իմաստ՝ ձևավորելով կրավորակերպ չեզոք բայեր[180]: *Սրանք կարող են ցույց տալ անձի ֆիզիկական (օլըրվել, ախազվել, գ՛ընդըվել, դըզվել, էրկուտըգվել, թախտըփվել, ծանկըռտըվել, կըլօրվել, կըսկըվել, ճըկտըվել, մանչվել, կըտըռտըվել, չարչըրվել, ըսպանվել*

[180] Նկատենք, որ պրակտիկան արևելահայերենում կրավորական սեռի բայերի մեծ մասը ունի չեզոք սեռի իմաստով գործածվելու ունակություն: Տե՛ս Ս.Ա.բրահամյան, Ն.Պառնասյան, Հ.Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, ե., 1974, էջ 295:

/չատ չարչարվել/), հոգեկան (նեղվել, հարմըրվել, թաղվել, լրկըսոտվել, մէրվել, չանխվել, վէրցրվել, փոխվել, քաչվել,, քըանըվել, խափնըվել) վիճակ կամ փոփոխութիւն, դրութեան փոփոխութիւն (թալնըվել, կնիրքըվել, կնիրնըվել, նըշանվել, բ՛աժվել, պըսագվել), առարկայի վիճակի փոփոխութիւն (բ՛ասվել, լըցվել, դ՛առաբգվել, ժըժնըվել, լըղվել, լըղօղվել, լըպկըվել, խըթվել, խօգվել, ծըռմըռվել, ծըռվել, կիսվել, ճըղվել, չուլըլվել, չըքվել /խրվել/, չ՛օկվել, սըթվել, տընդըվել, փագվել): Առանձին խմբեր են կազմում անդրադարձ (դըրըստրվել, զուքվել, թըրաշվել, կօգվել, հանգըրվել, պըռաըվել, պուդրըվել, քըսվել, սանքնըվել, սըրփըվել, փալնըվել, լըվասվել, սանդըրվել), փոխադարձ (պանչպըչվել, գ՛ըրկըվել, փատըսվել), համատեղ գործողութեան իմաստ ունեցող (հ՛ավքըվել, հ՛ավքըռտըվել, մէտեղվել, չէրգըվել, չանրվել) բայերը:

Ձեղոք սեռի Ա խոնարհման պարզ և բազմապատկական ածանց ունեցող բայերը անցեալ կատարեալում խոնարհվում են ներգործաձև, իսկ ն (ան), էն ածանց ունեցող բայերը՝ կրավորաձև: Ե խոնարհման չեզոք սեռի բայերից համապատասխան ձևերում ներգործաձև են խոնարհվում վիճակ և դրութիւն չեներթադրող պարզ բայերը, ցն ածանց ունեցող բայերը, իսկ մյուս պարզ բայերը, ն, վոր և վ ածանց ունեցողները խոնարհվում են կրավորաձև:

Կրավորական սեռի իմաստը Հայոց լեզուում արտահայտվում է չատ ավելի թուլ, քան գրական հայերենում: Ընդհանրապես, բարբառում սովորաբար կրավորական բայ կամ ձև գործածվում է ոչ թե ցույց տալու համար, որ մի առարկա ազդվում է մեկ այլ առարկայի կողմից, այլ ընդամենը ներկայացնելու, որ ավյալ առարկայի հետ ինչ-որ բան է կատարվում, ուստի նախադասութեան մեջ ավելի սովորական է գործողութեան կատարման պատճառը կամ միջոցը, քան ներգործման խնդիրը[181]: Գուցե բնութեան երևույթների անվանումները դիտվեն իբրև

[181] Ընդհանրապես, լեզուներում ներգործման խնդիրը սովորաբար քիչ գործածական է: Տե՛ս Մ.Ասատրյան, ժամանակակից հայոց լեզու, ե., 1989, էջ 213:

ներգործման խնդիր հետևյալ կարգի նախադասություններում. «Դ՛ուռը քամուց բ՛ասվավ», «Ցօրենի դ՛աշտը ևրեվից խանձըվե»: Սակայն այդ նախադասություններում քամուց և ևրեվից անդամները նույն հաջողությամբ կարող են ընկալվել իբրև պատճառի պարագա, մանավանդ եթե հաշվի առնենք, որ բնության այդ երևույթները որևէ գործողություն չեն ծավալում, նրանք գոյություն ունեն և կարող են պատճառ դառնալ զանազան իրողությունների («Դ՛ուռը ուժեղ քամի յա, դ՛ուռը քամուց բ՛ասվավ», «Էս քանօրը մէ կևթ ևնձըրեվ չէկավ, ցօրենի դ՛աշտը ևրեվից խանձըվե»): Ի դեպ, նման նախադասություններում, առանց առարկաների հարաբերությունների փոփոխության, կարող են գործածվել նաև չեզոք սեռի բայեր, ինչպես՝ «Դ՛ուռը քամուց հիլար էկավ», «Ցօրենի դ՛աշտը ևրեվից կըռընձե»: Իսկ երբ կրավորական կառույցի նախադասության գործողության բուն կատարողը անձ է, ապա այն նախադասության մեջ որպես կանոն չի արտահայտվում («Վառթիվորին բօլ չ՛ըրվանք», «Էրէվում՝ դ՛ու հէսօր էլի կըտըփվես», «Հէսօր խանութից իրենք կիլօ պիսօք ա բ՛էրվե»): Կրավորական կառույցի նման նախադասություններում կարող են դրսևորվել տարբեր պարագաներ («Քօ պևճառօվ ընդու խառսը խըրկըվավ», «Էտ դիվանին քօ ևսէլօվ ա պևտի տևկը դ՛ըրվե», «Ընդու մեխկօվ յես չևտ ծէսկըվա») կամ միջոցի խնդիր («Էտ ևրաղը քօ ձ՛եռօվ պըտի բ՛ասվի»): Այնուամենայնիվ, հազվադեպ հանդիպում է անձի անունով արտահայտված ներգործման խնդիր, որը և դրվում է բացառական հոլովով. «Դ՛ու էլի ընդուց բ՛ըշտըվար», «Դ՛ու Սիմոնից կըրվար. Սիմոնն էլ՝ Վառթանից»:

Հր.Աճառյանը իր «Քննություն Վանի բարբառի» աշխատության մեջ նկատում է, որ այդ բարբառում կրավորական բայերը գործածվում են նաև իբրև կարողական բայ, ինչպես՝ էրթևլ - էրթևցվել, կյևլ – կյևցվել, էլնել - էլնըվել, տալ - տըրվել, էճնել - էճնըվել: Հեղինակը չի մանրամասնում, սակայն

նրա բերած նախադասությունների օրինակներում այդ բայերը գործածված են միայն երրորդ դեմքով[182]: Նման իրողություն դրսևորվում է և Բայազետի բարբառում: Այստեղ կրավորական բայերի երրորդ դեմքով արտահայտվում է երկու կարգի իրողություն.

ա) Պարբերաբար կրկնվող, օրինաչափ երևույթ, սահմանված կարգ, ինչպես՝ Կառտօլը մայիսին ա ցանվում. Կովը օրը էրկու դային ա կըթվում. Խառսը խօր տընից նըվագօվ ա դ՛ուս բ՛էրվում. Յօրղըննները դ՛առսըվում են գօշկընէրի վըրէն. Բըլօջի թույնը ջ՛ըրի մէչը բ՛ասվում, նոր սըրըսկըվում քօլէրին. Հառէչ խաշլամէն ա քաշվում, նոր յետո՝ քուֆտէն. Հիշկա սօրվի՝ էս խամուդը այսենց նըստըսվում էս տըրումբի վըրէն. Ըտու մանսին էլ յե՞փ ա խօսըսվում. Սէրվանդը պանի տանգն ա դ՛ըրվում. Վատ բ՛անը հա յէլ անըսվում:

բ) Նպատակ, կարելիություն, անհրաժեշտություն կամ պարտադրողականություն, ինչպես. Հէսօր հիրկուն էթըսվում խառս ուզէլու. Էգ մանսին պըտի գ՛ըրըսվի. Ըտօվ կըրիչ՛ա չըլնըսվի. Էտ գ՛ըթլօվ ճանչ չուտըսվի. Ընդու անուկը յեփ ա խասկըսվո՞ւմ. Էտ պանրանը պըտի կանճըսվի. Ուրեմ էս փողի կէսը տանըսվում անճըգնէրին, կէսը մընում ձ՛եզի. Հ՛էքուց ձ՛եզի կանսըսվի՝ ինչ պըտի անէք. Էտենց թըխտերը էսենց գ՛ըրչօվ չըգ՛ըրըսվում. Հ՛իրկուն սանղ չօրերը պըտի նեռս բ՛էրըսվի. Վայթէ էտանրի բօստան չըփօրըսվի. Տանռերն էնքան մանդըր են՝ լավ չըկանթըսվում. Խավէրին հէսօր կուտ տանըսվո՞ւմ. Էտ յանօվ մեր դ՛ուռ չըգ՛ալըսվում::

Եթե առաջին կարգի դեպքերում արձանագրվում է օրինաչափությունը կամ կարգը, ապա երկրորդներում ներկայացվում է

[182] Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, էջ 183:

ընդհանուրին վերաբերող կարելիություն կամ անհրաժեշտություն:

Հետաքրքրական է նշված կարգի կիրառություններ ունեցող բայերի կազմությունը: Որպես կանոն, սկզբնաձևային չեզոք սեռի բայերը վ ածանց ստանում են պատճառականի հիմքի վրա. նըստել - նըստըցընել - նըստըցվել, կլուճընալ – կլուճըցընել – կլուճըցվել, բ՛անցըրնալ - բ՛անցըրցընել - բ՛անցըրցըվել: Թերևս սրանց նմանությամբ վ ածանցով այսպես կոչված «կարողական» բայեր կազմվել են նաև ներգործական ու չեզոք այնպիսի բայերից, որոնք բարբառումս պատճառականի ձևեր չունեն կամ նման կերպով չէին կարող ունենալ. օրինակ՝ ասել - ասըվել, հ՛ըլնել – հ՛ըլնըվել, էթալ - էթըվել, գ՛ալ - գ՛ալըվել, տալ – տալըվել, գ՛ըրել - գ՛ըրըվել, փօրել - փօրըվել, ուտել - ուտըվել և այլն:

Ի դեպ, պատճառականներից ձևավորված կրավորական բայերի այլ կիրառություններ բարբառումս, որպես կանոն, չեն հանդիպում:

Կրավորական սեռի բոլոր բայերը համապատասխան ժամանակաձևերում խոնարհվում են միայն կրավորաձև:

Ինչպես արդեն նշել ենք, Բայազետի բարբառում ե խոնարհման մի շարք բայեր կրավորականության (նաև չեզոքության) իմաստ կարող են արտահայտել նաև առանց վ ածանցի: Եվ քանի որ այդ բայերը ներգործաձև ու կրավորաձև խոնարհումներ տարբերակող ժամանակաձևերից բացի մյուս դեպքերում նույն ձևով կարող են արտահայտել և՛ ներգործականության, և՛ կրավորականության, և՛ չեզոքության իմաստներ, ուստի դրանք հասարակ[183] բայեր են: Բարբառային հասարակ բայերը, այսպիսով, անցյալ կատարյալ ժամանակաձևում, ըղձական, ենթադրական, հարկադրական ապառնիների եզակի երրորդ դեմքում, հրամայականի եզակիում կարող են ստանալ և՛ ներգործաձև, և՛ կրավո-

[183] Գրաբարի համակարգում հասարակ / ընդհանուր են կոչվում այն բայերը, որոնք ընդհանուր ձևով արտահայտում են և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ: Տե՛ս Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 96:

բաձև վերջավորություններ՝ առաջին դեպքում ունենալով ներգործականության իմաստ, իսկ երկրորդ դեպքում՝ կա՛մ կրավորականության, կա՛մ չեզոքության իմաստներ: Մյուս դեպքերում այս բայերը նույն ձևով կարող են արտահայտել երեք սեռերի իմաստներն էլ:

Բարբառներում կրկնասեռության մյուս դրսևորումները (ներգործական սեռ – չեզոք սեռ, կրավորական սեռ – չեզոք սեռ) նույնպես տարածված են: Արդեն բավականաչափ խոսվեց այն մասին, որ վ ածանցով կամ առանց դրա բազմաթիվ բայեր կարող են արտահայտել և՛ չեզոք, և՛ կրավորական սեռի իմաստներ (Ժողովուռթը լըսվավ հայիթը – Կնուռօլը լըսվավ խորը. Բ՛աժակը կօդրե - Հաստատ քօ ձ՛եռօվ ա կօդրե): Մի շարք բայեր էլ նույն ձևով կարող են արտահայտել և՛ ներգործականության, և՛ չեզոքության իմաստներ: Նման բայերից են՝ սօրվել (դ՛ասը սօրվել - շոքին սօրվել/վարժվել/), հիշկալ (կինօ հիշկալ – սիրէրին հիշկալ), թըքել (թըքել հիրսին - Ուրուն թըքել), խօսալ (վատ բ՛աներ խօսալ - մէկի խէտ խօսալ), լըսալ (ձ՛էն լըսալ – ջ՛ոչին լըսալ), ցըրվել (փող ցըրվել - ցըրվել տըները), կըծել (շունը կըծում - դըզկը ձ՛եռըս կըծեց), խաքնել (շոր խաքնել - օդը տըրումբին չըխաքնում), տէնալ (ծԱռ տէնալ - խիվանդ հաշկը Ասթէն տէնում):

Այսպիսով, Բայազետի բարբառում բայի սեռի արտահայտությունը բնութագրվում է հետևյալ իրողություններով.

1. Բայի սեռը կարող է արտահայտվել բայիմաստով (ներգործականություն – չեզոքություն), ածանցմամբ (վ և ցն), համապատասխան վերջավորություններով (որոշակի ժամանակաձևերում՝ ներգործաձև և կրավորաձև), շարահյուսական միջոցներով (կրկնասեռ բայերի դեպքում):

2. Ներգործաձև և կրավորաձև առանձին վերջավորություններ դրսևորվում են անցյալ կատարյալ ժամանակաձևում, ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների ապառնիների եզակի թվի երրորդ դեմքում, եզակի հրամայականում: Ընդ ո-

րում՝ ներգործաճև և կրավորաճև վերջավորութիւնները սեռային տարբերական դեր են կատարում ե խոնարհման պարզ, բազմապատկական և կրավորական ածանց ունեցող բայերի դեպքում: Մյուս դեպքերում հիշյալ վերջավորութիւնների գործառութիւնը պայմանավորված է բայի կազմութիւնով:

3. Առանձին դեպքերում՝ նշված ժամանակաձևերում ներգործաճև կամ կրավորաճև վերջավորութիւնների գործառութիւնը պայմանավորված է բայիմաստով (նըստա ~ ծըլկի):

4. Բայի սեռի դրսևորման տարբեր եղանակները կարող են զուգորդվել:

5. Կրավորական սեռի իմաստը Բայազետի բարբառում արտահայտվում է չատ ավելի թուլլ, քան գրական հայերենում:

6. Դրսևորման որոշակի յուրահատկութիւններ ունեն կրավորակերպ չեզոք, կրկնասեռ և «կարողական» բայերը:

ԵՄ ԲԱՅԸ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Ինչպես արդի հայերենում ընդհանրապես, այնպես էլ Բայազետի բարբառում եմ բայն ունի միայն ներկայի և անցյալի ձևեր. եմ, ես, ա, ենք, էք, են և ի, իր, էր, ինք, իք, ին:

Բարբառիս ներկայի ձևերը դրաբարյան համարժեքների (եմ, ես, է, եմք, էք, են) պես հոգնակի թվի երկրորդ դեմքում ունեն մյուս ձևերի ե - ից տարբերվող հնչյուն՝ է ձայնավոր[184]: Մինչդեռ դրական արևելահայերենը համապատասխան բոլոր ձևերում ունի միայն է պարզ ձայնավոր: Ներկայի ձևերում թե՛ դրաբարի և թե՛ դրական արևելահայերենի համեմատությամբ Բայազետի բարբառում դրսևորվող յուրահատկությունը եզակի թվի երրորդ դեմքում է - ի դիմաց ա - ի հանդես գալն է, և այդ իրողությունը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն առումով, որ շատ տարածված է արդի խոսակցական հայերենում: Ընդհանրապես, օժանդակ բայի ա ձևը արևելահայ բարբառներին բնորոշ իրողություն է: Ըստ Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակների՝ «88. Օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքի ա - ով ձև» հատկանիշը[185] հատուկ է բարբառների արևելյան խմբակցության գրեթե բոլոր բարբառներին՝ բացառությամբ Խոյ-Մարաղայի, Արդվին-Թբիլիսիի և մի երկու այլ բարբառների: Արևմտյան խմբակցության բարբառներում այս հատկանիշը խիստ սակավադեպ է, եղած դեպքերում էլ հիմնականում ոչ լիարժեք է դրսևորվում[186]:

Իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության մեջ ներկայացնելով օժանդակ բայի դրսևորումները հայերենի բարբառներում՝ Հ.Աճառյանը նկատում է. «Հայտնի չէ ինչ պատճառով եզակի 3 դեմքի է ձևը դառնում է ա»[187], ապա մի շարք բարբառների առնչությամբ, որոնցում ընդհանրապես օժանդակ բայը հանդես է գալիս ա արմատով, գրում է. «Ներկա ե-

[184] Եթե դրաբարում ե-ն պարզ ձայնավոր էր, իսկ է-ն՝ երկբարբառակերպ, ապա Բայազետի բարբառում ե-ն ունի երկբարբառային արտասանություն, իսկ է-ն պարզ ձայնավոր է:
[185] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 101:
[186] Տե՛ս նշվ.աշխ., էջ 108-119:
[187] Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4 Բ, ե., 1961, էջ 64:

զակի Գ դեմքի ա ձևն սկսում է ազդել մյուս դեմքերի ձայնավորի վրա և նրանք էլ վերածում իր երանգին»[188]*: Անդրադառնալով հայերենի բարբառներում օժանդակ բայի ներկայի ձևերի դրսևորումներին՝ Ա.Ղաբիբյանը գրում է. «տարբեր բարբառներ օժանդակ բայերի տարբեր արմատներ են օգտագործում. օրինակ՝ Երևանը օգտագործում է ներկայի բոլոր դեմքերում «է» արմատը, իսկ երրորդ դեմքում «ա» արմատը (գ՛ըըըմ ա), Թբիլիսիի բարբառը բոլոր դեմքերում օգտագործում է «ի» արմատը, միայն երրորդ դեմքում «է» արմատը (գըրում է), Ջուղայի բարբառը հետևողականորեն օգտագործում է «ա» արմատը, իսկ Շամախու բարբառը «է» և «ա» արմատները... Ճիշտ է, որ այս արմատներից մեկ-երկուսը կարող են զուգադիպած լինել հնչյունափոխության կամ ներդաշնակության հետևանքով առաջացած հնչյունների զանազանությանը, բայց հիմնականում օժանդակ բայի արմատների հնչյունական տարբերություններն առաջանում են նրանից, որ հայերեն լեզվի մեջ էական բայի իմաստով գիտակցվել են ա, է, ի, ո և ու ձայնավորները, որոնք զուգահեռ են հնդեվրոպական բառերի թեմատիկ ձայնավորներին: Մեր գրական լեզուն հետևողականորեն օգտագործում է միայն «է» ձայնավորը, գրաբարն էլ նույն «է»-ն. սակայն գրաբարի անորոշ դերբայի լծորդի մեջ (խոնարհիչի մեջ) երևում են էական բայի բոլոր այն տարբերակները, որոնք գիտակցվել են իբրև էական բայեր (ա, է, ի, ո, ու)»*[189]*:*

Ինչ խոսք, տարբեր բարբառներում օժանդակ բայի դրսևորումների զանազանությունների պատճառ կարող են դառնալ տարբեր հանգամանքներ, սակայն դիտարկումները երևան են հանում մի ընդհանուր օրինաչափություն. որպես կանոն, եզակի թվի երրորդ դեմքում հանդես է գալիս մյուս ձևերի արմատական ձայնավորի համեմատությամբ ավելի բաց ձայնավոր, ինչպես՝ Թբիլիսիի բարբառում՝ ի ~ է (իմ, իս, է), Արարատյան և Աստրախանի բարբառներում՝ է ~ ա (էմ, էս, ա), Բայազետի բարբառում՝ և ~ ա (եմ, ես, ա), Ղարաբաղի և Ագուլիսի բարբառնե-

[188] Նշվ. աշխ., էջ 65:
[189] Ա.Ղաբիբյան, Նշվ. աշխ., էջ 169-170:

բում՝ ը ~ ա (ըմ, ըս, ա), Կիլիկիայի բարբառում՝ ի ~ ը (իմ, իս, ը) և այլն:

Տարբեր բարբառներում դրսևորվող այդ միտումը փաստելով՝ փորձենք Բայազետի բարբառում օժանդակ բայի ա ձևի առաջացումը բացատրել հենց բարբառիս իրողություններով: Օժանդակ բայի ներկայի ձևերը այստեղ համընկնում են ե խոնարհման բայերի ըղձական ապառնու ներգործաձև վերջավորություններին (գ՛ըրեմ, գ՛ըրես, գ՛ըրա, գ՛րենք, գ՛ըրէք, գ՛ըրեն և եմ, ես, ա, ենք, էք, են), մինչդեռ կրավորաձև խոնարհման դեպքում եզակի երրորդ դեմքում առկա է տարբերություն (գ՛ըրվեմ, գ՛ըրվես, գ՛ըրվի կամ նըստեմ, նըստես, նըստի): Այդպես էր և գրաբարում, որտեղ օժանդակ բայի ներկայի ձևերը համընկնում էին ե խոնարհման բայերի ներկայի ներգործաձև վերջավորություններին (գրեմ, գրես, գրէ, գրեմք, գրէք, գրեն և եմ, ես, է, եմք, էք, են) և արմատական հնչյունով տարբերվում կրավորաձև վերջավորություններից (գրիմ, գրիս, գրի, գրիմք, գրիք, գրին): Համապատասխանություն առկա է և Թբիլիսիի բարբառում (գըրիմ, գըրիս, գրէ և իմ, իս, է), մինչդեռ Արարատյան բարբառում (նաև գրական արևելահայերենում) համապատասխանությունը խախտված է (գ՛ըրէմ, գ՛ըրէս, գ՛ըրի և էմ, էս, ա): Դիտարկվող ա ձևը, այսպիսով, Բայազետի բարբառում ուղղակիորեն կապվում է ըղձական ապառնու համապատասխան ներգործաձև վերջավորության հետ և կարող է բխեցվել հենց դրանից: Բայց պարզվում է՝ այդ վերջավորությունն էլ իր հերթին ընդհանրություն ունի ե խոնարհման բայերի եզակի հրամայականի ներգործաձև -ա վերջավորության հետ. գ՛ըրա՛, մօտկըցըրա՛, ընդ որում՝ ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի կրավորաձև վերջավորությունն էլ համընկնում է եզակի հրամայականի կրավորաձև վերջավորությանը. ըղձ. գ՛ըրվի, նըստի ~ հրամ. գ՛ըրվի՛, նըստի՛:

Եվ քանի որ ե խոնարհման բայերի ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի և եզակի հրամայականի վերջավորությունները բարբառումս նույնական են (գ՛ըրեմ, գ՛ըրես, գ՛ըրա ~ գ՛ըրա՛ /ներգործաձև/, նըստեմ, նըստես, նըստի ~ նըստի՛ /կրավորաձև/), ուրեմն օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի ա ձևը ընդհանրություններ ունի ե խոնարհման բայերի ըղձական ա-

պառնու եզակի երրորդ դեմքի ներգործաձև -ա վերջավորության և նույն բայերի եզակի հրամայականի ներգործաձև -ա վերջավորության հետ: Ի դեպ, ըղձական ապառնու երրորդ դեմքի ձևերը ևս թo (թող) եղանակավորող բառի հետ արտահայտում են հորդոր, պահանջ, հրաման (թo գ՛ըրա՛, թo բ՛էրա՛, թo նըստի՛, թo կըըվի՛), և այս իրողությունը հայերենում (նաև բարբառներում) բավականին լայն տարածում ունի: Հ.Աճառյանը հանգամանորեն անդրադարձել է թո՛ղ բառով և ըղձականի ձևերով կազմված կառույցներին և դրանք անվանել բարդ հրամայական[190]:

Ասվածից կարելի է հետևեցնել, որ եմ բայի ա ձևը անուղղակիորեն կապվում է հրամայականի ա վերջավորության (գ՛ըրա՛) հետ, ուստի անհրաժեշտ է պարզել նաև հրամայականի բարբառային այդ ձևի ծագումը: Եթե նկատի ունենանք, որ գրաբարում ներգործաձև խոնարհման դեպքում ցոյական հիմք ունեցող բայերի բուն հրամայականի եզակին կազմվում էր այդ հիմքի ց - ի անկումով և դրան նախորդող ա - ի չեչտումով (գրել - գրեաց - գրեա՛, ասել - ասաց - ասա՛, աղալ - աղաց - աղա՛), իսկ կրավորաձև խոնարհման դեպքում հրամայականն ուներ –իր վերջավորություն, ապա կարելի է ենթադրել, որ հրամայականի բարբառային -ա և -ի վերջավորությունները հինհայերենյան հրամայականի արձագանքն են՝ համապատասխան հնչյունափոխություններով (գրբ. գրեա՛ - բրբռ. գ՛ըրա՛, գրբ. պատմեա՛ - բրբռ. պէնդմա՛, գրբ. փախի՛ր - բրբռ. փախի՛, գրբ. դողացի՛ր - բրբռ. գ՛օխծի՛):

Այսպիսով, գրաբարյան ձևից (գրեա՛) բխող ա վերջավորությամբ հրամայականի բարբառային ձևի (գ՛ըրա՛) համաբանական ազդեցությամբ Բայազետի բարբառում նախ ա է դարձել ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի ներգործաձև վերջավորությունը (թերևս թo եղանակավորողի հետ հրաման արտահայտելու իր գործառույթյան չնորհիվ՝ թo գ՛ըրա /գ՛ըրեմ, գ՛ըրես, գ՛ըրա/, թo պէնդմա /պէնդմեմ, պէնդմես, պէնդմա/), ապա և օժան-

[190] Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 163-171, Հ.Աճառյան, Բննություն Վանի բարբառի, Ե., 1952, էջ 177-178:

դակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի ձևը: Այն, որ գործընթացը տեղի է ունեցել այս ուղղությամբ, և օժանդակ բայի նախնական է ձևը վերածվել է ա - ի, վկայում է ժխտականի՝ է - ն պահպանած չէ ձևը (չեմ, չես, չէ, չենք, չէք, չեն): Հետաքրքրական է, որ այլ բարբառներում ևս դիտարկվում է ուղղակի համապատասխանություն օժանդակ բայի՝ քննության առարկա ձևի, ե խոնարհման բայերի ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի և եզակի հրամայականի վերջավորությունների միջև: Այսպես, Վանի բարբառում օժանդակ բայի համապատասխան ձևն է ի, և ե խոնարհման բայերի ստորադասական ներկայի եզակի երրորդ դեմքն ու եզակի հրամայականը ունեն ի վերջավորություն, Խոյ-Մարաղայի բարբառում նույնպես երեք դեպքերում էլ առկա է ի, Դիադինի բարբառում և Ալաչկերտի խոսվածքում երեք դեպքում էլ առկա է ա, Կարնո և Երզնկայի բարբառներում՝ է, Համշենի բարբառում՝ ա:

Այսպիսով, հավանական է, որ Բայազետի և այլ բարբառներում կամ խոսվածքներում հինհայերենյան հրամայականից եկող ձևի ազդեցությամբ առաջացած օժանդակ բայի ա ձևը վերևում հիշատակված՝ եզակի երրորդ դեմքում ավելի բաց ձայնավորի դրսևորման միտումի շնորհիվ տարածվել է նաև այլ բարբառներում և ընդհանրացել խոսակցական հայերենում:

Ինչ վերաբերում է օժանդակ բայի անցյալի ձևերին, ապա Բայազետի բարբառում առկա է երկձայնավոր ձևերի մեջ (նաև ըղձական անցյալում) է-ի սղում (էի, էիր, էինք, էիք, էին ~ ի, իր, ինք, իք, ին): Այս դեպքում ևս յուրահատուկ ձևերի առաջացումը գալիս է ըղձականի ձևերից, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ըղձական անցյալում խոնարհիչը բացակայում է ոչ միայն ե, այլ նաև Ա խոնարհման բայերի դեպքում.

գ՛ըրել - գ՛ըրի, գ՛ըրիր, գ՛ըրէր, գ՛ըրինք, գ՛ըրիք, գ՛ըրին
մընալ – մընի, մընիր, մընէր, մընինք, մընիք, մընին:

Այսինքն՝ Բայազետի բարբառի այս ժամանակաձևում վերջավորությունների և բայահիմքի միջև բացակայում է խոնարհիչը, ուստի վերջավորությունները հենց հանդես են գալիս իբրև օժանդակ բայի անցյալի ձևեր:

Այս իրողությունը ևս բնորոշ է արևելյան խմբակցության բարբառներին (բացառությամբ Աստրախանի, Թբիլիսիի, Մեղրու, Ագուլիսի, Խոյ-Մարազայի բարբառների): Արևմտյան խմբակցությունում այս հատկանիշը հատուկ է Մշո, Վանի և Դիադինի բարբառներին:

Այսպիսով, Բայազետի բարբառում առկա է ուղղակի համապատասխանություն եմ բայի ձևերի և ըղձականի համապատասխան վերջավորությունների միջև, և առաջինների յուրահատկությունները պայմանավորված են երկրորդներով:

ԽՈՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՑԱՋԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ[191]

Բայազետի բարբառով ներկայում խոսում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում և շրջակա մոտ մեկ տասնյակ գյուղերում, որոնց բնակիչների նախնիները գաղթել են Բայազետ քաղաքից և հարակից բնակավայրերից, մասամբ նաև Վանից, Խոյից, Մուշից և այլ վայրերից: Վերջիններիս սերունդները այլ բարբառով խոսողների հոծ և կայուն միջավայրում ժամանակի ընթացքում բնականաբար կորցրել են իրենց մայրենի խոսվածքները, սակայն Բայազետի բարբառի տարբեր խոսվածքներում դեռևս պահպանվում են դրանց հետքերը: Թե՛ 19-րդ դարում և թե՛ 20-րդ դարի սկզբներին բայազետցիները, պատմական հայրենիքից գաղթելով, բնակություն են հաստատել Արևելյան Հայաստանի նաև այլ վայրերում, և այսօր նրանց սերունդները բնակվում են Արագածոտնի (Կարբի, Արուճ, Քուչակ, Վերին Բազմաբերդ, Վարդենիս գյուղեր), Արմավիրի (Փշատավան, Ալաշկերտ, Ջանֆիդա գյուղեր), Կոտայքի (Գողթ, Արագյուղ, Արզական, Բջնի, Կաթնաղբյուր, Ակունք գյուղեր) մարզերում և այլուր[192] : Բարբառախոս այլ միջավայրերում Բայազետի բարբառը թոդել է իր հետքը, բայց և ինքն էլ ենթարկվել է այլ բարբառների ազդեցության: Այսպես, Արարատյան բարբառի խոսվածքների մասին խոսելով՝ Ս.Բաղդասարյանը նկատում է, որ «Բայազետի բարբառի ազդեցությունը կա Հոկտեմբերյան-Կոտայքի ենթաբարբառի վրա, բայց այդ ազդեցությունը անհամեմատ ուժեղ է դրսևորվում Կոտայքի շրջանում տեղակայված խոսվածքներում»[193] : Մյուս կողմից՝ Բայազետի բարբառային խոսքը, հայտնվելով մեկ այլ, օրինակ՝ Դիադինի բարբառի միջավայրում, ժամանակի ընթացքում զգալիորեն ազդվել է այդ բար-

---

[191] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրված ֆինանսական աջակցության շնորհիվ № SCS 13-6B382 պետական թեմայի շրջանակներում:

[192] «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան», Ե., 2008:

[193] Ս.Բաղդասարյան-Թափալչյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973, էջ 21:

բառից: Մեր դիտարկումով՝ Վարդենիսի տարածաշրջանի Ակունք գյուղի խոսվածքը, որի բնակիչների նախնիները գաղթել են Բայազետից, զգալիորեն հեռացել է մայր բարբառից: Այստեղ, օրինակ, բացակայում է Բայազետի բարբառի ձայնավորական համակարգի ամենաբնորոշ հատկանիշը՝ չրթնայնացած ա-ն, և ընդհակառակը՝ լիարժեքորեն արտահայտվում է Դիադինի բարբառին խիստ բնորոշ մի հատկանիշ՝ ձայնավորների և բաղաձայնների ընդգծված քմայնացումը:

Մեզ հետաքրքրում են Բայազետի բարբառի նախնական, բնօրրանում եղած վիճակին առավել մոտ խոսվածքները, որոնք պահպանել են բարբառի հիմնական հատկանիշներն ու ամբողջականությունը, նոր հայրենիքում չեն հայտնվել բարբառախոս այլ միջավայրում ու չեն ենթարկվել այլ բարբառների գերիշխող ազդեցության: Ահա թե ինչու ուսումնասիրության ոլորտում բուն Բայազետի բարբառը ներկայացնող Գավառ քաղաքի, Հացառատ և Արծվաքար թաղամասերի, Սարուխան, Նորատուս, Գանձակ, Կարմիրգյուղ, Ծաղկաչեն, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Հայրավանք համայնքների խոսվածքներն են, որոնցում Բայազետի բարբառը ներկայանում է անխառն վիճակով, իր բնականոն գործառության ու զարգացման ընթացքում:

Ինչպես որևէ լեզու միատարը չէ իր բոլոր դրսևորումներում, այնպես էլ ցանկացած բարբառ իր տարածման վայրերում հանդես է բերում զանազանություններ, որոնք պայմանավորված են թե՛ լեզվական, թե՛ արտալեզվական գործոններով: Լեզվի հասարակական բնույթը, նրա գործառական յուրահատկությունները պայմանավորում են տարբերակված դրսևորումներ տարածության ու ժամանակի մեջ: Իրողությունը այսպես է մեկնաբանում Հ.Աճառյանը. «...մարդկային հաղորդակցության միությունը բացարձակ չէ. ամեն մի համայնք իր ուրույն կյանքն ունի, և այս ուրույն կյանքը, միացած կլիմայական տարբեր պայմանների և ձայնական գործարանների տարբեր տիպի գործունեության հետ, առաջ է բերում մարդկային լեզվի մեջ տարբերություններ»[194] : Մեկ այլ առիթով էլ գրում է. «Լեզուն ներկայացնում է

[194] Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 114:

անթիվ անհամար զանազանություններ մի շարք, որոնք մի կետից սկսելով քանի հեռանում, աստիճանաբար ու ավելի են չեշտվում: Ամեն մի վայրում կան մի խումբ երևույթներ, որոնք նույն կամ նման են այս հարևանի հետ, ուրիշ երևույթներ, որոնք նույն կամ նման են այն հարևանի հետ. այսպես շարունակաբար: Բայց չկա մի վայր, որի լեզուն ամբողջությամբ նույնը լիներ մի ուրիշ վայրի կամ ուրիշ վայրերի լեզվի հետ...»[195] :

Ուստի և բնական է, որ Բայազետի բարբառը դրսևորման յուրահատկություններ է հանդես բերում հիշյալ բոլոր համայնքներում էլ, առանձին դեպքերում նույնիսկ նույն համայնքի ներսում պայմանավորված բնակիչների նախնիների ծագմամբ (հատկապես նման պատկեր են ներկայացնում Սարուխան և Նորատուս համայնքները):

Բարբառագիտական հետազոտության համար բարբառի խոսվածքների ընդհանրություններից բացի կարևոր են նաև դրանց յուրահատկությունները, որոնց դիտարկումը ոչ միայն էական է բարբառային պատկանելության որոշելու հարցում, այլ նաև թույլ է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմելու բարբառի, նրա զարգացման ընթացքի, այլ բարբառների հետ շփումների վերաբերյալ:

Խոսվածքային յուրահատկություններ հանդես են գալիս հնչյունական ու ձևաբանական համակարգերում, նաև բառապաշարում:

Հնչյունական համակարգում զանազանություններ կան ինչպես իրողության դրսևորման աստիճանի, ընդգրկման առումներով, այնպես էլ հնչյունափոխական երևույթների արտահայտության, բառերի հնչյունական ձևավորման տեսանկյուններից: Կան նաև միայն այս կամ այն խոսվածքում նկատվող երևույթներ: Այսպես, ա-ի չրթնայնացման աստիճանները տարբեր են Գավառ քաղաքում և Սարուխանում (վերջինում չրթնայնացումն ավելի ընդգծված է), քմայնացած ա-ն ավելի տարածված է Գանձակում և Նորատուսում, քան այլ վայրերում: Գավառում,

[195] Նշվ. աշխ., էջ 324-325:

Ծաղկաշենում, Հացառատում, Նորատուսում գալ բայի հրամայականն է հ՛արի, իսկ Սարուխանում, Լանջաղբյուրում, Գեղարքունիքում՝ ար՛ի: Հնչյունափոխական իրողությունները առանձին յուրահատկություններ ունեն խոսվածքների մեծ մասում: Այսպես, հետնալեզվային բաղաձայնների քմայնացում նկատվում է միայն Գանձակում և Նորատուսում: Միայն Նորատուսում և Հայրավանքում է, ե, ի և ա՛ ձայնավորներից առաջ գ,կ,ք հետնալեզվայինների դիմաց առկա են ջ,ճ,չ հպաշփականներ, միայն Գավառում և Կարմիրգյուղում փոխառյալ բառերում ու-ի դիմաց կա ի՝ քիֆտա՛, մինա՛թ, չիչա՛: Հնչյունական տարբեր ձևավորվածությունների այլ օրինակներ. գ՛ըլօխկօնձի (Սարուխան) - գըլըխկօնձի (Ծաղկաշեն) - գըլխակօնձի (Հացառատ) - գըլխըկօնձի (Գանձակ). օղոռթ (Սարուխան) - օղառթ (Գավառ, Ծաղկաշեն), կօլթուղ (Սարուխան) - կօլթօղ (Հայրավանք). խօնթխընթալ (Սարուխան) - խօտխըտալ (Հայրավանք), Նորատուս և Հայրավանք՝ բա — մյուսները՝ բա՛. վէդրօ կամ վէյրօ (Սարուխան) - վէդըր (Արծվաքար):

Զգալի են տարբերությունները ձևաբանական համակարգում: Այդպիսիք վերաբերում են և՛ անվանական (հոգնակերտ մասնիկներ, սեռականի ձևավորում, դերանվան կարճ ու երկար ձևեր), և՛ բայական (բայի կազմություն, խոնարհիչներ) համակարգերին: Այս դեպքում գերակշռում են երևույթի առանձնակի դրսևորումները: Օրինակ, Գավառում ա՛փտօ բառի հոգնակին է ա՛փտօք, մյուս համայնքներում՝ ա՛փտօներ. տիք հոգնակերտը հատուկ է միայն Նորատուսին. բոլոր խոսվածքներում քեզ ձևի դիմաց կա նաև քե, միայն Սարուխանում՝ նաև մեզ, ձեզ ձևերի դիմաց՝ մե, ձ՛ե. Գավառում և Հացառատում ով-ի դիմաց ունենք վո՛ն, իսկ մյուսներում՝ վորը. կօ հաստատական մասնիկ գիտեն միայն Սարուխանը, Լանջաղբյուրը և Գեղարքունիքը. ներկայի հիմքում ն ածանցի անկումը հատուկ է հիմնականում Լանջաղբյուրին (հ՛ըլեմ, գ՛ըթեմ, խաքեմ, հ՛իչեմ), մասամբ՝ Սարուխանին

(Հ՛ընդեմ, մըտեմ). մյուս խոսվածքների Հ՛իշկալ, կըռվել բայերի դիմաց Գավառում գործառում են Հ՛իշկել, կըռվալ ձևերը. այդպես նաև՝ խօտխըտալ (Հայրավանք) - խօտխըտել (Արծվաքար). ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը յ-ով են կազմում խոսվածքների մի մասը (Սարուխան, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Հացառատ, Նորատուս՝ Կաթոյ, վէլօյ, Սօնայ, իսկ Գավառում՝ ի հոլովիչով՝ Կաթոյի, վէլօյի, Սօնայի, և այլն): Հոգնակի ստացականության իմաստով յուրահատուկ կազմություն է հանդիպում Նորատուսում և Հայրավանքում՝ վոտը մե, ձեռը մե (մեր ոտքերը, մեր ձեռքերը): Նորատուսում երբեմն որոշիչ հոդը բառիմաստի տարբերակման դեր է ստացել՝ Դո՞ր ես էթում (Ո՞ւր ես գնում) – Դո՞րն ես էթում (Ինչպե՞ս ես գնում):

Առավել ցայտուն են բառապաշարային տարբերությունները: Կան բառեր, որոնք հատուկ են առանձին խոսվածքների. օրինակ՝ օցմօղօզիկ /մողես/, կնավառ (Սարուխան), էրկումատ /եղան/, կըվաս /կաղամբով և գազարով թթու/ (Գավառ), խընօցի, գօվըկ /մեծ ճագար/, անդամաօրիկ /ատամահատիկ/, կըլըմբօստիկ /գլուխկոնծի/ (Նորատուս), կէսավուր /կեսօր/ (Ծաղկաշեն), կունարկ /բանամ/ (Գանձակ), պըտավոր /գատիկ/ (Հացառատ), անան /տատիկ/ (Հայրավանք), անընջուկ /եղինջ/ (Արծվաքար): Կան բառեր էլ, որ հանդես են գալիս երկու և ավելի խոսվածքներում. օրինակ՝ տանքոց-դ՛ողոց /տենդ/, կըտուր (Գավառ, Արծվաքար), ըռցկանալ /խուրձ/ (Հացառատ, Ծաղկաշեն), տանխս /տանիք/ (Սարուխան, Ծաղկաշեն), անխալ (Գավառ, Հացառատ), յեղըռճիկ /եղինջ/ (Սարուխան, Հացառատ, Նորատուս): Կան նաև բառիմաստի տարբերություններ: Օրինակ՝ Գավառ քաղաքում մուռթուղա բառը նշանակում է ճաշի խյուս, մյուսներում՝ խորիզ. Նորատուսում և Հայրավանքում հօղա բառը նշանակում է դոմ, այլ խոսվածքներում՝ դոմում առանձնացված տեղ՝ նստելու համար. խոսվածքների մեծ մասում հախպուր-ը բնական աղբյուրն է, իսկ

Հացառատում, Ծաղկաշենում՝ նաև ծորակը: Նկատելի են նաև բառակազմական յուրահատկություններ: Օրինակ՝ խոսվածքների մեծ մասում բաղհյուսական բարդությունները կազմվում են ու շաղկապով՝ տուն ու տեղ, դ'ուռ ու դ'ուս, խաց ու պանիր, մինչդեռ Գավառում շաղկապի փոխարեն հնչում է ը (տունը-տեղ, դ'ուռըդ'ուս, խացըպանիր):

Խոսվածքային առանձնահատկությունները տարածքի բնակիչներին թույլ են տալիս հեշտությամբ որոշելու խոսողի՝ որ համայնքից լինելը: Սակայն, հասկանալի է, բոլոր խոսվածքները միավորվում են Բայազետի բարբառի համար ընդհանուր հատկանիշներով ու բառապաշարով, և առաջին հայացքից բոլոր համայնքներում գործառում է բարբառային նույն խոսքը: Իրենց առանձնահատկություններով հանդերձ՝ խոսվածքները բարբառի ներսում որոշակի ընդհանրություններով կազմում են խմբեր. ա) Գավառ, Հացառատ, Կարմիրգյուղ և Արծվաքար, բ) Սարուխան, Լանջաղբյուր և Գեղարքունիք, գ) Նորատուս և Հայրավանք, դ) Գանձակ և Ծաղկաշեն: Հետաքրքրական է, որ այս խմբավորումը պայմանավորված է համայնքների բնակիչների ծագումնաբանությամբ: Այսպես, առաջին խմբի խոսվածքների կրողների նախնիները եկել են Բայազետ քաղաքից և հարակից գյուղերից, երկրորդ խմբինը՝ հիմնականում Բայազետի գավառի Զանգիզոր և Սուրբ Օհան գյուղերից, երրորդ խմբինը՝ Արծափի Քորուն և Մոսուն գյուղերից, չորրորդ խմբինը՝ Խոյից, Սալմաստից և Բայազետից[196]: Ուշագրավ է, որ երրորդ և չորրորդ խմբերի խոսվածքներում իրենց զգացնել են տալիս էնթաշերտային իրողություններ (հատկապես հնչյունական համակարգում /քմայնացում/ և բառապաշարում, երբեմն նաև քերականական համակարգում): Նշենք նաև, որ երբեմն այս կամ այն խոսվածքում նկատելի է բարբառային այլ միավորի ազդեցություն: Այսպես, Սարուխանի խոսվածքում հանդիպում են կապերի նախադաս գործածություն քարացած ձևեր (Բայազետի բարբառին հատուկ է համա-

[196] Տե՛ս նաև Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 7-9:

պատասխան կապերի հետադաս դործածությունը), ինչպես՝ վըր վըղի, դ՛ուռ վըր դ՛ըռան, խըթ գ՛ալը (գալուն պես), որոնք ակնհայտորեն Մշո բարբառի ազդեցության հետևանք են:

Նկատելի է, որ խոսվածքները ավելի հաճախ միմյանցից տարբերվում են բարբառային ընդհանուր հատկանիշների դրսևորման յուրահատկություններով և բառապաշարային իրողություններով: Բարբառի չրջանակներում խոսվածքները միմյանցից տարբերակվում են նաև մեկ տասնյակի չհասնող բարբառային հատկանիշներով, ընդ որում՝ որևէ խոսվածքի առավելագույնը հատուկ են նման հատկանիշներից չորսը կամ հինգը:

Դիտարկումները ցույց են տալիս, որ հարկ է տարբերակել և ներմուծել խոսվածքային հատկանիշ հասկացությունը: Եթե բարբառային հատկանիշները բնութագրվում են առկայություն/բացակայություն հակադրությամբ և ունեն համակարգային բնույթ ու բարբառները միմյանցից տարբերող դեր, ապա խոսվածքային հատկանիշները կբնութագրվեն բարբառային հատկանիշների դրսևորումների որակական և քանակական տատանումներով, մասնավոր բնույթով: Օրինակ՝ ա-ի չրթնայնացման տարբեր աստիճանների առկայությունը հատկանիշի դրսևորման որակական յուրահատկություն է, քմայնացած ա̈ - ի, հավելական ՛ - ի դրսևորումների յուրահատկությունները ունեն քանակական բնույթ, հնչյունափոխական, բառերի ձևավորման, քերականական, բառապաշարային չատ իրողություններ ևս ունեն մասնավոր բնույթ: Իհարկե, խոսվածքները ևս միմյանցից կարող են տարբերվել բարբառային հատկանիշներով (ձայնավորահանգ բառերի սեռականի կազմություն, քմայնացման երևույթ, գ,կ,ք-ի դիմաց ջ,ճ,չ, դերանունների տարբեր ձևեր), սակայն այդպիսիք որակ չեն կազմում և բարբառի ներսում խոսվածքային հատկանիշի դեր են կատարում: Պետք է կարծել, որ խոսվածքում հանդես եկող բարբառային հատկանիշները հիմնականում այլ բարբառների ազդեցության կամ ենթաշերտային իրողությունների հետևանք են, բայց հնարավոր է, որ այդպիսիք լինեն նաև մարող կամ նոր ձևավորվող իրողություններ:

ՄԱՍ 3

ՄԵՍՐՈՊՅԱՆ Է, Ե ԳՐԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Նախաբան

Գրաբարը եղել և մնում է հայագետների ուշադրության կենտրոնում: Թե՛ անցյալում, թե՛ մեր օրերում քննության առարկա են դարձել և՛ գրաբարի քերականական ողջ համակարգը, և՛ լեզվական առանձին իրողություններ, ենթահամակարգեր, լեզվաոճական տարբերակներ, սակայն գրաբարյան համակարգում դեռևս չպարզաբանված են մնում մի շարք կենճռոտ հարցեր, որոնք ունեն հանգամանալից քննության և լուսաբանման կարիք:

Հասկանալի է, որ գրաբարի ուսումնասիրությունը կարևորվում է ոչ միայն այն առավել լավ հասկանալու և հասկանալի դարձնելու, այլ նաև ընդհանուր հայագիտական, հնդեվրոպաբանական ու լեզվաբանական այլ բազմաթիվ խնդիրներ պարզաբանելու առումներով:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում և, մեր կարծիքով, մի շարք չլուծված հարցեր պարունակում գրաբարի հնչյունական համակարգը, մանավանդ որ այն մեզ ներկայանում է միայն գրավոր ձևով: Այդ հարցերի պարզաբանմանը մեծապես կարող են նպաստել նաև բարբառների լեզվական փաստերը, որոնք, լինելով հինհայերենյան համակարգի արձագանքներ, թույլ են տալիս պատկերացում կազմելու նաև գրաբարյան իրողությունների վերաբերյալ:

Գրաբարյան է և և գրերի հնչյունական արժեքին, դրանց ուղղագրական յուրահատկություններին անդրադարձել են շատ լեզվաբաններ: Թվում է՝ հարցը վերջնականապես լուծված է, և ուսումնասիրողներն ի վերջո հանգել են հետևյալին. ա) գրաբարում է գրով արտահայտվել է եյ արտասանությամբ երկբարբառակերպ, իսկ և գրով՝ պարզ ձայնավոր. բ) է - ն որպես կանոն գրվել է շեշտակիր վանկում, նաև բացարձակ բառավերջում և ձայնավորներին նախորդելիս, իսկ և - ի համար բացառված է եղել միայն բացարձակ բառավերջի դիրքը. գ) ժամանակի ընթաց-

քում է երկբարբառակերպը վերածվել է պարզ ձայնավորի, իսկ և պարզ ձայնավորը բառասկզբում դարձել է յև երկհնչյուն, միաժամանակ որոշ բարբառներում այն բառամիջում վերածվել է երկբարբառային հնչյունի:

Այս եզրահանգումները, սակայն, չեն ներկայացնում երևույթի ամբողջական ու իրական պատկերը և ունեն խոցելի կողմեր: Այսպես՝

ա) տարբերակված ու ամբողջականորեն չեն նկարագրվել է, և դրերի դրսևորումները արմատներում և բաղադրություններում.

բ) փորձ չի արվել բացահայտելու է – ի կամ և – ի դրսևորումների պատճառաբանվածությունը և կախումը հնչյունական շրջապատից, չնայած արվել են որոշ նկարագրություններ.

գ) եթե է դրի հնչյունական այ արժեքը փաստարկված է, ապա նույնը չի կարելի ասել և դրի՝ բոլոր դիրքերում պարզ ձայնավոր ներկայացնելու դրույթի մասին.

դ) հիմնավորված չէ այն տեսակետը, համաձայն որի՝ պարզ համարվող և – ի զարգացումը մենաբարբառացման ընդհանուր գործընթացում ունեցել է հակառակ ուղղություն՝ հանգեցնելով ձայնավորի երկբարբառացման.

ե) անհամոզիչ է այն մեկնաբանությունը, թե երկբարբառային դարձած և – ն բառասկզբում վերածվել է յև երկհնչյունի, որից հետո բառամիջում այդ երկբարբառը կրկին վերածվել է պարզ ձայնավորի.

զ) հարցին անդրադառնալիս բավարար ուշադրություն չի դարձվել է ~ և հակադրություն ունեցող բարբառների ընձեռած նյութին:

Այս ամենը, մեր կարծիքով, հանգեցրել է ոչ ճիշտ եզրակացության հատկապես և դրի հնչյունական արժեքը և նրա զարգացման ընթացքը որոշելու հարցում:

Մեր այս աշխատանքում փորձել ենք հնչույթաբանական, հնչյունաբանական վերլուծություններով, դրաբարի և բարբառների լեզվական փաստերի զուգադրումով, նախորդ ուսումնասիրողների բերած փաստերի ու փաստարկների օգտագործումով նորովի ներկայացնել դրաբարյան է ~ և դույգի կիրառական յուրահատկություններն ու հնչյունաբանական էությունը, այդ միավորների զարգացման հետագա ընթացքը բարբառներում և գրական լեզվում:

1. Հայ լեզվաբանական միտքը մեսրոպյան այբուբենի է, և գրերի հնչյունական արժեքի և ուղղագրական յուրահատկություններ մասին

Հայտնի է, որ մաշտոցյան այբուբենի է և և տառերը ներկայացրել են հնչյունական տարբեր իրողություններ, հակառակ դեպքում երկու տառ գործածելու հարկ չէր լինի: Սակայն ակնհայտ չեն այդ գրերի ներկայացրած հնչյունական իրողությունները:

Լեզվաբանները փորձել են հարցը պարզել հնչույթաբանական վերլուծություններով, այլ լեզուների հետ համեմատություններով, ձեռագրերի ու վիմագիր արձանագրությունների ներկայացրած չեղումները դիտարկելով, երբեմն նաև բարբառների տվյալները հաշվի առնելով: Սակայն, այնուամենայնիվ, հարցը վերջնական լուծում չի ստացել, որովհետև ուղղագրական ու հնչույթաբանական վերլուծությունները, մեր կարծիքով, անհրաժեշտ ուղղությամբ ու խորությամբ չեն տարվել, միաժամանակ գրաբար - բարբառներ հարաբերությունները թերի, հաճախ էլ սխալ են ընկալվել ու մեկնաբանվել:

*Հին հայերենի է և և գրերի հնչյունական արժեքի վերաբերյալ Ա.Մեյեն արտահայտել է հետևյալ տեսակետը. «Հայերենի ձայնավորները հնչյունական դեր կատարող քանակային տարբերակում չունեն. e ե-ի և e է-ի տարբերությունը ոչ թե տևողության տարբերություն է, այլ երանգի, ըստ որում e է-ն ավելի փակ է »[197]: Նույն տեղում Մեյեն նշում է, որ է ձայնավորը ներկայացնում է մի հին երկբարբառ, որը գոյություն ունի միայն շեշտված վանկում, իսկ մեկ այլ անդրադարձում ուղղակիորեն գրում է, որ «հայերենը պարզապես չարունակել է դեռևս պատմական ժամանակաշրջանից առաջ սկիզբ առած զարգացումը, որովհետև հին հայերենի է - ն արդեն ey երկբարբառի պարզեցումն է միայն. այսպես՝ բերէ ձևը ներկայացնում է *բերե-յ ձևը, որ զուգահեռ է տղա-յ-ին»[198]:*

---

[197] Ա...Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ,ե.,1978, էջ 37:
[198] Նշվ. աշխ., էջ 438:

Ա.Մեյեն գտնում է, որ երկար և կարճ ձայնավորների հնդեվրոպական հակադրությունները հայերենում անհետացել են, և չեշտված ու անչեշտ ձայնավորների հակադրությունից բացի այլ հակադրություն գոյություն չունի: Նրա կարծիքով՝ «Ամեն ինչ կբացատրվի, եթե ընդունենք, որ, ինչպես հունարենում, չեշտված ձայնավորները մի ժամանակ եղել են համեմատաբար երկար, իսկ անչեշտ ձայնավորները՝ համեմատաբար կարճ»[199]: Ի դեպ, վորձառական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արդի հայերենում էլ չեշտակիր ձայնավորները ավելի երկար են, քան անչեշտ ձայնավորները[200]:

Հր.Աճառյանը «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության մեջ գրում է. «Հայերենի մեջ e ձայնավորի երանգները քիչ են. հին հայերենը ուներ երկու տեսակ e, որոնցից մեկը այբուբենի մեջ նշանակված է և ձևով, մյուսը է ձևով: Թեև այս երկուսի հնչական տարբերությունը մեզ անհայտ է, բայց քննությունները ցույց են տալիս, որ և բաց e էր, է՝ փակ e՛: Ուրեմն միջին երանգը պակասում էր: Արդի գրական լեզվի, ինչպես նաև բարբառների ամենամեծ մասի մեջ, կա միայն մի տեսակ e, որ ներկայացնում է միջակ e, այսինքն՝ գրաբարի և և է ձայների միջին աստիճանը, ինչ որ չկար հին հայերենում: Բայց բարբառների մեջ կարելի է գտնել նաև e ձայնի ուրիշ աստիճաններ»[201] : Հետևում է, որ հին հայերենում և և է տառերով ներկայացվում էին հնչյունական իրողություններ (բաց և փակ հնչյուններ), որոնք տարբեր են արդի գրական հայերենի e պարզ ձայնավորից, բայց անհասկանալի է մնում, թե ինչու գրաբարը չէր կարող ունենալ նաև e պարզ ձայնավոր՝ «միջակ e», որի տարբերակումը գրության մեջ կարող էր կարևոր և պարտադիր չլինել:

Հարցին ավելի հանգամանորեն Հր. Աճառյանն անդրադառնում է «Հայոց գրերը» աշխատության մեջ: Նախ Աճառյանը բացառում է և – ի կարճ և է – ի երկար լինելու հնարավորությու-

---

[199] Նշվ. աշխ., էջ 38:

[200] Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 78-84:

[201] Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Ե., 1971, էջ 117-118:

նը՝ գրելով. «Բայց ավելի հետո ձայնավորների երկարությունն ու կարճությունը վերացան և ապահովապես արդեն Ե դարում ըստ Հյուբշմանի նրանց մեջ տևողական տարբերություն չկար: Եթե e ձայնը կարճ ու երկար ձևեր ունենար հայերենի մեջ, նույնպիսի կարճ ու երկար ձևեր պիտի ունենային նաև մյուս ձայնավորները»[202]: Այնուհետև լեզվաբանը բացառում է, որ և դիրը կարող է ունեցած լինել ye կամ ie ձայնը[203], նման բան բացառվում է և բառասկզբում[204]: Իր այս պնդումը Աճառյանը հիմնավորում է նախ այն բանով, որ օտար տառադարձությունների մեջ և - ն միշտ համապատասխանում է պարզ ձայնավորի: Իբրև երկրորդ փաստարկ՝ նշվում է, որ փոխառյալ բառերի սկզբում գրում են և և ոչ է: Որ և - ն ye արտասանություն չի ունեցել, հաստատվում է նաև այն հանգամանքով, որ այն իբրև հավելվածական պարզ ձայնավոր ավելացել է բառասկզբում ր - ից առաջ: Եվ ի վերջո Աճառյանը գտնում է, որ «անտեղի է կարծել, որ Մեսրոպը հայերեն գրերը հորինած ժամանակ երկու տարբեր ձայներից բաղկացած ye խումբը մեկ տառով նշանակեր»[205]:

Անկախ այն բանից, թե որքանով է Աճառյանը իրավացի այս հարցում, նրա բերած փաստարկները բավականին թույլ են: Նախ և առաջ հենց Աճառյանն ինքն է գրում, որ «հայ և օտար տառադարձությունները բավական չեն խնդիրը լուծելու համար. օտար լեզուների ձայնական դրությունը չէ կարողացած ներկայացնել մեր այս երկու գրերի հնչական նուրբ տարբերությունը: Այս պատճառով պետք է դիմել ենթադրությունների»[206]: Ուրեմն ինչպե՞ս է մի քանի պարբերություն հետո Աճառյանը վկայակոչում հենց օտար տառադարձությունները: Ի դեպ, այդ տառադարձությունները երբեմն վեր են հանում հակառակ երևույթը, որը զարմացնում է Աճառյանին. «Միայն երկու բառ ունենք Երեմիա = հուն.Ἱερεμιας և Երուսաղեմ = հուն. Ἱερουσαλημ, ո-

---

[202] Հ. Աճառյան, Հայոց գրերը, ե., 1984, էջ 574:
[203] Նույն տեղում:
[204] Նշվ. աշխ., էջ 575:
[205] Նույն տեղում:
[206] Նշվ. աշխ., էջ 574:

րոնք Հունարենի համեմատությամբ ye հնչումն են ցույց տալիս զարմանալի կերպով»[207]:

Իրավացի է Աճառյանը, երբ գրում է, որ երկու տարբեր ձայներից բաղկացած ye խումբը Մեսրոպը մեկ տառով չէր նշանակի: Բայց եթե նկատի ունենանք, որ, ըստ այլ լեզվաբանների, է տառով նշանակվել է երկբարբառակերպ մի հնչյուն, որն ունեցել է նյ սերտ արտասանությունը, ինչո՞ւ չի կարելի ենթադրել, որ որևէ դիրքում և տառով ևս կարող էր նշանակվել երկբարբառակերպ մի հնչյուն՝ ie սերտ արտասանությամբ:

Բոլոր դեպքերում, Հր.Աճառյանի եզրակացությունը մեկն է. «Մնում է, ուրեմն, ընդունել, թե մեր այս երկու գրերի տարբերությունը ե դարում կայանում էր լոկ բերանի բացվածքի մեջ. և կարտասանվեր ավելի բաց, է կարտասանվեր ավելի դոց»[208]:

Աճառյանն անդրադառնում է նաև բառասկզբում և - ի հետագա զարգացմանը. «Բառասկզբի e ձայնի հետագայում ye դառնալը լեզվաբանական մի պարզ երևույթ է, որին հանդիպում ենք նաև ռուսերենի մեջ, ուր e հնչվում է ye»[209]: *Ցավոք, Աճառյանը իր նկատած այդ «մի պարզ երևույթ» - ին հանգամանորեն չի անդրադառնում և որևէ բացատրություն չի տալիս:*

Մ. Աբեղյանը ևս բացառում է է, և միավորների երկար ու կարճ լինելու հավանականությունը և հնարավոր է համարում, որ և - ն եղել է բաց, իսկ է - ն՝ փակ, «թերևս մի փոքր երկար, քանի որ դա փոխանակում է և + յ կապակցությանը»[210]:

Է. Աղայանը գտնում է, որ հնագույն ժամանակներում է - ն եղել է երկբարբառ (եյ), որի զարգացումն ընթացել է մենաբարբառացման ուղիով, և «ուշ շրջանի գրաբարում նա վերածվել է պարզ ձայնավորի, որ հանդեցրել է նրա և (ե) - ի նույնացմանը» [211] : *Կատարելով հնչույթաբանական վերլուծություններ, օգտագործելով դասական լեզվաբանության արդյունքները՝ Աղայանը հանգում է այն եզրակացության, որ «է - ն դասական հայերենում, այսինքն՝ հինգերորդ դարի առաջին կեսում եղել է*

---

[207] Նշվ. աշխ., էջ 575:
[208] Նշվ. աշխ., էջ 574:
[209] Նշվ. աշխ., էջ 575-576:
[210] Մ.Աբեղյան, Գրաբարի քերականություն, ե., 1936, էջ 9:
[211] Է.Աղայան, Գրաբարի քերականություն, 1, ա, ե,, 1964, էջ 134:

երկբարբառակերպ»[212]: Իր այս տեսակետը հիմնավորելու համար նա բերում է համոզիչ փաստարկներ. ա) է - ն հնչյունափոխվելիս իրեն դրսևորում է երկբարբառների պես, բ) պատմահամեմատական հետազոտությունները հաստատում են, որ գրաբարյան է - ն ստացվել է ei կամ ai երկբարբառից և այլն[213]: Ընդհանուր գծերով բերվում են նաև է, և գրերի գրության կանոնները. «կարևոր հարց է մեսրոպյան այբուբենի է և և տառերի ուղղագրությունը. ինչպես գիտենք, ավանդական ուղղագրության համաձայն հետևյալ կանոններն են ընդունված: Բառասկզբում է կարող են ունենալ միայն միավանկ բառերը (էջ, էր, էդ ևն), ըստ որում ածանցման կամ բարդության ժամանակ նա դառնում էր ի (էջ – իջանել), և կարող է լինել թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի սկզբում. բարդության և ածանցման դեպքում նա անփոփոխ է մնում. բառամիջում է կարող է լինել կամ միավանկ բառերի մեջ, կամ էլ բազմավանկ բառերի միայն վերջին վանկում (գէտ, պարտէզ): Քանի որ գրերի ստեղծման ժամանակ է և և տառերի արտասանությունը որոշակիորեն տարբեր էր, ապա այդ կանոնները հիմնված էին արտասանության վրա և որևէ դժվարություն չէին առաջացնում գրության մեջ: Բազմավանկ բառերի վերջում և ձայնավորներից առաջ լինում է է (գրէաք, բազէ ևն)»[214]:

Հարցին համանման լուծում է տալիս նաև Ա.Աբրահամյանը: Նա նշում է, որ «է տառի համապատասխան հնչյունը երկբարբառային է եղել՝ եյ, ուստի այն զգալապես տարբերվել է ձայնավորից, այլապես նրանց համար առանձին տառեր չէին կարող ստեղծվել»[215]:

Հ.Մուրադյանը, ընդունելով, որ և - ն եղել է պարզ ձայնավոր, է - ի երկբարբառակերպ լինելու համար իբրև փաստարկ բերում է ուղղագրական բնույթի այն դեպքերը, երբ սպասվելիք եյ - ի փոխարեն գրվում է է. նկատի ունի բառավերջը և ե խոնարհման բայերի ներկա ու անցյալ անկատար ժամանակաձևերը

---

[212] Նույն տեղում:
[213] Տե՛ս նշվ. աշխ., էջ 134-135:
[214] Նշվ. աշխ., էջ 358:
[215] Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 4-5:

(համմտ. աղա-յ և գրե-յ, որից՝ գրէ, աղա-յր և գրե-յր, որից՝ գրէր և այլն)[216]:

5-9-րդ դարերի գրաբարյան ուղղագրությունը քննելիս Ս.Գյուլբուդաղյանը է, և տառերի ներկայացրած հնչյունական իրողությունները համարում է մեկ հնչույթի տարբերակներ: Այսպես, նա գրում է. «Բառավերջի բաղաճայնին նախորդող ը հնչույթը կարող է գրվել թե՛ է, թե՛ և տառերով»[217], «և տառով գրվող ը հնչույթը չի հնչյունափոխվում»[218], «Բառասկզբում ը հնչույթը է տառով է գրվում չատ սահմանափակ միավանկ բառերում»[219] և այլն:

Նույն հնչույթի տարբերակները համարվող է - ի և և - ի նախնական հնչյունական արժեքների հարցում Ս. Գյուլբուդաղյանը համամիտ է ընդհանուր այն տեսակետին, որ է - ն ունեցել է երկբարբառային արժեք, իսկ և - ն եղել է պարզ ձայնավոր. «Սխալ է կարծել, թե ե դարում էլ և - ն բառասկզբում ye է կարդացվել: Ե - ն ամենուրեք ը է կարդացվել, ուստի օտարազգի ը - ն հայերենում արտահայտել են և - ով»[220]: Այդ հնչյունների փոխհարաբերությունների հետագա ընթացքի մասին հեղինակը գրում է. «Գո՞ւցե Հյուբշմանը ճիշտ էր, որ ե դարում մեր այդ տառերի հնչման միջև տարբերությունը դրեթե վերացել էր, բայց մեր կարծիքով դա ուշ է նկատվում, մոտավորապես է դրից»[221]: Ապա եզրակացնում է. «Գրերի գյուտի ժամանակ և, է տառերը բնականաբար տարբերվել են իրենց արտասանությամբ, այլ կերպ Մաշտոցը նրանց համար առանձին տառեր չէր ստեղծի: Այդ տարբերությամբ էլ նրանք ունեցել են գործածության իրենց տեղերը: Ե դարից հետո արդեն սկսել է այդ տարբերությունը վերանալ»[222]: 6-7-րդ դարերում առկա իրավիճակի մասին Ս. Գյուլբուդաղյանը գրում է. «Բառի բոլոր դիրքերում հայերենի ը հնչույթը 3-է դարերից գրեթե նույն ը - ի հնչումն է ունեցել, բայց արտահայտվել է և, է տառերով: Բառասկզբում և բա-

[216] Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 28:
[217] Ս.Գյուլբուդաղյան. Հայերենի ուղղագրության պատմություն, Ե., 1973, էջ 38:
[218] Նույն տեղում:
[219] Նշվ. աշխ., էջ 39:
[220] Նշվ. աշխ., էջ 35:
[221] Նշվ. աշխ., էջ 37:
[222] Նշվ. աշխ., էջ 45:

ռամիջում արտահայտվել է դերազանցապես ե տառով, իսկ բառավերջում՝ է տառով: Բառամիջում e հնչույթը է տառով է արտահայտվել այն դեպքում, երբ կարող էր հնչյունափոխվել:

Ե - է տառերի նույնահնչյուն լինելը տեղիք է տվել գրության զանազան չեղումների»[223]:

Ս. Գյուլբուդաղյանը «Հայերենի ուղղագրության պատմություն» աշխատության մեջ փորձել է նկարագրել բոլոր այն դիրքերը, որոնցում գրաբարում հանդես էին գալիս է, ե տառերը: Նշելով, որ բառավերջում գրաբարն ուներ միայն է, հեղինակը է - ի և ե - ի դրսևորումները դիտարկում է բառասկզբում և բառի վերջին վանկում: Հանգամանորեն ներկայացվում է, թե այդ տառերը բառասկզբում և շեշտակիր վանկում ինչ հնչյունների են նախորդում, խոսվում է է - ի հնչյունափոխական յուրահատկությունների մասին, բերվում են փոխառյալ բառերում գրության անհամապատասխանության օրինակներ, գրության ընդհանուր կանոններից չեղումների դեպքեր ձեռագրերում և վիմագիր արձանագրություններում: Լեզվաբանը նկատում է, որ վերջին վանկից առաջ դրեթե միշտ հանդես է գալիս ե տառը: Ուշագրավ է նաև այն դիտարկումը, որ բառավերջի երկու բաղաձայնների կապակցությունից առաջ գրվում է ե[224]:

Ընդհանուր առմամբ նկարագրելով ե - ի և է - ի դիրքային բաշխումը՝ Ս. Գյուլբուդաղյանը չի փորձում տալ բացատրություններ և անել եզրակացություններ, որ թերևս նրա խնդիրներից դուրս էր: Սակայն, մեր կարծիքով, լեզվաբանը անում է մի էական բացթողում, երբ ե, է գրերի բաշխումը դիտարկելիս չի տարբերակում արմատները բաղադրություններից, որը թույլ կտար հարցի վերաբերյալ ունենալ ավելի հստակ պատկերացում:

Մերօրյա հեղինակների համար, հատկապես նորմատիվ քերականության շրջանակներում, ընդունելի են նախորդների արտահայտած տեսակետները գրաբարյան է և ե գրերի հնչյունական արժեքի և դրանց փոխհարաբերությունների վերաբերյալ: Այսպես, Վ.Համբարձումյանը գրում է. «Հայոց այբուբենում ե - ից բացի կա է տառը, որն սկզբնապես հնչումով որոշակիորեն տար-

---

[223] Նշվ. աշխ., էջ 64:
[224] Տե՛ս նշվ. աշխ., էջ 37-45:

բերվում էր նախորդից, ուներ երկբարբառային արտասանություն, եյ արժեքով: Հետագայում և - ն ունենում է բաց, իսկ է - ն փակ արտասանություն, որպիսով հակադրվում են միմյանց: Հնչութաբանորեն և - ն պարզ, իսկ է - ն երկբարբառակերպ ձայնավոր է»[225]:

Լեզվաբանները միակարծիք են է - ի և ե - ի հետագա զարգացման հարցում. համարվում է, որ է - ն մենաբարբառանալով վերածվել է պարզ ձայնավորի և նույնացել ի սկզբանե պարզ ե - ի հետ, իսկ ե - ն բացարձակ բառասկզբում երկբարբառացել է և ի վերջո վերածվել յե երկհնչյունի[226]: *Հասկանալի է, որ այս եզրահանգումը վերաբերում է միայն գրական լեզվին, որը դիտակցական միջամտությամբ նորմավորվել է, և բնականաբար միշտ չէ, որ հարազատորեն է արտահայտում կենդանի լեզվի իրողությունները:*

Հարցին վերաբերող մեկնաբանություններից տարբերվում է Ա.Ղաբիբյանի արտահայտած տեսակետը: Գրաբարյան է - ն ուրակելով որպես «էյ» արտասանությամբ երկբարբառ կամ երկհնչյուն[227]՝ *Ա.Ղաբիբյանը և - ի մասին գրում է. «Գրաբար լեզվի մեջ, մեր կարծիքով, չի եղել մաքուր «է» ձայնավոր (այստեղ Ա.Ղաբիբյանի և Հր. Աճառյանի տեսակետները համընկնում են — Վ.Կ.), այլ յոտացիայի ենթարկված կամ քմայնացած «է», որի արտասանությունը մոտ է երկբարբառայինին, համարյա այնպիսի «է», որպիսին ունի ռուսաց լեզուն շեշտի տակ փափուկ բաղաձայնից հետո և կոշտից առաջ (е), օրինակ՝ нет, свет, совет և նման բառերի մեջ: Այսպիսի «է»-ն բարբառագիտության մեջ, ինչպես և գրաբարում՝ գրվում է «ե» տառով»*[228]: *Ընդունած այս դիտողությունը բավականին ուշագրավ է, սակայն ներկայանում է սոսկ իբրև ենթադրություն, որին որևէ հիմնավորում կամ մեկնաբանություն չի հետևում: Իր վերոբերյալ տեսակետը Ա.Ղաբիբյանը պնդում է նաև Վանի բարբառի մասին խոսելիս. «Վանի բարբառը առանձնապես աչքի է ընկնում իր «ո»*

---

[225] Վ.Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 2004, էջ 10:
[226] Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 276. Հ.Մուրադյան, նշվ. աշխ. էջ 103. Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 7 և այլն:
[227] Տե՛ս Ա.Ղաբիբյան, նշվ. աշխ., էջ 110-111:
[228] Նշվ. աշխ., էջ 110:

և «ե» երկբարբառային ձայնավորներով, ի տարբերություն մյուս շատ բարբառների: Այդպիսի ձայնավորներ ունեցել է նաև գրաբարը»[229]:

Հինհայերենյան բարբառների հնչյունական հատկանիշները քննելիս հարցին անդրադառնում է նաև Գ.Ջահուկյանը: Նա ենթադրում է, որ ե - ի և է - ի՝ որպես առանձին հնչույթների «տարբերությունը հասնում է ոչ միայն գրաբարի՝ որպես գրական լեզվի, սկզբնավորման, այլև նախագրային շրջանը»[230]: Ապա առղատակում լեզվաբանը խորաթափանցորեն ավելացնում է. «Հնարավոր է նաև ենթադրել բարձրացող և իջնող երկբարբառների սկզբնական տարբերություն (իէ և էի կամ յէ և էյ), ինչպես ցույց է տալիս վերջին ձայնավորը»[231]: Այնուհետև Գ.Ջահուկյանն ավելացնում է. «պետք է տարբերել բարբառային երկու շրջան (տարածք), որոնցից մեկում ե - ի և է - ի տարբերությունը երկբարբառի և ոչ-երկբարբառի էր, մյուսում բացի և վակի, կամ թերևս, սրա հետ կապված, կարճի և երկարի: Կարևորն այն է, որ երկու դեպքում էլ դրանք գրաբարի շրջանում տարբերվում էին, թեև երկրորդ տարածքում այս տարբերակումը պետք է ավելի թույլ լիներ, որ և հանգեցրել է դրանց նույնացմանը»[232]: Հետագա զարգացումների վերաբերյալ լեզվաբանն ավելացնում է. «Ավելորդ չենք համարում նշել, որ ե - ի և ո - ի երկբարբառային արտասանության հետ է կապված դրանց բառակզբի յէ և վո արտասանությունը, թեև, իհարկե, յ - ն և վ - ն կարող էին առաջանալ այդ դիրքում նաև անկախ դրանց նախնական երկբարբառային արտասանությունից»[233]:

Ասվածից պարզ է դառնում, որ Գ.Ջահուկյանը հակված է գրաբարյան ե - ն համարելու երկբարբառային հնչյուն:

Այսպիսով, է - ի որակի հարցում ի վերջո ընդհանրացել է այն տեսակետը, որ այն գրաբարում եղել է եյ արտասանությամբ երկբարբառային հնչյուն: Ե - ի հարցում արտահայտվել է երեք կարգի տեսակետ. ա) գրաբարյան ե - ն, միջին (սովորական) ը

---

[229] Նշվ. աշխ., էջ 384:
[230] Գ.Ջահուկյան, Նշվ. աշխ., էջ 268:
[231] Նույն տեղում:
[232] Նշվ. աշխ., էջ 268-269:
[233] Նշվ. աշխ., էջ 269:

ձայնավորի բացակայության պայմաններում և ի տարբերություն փակ է հնչյունի, բաց արտասանությամբ ձայնավոր էր. բ) նախապես և – ն բոլոր դիրքերում էլ եղել է պարզ ձայնավոր. գ) նախապես և – ն բոլոր դիրքերում էլ եղել է քմայնացած երկբաբառային հնչյուն:

Փաստենք, որ առավել տարածված է երկրորդ տեսակետը:

2. Է, Ե գրերի ուղղագրական յուրահատկությունները գրաբարում և դրանց պատճառաբանվածությունը

Հայ լեզվաբանական գրականության մեջ տրվել են մեսրոպյան շրջանի գրական երկերում է և ե գրերի ուղղագրության հետևյալ հիմնական կանոնները. «Ա. Բառասկզբում է ունենում են միայն սակավաթիվ միավանկ բառեր՝ էգ, էմք, էակ, էջ, որ չեշտից զրկվելով կարող էր փոխվել ի – ի՝ իշոյ, իգաց և այլն: Ե կարող էր լինել թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի սկզբում, որ նախաշեշտ կամ չեշտազուրկ դիրքում հնչյունափոխության չէր ենթարկվում՝ եղն > եղնածախ, եղր > եղրական, եղբայր > եղբայրասպան, եղեամն > եղեման, Բ. Բառավերջում և ձայնավորներին նախորդելիս մեծ մասամբ գրվում էր է՝ բոպէ, մարգարէ, էառ, և աճման դեպքում մնում էր անփոփոխ՝ մարգարէական, բոպէահամար, բաղէակալ»[234]: Նկատենք, որ միավանկ համարված բառերի խմբում էակ երկվանկ բառը, ըստ երևույթին, թյուրիմացաբար է սպրդել, իսկ էմք բառը, որ անստույգ է և վկայված է մեկ անգամ, ըստ Հր.Աճառյանի՝ «պարզ ձեռագրական վրիպակ է և պետք է ջնջել բառարաններից»[235]:

Խիստ ընդհանուր այս կանոնների բացը փորձել է որոշ չափով լրացնել Ս. Գյուլբուդաղյանը՝ տալով է, և գրերի բաշխման պատկերը առանձին դիրքերում[236], սակայն նրա նկարագրությունները հստակ պատկերացում չեն տալիս երևույթի մասին, որովհետև հեղինակը չի տարբերակել արմատները, թեքված բա-

[234] Ս.Ա վ ե տ յ ա ն, նշվ. աշխ., էջ 97:
[235] Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 116-117:
[236] Ս.Գյուլբուդաղյան, նշվ. աշխ., էջ 35-40:

ռաճևերն ու բաղադրությունները, չի կատարել խմբավորումներ և չի արել մեկնաբանություններ:

Ահա թե ինչու հարկ ենք համարում նախ ճշտել է, և գրերի բաշխվածությունը բառի տարբեր դիրքերում, հնչյունական տարբեր միջավայրերում, արմատներում, բաղադրություններում ու բառաճևերում, որից հետո միայն հնարավոր կլինի քննարկել այդ միավորներին առնչվող մյուս խնդիրները: Նշենք, որ արմատական բառերի դիտարկումները կատարել ենք Հր.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի»[237] ընձեռած նյութի շրջանակներում, մնացած դեպքերում հիմք ենք ընդունել Հայկազյան բառարանի[238], գրաբարի քերականությունների տվյալները[239]:

2.1. Է, Ե գրերի բաշխումը ըստ բառային դիրքերի

Է, Ե գրերի բաշխվածության առումով առավել ակնհայտ իրողությունը ներկայացնում են այս երկու գրերի դիրքային սահմանափակումները. և – ն չէր կարող հանդես գալ բառավերջում, իսկ է – ն դրսևորվում էր հիմնականում չեչտակիր վանկում և ձայնավորից առաջ՝ վանկասահմանում: Է և Ե գրերի բաշխման օրինաչափությունները ամբողջականորեն վեր հանելու, հանգամանալից քննություն և ճիշտ եզրահանգումներ կատարելու համար անհրաժեշտ է նախ և առաջ տարբերակել հիշյալ գրերի դրսևորումների երկու ոլորտները՝ ա) արմատական բառեր, բ) բաղադրյալ բառեր և բառաճևեր:

Եթե երկրորդ դեպքում տվյալ գրի դրսևորումը կարող է հետևանք լինել նաև հնչյունափոխական, քերականական կամ ուղղագրական գործոնների, ապա արմատական բառերում է կամ ե գրի դրսևորումը, իրրև հնչյունական այս կամ այն իրողութ-

---

[237] Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 1-4, Ե., 1971 – 1979:

[238] Գ.Ալեպիքեան, Խ.Սիւրմէլեան, Մ.Ալպերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ա - Բ, Վենետիկ, 1836 – 1837:

[239] Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., Է.Ալայան, Գրաբարի քերականություն, Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., Լ.Խաչատրյան, Գ.Թոսունյան,Գրաբարի դասագիրք, Ե., 2004:

յան արտահայտութիւնն, կարող է պայմանաւորված լինել հնչյունական շրջապատով, ինչպես նաև հնչութիաբանական գործոններով: Հետևում է, որ է, և դրերի հնչյունական արժեքը որոշելիս պետք է հիմք ընդունել արմատական բառերում նրանց դիրքային առանձնահատկութիւնները՝ չանտեսելով նաև մյուս բառերի ու բառաձևերի տվյալները:

Նախնական դիտարկումները երևան են հանում արմատական բառերում է, և դրերի բաշխման հետևյալ պատկերը.

1. է - ն հանդես է գալիս իբրև ինքնուրույն արմատ, իսկ և - ն՝ ոչ.

2. միավանկ արմատական բառերի սկզբում, որը նաև շեշտակիր դիրք է, հիմնականում հանդես է գալիս և - ն՝ անկախ հաջորդող բաղաձայնների քանակից (եղծ, եռ, երբ, երգ, երթ, երդ, ես, եւ, ել), սակավ դեպքերում դրսևորվում է և է - ն՝ միայն մեկ բաղաձայնից առաջ (էգ, էջ, էշ).

3. բազմավանկ (կարճութիյան համար «բազմավանկ» տերմինով նկատի ունենք նաև երկվանկ բառերը) արմատական բառերի սկզբում է - ն բացառվում է, և հանդես է գալիս միայն և - ն (եղեմ, եթեր, եկեղեցի, եղբայր, երազ, երանգ).

4. ձայնավորից առաջ բացառվում է է - ն, իսկ և - ն հանդես է գալիս միայն ա ձայնավորից առաջ՝ երկբարբառի կամ եռաբարբառի կազմում (աաեան, մաաեան, լեառն, նեարդ, եաւթն, հրեայ).

5. բառավերջում բացառվում է և - ն, և հանդես է գալիս միայն է - ն (բոպէ, հիւղէ, բազէ, ափսէ).

6. բառավերջի բաղաձայնական խմբից առաջ բացառվում է է - ն, և հանդես է գալիս միայն և - ն (երբ, բերձ, դեղձ, եղծ, կեղտ, ջերմն, սերմն, սերտ, լերկ, տենդ, շեշտ)[240].

7. բառամիջում՝ մեկ բաղաձայնով ավարտվող շեշտակիրը վանկում, կարող են հանդես գալ ինչպես է - ն, այնպես էլ և - ն (ա-

---

[240] Այս օրինաչափութիյունը թույլ է տալիս բացատրել, թե ինչու միավանկ բառերի սկզբում, որտեղ կարող էին հանդես գալ և՛ է - ն, և՛ և - ն, ավելի շատ ունենք և, քան է. հայերենում խիստ սակավ են ձայնավորով սկսվող այն բառերը, որոնք ավարտվում են մեկ բաղաձայնով (այդ դեպքում է միայն հնարավոր է - ի դրսևորումը), մինչդեռ ձայնավորով սկսվող և բաղաձայնական խմբով ավարտվող միավանկ բառերի թիվը ավելի շատ է:

դուէս, գէս, ծէս, հանդէս, պատճէն, պարէն, քէն, հրէշ, ուղէշ, պատնէշ, բեւեռ, դեռ, գկեռ, արգել, աւել, արեւ, դեւ).

8. բազմավանկ արմատական բառերի ոչ շեշտակիր վանկերում բացառվում է է – ն, և միշտ հանդես է գալիս ե – ն (բերան, գերան, գետին, երեկոյ, տերեւ, գերի):

Այսպիսով, արմատական բառերում է – ն հանդես է գալիս միայն շեշտակիր վանկում՝ լինի դա բառասկիզբ, բառամեջ, թե բառավերջ: Նշանակում է՝ է – ի դրսևորման համար նախապայման է վանկի շեշտակիր լինելը: Երկրորդ նախապայմանը հաջորդող բաղաձայնական խմբի բացակայությունն է:

Բացառյալ բառավերջի դիրքը՝ ե – ի համար դիրքային որևէ սահմանափակում արմատական բառերում չկա. այն նույնիսկ կարող է շեշտակիր վանկում դրսևորվել ա ձայնավորից առաջ: Նշանակում է՝ ե – ի դրսևորման համար նախապայման է հաջորդող հնչյունի՝ սովորաբար բաղաձայնի առկայությունը:

Արմատական բառերում է, ե դրերի բաշխման աղյուսակ

Գիր	Իրրև արմատ	բառասկիզբ		ձայնավորից առաջ	անշեշտ վանկ	շեշտակիր վանկ		
		միավանկ բառերի	բազմավանկ բառերի			մեկ բաղաձայնից առաջ	բզմ. խմբից առաջ	բառավերջ
է	+	+	-	-	-	+	-	+
ե	-	+	+	+	+	+	+	-

Բաղադրյալ բառերում և թեքված բառաձևերում պատկերը այլ է. է – ի և ե – ի բաշխման հարցում այստեղ դեր են խաղում ոչ միայն բառասկզբի, բառամիջի և բառավերջի դիրքերը, հնչյունական շրջապատը, այլ նաև հնչյունափոխական, քերականական գործոնները, վանկասահմանը: Ըստ այդմ՝ այս դեպքում գործում են հետևյալ օրինաչափությունները.

1. միավանկ բառերի սկզբում կարող են հանդես գալ թե՛ ե – ն, թե՛ է – ն (եմ, ես, եմք, են, ե՛կ, է, էր, է՞ր, էք, է՛ջ).

2. բազմավանկ բառերի սկզբում է - ն հանդես է գալիս միայն ձայնավորից առաջ (էի, էաք, էած, էօձ, էակ, էութիւն, էանց), իսկ ե - ն՝ միայն բաղաձայնից առաջ (եղի, եղէ, երեր, եառես).

3. բառամիջի վանկասահմանում ձայնավորից առաջ հանդես է գալիս միայն է - ն, ընդ որում՝ այդ դիրքը նաև ձևույթների սահման է (քրիստոնէութիւն, քնէած, գրէաք, գրէին, հրէից, պաշտօնէի). ի դեպ, վանկասահմանում ձայնավորից առաջ է դրսևորվում է նաև օտար հատուկ անուններում (Անդրէաս, Տիմոթէոս, Բարդուղիմէոս, Մատթէոս, Պաղոմէոս), որոնցում փաստորեն -աս, -ոս հնչյունախմբերը դիտակցվել են իբրև առանձին ձևույթներ, որովհետև թեք հոլովներում դրանք դուրս էին ընկնում[241].

4. ձայնավորից (միայն ա) առաջ ե - ն հանդես է գալիս ոչ վանկային սահման հանդիսացող դիրքում՝ շեշտակիր վանկում (գրեա՛, հանգեաւ, գրեաց, քրիստոնեայ, փայտեայ, վանեաք, անցեալ, կեաց).

5. բառամիջում՝ ոչ շեշտակիր վանկում, բաղաձայնից առաջ որպես կանոն հանդես է գալիս ե - ն (անմեկին, անմեղութիւն, գրեցէք, առաքելութիւն, գեղեցկագոյն, հինգերորդ, աղուեսու, եղեգան, պատճենի, Միքայելի). այդ դիրքում է հանդիպում է կրկնավոր բարդություններում, հնչյունափոխության արդյունքում, մի քանի այլ բառերում (դէզադէզ, պէսպէս, ոսկէզօծ, ալէկոծ, աղէտաբեր, անօրէնութիւն, տէրութիւն, վրէժխնդիր).

6. բառավերջի բաղաձայնական խմբից առաջ դրսևորվում է է, եթե այդ դիրն ունեցող բառի վերջում ավելանում է քերականական մասնիկ ներկայացնող բաղաձայն (օրէնք, օրէնս, աղուէսք, դէմք, վէրք, շէնք).

7. բառի վերջին վակ վանկում իբրև քերականական մասնիկ սովորաբար դրսևորվում է ե - ն (գրել, գրեմ, գրես, գրեմք, գրեն, գրիցեմ, ասեղ, դասեր). երբ ե - ին հաջորդող վերջավորությունն սկսվում է յ - ով, ստացվում է ե + յ, որը և վերածվում է է - ի (գրե+յ - գրէ, գրե+յք - գրէք).

8. բառավերջում առկա է միայն է (գրէ, գրիցէ, որևէ, որևիցէ):

---

[241] Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 28:

Բառի կազմում է, և դրերի բաշխման աղյուսակ

Գիր	իբրև արմատ	միավանկ բառերի սկզբում	անշեշտ դիրքեր		շեշտակիր վանկ			
			բաղաձ. առաջ	ձայնավ. առաջ	ձայնավ. առաջ	1 բղձ. առաջ	բաղաձ. խմբից առաջ	ձկնիատամ
							արմատական ոչ արմատական	
է	+	+	-	+	-	+	- +	+
ե	-	+	+	-	+	+	+ +	-

Այսպիսով, բաղադրյալ բառերում և բառաձևերում, ի տարբերություն արմատական բառերի, դրսևորման յուրահատկություններ հանդես է բերում միայն է - ն՝ ընդլայնելով իր գործառության սահմանները: Այս դեպքում, շեշտակիր վանկից և բացարձակ բառավերջից բացի, է - ն հանդես է գալիս նաև.

ա) ոչ շեշտակիր վանկերում՝ բազմավանկ բառերի սկզբում և բառամիջում, ձայնավորից առաջ (այս դիրքը և՛ ձևույթների, և՛ վանկերի սահման է). քանի որ այստեղ դրսևորվում է միայն է - ն, ուստի վանկասահմանի հաջորդող ձայնավորի առկայությունը նախապայման է ոչ շեշտակիր վանկում է - ի արտահայտության համար.

բ) բառամիջի ոչ շեշտակիր վանկում՝ բաղաձայնից առաջ, կրկնավոր բարդություններում, մի քանի բառերում՝ հնչյունափոխության արդյունքում կամ բառի հնչյունական պատկերը պահպանելու մղումով.

գ) բառավերջի բաղաձայնական խմբից առաջ, երբ այն առաջանում է քերականական մասնիկ ներկայացնող բաղաձայնի հավելումով:

Քանի որ այլ դեպքերում վերջին երկու դիրքերում հանդես է գալիս ե - ն, ուրեմն դրանցում գոյությյուն չունի է - ի դրսևորման հնչյունաբանական նախապայման:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք ներկայացնել է, և գրերի՝ գրաբարյան խոսքում բաշխվածության հետևյալ ընդհանրական պատկերը.

1.միավանկ բառերի սկզբում կարող էին դրսևորվել և՛ ե - ն, և՛ է - ն.

2. բազմավանկ բառերի սկզբում բաղաձայնից առաջ կարող էր հանդես գալ միայն ե - ն, իսկ ձայնավորից առաջ՝ միայն է - ն. հնչյունական այս օրենքով բացատրելի է դառնում քերականական այն օրինաչափությունը, համաձայն որի՝ անցյալի արմատական հիմք ունեցող բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևի եզակի թվի երրորդ դեմքի միավանկ ձևի վրա բառասկզբում ավելանում էր է (էանց, էառ, էօձ), եթե բառն սկսվում էր ձայնավորով, իսկ եթե բառն սկսվում էր բաղաձայնով, ապա ավելանում էր ե (եհաս, եմուտ, եցոյց). ի դեպ, հայերենի համար նկատելի է այն օրինաչափությունը, ըստ որի՝ բայաձևերը որպես կանոն միավանկ չեն լինում, իսկ ձայնավորից առաջ ավելացող ե - ն այդ ձայնավորի հետ, ձևավորելով երկբարբառ, հանդես կգար նույն վանկում, և իրավիճակը չէր փոխվի.

3. բազմավանկ բառերի մյուս ոչ շեշտակիր վանկերում ևս որպես կանոն բաղաձայնից առաջ հանդես է գալիս ե - ն, ձայնավորից առաջ՝ է - ն. խիստ սակավ դեպքերում, իբրև այս օրինաչափության խախտում, բաղաձայնից առաջ կարող էր լինել և է.

4. ե - ն ձայնավորից առաջ հանդիպում է միայն շեշտակիր վանկում՝ ա - ի հետ ձևավորելով երկբարբառ.

5. մեկ բաղաձայնով ավարտվող շեշտակիր վանկում կարող էր լինել ինչպես ե, այնպես էլ է.

6. շեշտակիր վանկի արմատական բաղաձայնական խմբից առաջ կարող էր դրսևորվել միայն ե - ն, իսկ քերականական ճա-

նապարհով առաջացած խմբից առաջ՝ և՛ ե, և՛ է, եթե դրանք առկա էին արմատներում նախքան մասնիկի հավելումը.

7. բառավերջում հնարավոր էր միայն է:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ գրաբարում է ~ ե տարբերակումը ուներ երկու հիմք.

ա) արմատական բառերի չեշտակիր փակ վանկում այդ տարբերակումը ուներ ծագումնաբանական հիմք և կարող էր ունենալ հնչյունաբանական պատճառաբանվածություն, այսինքն՝ այդ դիրքում է - ի կամ ե - ի դրսևորումը կարող էր պայմանավորված լինել հնչյունական շրջապատով. այլ դեպքերում էլ է ~ ե տարբերակումը կարող էր ունենալ հնչութաբանական հիմք, երբ նույն հնչյունական շրջապատում հանդես գալով՝ այդ գրերը ունենում էին իմաստատարբերակիչ դեր (սէր-սեր, դէտ-դետ, կէտ-կետ).

2. մնացած դիրքերում է - ն հանդես էր գալիս ըստ պահանջի, երբ հնարավոր չէր ե - ի դործածությունը, և գրության մեջ է ~ ե տարբերակումը անհրաժեշտ էր բառակազմական, քերականական, հնչյունափոխական, հնչյունաբանական նկատառումներով. սրանք դիրքեր են, որոնցում չէր կարող լինել է ~ ե հակադրությունը, ուրեմն և՝ իմաստատարբերակիչ դեր:

Դիտարկումները առհասարակ ցույց են տալիս, որ արմատական չեշտակիր փակ վանկից դուրս է տառի գործածությունը հիմնականում պատճառաբանված էր և բացատրելի, այսինքն՝ է տառը գրվում էր ըստ անհրաժեշտության և ոչ միայն սոսկ այն պատճառով, որ արտասանությամբ տարբերվում էր ե - ից: Այսպես, բառավերջում է - ի գրությունը պայմանավորված էր նրանով, որ դասական հայերենում բառը կարող էր ավարտվել կա՛մ բաղաձայնով, կա՛մ վերին բարձրացման ձայնավորով (ի, ու). այլ ձայնավորներից (ա,ո,ե) հետո օրինաչափորեն ավելանում էր յ, որի հետևանքով էլ սպասվելիք եյ - ը (գրաբարում նման տառակապակցությունը բացառվում է) արտահայտվում էր է տառով:

Ձայնավորից առաջ գրվող է - ն հուշում էր, որ առկա է երկու ձևույթների ու վանկերի սահման և ոչ թե երկբարբառ կամ եռաբարբառ (հմմտ. գրէաք - գը-րէ-աք և գրեալ - գը-րեալ): Ի դեպ, ձայնավորից առաջ է - ի գրությունը իր հերթին վկայում է, որ

այն ունեցել է երկբարբառային (ei) արտասանություն. կարծում ենք՝ անժխտելի է, որ գրաբարում ևս գործել է հնչյունական այն օրենքը, որ երկու ձայնավորների միջև արտասանվում է յ[242]:

Բայաձևերի վերջին բաղաձայնից առաջ գրվող է - ն նշանակում էր, որ տվյալ վերջավորության կազմում բաղաձայնին նախորդում է յ. օրինակ՝ գրէր ձևում է - ի գրսևորումը պայմանավորված է յր վերջավորությամբ, գրէք ձևում՝ յք վերջավորությամբ:

Ինչ վերաբերում է արմատական շեշտակիր դիրքին, ապա այստեղ էլ է - ի գրությունը, հնչյունաբանական էությամբ պայմանավորվածությունից զատ, կարող էր նաև պատճառաբանված լինել հնչյունափոխվող հնչյուն մատնանշելու անհրաժեշտությամբ:

Պետք չէ մոռանալ, որ յուրաքանչյուր այբուբեն ոչ միայն տվյալ լեզվի հնչութային համակարգն է արտահայտում, այլ նաև ունի ուղղագրական, ուսուցողական արժեք ու նպատակ: Կարծում ենք՝ է տառը գրվել է անհրաժեշտ և պարտադիր դեպքերում՝ մյուս դիրքերը թողնելով և - ին: Իսկ մնացած այդ դիրքերում և գիրը կարող էր ներկայացնել հնչութաբանորեն միմյանց չհակադրվող տարբերակներ, որոնց արտահայտումը գրության մեջ որևէ իմաստ ու նպատակ չուներ, այստեղից էլ հետևում է, որ անշեշտ դիրքում կարող էր հանդես գալ թե՛ է - ից, թե՛ և - ից հնչյունաբանորեն տարբերվող, բայց հնչութային արժեք չունեցող հնչյունական մի իրողություն:

Մի խոսքով՝ հին հայերենում է, և տառերը տարբեր հնչութներ էին ներկայացնում շեշտակիր վանկում. մնացած դիրքերում հակադրությունը չեզոքանում էր, և տառերից յուրաքանչյուրը հանդես էր գալիս միայն իրեն հատուկ դիրքերում, այսինքն՝ այդ միավորների միջև առկա էր փոխբացառող բաշխման հարաբերություն:

Ահա թե ինչու, դուր են գարմանում լեզվաբանները, երբ փոխառյալ բառերում սպասվելիք ē (է) - ի դիմաց տեսնում են և. իրականում նման դեպքերում չի եղել է գրելու անհրաժեշտութ-

[242] Այս մասին տե՛ս նաև է. Աղայան, նշվ. աշխ., էջ 359:

յուն, և պահպանվել են հայերենի ուղղագրության օրինաչափությունները: Օրինակ, Է.Աղայանը իր «Գրաբարի քերականության» աշխատության մեջ բերում է մի շարք փոխառյալ բառեր, որոնցում պահլավերենի e - ի դիմաց ունենք ե, է կամ ի, և փորձում է այդ զանազանությունները բացատրել աղբյուրների տարբերությամբ[243]: Մի կողմ թողնելով ի - ով ձևերը՝ նշենք, որ այդ բառերում չեշտակիր վանկի հնչյունափոխվող e - ն արտահայտված է է գրով, իսկ մյուս բոլոր դեպքերում օրինաչափորեն հանդես է գալիս ե գիրը. օրինակ՝ պետ, դեհ, աւեր, դեսպան, դեհկան, հրեշտակ և դէս, դէմ, չէն, պարտէզ, հանդէս, վէմ, զէն: Ջենք բացառում, որ չեշտակիր վանկում է կամ ե գրությունը կարող է պայմանավորված լինել աղբյուրով, ինչպես նաև հնչյունի որակով (սա չի հակասում մեր պնդմանը), բայց դեսպան, դեհկան, հրեշտակ բառերում պահլավական ē (է) -ի դիմաց ե գրի առկայությունը լիովին համապատասխանում է գրաբարյան ուղղագրության կանոններին:

Այլ լեզվաբանները ևս ճիշտ չեն կողմնորոշվել փոխառյալ բառերում ուղղագրական անհամապատասխանությունները պարզաբանելիս: Այսպես, Ս. Գյուլբուդաղյանը դժգոհում է, որ «ոչ միշտ է հունարեն ε – ի դիմաց հայերեն ե գրվել, իսկ η – ի դիմաց՝ է: Հաճախ գրանք չփոթել են (ընդգծումը մերն է - Վ.Կ.) գրիչները, որ նույնպես բխում է նրանց հնչյունային նմանությունից: Այդ երևույթը երևում է նաև Կ.Բրոկելմանի հոդվածում բերված օրինակներից»[244]: Այնուհետև հեղինակը բերում է օրինակներ, որոնցում «հունարեն η – ի դիմաց գրված է հայերեն և է - ի փոխարեն», և հունարեն ε – ի դիմաց գրված է հայերեն է՝ և - ի փոխարեն[245]: Բերենք Գյուլբուդաղյանի ներկայացրած բառերից մի քանիսի հայերեն տարբերակները միայն՝ ընդգծելով այն դեպքերը, երբ, ըստ հեղինակի, գրիչները շփոթել են գրությունը. մնքենայ, հռետոր, Մեդէա, եկեղեցի, մետրոպոլիտ, Հոմերոս, Ջենոն (ընդգծված դեպքերում սպասվում էր է) և լեգէոն, Մեդեա (ընդգծված դեպքերում սպասվում էր ե): Ապա լեզվաբա-

[243] Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 135-137:
[244] Ս.Գյուլբուդաղյան.նշվ. աշխ., էջ 36:
[245] Նույն տեղում:

նը նշում է, որ «Բրոկելմանի հիշատակած 74 բառից 44-ում հունարեն ε – ին համապատասխանում է հայերեն ե – ն, η – ին՝ է – ն, սակայն երեսուն բառերում այդ կարգը խախտված է, ըստ որում՝ հունարեն ε, η – ն հայերենում բառամիջում դառնում են գերազանցապես ե: Բառասկզբում հունարենից փոխառյալ է – ով սկսվող բառ չունենք: Սա, ըստ երևույթին, նրանից է, որ հունարենում էլ η – ով սկսվող բառերը քիչ են, ինչպես հայերենում է»[246]: Ակնհայտ է, որ գրիչները ոչինչ էլ չեն չփոթել, և ոչ մի կարգ էլ չի խախտվել. ընդհակառակը՝ գրիչները հարազատ են մնացել գրաբարյան ուղղագրությանը և պահպանել են այն կարգը, համաձայն որի՝ գրաբարում ոչ շեշտակիր վանկում բաղաձայնից առաջ գրվում է ե, իսկ ձայնավորից առաջ՝ է, այլ կերպ ասած՝ փոխառյալ բառերը տառադարձելիս գրիչները հետևել են հայերենի ուղղագրության կանոններին, ուստի բնական է և՛ այն, որ հունարեն ε, η – ն հայերենում բառամիջում դառնում են գերազանցապես ե, և՛ այն, որ բառասկզբում հունարենից փոխառյալ է – ով սկսվող բառ չունենք:

Ասվածը ևս մեկ անգամ կարող է հավաստել, որ գրաբարում է ~ ե հակադրությունն չունեցող դիրքերում բաղաձայնից առաջ է չէր գրվում, և հնչյունի որակն ու ծագումը այդ դեպքում որևէ դեր չէին խաղում: Այս իրողությունն անուղղակիորեն փաստում է նաև Հր.Աճառյանը, երբ գրում է, որ հունարենից հայերեն փոխառությունններում հունարեն է – ին միշտ չէ, որ համապատասխանում է հայերեն է, «այլ շատ անգամ գտնում ենք նաև ե, երբ որ հայերենի օրենքը այդպես է պահանջում»[247]:

2.2. է, ե գրերի դրսևորումները արմատական շեշտակիր փակ վանկում

Հարկ ենք համարում առանձին անդրադառնալ ե և է գրերի դրսևորումներին արմատական բառերի շեշտակիր փակ վանկում, քանի որ է ~ ե հակադրությունը միայն այս դիրքում է դրսևորվում և ունենում նաև իմաստատարբերակիչ դեր:

---

[246] Նշվ. աշխ., էջ 36-37:
[247] Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 574:

Եթե այլ դիրքերում և - ից տարբերվելու մղումով է - ի հանդես գալը բացատրելի է քերականական, հնչյունափոխական, դիրքային գործոններով, ապա արմատական բառերում է և և գրերի դրսևորումները կարող են բացատրվել կամ ծագումնաբանությամբ, կամ կոնկրետ հնչյունական չրջապատով: Մի կողմ թողնելով ծագումնաբանական բնույթի հիմնավորումները (ընդհանուր առմամբ այդ դեպքում է, և գրերի հնչյունական արժեքները որոշելու տեսակետից որևէ նոր բան գտնելու հեռանկար չենք տեսնում և ստուգաբանությանը դիմելու ենք ըստ խիստ անհրաժեշտության)՝ մեր ուշադրությունը բևեռենք հնչյունական այն միջավայրերին, որոնցում հանդես են գալիս է - ն և և - ն:

Դիտարկումները ցույց են տալիս, որ նախորդ բաղաձայնի որակը որևէ կերպ չի պայմանավորում է - ի կամ և - ի հանդես գալը. գրեթե բոլոր բաղաձայններից հետո էլ կարող են հանդես գալ և՛ է - ն, և՛ և - ն (Հանդէս - դեղ, կէս - զկեւ, օրէն - չերեփ, ձէթ - ձեռն, դէս - արգել, թէզ - թեփ, սէզ - սեխ և այլն): Ինչ վերաբերում է հաջորդող բաղաձայններին, ապա այս դեպքում նկատելի են դառնում որոշակի օրինաչափություններ:

Այսպես, է և և տառերի բաշխումը արմատական բառերի շեշտակիր վանկում ունի հետևյալ պատկերը:

1. է - ն կարող է հանդես գալ միայն մեկ բաղաձայնից առաջ (դէզ, էջ, էշ, երէց, աղուէս, հանդէս), իսկ և - ն կարող է հանդես գալ նաև մեկից ավել բաղաձայններից առաջ (երբ, բերձ, դեղձ, եղջ, կեղտ, ջերմն, սերմն, սերտ, լերկ և այլն). այս տարբերակումը կարող է նշանակել, որ և - ից հետո հնչտ և հնարավոր է եղել բաղաձայնական խմբի արտասանությունը, որը չի կարելի ասել է - ի մասին:

2. Հետևյալ բաղաձայններից առաջ որպես կանոն ունենք է.

ս - աղուէս, դէս, ծէս, կէս, կրկէս, հանդէս, նարդէս, պէս, վէս.

զ - ասպարէզ, դէզ, թէզ, լէզ, խլէզ, կէզ, կոճղէզ, մէզ, մողէզ, սէզ, պարտէզ, քարտէզ.

ն - ամէն, ապաւէն, գազպէն, զէն, հէն, չէն, պատճէն, պարէն, քէն, օրէն.

ջ - առէջ, դէջ, էջ, մէջ, չէջ.

ճ – բբռէճ, բէճ, կուռէճ, վէճ.

շ – գէշ, գոմէշ, էշ, հրէշ, ուղէշ, պատնէշ, քուրմէշ.

ժ – խէժ, յաւէժ (բայց՝ յաւերժ), վէժ, վրէժ:

Բացառութիւն են կազմում տեսանել, գնուլ, լեսուլ բայերի արմատները, երես, հեզ, գեհեն բառերը: Կարծում ենք՝ տես, գեն, լես միավանկ արմատներում ե – ի դրսևորվելը պայմանավորված է նրանով, որ դրանք հայերենում ի սկզբանե անկախ արմատներ չեն եղել, հետևաբար և շեշտակիր չեն եղել: Դրանք ինքնուրույն հանդես են գալիս իբրև եզակի հրամայականի ձևեր (տե՛ս, գե՛ն, լե՛ս), իսկ սուր շեշտի տակ, ինչպես կարելի է ենթադրել փաստերից, գրաբարում տեղի է ունենում տեղաշարժ փակ հնչյունից դեպի ավելի բացը և ոչ թե հակառակը. կիզուլ – կէ՛զ, իջանել – է՛ջ: Այդ են վկայում նաև եզակի հրամայականի այն ձևերը, որոնք ավարտվում են ա և ո ձայնավորներով (առանց սովորաբար ուղեկցող յ – ի). կարդա՛, դրեա՛, Հեռացո՛ (Հեռացոյց ձևից՝ յց – ի անկումով): Հետևում է, որ տեսանել, գնուլ, լեսուլ բայերի ե – ն, հայտնվելով սուր շեշտի տակ, չէր կարող վերածվել ավելի փակ է – ի: Հասկանալի է, որ շեշտակիր մյուս դիրքերում էլ ե > է անցում տեղի չէր ունենա (անտես, ամենատես, գառնագեն, մարդագեն): Երես բառը, ինչպես նշում է Հր.Աճառյանը [248], գրաբարում առհասարակ գործածվում էր անեզաբար, այսինքն՝ բառավերջում միշտ առկա էր երկու բաղաձայն (երեսք), բացի այդ՝ ծագումնաբանորեն ս – ն հետագա հավելում է, որից առաջ նախնական ե – ի վերածումը է – ի պարտադիր չէր (ստորև կտեսնենք, որ գրաբարյան շրջանում էլ կարող էին գործածուել քերականական ձևեր, որոնք ի հայտ էին բերում շեղումներ հնչյունական օրինաչափութիւններից. ի դեպ, դիտարկումները ուրվագծում են այսպիսի մի օրինաչափութիւն. քերականական ձևերը որպես կանոն ունեն յուրահատուկ կազմութիւն, որով ըստ հնարավորին տարբերվում են ուղիղ բառաձևերից): Գեհենի և այդ կարգի այլ բառերի մասին Աճառյանը գրում է. «Այսօր մենք գրում ենք ցորեն, իրեն, գեհեն, որոնց ե ձայնա-

[248] Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 46-47:

վորն էլ անկանոն է՝ վոխանակ է - ի. բայց գիտենք, որ նրանց մեջ և առաջանում է եա երկբարբառից, որովհետև գրաբարում ավանդված ունենք ցորեան, իւրեան, պեհեան ձևերը»[249]: Ինչ վերաբերում է հեղ բառին, ապա նրա ծագումն անհայտ է, ուստի դժվար է որևէ ենթադրություն անելը:

Հետաքրքրական է, որ երբ վերը բերված բաղաձայններին բառավերջում հաջորդում է մեկ այլ բաղաձայն, այդ դեպքում է - ն բացառվում է. արուեստ, խենթ, ճենճ, նենգ, տենդ, տենչ, բղեչխ, զաւեչտ, հեչտ, չեչտ, պարկեչտ:

Այսպիսով, հնարավոր է, որ հենց ս, ղ, ժ, շ, չ, ճ, ն բաղաձայնների որակական հատկանիշներն են, որ պայմանավորում են չեշտակիր վանկում է - ի հանդես գալը:

Մենք համոզված ենք, որ այդ բաղաձայնների արդի արտաբերությունը էականորեն չի տարբերվում գրաբարյանից, ուստի այսօր դիտարկվող արտաբերական յուրահատկությունները առանց վարանելու կարելի է վերագրել և գրաբարյան հնչյուններին: Եվ այսպես, բերված բոլոր բաղաձայններն էլ առաջնալեզվային են: Բոլորի արտասանության ժամանակ էլ լեզվի առաջամասը բարձրանում է դեպի լնդերքը կամ նախաքիմքը՝ ստեղծելով համապատասխան արգելք, ընդ որում՝ բոլոր բաղաձայններն էլ տեւական են, այսինքն՝ ոչ պայթական: Նկատելի է, որ էական նշանակություն չունի բաղաձայնի որակը ըստ ձայնի և աղմուկի հարաբերության:

Հայտնի է, որ արտասանական շղթայում հնչյուններն առանձին-առանձին չեն արտասանվում, և արտասանական օրգանները հաջորդ հնչյունի արտաբերությանը պատրաստվում են նախորդի արտասանության ընթացքում, մանավանդ երբ առկա է ձայնավոր + բաղաձայն կապակցություն. ձայնավորի արտաբերությանը արտասանական օրգանների թուլլ մասնակցությունը հնարավորություն է ստեղծում, որ դրանք ավելի դյուրությամբ նախապատրաստվեն հաջորդ բաղաձայնի արտաբերությանը: Ահա թե ինչու հաջորդող ս, ղ, ժ, շ, չ, ճ, ն հնչյունների արտասանությանը պատրաստվող լեզուն նախորդ ձայնավորի արտասա-

[249] Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, էջ 618:

նուիթյան ընթացքում իր առջևի մասով բարձրանում է վեր, և բնականաբար այդ պայմաններում ավելի բնական ու հնարավոր է դառնում ե - ի համեմատաբար ավելի փակ արտասանություն ունեցող է - ի արտաբերումը (կասկած չկա, որ է - ն նախապես ունեցել է ei արտասանություն):

Նկատենք նաև, որ նշված բաղաձայն հնչյուններից առաջ հնարավոր է նաև յ ձայնորդի արտահայտումը. այս, յոյզ, յոյժ, անոյշ, լայն, պաճոյճ և այլն:

1. Հետևյալ բաղաձայններից առաջ է - ն բացառվում է, և միշտ ունենք ե.

ռ - բեռն, բեւեռ, դեռ, զկեռ, թեռ, լիսեռն, խեռ, կեռ, ձեռն, ձմեռն, մեռ, սեռ, սիսեռն և այլն.

լ - արգել, աւել, գել, թել, խել, վայել, ցել.

ղ - աղեղն, անթեղ, առեղ, ասեղն, բեղմն, բիւրեղ, գեղ, գեղմն, դեղ, թեղ, թիթեղն, խեղ, կանթեղ, կեղ.

խ — մժեխ, սեխ, տառեխ, տրեխ.

հ - գռեհ, դեհ, նժդեհ.

փ - թեփ, ծեփ, կանեփ, չերեփ.

ք — ծեք, մեք, շեք.

ւ - արեւ, դեւ, թեթեւ, թեւ, կեղեւ, հեւ, ձեւ, ներգեւ, պարգեւ, սեւ, տերեւ:

Ինչո՞վ է պայմանավորված այս բաղաձայններից առաջ է - ի բացառումը և ե - ի դրսևորումը: Նախ, ւ - ից առաջ բացառվում էր յ - ն (է = եյ), և նույնիսկ պահլավերենից փոխառյալ դեւ (dev) բառում, որն ունի հնչյունափոխվող ձայնավոր (դիւ), անհնար էր է - ի գրությունը: Ի դեպ, յ - ն չի հանդիպում նաև ղ, խ, հ, փ, ք բաղաձայններից առաջ: Այս խմբի բաղաձայններից նախընթաց յ կարող են ունենալ միայն ռ - ն (հազվադեպ) և լ - ն. ժայռ, այլ, գայլ, սայլ, փայլ: Դիտարկումները ցույց են տալիս, որ վ(ւ), ղ, խ, հ, փ, ք հնչյունների արտաբերության ժամանակ լեզվի ծայրը լինում է և որպես կանոն հենվում առջին առամնաշարին: Հասկանալի է, որ լեզուն այդ դիրքն ընդունում է արդեն նախորդ ձայնավորի արտասանության ժամանակ, ինչի

հետևանքով էլ ստացվում է է – ի համեմատ ավելի բաց ննթադրվող ե:

Լ և ռ ձայնորդների արտասանության ժամանակ արգելքը ձևավորվում է ոչ թե լեզվի ողջ առաջամասով, այլ լեզվի ծայրով, լեզվի միջին մասն իջնում է և ստեղծում դոգավորություն, ինչն էլ պետք է նպաստեր նախորդ ձայնավորի բաց արտասանությանը և բացառեր է – ն, ուրեմն պետք է հանդես գար ե – ն:

Այսպիսով, կարելի է աներկբայորեն պնդել, որ արմատական բառերի շեշտակիր փակ վանկում է – ի կամ ե – ի հանդես գալը դեպքերի մի մասում գերազանցապես պայմանավորված է հաջորդ բաղաձայնի արտաբերական յուրահատկություններով, մասնավորապես՝ լեզվի առաջամասի դրաված դիրքով. եթե բաղաձայնի արտաբերության համար լեզվի առաջամասը իջնում է ներքև, ապա սպասելի է և, իսկ եթե լեզվի առաջամասը բարձրանում է վեր՝ դեպի լնդերքը կամ նախաքիմքը, սպասելի է է:

Այլ բաղաձայններից (բ, մ, պ, ծ, ց, տ, թ, կ, գ) առաջ հանդիպում են և՛ է – ն, և՛ ե – ն, բայց տարբեր հաճախությամբ: Այսպես, բ ձայնորդից առաջ ավելի հաճախ հանդես է գալիս ե – ն (աղանդեր, աներ, աւեր, բեր, գեր, պիշեր, դեկտեմբեր, ընդեր, ընթեր, ընկեր, թեր, լապտեր, ծեր, կղեր, կրտսեր, հեր, մթեր, պատկեր, սեր, ստուեր և այլն): Նկատենք, որ «Ռ – ի ժամանակ լեզվի ողջ զանգվածի դիրքը բավականին նման է բ – ի դիրքին» [250], իսկ ռ – ից առաջ, ինչպես տեսանք, հնարավոր է միայն ե: Ի տարբերություն ռ – ի՝ բ – ից առաջ մի քանի բառերում ունենք է. դէր, հրաւէր, նուէր, պատուէր, սէր, վէր, տէր: Այս բոլոր բառերում էլ ունենք շեշտազրկություն: Բացի այդ, առկա են դեր – դէր, սեր – սէր, վեր – վէր հակադրական զույգերը, որոնցում է – ն և ե – ն ունեն իմաստատարբերակիչ դեր: Այսպիսով, հաջորդ բ – ն թույլ է տալիս, որ իրենից առաջ հստակորեն դրսևորվի է ~ ե հակադրությունը: Կարծում ենք՝ այստեղ դեր է խաղում այն հանգամանքը, որ «եթե բ – ի ժամանակ լեզվի հետին մասը բարձրացած է, և նրա միջին մասում նկատվում է սահուն անցում, ապա ռ – ի ժամանակ այդ դոգավորումը ավե-

[250] Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 189:

լի խորն է, և լեզվի առաջամասը լարված չէ»[251]: Այսինքն՝ ռ – ի խորը դոգավորումը պայմանավորում է նախորդող և, մինչդեռ ր – ի դեպքում նման դոգավորման բացակայությամբ վերանում է նախորդող ե – ի պարտադրանքը: Ահա թե ինչու, ի տարբերություն ռ – ի, ր – ից առաջ և – ից բացի հնարավոր է դառնում նաև է – ի դրսևորումը:

Մ ձայնորդից առաջ ևս ավելի հաճախ ունենք ե. բեմ, դժխեմ, եղեմ, խոհեմ, կեմ, ճեմ, սքեմ: է ունենք դէմ, վէմ բառերում (երկուսում էլ գործում է է > ի հնչյունափոխությունը), իսկ թեմ, հեմ բառերը հանդիպում են նաև թէմ, հէմ ձևերով: Հետևում է, որ մ – ից առաջ ավելի սովորական է և – ն, բայց կարող է դրսևորվել և է – ն: Այս իրողությունը նույնպես կարելի է բացատրել մ – ի արտասանության ժամանակ լեզվի դիրքով. «Լեզուն իր ամբողջ զանգվածով ձգվում է դեպի բերանի հետևի մասը, իսկ մեջքի հետևում ստեղծվում է որոշ դոգավորում... Լեզվի ծայրը թուլլ հենվում է ստորին կտրիչների լնդերքին, այսինքն՝ լեզուն ակտիվ մասնակցություն չունի»[252]: Ե – ի համար նպաստավոր դիրք պայմանավորող մ – ն հնարավորություն է ընձեռում նաև է – ի համար՝ իր արտաբերության ժամանակ լեզվի մեջքի հետևում ստեղծվող որոշ դոգավորումով:

Պ բաղաձայնից առաջ է ունենք դէպ, ստէպ, վէպ, վրէպ բառերում, իսկ ճեպ և սեպ բառերում ունենք ե: Ինչպես նշում է Ա.Խաչատրյանը, բ, պ, փ բաղաձայնների արտասանության ժամանակ «շրթունքներից անմիջապես հետո, բերանի խոռոչում, ստեղծվում է դատարկ տարածություն, որտեղ կուտակվում է օդը»[253]: Այդ դատարկ տարածությունը առաջանում է այն բանի հետևանքով, որ լեզվի առջևի մասն իջնում է ներքև և իր ծայրով թեթև հպվում ներքևի ատամնաշարին: Ա.Խաչատրյանը նշում է, որ փ – ի արտասանության ժամանակ հիշյալ տարածությունն ավելի մեծ է, քան պ – ի արտաբերման ժամանակ[254]: Այդ նշանակում է, որ փ – ի արտասանության ժամանակ լեզվի

---

[251] Նույն տեղում:
[252] Ա.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 174:
[253] Նշվ. աշխ., էջ 165:
[254] Նույն տեղում:

ծայրն ավելի ներքև է իջնում, քան պ – ի արտասանության ժամանակ: Ահա թե ինչու փ – ից առաջ միշտ ունենք ե, իսկ պ – ից առաջ ունենք և՛ է, և՛ ե:

Հետնալեզվային կ պայթականից առաջ ավելի հաճախ ունենք ե. բեկ, ծնեբեկ, պարեկ, սեկ, ցերեկ, փեռեկ: Այդ դիրքում է ունենք աթաբէկ, մէկ, չէկ բառերում, իսկ երեկ բառը հանդիպում է նաև երէկ ձևով: Ինչպես նշում է Ա.Խաչատրյանը, «կ,գ,ք-ի արտաբերության ժամանակ լեզվի ծայրը իջնում է և հենվում առաջին առամնաշարին (ակտիվ մասնակցություն չունի)»[255]: Լեզվի ծայրի այս դիրքը շատ նման է մ, պ հնչյունների արտասանության ժամանակ գրաված դիրքին, որոնցից առաջ ևս հանդիպում են և՛ է, և՛ ե: Նշանակում է՝ մ, պ, կ բաղաձայններից առաջ է, ե հնչյունների դրսևորումը պայմանավորված է լեզվի ծայրի դիրքով, որը չի խանգարում ո՛չ մեկին, ո՛չ մյուսին:

Հետնալեզվային պ – ի արտասանության ժամանակ լեզուն ունի նույն դիրքը, ինչպես կ – ի արտասանության ժամանակ, սակայն պ – ից առաջ հիմնականում ունենք է. եղէգն, էգ, մէգ, սէգ, վէգ, տէգ: Այդ դիրքում ե ունենք արեգ բառում: Իմաստատարբերակիչ դերով է ~ և հակադրությունը հանդես է գալիս հեգ – հէգ բառազույգում: Այսպիսով, լեզվի դիրքը թույլ է տալիս, որ պ – ից առաջ ունենանք և՛ է, և՛ ե: Իսկ թե ինչու այս դիրքում ավելի հաճախ ունենք է, պարզ է դառնում Ա.Խաչատրյանի այն դիտարկումից, թե պ, կ, ք բաղաձայնների հարևանության մասին «Տարբերվում է նաև նախորդող և հաջորդող ձայնավորների տևողությունը: Գ – ից առաջ ա ձայնավորի տևողությունը ամենաերկարն է...»[256]: Թվում է՝ ավելի երկար ձայնավոր պայմանավորող պ – ից առաջ, երբ հնարավոր է և՛ է, և՛ ե, տրամաբանական է, որ ավելի հաճախ պիտի հանդես գար է – ն:

Ծ, ց բաղաձայնների «արտաբերության համար լեզվի ծայրը իր առջևի եզրով մոտենում է վերին առամնաշարի հիմքին և կպչելով նրան՝ առեղծում փակվածք: Լեզվի միջին մասը իջնում է, իսկ հետին մասը մի փոքր դոգավորվում, ստեղծելով շատ

[255] Նշվ. աշխ., էջ 168:
[256] Նշվ. աշխ., էջ 169:

թույլ երկրորդական ֆոկուս»[257]*: Լեզվի միջին մասի գոգավորմամբ է, թերևս, պայմանավորված այն, որ ծ, ց - ից առաջ սովորաբար ունենք ե (ծեծ, հեծ, մեծ, խեց, վեց, ցեց), իսկ մեկական դեպքում՝ նաև է (անէծ, երէց):*

Տ, թ բաղաձայնների արտաբերության համար «լեզուն իր առջևի մասով հպվում է առամներին, միջին մասը մի փոքր իջնում է, իսկ հետևի մասը զգալի բարձրանում՝ առեղծելով գոգավորում»[258]*: Եվ զարմանալի հավանական է, որ լեզվի գոգավորումն է թույլ տալիս տ, թ - ից առաջ ազատորեն արտասանել և՛ ե, և՛ է: Եղած օրինակներում նշված դիրքում է - ն և ե - ն ունեն գրեթե հավասար հաճախականություն. աբեթ, անհեթեթ, գմբեթ, խեթ, գէթ, խէթ, ձէթ, ինչպես նաև՝ ասպետ, արահետ, աւետ, գետ, կարապետ, կետ, հետ, ձետ, յետ, նետ, պարետ - աղէտ, աշխէտ, առնէտ, բրէտ, գէտ, դէտ, ժէտ, կէտ, մէտ, յաւէտ, պարէտ, պէտ, վէտ: Մի շարք դեպքերում դրսևորվում է է ~ և հակադրության իմաստաառրբերակիչ դերը. խեթ – խէթ, գետ - գէտ, կետ – կէտ, պետ – պէտ, իսկ աւետ բառը հանդիպում է նաև աւէտ ձևով:*

Այսպիսով, կարելի է ի հայտ բերել արտաբերական այն հատկանիշները, որոնք հնարավոր են դարձնում և՛ է - ի, և՛ ե - ի դրսևորումները: Վերը բերված ինը բաղաձայններից (ր, մ, ծ, ց, տ, թ, կ, պ, գ) հինգը (ր, ծ, ց, տ, թ) առաջնալեզվայիններ են, որոնց արտաբերության ժամանակ լեզվի ծայրի դեպի վեր բարձրացումն ուղեկցվում է լեզվի միջին մասում առաջացող որոշ գոգավորմամբ: Թե՛ երկշրթնային մ, պ, թե՛ հետնալեզվային գ, կ բաղաձայնների արտասանության ժամանակ լեզվի ծայրը թեթև իջնում է դեպի ստորին առամնաշար, չունի ակտիվ մասնակցություն և զարձյալ ուղեկցվում է որոշակի գոգավորմամբ:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է արձանագրել.

1. դրաբարյան չեշտակիր փակ վանկում է - ն հանդես է գալիս միայն մեկ բաղաձայնից առաջ, իսկ ե - ն դրսևորվում է և՛ մեկ, և՛ ավելի բաղաձայններից առաջ. նշանակում է՝ չեշտակիր փակ վանկում է ~ և հնչույթային հակադրություն կարող էր դրսևորվել մեկ բաղաձայնից առաջ.

---

[257] Նշվ. աշխ., էջ 170:
[258] Նշվ. աշխ., էջ 166:

2. Նշված պարագայում ս, պ, շ, ժ, չ, ճ, ն բաղաձայններից առաջ ունենք միայն է, իսկ ռ, լ, ղ, խ, հ, փ, ք, ւ բաղաձայններից առաջ՝ միայն ե. նշանակում է՝ առկա է փոխբացառող բաշխման հարաբերություն, և այս դիրքերում է ~ ե հակադրությունը չեզոքանում է.

3. բառավերջի բ, մ, պ, ծ, ց, տ, թ, կ, գ բաղաձայններից առաջ ունենք և՛ է, և՛ ե. այս դիրքում է, որ է – ն և ե – ն կարող են ունենալ իմաստատարբերակիչ դեր և կազմել հակադրական բառազույգեր, այսինքն՝ ունեն առանձին հնչույթների արժեք:

Արմատական շեշտակիր փակ վանկում է, ե գրերի բաշխման աղյուսակ

Գիր	բաղաձ. խմբից առաջ	բառավերջի մեկ բաղաձայնից առաջ																									
		ս	պ	շ	ժ	ճ	ժ	ն	ռ	լ	ղ	խ	հ	փ	ք	ւ	բ	մ	պ	ծ	ց	տ	թ	կ	գ
է	–	+	+	+	+	+	+	+	–	–	–	–	–	–	–	–	+	+	+	+	+	+	+	+	+
ե	+	–	–	–	–	–	–	–	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+

Նշենք, որ բառաթեքական գործոնները կարող են խախտել արմատներին վերաբերող այս օրինաչափությունը: Այսպես, ք հոգնակիակերտի հավելումով է – ն կարող է հայտնվել երկու բաղաձայնից առաջ (օրէն – օրէնք, վէր – վէրք, ղէն – ղէնք), բայի խոնարհման համակարգում ս, ն հնչյուններից առաջ հանդես է գալիս խոնարհիչ ներկայացնող ե, որը -յք վերջավորությունից առաջ էլ միանում է յ – ին և դառնում է-ն (գրեմ, գրես, գրէ, գրեմք, գրէք, գրեն): Անձնական դերանունների թեք ձևերում ե գրաևորվում է ղ – յց առաջ՝ մեզ, ձեզ, իսկ երկու բաղաձայնից առաջ գրաևորվում է է՝ ի մէնջ, ի ձէնջ: Փաստորեն, հնարավոր է, որ բառաթեքման համակարգում գործադրվել է նաև ուղղագրության ձևաբանական սկզբունքը: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ ընդհանրապես գրաբար խոսքում ք, ս, պ,

ն հնչյուններից առաջ ևս հնարավոր է և՛ է, և՛ և միավորների դրսևորումը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ ընդհանրապես դրաբարում է երկբաբառակերպի դրսևորումը չեշտակիր վանկում պարտադիր էր չ, ժ, ջ, ճ բաղաձայններից առաջ, այսինքն՝ նշված բաղաձայնները իրենց արտաբերական յուրահատկություններով բացառում էին և - ն և պայմանավորում է - ի հանդես գալը: Նկատի ունենք Ա.Խաչատրյանի նկարագրած հետևյալ առանձնահատկությունները. «Լեզվանկարներից երևում է, որ չ - ժ – ի արտաբերմանը մասնակցում է ոչ թե լեզվի առաջամասը, ինչպես ս - պ - ի ժամանակ, այլ առջևի և միջին մասերի սահմանը, որը գտնվում է ալվեոլների հանդիպակաց մասում:

Ռենտգենանկարներից երևում է, որ չ - ժ – ի արտաբերության ժամանակ լեզուն ամբողջությամբ բարձրանում է դեպի ալվեոլները և կոշտ քիմքը՝ թողնելով բավականին լայն ու երկար տարածություն լեզվի մեջքի և քիմքի միջև...: Դրա շնորհիվ այդ հնչյունները որոշ չափով քմայնանում են»[259]: Համեմատելով ջ, ճ, չ հպաշփականները պ, տ, թ - ի և ձ, ծ, ց - ի հետ՝ Ա.Խաչատրյանը նկատում է, որ մյուսների հետ համեմատած՝ ջ, ճ, չ - ի արտասանական դոտին ավելի լայն է և հետ քաշված, գտնվում է ալվեոլներում[260]: Ըստ ռենտգենապատկերների՝ ջ, ճ, չ - ի արտասանության ժամանակ «լեզվի առջևի և միջին մասերի միաժամանակյա բարձրացումը դեպի կոշտ քիմքը ստեղծում է լրացուցիչ արտասանական ֆոկուս, որն էլ հիմք է ծառայում այդ հնչյունների մասնակի քմայնացման համար»[261]: Կարծում ենք՝ բնական է, որ լեզվի նման դիրքավորում և քմային երանգ ունեցող հնչյուններից առաջ պետք է դրսևորվեր փակ արտասանություն ունեցող է, այլ ոչ թե ե:

Ընդհանրապես, դրաբարյան չեշտակիր վանկում է - ն բացառվում է ռ, լ, ղ, խ, փ, հ, ւ հնչյուններից առաջ, և այդ դիրքում դրսևորվում է և - ն: Վերն արդեն ցույց ենք տվել, որ այս իրողությունը պայմանավորված էր հիշյալ բաղաձայնների ար-

[259] Նշվ. աշխ., էջ 180:
[260] Նշվ. աշխ., էջ 172-173:
[261] Նշվ. աշխ., էջ 172:

տասանութ֊յան ժամանակ լեզվի գրաված դիրքով: Ինչ վերաբեր֊ում է ք - ին, ապա այն արտաբերելու ժամանակ լեզվի ծայրն ավելի քիչ է ներքև ձգվում, քան, ասենք, պ, խ - ի ժամանակ, որի հետևանքով արմատներում շեշտակիր վանկում իրենից ա֊ռաջ է չընդունելով՝ թեքված ձևերում ք - ն այնուամենայնիվ նախորդող է ունենում է. գրէք, կարդացէ՛ք:

Ճիշտ է, դեպքերի մեծ մասում, այսպիսով, շեշտակիր վանկում նույն բաղաձայնից առաջ կարող էին դրսևորվել և՛ է - ն, և՛ ե - ն (չնայած ակնհայտորեն բացատրելի է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առավելաբար մեկի կամ մյուսի հանդես գալը), բայց պարզ է նաև, որ գրաբարում դեպքերի մի մասում շեշտակիր վանկում է - ի կամ ե - ի դրսևորումը պայմանավորված էր հա֊ջորդ բաղաձայնի որակով:

2. Գրաբարյան է, ե գրերի հնչյունական համապատասխանությունները բարբառներում

Գրաբարյան է, ե միավորների հնչյունական արժեքների որոշ֊մանը, կարծում ենք, մեծապես կարող է նպաստել դրանց համա֊պատասխանությունների դիտարկումը հայերենի բարբառնե֊րում:

Ցավոք, ժամանակակից բարբառները տասնամյակներ շարու֊նակ դիտվել են իբրև գրաբարի քայքայման հետևանքով և դրա֊նից հետո առաջացած լեզվավիճակներ, բարբառային ցանկացած իրողություն համարվել է գրաբարյանի հնչյունափոխության կամ աղավաղման արդյունք, հաճախ բացառվել է այն բանի հնարավորությունը, որ բարբառային շատ իրողություններ կա֊րող էին գործառած լինել գրաբարին զուգահեռ կամ դրանից էլ վաղ շրջանում: Ավելին, այսօր էլ տիրապետող չէ այն համոզու֊մը, որ հայերենը, ինչպես ցանկացած այլ լեզու, չէր կարող ի սկզբանե լինել միասնական և կանոնարկված լեզու, և գրական լեզուն՝ գրաբարը, անպայման պետք է ձևավորվեր բարբառների (կամ վերբարբառային խոսակցական մի վիճակի) հիմքի վրա և դրանց մշակումով: Տարօրինակ է նաև, որ կարծիք է հայտնվում, թե 5-րդ դարում կրթական գործն այնքան փայլուն է կազմա֊կերպվում, որ Հայաստանի բոլոր նահանգներում ու գավառնե֊րում լուսավորչական աշխատանքը նպաստում է «գրական լեզ֊

վի տարածմանը, բարբառային երևույթների խիստ սահմանափակմանը»[262]. այսինքն՝ ներկայացվում է մի իրավիճակ, որպիսին առկա չէ նույնիսկ մեր օրերում: Իրավացի չեն նաև նրանք, ովքեր կարծում են, թե հայերենի բարբառները բռնել են վերացման ուղին: Եթե հանգամանքների բերումով որևէ բարբառ իսկապես կարող է անհետանալ, ապա բարբառներն ընդհանրապես, լինելով լեզվի բնական և կենդանի գոյավիճակ, չեն կարող վերանալ, քանի դեռ գոյություն ունեն տվյալ ժողովուրդը և նրա լեզուն: Ընդամենը պետք է ընդունել, որ բարբառները ընդհանուր լեզվի կազմում զարգանում ու փոփոխվում են: Ինչևէ, բարբառների, դրանց և գրաբարի փոխհարաբերությունների նկատմամբ վերոբերյալ մերժելի պատկերացումներն ամենևին չեն նպաստել ինչպես գրաբարի, այնպես էլ հայոց լեզվի պատմության բազմաթիվ կնճռոտ հարցերի լուսաբանմանը:

Մենք բարբառային երևույթները չենք համարում գրաբարի քայքայման, տրոհման արդյունք և ոչ էլ պարտադիր հետգրաբարյան շրջանում սկիզբ առած իրողություններ: Այսօրվա բարբառների արմատները հաճախ գալիս են նախագրաբարյան հայերենի շրջանից, նրանց յուրահատկությունները շատ դեպքերում զուգահեռներ են ունեցել գրաբարին հիմք դարձած բարբառում (կամ բարբառներում), այլ բարբառներում, նաև գրաբարում: Անշուշտ, բարբառային շատ իրողություններ էլ ի հայտ են եկել հետգրաբարյան շրջանում, կենդանի լեզվի զարգացման ընթացքում: Որպես լեզվի կենդանի դրսևորումներ՝ բարբառները ընդհանուր հայերենի կազմում փոփոխվել ու զարգացել են ինչպես որակական, այնպես էլ տարածական առումներով, մինչդեռ գրաբարյան համակարգը, թերևս այդպես էլ ընդհանուր հաղորդակցման միջոց չդառնալով և կտրվելով կենդանի լեզվից, հիմնականում մնաց իբրև գրի լեզու: Այնպես որ, միշտ չէ, որ բարբառային իրողությունները բխում են գրաբարից. դրանք կարող են լինել լեզվի ավելի լայն կամ նեղ դրսևորում ներկայացնող երևույթներ: Գրաբարը 5-րդ դարի հայերենի ամբողջական

[262] Հ.Զաքարյան, Մաշտոցը՝ լեզվաչինարար, Նյութեր մաշտոցյան դպրի 1600-ամյակին նվիրված գիտաժողովի, Ե., 2005, էջ 36:

պատկերը չէ. լեզվի կենդանի զարգացման հոսանքում այն քաթացած մի կղզի է:

Հասկանալի է, որ թե՛ գրաբարի հիմք բարբառային վիճակը և թե՛ գրաբարը ժամանակի այլ բարբառների հետ ունեցել են և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ: Գրաբարյան լեզվական համակարգը մնացել է միայն գրավոր խոսքում, իսկ կենդանի բարբառները, զարգանալով ու փոփոխվելով հանդերձ, անշուշտ պահպանել են հնուց ի վեր իրենց հատուկ հնչյունական, քերականական օրինաչափություններ, բառապաշարի շերտեր. հակառակ դեպքում նրանք կտրոհվեին ընդհանուր հայերենից՝ ձեռք բերելով առանձին լեզվի կարգավիճակ: Այնպես որ, կարելի է վեր հանել գրաբարյան և բարբառային ընդհանուր երևույթներն ու օրինաչափությունները և դրանք դիտարկել ոչ միայն իբրև հաջորդական, այլ նաև իբրև զուգահեռ գործառած ու մեզ հասած իրողություններ:

Բոլոր դեպքերում՝ հայերենի արդի բարբառները գրաբարյան շատ իրողություններ մեկնաբանելու համար հսկայական արժեքավոր նյութ են պարունակում: Իրավացի է Հ.Մուրադյանը, երբ գրում է. «Պատմական շրջանի սկզբում հայերենի ձայնավորների ունեցած բնույթի և նրանց հնչույթաբանական առանձնահատկությունների մասին կարևոր տեղեկություններ են տալիս հայերենի ժամանակակից բարբառները»[263]: Համամիտ ենք լեզվաբանի՝ դրական պատասխան ենթադրող հռետորական այն հարցին, թե հին դրական հայերենի և ժամանակակից բարբառների ձայնավորական «համակարգերի համեմատությամբ ու համադրությամբ հնարավո՞ր չէ արդյոք ճշգրտել հին հայերենի ձայնավորների որակական առանձնահատկությունների մասին մեր պատկերացումները»[264]:

Ելնելով գրաբարի և բարբառների փոխհարաբերությունների այս ըմբռնումից՝ նախ նշենք, որ է ~ ե տարբերակումը պետք է հատուկ լիներ ոչ միայն գրաբարին, այլ նաև նրա հիմք հանդիսացած բարբառին կամ բարբառներին, նաև ժամանակի այլ բարբառների, գուցե և հին հայերենին ընդհանրապես: Այստեղ արժե

[263] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 32:
[264] Նույն տեղում:

կրկին հիշատակել Գ.Ջահուկյանի այն դիտողությունը, թե ժամանակակից մի շարք հայ բարբառների ունեցած է ~ և հակադրությունը ենթադրել է տալիս, որ այդ տարբերությունը հասնում է ոչ միայն գրաբարի սկզբնավորման, այլև նախագրային շրջանը: Նշենք նաև, որ 5-րդ դարի բարբառների հնչյունաբանական հավանական հատկանիշների շարքում լեզվաբանն ընդգրկում է նաև հետևյալները. «ե-ի երկբարբառային արտասանություն. ... ե ձայնավորի ավելի բաց (լայն) արտասանության միտում»[265]: Այն, որ երկբարբառային և և ո հնչյուններ հայերենն ունեցել է հնագույն ժամանակներից սկսած, պնդում է նաև Ա.Ղարիբյանը՝ գրելով. «Այդպիսի ձայնավորներ ունեցել է նաև գրաբարը: Մեր կարծիքով՝ այս ձայնավորները Վանի բարբառը ժառանգած պետք է լինի իր նախորդ բիայնական լեզվից, որովհետև խալդերեն լեզվի մեջ հաճախ նկատում ենք «իե» և «ու ու» վանկերը, որոնք այլ բան չեն, քան երկբարբառային «ե» և «ո» հնչյունների սեպագիր նշանները»[266]:

Բնական է ենթադրել, որ արդի հայ բարբառների է ~ և հակադրության յուրահատկությունների բացահայտումը կարող է բանալի դառնալ՝ հասկանալու այդ հակադրության էությունը գրաբարում, որից էլ կարելի է եզրակացություններ անել է, և գրերի ներկայացրած հնչյունական իրողությունների արժեքների վերաբերյալ:

Նախ փորձենք համառոտ ներկայացնել գրաբարյան է, և միավորների համապատասխանությունների ընդհանուր պատկերը հայերենի ժամանակակից բարբառներում:

Դիտարկելով բարբառագիտական ուսումնասիրությունների ընձեռած նյութը՝ կարելի է առանձնացնել հայերենի գրեթե բոլոր բարբառներին բնորոշ երկու հատկանիշ.

1. գրաբարյան է երկբարբառակերպին բարբառներում հիմնականում համապատասխանում է պարզ է ձայնավոր.

2. գրաբարյան միավանկ բառերի սկզբնային և ~ յ առաջ բարբառներում որպես կանոն առկա է յ. (ի դեպ, Գ.Ջահուկյանի ընտրած 120 բարբառախոս վայրերից այս հատկանիշը չունեն

[265] Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 164::
[266] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 384:

24-ը, ընդ որում՝ դրանցից 20-ը «արևմտահայ» բարբառախոս վայրեր են, իսկ չորսը՝ «արևելահայ»[267]):

Ճշմարտությանը դեմ մեղանչած չենք լինի, եթե պնդենք, որ այս երկու բարբառային ընդհանուր հատկանիշները բխում են նախնական հինհայերենյան երկու համապատասխան ընդհանուր վիճակներից: Այլ կերպ ասած՝ ենթադրելի է, որ առաջին դեպքում հին հայերենի բոլոր դրսևորումներում էլ համապատասխան դիրքերում հանդես է եկել հնչյունական մի իրողություն, որին արդի բարբառներում որպես կանոն համապատասխանում է է պարզ ձայնավորը, իսկ երկրորդ դեպքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան ե - ն ունեցել է ընդհանուր որակական այնպիսի հատկանիշ, որը հիմք է դարձել գրեթե բոլոր բարբառներում բառասկզբում յ - ի հավելման:

Ինչ վերաբերում է բարբառներում այլ դիրքերում գրաբարյան է, և միավորներին համապատասխանող հնչյունների դրսևորումներին ու փոխհարաբերությունների, ապա հայ բարբառագիտության մեջ առավել տարածված է հետևյալ տեսակետը. «Հին հայերէնը գիտէր զանազանել և և է ձայները, որոնց տարբերութիւնը սակայն մեզ յայտնի չէ. նոր հայերէնը այս երկու ձայներէն մէկը ջնջած է, այնպէս որ բազմաթիւ բարբառներու, ինչպէս և գրական լեզուին մէջ այս երկու ձայները վերածուած են մէկի, որ կը նշանակենք է: Բարբառներէն ոմանք (ինչ. Կարին, Մուշ, Վան, Սուչավա և այլն) չեչտեալ վանկին մէջ կը զանազանեն երկու տեսակ է. գրաբարի է ձայնը կը պահեն է, իսկ ե ձայնին կուտան երկբարբառային ե հնչիւնը: Միւս ոչ - չեչտեալ վանկերուն մէջ գրաբարի թէ՛ և և թէ՛ է ձայները հաւասարապէս կը հնչուին է: Երկու գրական լեզուներն ալ (ուրիշ քանի մը բարբառներու նման) գիտեն զանազանել բառասկզբի և և է ձայները, ուր ե կը հնչուի յէ, իսկ է կը հնչուի է»[268]:

Համանման տեսակետ է հայտնել Դ.Կոստանդյանը. «Հայտնի է, որ գրաբարը տարբերակում էր ե և է հնչույթները. առաջինը հնչվում էր իբրև պարզ ձայնավոր է, երկրորդն ուներ երկբարբառային արտաբերում՝ բաղադրված է և յ միավորներից: Բար-

[267] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 63, 70-81:
[268] Հ.Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա - Նոր-Նախիջևան, 1911, էջ 15:

բառների մեծագույն մասում, այդ թվում և Երզնկայում, ինչպես նաև գրական հայերենի երկու դրսևորումներում վերացված է և է հնչույթների տարբերակվածությունը: Սրանց դիմաց բոլոր դիրքերում բարբառն ունի առաջին շարքի միջին բարձրացման է»[269]:

Նույն կարծիքին են եղել նաև Մ.Աասարյանը[270], Ա.Գրիգորյանը[271]:

է ~ ե փոխհարաբերությունների առումով Ա. Ղարիբյանը առանձնացնում է մի խումբ բարբառներ, որոնք է պարզ ձայնավորից բացի ունեն երկբարբառային ե. «Այդպիսի «ե» ունեն մեր բարբառներից մի քանիսը միայն, հատկապես Հաճընի, Զեյթունի, Վանի, Ուրմիայի, Խոյի բարբառները, Մշո բարբառի արևելյան հատվածը, Արարատյան բարբառի Նոր Բայազեդի ենթաբարբառը»[272]: Գ.Ջահուկյանի տվյալներով՝ չեշտակիր վանկում երկբարբառային ե ունեն բարբառախոս 28 վայրեր, որոնք ամբողջովին կամ մասամբ ներկայացնում են հետևյալ 14 բարբառները. Առդեալի, Սեբաստիայի, Կեսարիայի, Հաջընի, Զեյթունի, Կարնո, Մշո, Տալվորիկ-Մոտկանի, Վանի, Դիադինի, Արարատյան, Ջուղայի, Խոյ-Մարաղայի, Բայազետի[273]:

Այսպիսով, տարանջատվում են բարբառների երկու խմբեր, որոնցում հինհայերենյան է ~ ե հակադրությունը տարբեր կերպ է դրսևորվում: Առաջին և ավելի մեծաքանակ խմբում այն բարբառներն են, որոնցում գրաբարյան ե - ի դիմաց չեշտակիր վանկում երկբարբառային ձայնավոր չի արձանագրվում: Երկրորդ խմբում այն 14 բարբառներն են, որոնցում գրաբարյան ե - ի դիմաց չեշտակիր վանկում դրսևորվում է երկբարբառային և հնչյուն:

Առաջին խումբը ներկայացնող Պոլսի, Եվդոկիայի բարբառներում, Արարատյան բարբառի խոսվածքների մեծ մասում, այլ խոսվածքներում իսկապես է ~ ե տարբերությունը վերացել է, և այդ բարբառները կամ խոսվածքները որևէ կերպ չեն կարող

---

[269] Դ.Կոստանդյան, Երզնկայի բարբառը, Ե., 1979, էջ 26:
[270] Մ.Աասարյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, էջ 25:
[271] Ա.Գրիգորյան, նշվ. աշխ. , էջ 82:
[272] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 110:
[273] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 63, 70-81, 132-136:

թույլ երկրորդական ֆոկուս»[257]: Լեզվի միջին մասի դոգավորմամբ է, թերևս, պայմանավորված այն, որ ծ, ց - իյ առաջ սովորաբար ունենք ե (ծեծ, հեծ, մեծ, խեց, վեց, ցեց), իսկ մեկական դեպքում՝ նաև է (անէծ, երէց):

Տ, թ բաղաձայնների արտաբերության համար «լեզուն իր առջևի մասով հպվում է առամներին, միջին մասը մի փոքր իջնում է, իսկ հետևի մասը զգալի բարձրանում՝ ստեղծելով դոգավորում»[258]: Եվ զարմանալի հավանական է, որ լեզվի դոգավորումն է թույլ տալիս տ, թ - իյ առաջ ազատորեն արտասանել և՛ ե, և՛ է: Եղած օրինակներում նշված դիրքում է - ն և ե - ն ունեն դրեթե հավասար հաճախականություն. աբեթ, անհեթեթ, դմբեթ, խեթ, գէթ, խէթ, ձէթ, ինչպես նաև՝ ասպետ, արահետ, աւետ, գետ, կարապետ, կետ, հետ, ձետ, յետ, նետ, պարետ ~ աղէտ, աշխէտ, առնէտ, բրէտ, գէտ, դէտ, ժէտ, կէտ, մէտ, յաւէտ, պարէտ, պէտ, վէտ: Մի շարք դեպքերում դրսևորվում է է ~ ե հակադրության իմաստաառբերակիչ դերը. խեթ – խէթ, գետ - գէտ, կետ – կէտ, պետ – պէտ, իսկ աւետ բառը հանդիպում է նաև աւէտ ձևով:

Այսպիսով, կարելի է ի հայտ բերել արտաբերական այն հատկանիշները, որոնք հնարավոր են դարձնում և՛ է - ի, և՛ ե - ի դրսևորումները: Վերը բերված ինը բաղաձայններից (ր, մ, ծ, ց, տ, թ, կ, պ, դ) հինգը (ր, ծ, ց, տ, թ) առաջնալեզվայիններ են, որոնց արտաբերության ժամանակ լեզվի ծայրի դեպի վեր բարձրացումն ուղեկցվում է լեզվի միջին մասում առաջացող որոշ դոգավորմամբ: Թե՛ երկշրթնային մ, պ, թե՛ հետնալեզվային գ, կ բաղաձայնների արտասանության ժամանակ լեզվի ծայրը թեթև իջնում է դեպի ստորին առամնաշար, չունի ակտիվ մասնակցություն և զարձյալ ուղեկցվում է որոշակի դոգավորմամբ:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է արձանագրել.

1. դրաբարյան շեշտակիր փակ վանկում է - ն հանդես է գալիս միայն մեկ բաղաձայնից առաջ, իսկ ե - ն դրսևորվում է և՛ մեկ, և՛ ավելի բաղաձայններից առաջ. նշանակում է՝ շեշտակիր փակ վանկում է ~ ե հնչույթային հակադրություն կարող էր դրսևորվել մեկ բաղաձայնից առաջ.

[257] Նշվ. աշխ., էջ 170:
[258] Նշվ. աշխ., էջ 166:

բորդ վանկաբարը ա կամ այ է, և թերևս դեր է խաղացել նաև առնմանուԹյունը). ա՛խպիր, ա՛րազ, ա՛րաշտ, ա՛րկաԹ: Մի շարք միավանկ բառերում բ, ռ – ից առաջ և – ի դիմաց առկա է ընէ. ծընէրպ, կընէռ, սընէրմը, փընէրԹ, ղ, խ – ից առաջ՝ է. խէղճ, ճէխկ, մէխկ, նէղ, տէղ, ցէխ: Այլ դեպքերում միավանկ բառերում և – ի դիմաց առկա է ի. Թիլ, ԹիվԹ (ԹեւԹ), ԹիփԹ, խիլք, ծիփ, հիշտ և այլն: Հադրուվի բարբառում միավանկ և երկվանկ բառերում և – ի դիմաց սովորաբար առկա է է. տէղ (դեղ), ծէռք (ձեռք), ցէղ, ԹէվԹ, էրկու, տէղէն (դեղին), քէնէ (քենի), սակայն այլ դեպքերում, հատկապես ղ, ռ բաղաձայններից առաջ սովորաբար հանդես է գալիս ընէ. սընէղ , պընէռ, խընէղճ, ծըմընէռ, մընէռել, սընէպ, սընէրտ, սընէվ և այլն: Համանման երևույԹներ նկատվում են նաև Ղարաբաղի, Շամախիի, Սասունի բարբառներում: Նշենք նաև, որ բարբառների այս խմբում հինհայերենյան է ~ և հակադրուԹյան զարգացումները հաճախ կրել են շեշտի դիրքի փոփոխուԹյան, ձայնավորների ներդաշնակուԹյան օրենքի գործողուԹյան, առնմանուԹյան, տարնմանուԹյան հնչյունափոխական երևույԹների կնիքը, որը շատ դեպքերում ուսումնասիրողներին Թույլ չի տվել սահմանելու հստակ օրինաչափուԹյուններ:

Երկրորդ խմբի բարբառներում, քանի որ դրանք նույն խորուԹյամբ ուսումնասիրված չեն, և երկբարբառային հնչյունի դրսևորումները նույնպես հավասարաչափ ամբողջականուԹյամբ ներկայացված չեն: Այսպես, Ա.Ղարիբյանը նշում է, որ Ուրմիայի բարբառն ունի և երկբարբառ[274], Գ.Ջահուկյանը նման հնչյունի առկայուԹյունը արձանագրում է Խոյ-Մարաղայի բարբառի Փայաջուկ, Ուրմիա բարբառախոս վայրերում [275], իսկ Մ.Աասատրյանը իր «Ուրմիայի (Խոյի) բարբառը» աշխատուԹյան մեջ գրում է. «այն խոսվածքը, որը հիմք է հանդիսացել մեր ուսումնասիրուԹյան համար, չի պահել այդ երկու հնչյունների [է, և – Վ.Կ.] արտասանական տարբերուԹյունը»[276]:

Գրաբարյան և – ի համապատասխանուԹյուններին Մշո բարբառում հանգամանորեն անդրադարձել է Լ.Մսերյանցը: Նա

[274] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 343:
[275] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 81:
[276] Մ.Աասատրյան, նշվ. աշխ., էջ 25:

նշում է, որ Մշո բարբառում դրաբարյան ե - ին համապատասխանում են «բաց ե-ն» (նկատի ունի պարզ e ձայնավորը), երկբարբառային իե կապակցությունը և յե - ն: Ընդ որում՝ երկբարբառային հնչյունը Մշո բարբառում հանդես է գալիս միավանկ բառերի ներսում, երկվանկ և բազմավանկ բառերի վերջին վանկում: Միավանկ բառերի սկզբում ե - ին համապատասխանում է յե կապակցությունը, իսկ երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբում ու ներսում հանդես է գալիս «բաց ե-ն»: Լեզվաբանը նկատում է երկբարբառային հնչյունի դրսևորման ու չեշտի սերտ առնչությունը և ընդգծում, որ հենց չեշտակիր վանկում է զարգացել իե կապակցությունը, որը բառասկզբում (միավանկ բառերի) զարձել է յե, մինչդեռ անչեշտ վանկերում առկա է պարզ է ձայնավոր: Մսերյանցը գրաբարյան ե - ի՝ չեշտով պայմանավորված դրսևորման համանման երկվուլթյուն արձանագրում է և լեհահայոց բարբառում, Ախալցխայի խոսվածքում[277]: Անդրադառնալով նաև Թբիլիսիի բարբառին՝ նշում է. «Գրաբարյան ե - ի համապատասխանությունների երկվուլթյունն արտացոլվում է և Թիֆլիսի բարբառում, որտեղ չեշտի տակ հանդես է գալիս ի (բառասկզբում՝ յի), իսկ անչեշտ վանկում՝ բաց է»[278]: Ապա ավելացնում է, որ նման երկվուլթյուն հավանաբար կարելի է նկատել նաև նոր հայկական շատ այլ բարբառներում[279]: Հետաքրքրական է, որ Մսերյանցը հիշատակում է և ռուսերենի բարբառները, մասնավորապես՝ հյուսիսմալոռուսական խոսվածքները, որոնցում չեշտակիր վանկում առկա է երկբարբառային ie՛ կապակցություն, իսկ անչեշտ վանկերում՝ e մենաբարբառ: Նշվում է նաև, որ երևույթը ներթափանցել է հարևան բեռլառուսական խոսվածքներից[280]: Նույնիսկ նկատում է լատիներենի չեշտակիր ե - ի երկբարբառային դրսևորումներ ռոմանական լեզուներում[281]: Մսերյանցը գտնում էր, որ ե - ի երկբարբառա-

---

[277] Л. Мсерианц, Этюды по армянской диалектологии, I. Сравнительная фонетика мушского диалекта в связи с фонетикою Грабара, Москва, 1897, с.24-35.
[278] Նշվ. աշխ., էջ 35:
[279] Նույն տեղում:
[280] Նշվ. աշխ., էջ 36:
[281] Նույն տեղում:

յին արտասանությունը հետգրաբարյան շրջանում առաջացած իրողություն է. այդ երևում է նրա այն դիտողությունից, թե երկբարբառային իե կապակցության դրսևորումը գրաբարյան ե - ի դիմաց վկայված է դեռևս 17-րդ դարի առաջին քառորդում Ֆր.Ռիվոլայի հայ - լատիներեն բառարանում[282]*:*

Հարցի առնչությամբ Մշո բարբառում առկա իրավիճակը նույն կերպ են ներկայացնում նաև Ս. Բաղդասարյան-Թափալցյանը[283] *և Ք.Մադաթյանը*[284]*:*

Կիլիկյան հայերենում է ~ և հարաբերությանը անդրադարձել են Յ. Կարստը և Հր.Աճառյանը: Կարստի կարծիքով՝ է ձայնավորը, ծագումով լինելով երկբարբառ, արդեն 5-րդ դարի դասական հայերենում բառիս բուն իմաստով երկար ձայնավոր չի եղել: Նոր հայերենում նրան կանոնավոր ձևով համապատասխանում է կարճ կամ միջին բաց է: Այս հնչյունական արժեքը է նշանադիրը պահպանում է և կիլիկյան հայերենում[285]*: Գրաբարյան ե - ն կիլիկյան հայերենում ունի նույն համապատասխանությունները, ինչպես որ Մշո բարբառում, այն է՝ միավանկ բառերի սկզբում՝ յե, շեշտակիր վանկում՝ իե, անշեշտ վանկում՝ է: Կարստը հավելում է, որ «վերջին վանկի ie ե - ն պետք է դառնա պարզ e, երբ այդ վանկը դադարում է վերջին լինելուց», և բերում է օրինակներ*[286]*: Գրաբարյան ե - ի՝ հայերենի բարբառներում համապատասխանությունների առումով Կարստը նկատում է հետաքրքրական մի օրինաչափություն. «Իտացիզմով բնորոշվող արևելահայերենում i - ն նաև արևմտահայերենի երկբարբառային ե (= ie) ձայնավորի կանոնավոր ներկայացուցիչն է: Եթե արևմտահայերենում հին է - ն դառնում է e անշեշտ ոչ վերջին վանկում, իսկ շեշտակիր վանկում դառնում է ie, արևելահայերենում այն նույնպես դառնում է e անշեշտ վանկում, բայց i՝ շեշտակիր վանկում»*[287]*:*

---

[282] Նշվ. աշխ., էջ 35:
[283] Տե՛ս Ս.Բաղդասարյան, Մշո բարբառը:
[284] Տե՛ս Ք.Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985:
[285] Տե՛ս Յ.Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 27:
[286] Տե՛ս նշվ. աշխ., էջ 54:
[287] Նշվ. աշխ., էջ 56:

Հր.Աճառյանը Կիլիկիայի բարբառի չրջանակներում տարբերակում է Զեյթունի և Հաճընի բարբառները և նկատում որոշ տարբերություններ դրանց միջև ե - ի համապատասխանությունների հարցում: Ճիշտ է, երկու դեպքում էլ ե - ի դիմաց հաճախ առկա է ի, սակայն Զեյթունի բարբառում Աճառյանը նման դեպքեր ավելի շատ է նկատում[288]: Ուշագրավ է Աճառյանի այն դիտարկումը, որ թե՛ Զեյթունի, թե՛ Հաճընի բարբառներում ղ, խ, ռ բաղաձայններից առաջ ե - ն չի դառնում ի, այլ պահպանվում է կամ դառնում է[289]: Հետաքրքրական է, որ ղ, ռ - ից առաջ որոշ դեպքերում ե - ն դառնում է ա, ա՛ կամ օ. աղըչ (եղիճ), ա՛ղունդ, օղունդ (եղունդն), ախչէյ (եղջիւր), ախբայ (եղբայր), ծա՛ռք, ճ՛ա՛ռք, ճ՛ար (ճեռք)[290]:

Հարցին ավելի հանգամանորեն Հր.Աճառյանն անդրադառնում է Վանի բարբառի առնչությամբ: Նախ նա նշում է, որ Վանի բարբառի ե, ո երկբարբառները համապատասխանում են «մշեցիների և Կարնո գյուղացիների ե, ո հնչումներին, բայց սրանց չափ ծանր ու դանդաղ չեն, և արտասանվում են շատ ավելի արագ, հատկապես վն. ե - ն ավելի արագ է Մշ. ե - ից»[291]: Ապա ավելացնում է, որ երկբարբառի մեջ e - ն բաց ձայնավոր է[292]: Այնուհետև Վանի բարբառում դրաբարյան ե - ի համապատասխանությունները ներկայացվում են ըստ դիրքերի: Այսպես, միավանկ բառերի սկզբում առկա է ե ~ յե համապատասխանությունը: Երկվանկ բառերի սկզբում ե - ն ունի երկու դիրք. ա) դառնում է ղ, ռ բաղաձայններից առաջ, բ) նախորդում է ր բաղաձայնին: Առաջին դեպքում դարձյալ առկա է ե ~ յե համապատասխանություն, իսկ երկրորդ դեպքում ե - ի դիմաց առկա է պարզ է ձայնավոր: Բառավերջի վանկի ե - ն (չեշտակիր ե) Վանի բարբառում միշտ մնում է ե: Բառամիջի անշեշտ վանկում դրաբարյան ե - ին սովորաբար համապատասխանում է պարզ է

[288] Տե՛ս Հ.Աճառյան, Քննություն Կիլիկիայի բարբառի, ե., 2003, էջ 37-39:
[289] Տե՛ս Նշվ. աշխ., էջ 38, 40, 41, 43, 46:
[290] Տե՛ս Նշվ. աշխ., էջ 38, 39, 41:
[291] Հ.Աճառյան, Քննություն Վանի բարբառի, ե., 1952, էջ 15:
[292] Նույն տեղում:

ձայնավոր, իսկ ղ - ից առաջ՝ ե երկբարբառային հնչյուն[293]: Աճառյանը նկատում է, որ ի տարբերություն վերջնավանկի, որտեղ է ~ ե զանազանությունը լավ է պահված, բառամիջում տարբերակումը բացարձակ չէ. այստեղ ղ բաղաձայնից առաջ ընդհանրապես ե - ն մնում է ե, իսկ ր - ից առաջ դառնում է է: Հեզվաբանի աչքից չի վրիպում երևույթի դրսևորման նույնությունը բառասկզբի և բառամիջի դիրքերում[294]:

Վանի բարբառում, ինչպես նկատում է Աճառյանը, մի շարք դեպքերում էլ անշեշտ ե - ի դիմաց, հատկապես ր - ից առաջ, առկա է ի ձայնավոր. աւելել - ավիլել, աւերել - ավիրել, աւելորդ - Ավիլորթ, բերել — պիրել, երեկոյ — իրիկուն, զենուլ - զինել, ծեփել — ծիփել, հերիւն — խիրուն, հերկել — խիրկել, ներկել — նիրկել, շերեփ - շիրեփ, սկեսուր — կիսուր, փետել - փիտել, փետուր - փիտուր և այլն: Հետաքրքրական է, որ բերված բոլոր օրինակներում դրաբարյան ձևի մեջ առկա են երկու հաջորդական ե-եր, կամ ե - ին հաջորդող ձայնավորը հետին շարքի է (ու, ո): Երբեմն ե > ի փոփոխություն է նկատվում բառաթեքման ժամանակ. կյետ — կյիտու, աներ - անիրոչ, սիրել — սիրիցի, փորել - փորիցի[295]: Ինչ վերաբերում է դրաբարյան է երկբարբառակերպին, ապա Վանի բարբառում նրան որպես կանոն համապատասխանում է պարզ է ձայնավորը[296]:

Գրաբարյան է, ե միավորների համապատասխանությունների առումով հետաքրքրական պատկեր է ներկայացնում Բայազետի բարբառը: Այստեղ հստակ դրսևորվում է է ~ և հակադրություն և՛ հնչյունաբանական, և՛ հնչութաբանական իմաստներով:

է - ն առաջին շարքի միջին բարձրացման ձայնավոր է՝ լիովին նույնական դրական հայերենի է ձայնավորին: ե - ն Բայազետի բարբառում երկբարբառային հնչյուն է, որի արտասանության ժամանակ լեզվի մեջքը բարձրանում է դեպի կոշտ քիմքը, բայց ոչ այնքան, որքան ի - ի արտասանության ժամանակ: Բացի այդ, եթե ի - ի արտասանության ժամանակ բերանի մի-

[293] Տե՛ս նշվ. աշխ., էջ 30-32:
[294] Տե՛ս նշվ. աշխ., էջ 33:
[295] Նույն տեղում:
[296] Տե՛ս նշվ. աշխ., էջ 34, 35:

ջին մասում կծկված լեզուն մի փոքր ձգվում է դեպի առաջ[297], *ապա և – ի արտասանության ժամանակ այդ մղումը բացակայում է, իսկ լեզվի մեջքն էլ մի փոքր ավելի հետ ընկած հատվածում է բարձրանում: Եթե ի ձայնավորի արտաբերության ժամանակ «Լեզվի ծայրը իջած է և հենվում է ստորին ատամների ներսի մակերեսին»*[298], *«է հնչյունի արտաբերման ժամանակ իջած է ներքև՝ թեթևակի հպվելով ստորին ատամներին»*[299], *ապա բարբառային և – ի արտասանության ժամանակ լեզվի ծայրը ավելի ներքև է իջնում՝ հասնելով ստորին ատամների հիմքին: Եվ ընդհանրապես, է – ի համեմատությամբ և – ի արտասանության ժամանակ լեզվի ողջ առջևի մասն է ներքև իջած: Ե – ի արտասանության ժամանակ բերանը ավելի է բացված է – ի համեմատությամբ: Եթե փորձենք և երկբարբառակերպը մեխանիկորեն տրոհել բաղադրիչների, ապա կարող ենք ասել, որ այն սկսվում է ի – ից քաց մի հնչյունով և ավարտվում է – ից քաց հնչյունով, ուստի ճիշտ չի լինի և – ի արտասանությունը ներկայացնելու համար գործածել իէ կամ իե տառակապակցությունները: Ելնելով և հնչյունի արտասանական յուրահատկություններից՝ կարելի է արձանագրել, որ Բայազետի բարբառում այն քացվող երկբարբառային հնչյուն է:*

Բայազետի բարբառի է, և միավորները իրենց բաշխման յուրահատկություններով դրաբարյան է, և միավորների նկատմամբ հանդես են բերում կայուն և որոշակի համապատասխանություններ:

Առավել ընդհանուր համապատասխանությունները, որոնք դիտարկվել են և այլ բարբառներում, հետևյալներն են:

1. Միավանկ բառերի սկզբում, շեշտակիր այլ վանկերում դրաբարյան է – ի դիմաց որպես կանոն բարբառս ունի է պարզ ձայնավոր. էշ– էշ, էգ – էք, կէս – կէս, դէղ – դ՛էղ, մէջ – մէչ, աղուէս – ալվէզ, պէշ – պ՛էշ, գոմէշ – գ՛օմէշ, չէն – չէն, բրուէճ – բ՛ըվուէճ, վըէժ – վըըէժ, դէմ – դ՛էմ, երէկ – հ՛էրէկ, ձէթ – ձ՛էթ, չէկ – չէկ, տէր – տէր *և այլն:*

[297] Տե՛ս Ա.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 152:
[298] Նույն տեղում:
[299] Նշվ. աշխ., էջ 153:

2. Միավանկ բառերի սկզբում դրաբարյան ե - ի դիմաց առկա է յե. յեզ (եզն), յեփ (երբ), յեռ (եռ), յերք (երդ), յել (ել): Բարբառի խոսվածքների մեծ մասում ես դերանվան սկզբում յ - ն սովորականի պես թավ չի հնչում, այլ բավականին թուլլ է և նույնանում է բառամիջի ձայնորդ յ - ին՝ այդպիսով, թերևս, ապահովելով տարբերակումը յես (ինքնություն, անհատականություն, անձ) գոյականից: Իր արտասանությամբ ես դերանունը նույնանում է օժանդակ բայի ես ձևին, երբ վերջինս հաջորդում է ձայնավորով ավարտվող բառի. Դ'ույես գ'ըրե (Դու ես դրել), Տըղայես՝ գ'ընա (Տղա ես՝ գնա):

Ի դեպ, օժանդակ բայի եմ, ես, ենք, են ձևերի սկզբում յ - ի հավելում տեղի չի ունեցել, որովհետև դրանք երբեք արտահայտության սկզբում հանդես չեն գալիս և միշտ նախորդ բառի հետ սերտ են արտասանվում՝ հայտնվելով հնչաբառի վերջին վանկում: Նշենք, որ այս օրինաչափությունը առկա է և՛ այլ բարբառներում, և՛ գրական հայերենում:

3. Երկվանկ և բազմավանկ բառերի սկզբում, երբ ե - ն նախորդում է կա՛մ բ, կա՛մ պ, ռ բաղաձայններին, բ - ից առաջ դրաբարյան ե - ի դիմաց ունենք է, իսկ պ, ռ - ից առաջ՝ յե. էրազ (երազ), էրակ (երակ), էրամ (երամ), էրան (երան), էրնեկ (երանի), էրէվալ (երևալ), էթալ (երթալ), էրինջ (երինջ), էրկաթ (երկաթ), էրկանք (երկանք), էրկու (երկու) և յեղա (եղի), յեղունդ (եղունդն), յեռալ (եռալ), յեռսուն (երեսուն), յեղըռճիկ (եղիճ), յեղնիկ (եղնիկ):

Սակավ դեպքերում բառասկզբում կ, փ, լ բաղաձայններին նախորդող գրաբարյան ե - ին ևս համապատասխանում է պարզ է ձայնավոր. էկա (եկի), էփել (եփել), Հ'էլա (ելի): Մի շարք այլ դեպքերում ևս բառասկզբում տեղի է ունեցել Հ' - ի հավելում. Հ'էռթիս (երդիք), Հ'էրէկ (երէկ), Հ'էրկէն (երկայն), Հ'էրես կամ Հ'իրես (երես):

Բայագեսի բարբառում ևս եղբայր բառի դիմաց ունենք ա - ով սկսվող ձև՝ ախպէր, իսկ հնչյունափոխական գործոնների ազդեցությամբ առանձին դեպքերում բառասկզբում և բառամիջում ե - ի դիմաց դրսևորվում է ի. իրեք (երեք), Հ'իրկուն (երեկոյ),

ավլիրել (աւերել), կխսուր (սկեսուր), հիրես (երես), փիդել (փետել):

4. Շեշտակիր վանկում գրաբարյան ե - ին բայազետի բարբառում համապատասխանում է երկբարբառային ե. աներ, գ'իշեր, հ'ընդեր, թել, թեփ, գըռեխ, չերեփ, խեխճ, ծեր, կեր, կեխտ, խեղեղ, ճեղ, մենք, ներկ, տէրեվ, սիսեռ, ճ'ըմեռ, գ'ըրել, ծեփ, ամրեվ, ճ'եռ և այլն:

5. Անշեշտ վանկում գրաբարյան ե - ին որպես կանոն բարբառում համապատասխանում է պարզ է ձայնավոր. բ'էրան, գ'էրան, գ'էրի, գ'էտին, գ'էրէզման, բ'արէկամ, գ'էրընդի, խէզնել (հեծնել), նէրկել, չերեփ, տէնալ (տեսանել), փէսա և այլն:

6. Անշեշտ վանկում գրաբարյան ե - ին համապատասխանում է երկբարբառային և հնչյուն ղ, խ, ռ բաղաձայններից առաջ. դ'եղին, լեղի, խեխտել, խըրեղեն, սեղան, մեղավոր, պեղել, մեռնել, քեռի:

Ի դեպ, առանձին խոսվածքներում քեռի և ճ'եռ բառերում երկբարբառակերպի բացումն այնքան է խորացել, որ այդ բառերը հնչում են քյոռի, ճ'յոռ: Կարծում ենք՝ ե > յո փոփոխությունը նպաստել է հաջորդ ռ - ն:

Ընդհանուր դիրքային այս համապատասխանություններից զատ՝ գրաբարի և Բայազետի բարբառի միջև առկա է է, ե միավորների գործառության հնչյունական պայմանների համապատասխանություն ևս:

Հետաքրքրական է, որ այդ համապատասխանությունները գործում են Բայազետի բարբառի բարբառային ու փոխառյալ բառերում նույնպես: Այլ կերպ ասած՝ բարբառում առկա են գործուն օրինաչափություններ և ոչ թե միայն հինհայերենյան (կամ գրաբարյան) բառաշերտում դիտարկվող հնչյունական օրենքներ:

Ընդհանուր առմամբ դիտվում են հետևյալ համապատասխանությունները:

1. Եթե գրաբարյան արմատների շեշտակիր վանկում ս, պ, շ, ժ, ջ, ճ, ն բաղաձայններից առաջ ունենք է երկբարբառակերպ, ապա Բայազետի բարբառում նույն այդ դիրքերում ունենք է

պարզ ձայնավոր. այսպես՝ կէս, հավէս, դ՛էդ, տըրըննդէդ, ջըրէդ, գ՛օմէշ, փէշ, վէշ, լէշ, գէժ, բէժ, մէչ, փէչ, քէչ, բ՛ըփուէճ, պըլէճ, պէճ, քէն, ևռթէն, պըլէն *և այլն:*

Ինչպես գրաբարի թեքված ձևերում ս, պ, ն *բաղաձայններից առաջ կարող էր հանդես գալ* ե, *բարբառումս այդ բաղաձայններից առաջ թեքված ձևերում, երբեմն նաև՝ ուղիղ բառաձևերում դրսևորվում է երկբարբառային* ե. *օրինակ՝* գ՛ըրես, հյրես, մեղի, գ՛ըրեն, թիթեն, խըրեղեն:

2. Եթե գրաբարյան արմատների չեշտակիր վանկում ռ, լ, ղ, խ, փ, ք, ւ *բաղաձայններից առաջ ունենք և գրով արտահայտվող հնչյունական իրողություն, ապա բարբառումս նույն այդ դիրքերում (Բայազետի բարբառում* հ *- ով ավարտվող բառ չունենք, իսկ* ւ *- ի դիմաց ունենք* վ*) որպես կանոն ունենք երկբարբառային* ե. *այսպես՝* կեռ, ձ՛ըմեռ, ցեռ, թել, կըթել, դ՛եղ, բեղ, գ՛եղ, ճեղ, մեղ, մըժեխ, ղեխ, ժեխ, ռեխ, սիրեխ, ծեփ, չէրեփ, թեփ, ցեփ, կըլեփ, իրեք, թեք, ձ՛ևվ, թեվ, վիրեվ, բ՛արեվ *և այլն: Գրաբարյան թեքված ձևերի օրինակով բարբառումս ևս բայական -ք վերջավորությունից առաջ ունենք է. գ՛ըրէք, նըկարէ՛ք, էթում էք:*

Գրաբարյան բառաչերտից դուրս անհամապատասխանություն է առաջացել լ հնչյունից առաջ գտնվող դիրքում. գործառում են էլ համով ավարտվող մի շարք բառեր (դէլ, գըռնէլ, պէլ, կիտէլ, կիսէլ, մըթէլ), որոնցում հավանաբար առկա է անորոշ դերբայի - ել վերջավորությունից տարբերվելու մղումը: է ~ և հակադրությունը այստեղ ձեռք է բերել իմաստատարբերակիչ դեր ունենալու հնարավորություն՝ կիսել *(կես անել) -* կիսէլ *(ըմպելիք),* չինել *(կառուցել) -* չինէլ *(հագուստ): Նշենք նաև, որ գրաբարում էլ կային բառեր, որոնք ավարտվում էին -էլ կապակցությամբ, միայն թե բոլորն էլ փոխառյալ բառեր էին՝* Սամուէլ, Դանիէլ, Միքայէլ[300]*, այսինքն՝ արդեն գրաբարյան շրջանում հայերենի արտասանական բազան թույլ էր տալիս ունենալու բառավերջի -էլ կապակցություն: Այս հանգամանքը կարող է հավաստել լ - ի արտասանության մեջ կատարված որակական փոփոխությունը:*

---

[300] Տե՛ս Ս.Գյուլբուդաղյան. նշվ. աշխ., էջ 40:

3. Բայազետի բարբառում բառավերջի մյուս բաղաձայններից առաջ դրաբարի պես կարող են դրսևորվել և՛ է, և՛ ե միավորները. հ՛ընգեր, դ՛իշեր, խէր, տէր, բ՛եմ, ճեմ, դ՛էմ, ջէմ, բ՛էտ, խէտ, կետ, պետ, ձ՛էթ, կըռէթ, ցեթ, շէկ, հէրէկ, վառեկ, խէրվընեկ և այլն: Այդ դիրքերում է ~ ե հակադրությունը կարող է ունենալ իմաստառբերակիչ դեր. կեր (ուտելիք) - կէր (կար), մեր — մէր (մայր):

4. Եթե դրաբարյան բառավերջի բաղաձայնական խմբից առաջ արմատական բառերում բացառվում է է - ն, և միշտ դրսևորվում է ե, ապա բարբառումս այդ նույն դիրքում միշտ ունենք երկբարբառային ե. գ՛եստ, ըստեռճ, խելք, սերմ, ներկ, կեխտ, թեռթ, ծեռտ, բ՛եռթ և այլն: Բացառություն են այն բառերը, որոնցում նախավերջին բաղաձայնն է շ. թէշտ, ժէշտ, հէշտ, մէշկ, քաՙռէշտ:

Բայազետի բարբառում անեզական բառերում ևս բառավերջի բաղաձայնական խմբից առաջ ունենք ե, որը բնական է, քանի որ եզակիի ձևերը չեն դիտակցվում. օրինակ՝ ան՛նեսկ (անէծք), չենք, վերք, օրենք:

5. Գրաբարի պես Բայազետի բարբառի բառավերջում ևս բացակայում է ե - ն, բայց կարող է հանդես գալ է պարզ ձայնավոր. օրէ, երկըթէ, հառավոընէ, նանէ, մէրէ: Բարբառումս բառավերջում և դրսևորվում է երկրորդաբար, քերականական իրողությունների կրճատ ձևերում վերջավորության ը - ի անկման հետևանքով. յես գ՛ըրէր եմ - էնի գ՛ըրե (գ՛ըրեր ա), կե՛ (կե՛ր):

6. Բայազետի բարբառում շեշտազրկված է - ի դիմաց ի ունենք ոչ միայն գրաբարյան համապատասխանություններում, այլ նաև այ > է հնչյունափոխությամբ առաջացած ձևերում. կէս-կիսել, կիսատ, վէճ - վիճել, էշ — իշի, գրբ. անէծ - անիծել, դ՛էզ - դ՛իզի, սէր — սիրած, տէր — տիրոջ, ձ՛էթ — ձ՛իթի, այծ - էծ — իծի, գայլ - գ՛էլ - գ՛իլի, ծայր — ծէր - ծիրի: Հինհայերենյան բառաշերտի այլ բառերում, ինչպես նաև այդ բառաշերտից դուրս, շեշտազրկված է - ն սովորաբար պահպանվում է կամ սղվում. բ՛էտ - բ՛էտընալ, հ՛էրէկ — հ՛էրէկվա, հ՛ավէս — հ՛ավէսի, գ՛օմէշ -

գ՛օմշի, փէշ - փէշի, մէչ – մըչի, փէջ - փէջի, ձայն – ձ՛էն – ձ՛էնի, սայլ – սել – սելի և այլն:

Շեշտազրկված ե - ն մեկ դեպքում դառնում է ի՝ ավեր - ավիրել (բարբառումս գրաբարյան դեւ-ի դիմաց ունենք դ՛էվ, ուր է - ն օրինաչափորեն դառնում է ի՝ դ՛իվի): Եթե գրաբարում շեշտազրկված ե - ն սղվում էր միայն ո, ղ բաղաձայններից առաջ, ապա բարբառիս շեշտազրկված ե երկբարբառային հնչյունը սղվում է նաև այլ բաղաձայններից առաջ. ասեղ - ասխան, գրբ. աղեղն - աննըղնակ, գրբ. ծիծեռն – ծիծըռնակ, գրբ. թիթեռն – թիթըռնակ, ճ՛ըմեռ – ճ՛ըմռան, հ՛ավել – հ՛ավըլնալ, հ՛իրես – հ՛իրսի, ցօրեն – ցօրնի: Ինչպես գրաբարում, բարբառում ևս ը - ից առաջ շեշտազրկվող ե - ի անկում տեղի չի ունենում. ականեր - ակաների, դ՛ըշեր - դ՛ըշերվա, դ՛ըշերախառը, հ՛ընդեր – հ՛ընդերի, հ՛ընդերակոխ:

Այս ամենից զատ՝ Բայազետի բարբառում գործում է մի օրինաչափություն, որը գրաբարում տեսանելի չէ: Այստեղ բառամիջի անշեշտ վանկում որպես կանոն ունենք է պարզ ձայնավոր (բ՛էրան, գ՛էրի, թէչի, լէփուկ, խէզնել, խէվխըվալ, ճէվալ, մէրան, շէրեփ, պէնալ, սէլաֆ, տէրեվ, տէքըր, ցէմենդ, ցէրէկ, փէսայ, փէքօլ, քէնի), և շեշտակիր վանկի երկբարբառային ե - ն, բառի աճման, հատկապես բայի թեքման ժամանակ շեշտից զրկվելով, կարող է վերածվել է պարզ ձայնավորի. օրինակ՝ հ՛ավել – հ՛ավէլի, խելք – խէլօք, բ՛եր - բ՛էրել, բ՛էրի, ծեփ - ծէփել, կեր – կէրավ, տես – տէսա, գ՛ըրեց - գ՛ըրէցի, ուտել – ուտէլու:

Անկախ վանկի անշեշտ կամ շեշտակիր և բառաճևի ուղիղ կամ թեք լինելուց՝ միշտ երկբարբառային ե ունենք ո, ղ, ս բաղաձայններից առաջ. օրինակ՝ ճ՛եռ, բ՛եռթ, դ՛եռասան, խեռը, կեռել, ճեռօք, մեռնել, քեռի, տեղ, մեղավոր, գեղ, դ՛եղին, լեղի, նեղել, պեղել, սեղան, փեղամ, դեխ, դ՛եխծ, թեխս, ժեխ, կեխծավոր, նեխել և այլն:

Այսպիսով, Բայազետի բարբառում երկբարբառային ե հնչյունի դրսևորման համար իրրև նախապայման հանդես է գալիս երկու հանգամանք.

ա) հաջորդող ռ, ղ կամ խ բաղաձայններ. սա բացարձակ նախապայման է, և այս դեպքում է ~ և գուլգից հնարավոր է միայն և - ն.

բ) շեշտակիր վանկ. սա հարաբերական նախապայման է, և այս դեպքում է - ի կամ և - ի դրսևորումը պայմանավորվում է լրացուցիչ գործոններով:

Եթե շեշտակիր վանկում է - ն և - ի հետ գոնվում է տարբեր հարաբերությունների մեջ (լրացուցիչ բաշխում, հնչույթային հակադրություն), ապա անշեշտ վանկում առկա է միայն լրացուցիչ բաշխման հարաբերություն. այս դեպքում է պարզ ձայնավորը հանդես է գալիս բոլոր այն դեպքերում, երբ հաջորդող բաղաձայնը ղ, խ կամ ռ չէ:

Նշենք նաև, որ ածանցման, բառաբարդման կամ անվանական թեքման դեպքերում և - ն կարող է չհնչյունափոխվել՝ այդպիսով հայտնվելով անշեշտ վանկում. օրինակ՝ կեր – կերկոխ, ցեփ - ցեփավոր, թեվ – թեվի, թեվեր, հընդեր – հընդերական, գ՛իշեր - գ՛ըշերախառը, բ՛արեվ - բ՛արեվմընա, բայց նաև՝ ծեփ - ծէփոն, պետ – պէտական, ցեթ – ցէթան:

4. Գրաբարյան է, ե գրերի հնչյունական արժեքը

Գրաբարյան է, և գրերի հնչյունական արժեքը որոշելու համար հարկ է դրանց ուղղագրության և բաշխման օրինաչափությունների ուսումնասիրությամբ ստացված արդյունքները համադրել բացահայտված այն իրողություններին, որոնք հատուկ են բոլոր կամ գրեթե բոլոր բարբառներին, ունեն լայն ընդգրկում և կամ նույնիսկ դրսևորվում են առանձին բարբառներում:

Եվ այսպես, գրաբարում երևան են գալիս հետևյալ ընդհանուր իրողությունները ու օրինաչափությունները.

ա) է, և տառերը տարբեր հնչույթներ են ներկայացնում շեշտակիր փակ վանկում. մյուս դիրքերում հակադրությունը չեզոքանում է, և ձայնավորանախորդ ու բառավերջի դիրքերից բացի՝ օրինաչափորեն հանդես է գալիս միայն և տառը.

բ) է գիրը ակնհայտորեն ներկայացնում է ei արտասանությամբ երկբարբառակերպ, իսկ ե գիրը ներկայացնում է է - ից տարբեր հնչյունական իրողություն.

գ) արմատական բառերի վերջում է չի կարող հանդես գալ երկու բաղաձայններից առաջ (փակվող այ, ոյ երկբարբառներից հետո ևս բառավերջում բաղաձայնական կապակցությունը բացառված է, մինչդեռ, օրինակ, բացվող ևա երկբարբառից հետո այդ հնարավոր է՝ նեաղդ, լեաղդ), իսկ ե - ն այդ դիրքում դրսևորվում է, որը վկայում է, որ փակվող արտասանությամբ է - ի համեմատությամբ ե - ն ուներ բաց կամ բացվող արտասանություն.

դ) չեշտակիր վանկում առանձին դեպքերում թե՛ է - ի, թե՛ ե - ի դրսևորումները պայմանավորված են հաջորդող բաղաձայնի որակով. քմային երանգ ունեցող ժ, չ, ջ, ճ առաջնալեզվայիններն իրենցից առաջ ընդունում են միայն է, իսկ այն հնչյունները, որոնց արտաբերությունը բնութագրվում է լեզվի առջևի մասի իջեցումով կամ լեզվի մեջքի խորը դոգավորմամբ (օրինակ՝ ղ, խ, ո բաղաձայնները), իրենցից առաջ ընդունում են միայն ե.

ե) բառամիջի անշեշտ վանկի ե - ն անտարբեր է. հաջորդող բաղաձայնի որակի հանդեպ:

Բարբառներում դրսևորվող հիմնական օրինաչափությունները են.

ա) գրաբարյան է ~ ե հակադրության արտացոլում միայն չեշտակիր վանկում.

բ) է երկբարբառակերպի դիմաց գրեթե միշտ e պարզ ձայնավորի առկայություն.

գ) չեշտակիր վանկում գրաբարյան ե - ի դիմաց հաճախ e պարզ ձայնավորից տարբեր հնչյունական իրողության առկայություն.

դ) ոչ չեշտակիր վանկերում հնչյունափոխական գործոնների բացակայության դեպքում գրաբարյան ե - ի դիմաց e պարզ ձայնավորի առկայություն.

ե) բարբառներում, որպես կանոն, անշեշտ վանկի՝ գրաբարյան ե - ի դիմաց հանդես եկող հնչյունից տարբերվող հնչյունական իրողության դրսևորում չեշտակիր վանկում (գրաբարյան ե - ի

դիմաց), այսինքն՝ դրաբարյան շեշտակիր և անշեշտ վանկերի և միավորների դիմաց բարբառներում հնչյունական տարբեր իրողությունների առկայությունն.

ե) միավանկ բառերի սկզբում ե - յից առաջ յ - ի հավելում.

զ) երկվանկ և բազմավանկ բառերի սկզբում ե - յից առաջ յ - ի հավելում միայն ղ, ռ բաղաձայններից առաջ. այլ դեպքերում նման հավելման բացակայությունն.

է) ղ, ռ բաղաձայններից առաջ ավելի բաց հնչյունի դրսևորման միտում.

ը) մի շարք բարբառներում դրաբարյան շեշտակիր վանկի ե - ի դիմաց երկբարբառային ie արտասանության առկայությունն.

թ) Բայազետի բարբառում ոչ միայն «է երկբարբառակերպ ~ է պարզ ձայնավոր» և «դրաբարյան ե ~ բարբառային ե երկբարբառակերպ» ճշգրիտ համապատասխանության առկայությունն, այլ նաև դրաբարյան է ~ և հակադրության դիմաց բարբառային է ~ և հակադրության դրսևորման օրինաչափականությունն և դրսևորման պայմանների նույնությունն:

Բերված փաստերի զուգադրումը թույլ է տալիս բացահայտել դրաբարյան է ~ և հակադրության բուն էությունը և այդ գրեբով արտահայտվող հնչյունական իրողությունների արժեքները:

Նախ և առաջ ակնհայտ է, որ ինչպես հին հայերենում ընդհանրապես, այնպես էլ դրաբարում է ~ և հակադրություն եղել է միայն շեշտակիր վանկում: Այդ վանկի թե՛ է - ն, թե՛ և - ն արտասանությամբ տարբերվել են բառամիջի անշեշտ ե ձայնավորից, որը, սակայն, գրության մեջ արտահայտվում էր և տառով՝ հնչույթաբանորեն չտարբերվելով շեշտակիր և - յից: Միայն այն հանգամանքը, որ շեշտից զրկվող է - ն հնչյունափոխվում էր, բավական է պնդելու, որ անշեշտ ե - ն չէր կարող նույնական լինել շեշտակիր է - ին: Ինչ վերաբերում է և - ին, ապա և՛ այն հանգամանքը, որ շեշտակիր վանկում նրա դրսևորումը պայմանավորված էր հնչյունական միջավայրով (մինչդեռ անշեշտ վանկի և - ն անտարբեր էր հաջորդող բաղաձայնի որակի հանդեպ), և՛ այն, որ բարբառներում դրաբարյան անշեշտ վանկի և - ին համապատասխանում է պարզ ձայնավոր, առավելաբար՝ ե (մինչդեռ բարբառներում շեշտակիր վանկում հաճախ ե պարզ

ձայնավորից տարբեր, նաև երկբարբառային հնչյունական իրողություն է դրսևորվում), գալիս են հավասարելու, որ անշեշտ վանկի e - ն և շեշտակիր ե - ն նույնպես չէին կարող նույնական լինել:

Գրաբարի և Բայազետի բարբառի համապատասխանությունների տրամաբանությունը ևս հուշում է, որ գրաբարում շեշտակիր վանկի ե - ն չէր կարող բոլոր դեպքերում նույնական լինել անշեշտ վանկի ե - ի հետ: Միաժամանակ, փոխառյալ բառերում անշեշտ վանկի սպասվող է - ի դիմաց գրաբարում ունենք ե. օրինակ՝ մեքենայ, հռետոր, Հոմերոս, Զենոն (հուն.), դեսպան, դեհկան, հրեշտակ (պհլ.): Այդ կարող է նշանակել, որ եթե շեշտակիր վանկում է - ն և ե - ն տարբեր իրողություններ էին, ապա անշեշտ վանկում չկար է ~ ե տարբերակում: Եվ այստեղ տեղին է կրկին հիշատակել Հր.Աճառյանի այն պնդումը, թե հին հայերենն ուներ բաց ե և փակ է, իսկ միջակ է (ինչպիսին ունեն արդի գրական հայերենը և բարբառների մեծ մասը) չկար հին հայերենում [301]: Նշանակում է՝ գրաբարյան թե՛ է - ն, թե՛ ե - ն տարբեր էին արդի հայերենի e պարզ ձայնավորից: Միայն թե, մեր կարծիքով, այս պնդումը ճիշտ էր շեշտակիր վանկի համար, որտեղ է ~ ե հակադրությունը պայմանավորված էր ինչպես հնչյունական միջավայրով, այնպես էլ ծագումնաբանական գործոններով ու իմաստատարբերակման պահանջով: Ինչ վերաբերում է անշեշտ վանկին, ապա հենց այստեղ էլ դրսևորվում էր e պարզ ձայնավորը (միջակ է), որը, սակայն, չէր հակադրվում «փակ» է - ին կամ «բաց» ե - ին, երկուսի ազատ տարբերակն էր և երբեմն էլ առաջանում էր իբրև դրանց հնչյունափոխության հետևանք (աղուէս - աղուեսու, տես — տեսանել): Հետևաբար՝ անշեշտ վանկի պարզ e ձայնավորը առանձին տառով ներկայացնելու հարկ չկար, և միշտ գրվում էր ե:

Այսպիսով, գրաբարյան է և ե տառերը ներկայացնում էին մերձավոր հնչյունական իրողություններ: Է տառը գրվում էր անհրաժեշտ դեպքերում, երբ կարիք կար տարբերվելու ե - ից, կամ քերականությունն ու հնչաշղթան էին այդ պահանջում: Իսկ ե գիրը ներկայացնում էր ընդհանուր առմամբ է - ից զանա-

[301] Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, էջ 117-118:

զանվող հնչյունական իրողություն, որը տարբեր արժեքներ ուներ շեշտակիր ու անշեշտ վանկերում:

Է գրի հնչյունական արժեքը գրաբարում, ինչպես արդեն նշել ենք, հայ լեզվաբանության մեջ բավական հիմնավոր ճշգրտված է. այն իրոք ներկայացնում էր երկբարբառակերպ մի հնչյուն՝ ei արտասանությամբ: Եղած փաստարկներին կարող ենք ավելացնել հնչյունաբանական ևս երկու հիմնավորում.

ա) գրաբարյան արմատավերջում յ - ով ավարտվող երկբարբառներին (այ, ոյ) բաղաձայնական խումբ հաջորդել չէր կարող. այդ նույն հատկությունն ուներ և է - ն. այ, ոյ, է (ei) կազմությունների երկրորդ բաղադրիչը՝ յ - ն, իր փակ արտաբերությամբ թույլ չէր տալիս բաղաձայնական խմբի արտասանություն.

բ) ինչպես այ, ոյ երկբարբառներին, այնպես էլ է - ին գրաբարում ղ հաջորդել չէր կարող. հայերենին հատուկ չէ բառավերջի յղ խումբը, փոխարենը գործառում է փափուկ լ - ով բաղադրված յլ խումբը. այլ, բոյլ, գայլ, ծոյլ, Միքայէլ, Իսրայէլ (լեզվաբանական գրականության մեջ նշվում է[302], որ նախապես նման բառերում գրվել է յղ՝ այղ, գայղ և այլն. այդ կարող է նշանակել, որ կամ նման բառերում ղ - ն ունեցել է լ - ի արժեք, կամ արտասանական անհարմարության հետևանքով նախնական ղ - ն հետագայում փոխարինվել է լ - ով):

Անդրադառնանք շեշտակիր վանկի՝ ե գրով արտահայտվող միավորի հնչյունական արժեքին: Արդեն նշել ենք, որ շեշտակիր վանկում է և ե միավորները կազմում էին հակադրական զույգ. դեպքերի մի մասում դրանք լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ էին, իսկ մյուս մասում հակադրությունն ուներ իմաստատարբերակիչ արժեք: Հասկանալի է, որ բացառվում են կարճի և երկարի, բացի և փակի հակադրությունները: Բացառվում է նաև երկբարբառակերպի և պարզ ձայնավորի հակադրությունը, որովհետև, ինչպես տեսանք, պարզ ե ձայնավոր հանդես էր գալիս անշեշտ վանկում, և այն նույնական չէր շեշտակիր վանկի ե - ին, այսինքն՝ շեշտակիր վանկի ե - ն պարզ ձայնավոր չէր: Մնում է հավաստել (այդ հուշում է նաև տրամաբանությունը), որ շեշտակիր վանկում է - ն և ե - ն նույն մակարդակի միա-

[302] Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 178, 357:

վորներ էին, երկուսն էլ՝ երկբարբառակերպներ, և առկա էր է ~ և երկբարբառակերպների հակադրություն:

Ակնհայտ է, որ է (ei) երկբարբառակերպը սկսվում էր համեմատաբար բաց հնչյունով և ավարտվում փակ հնչյունով (լեզվաբանության մեջ նման երկբարբառները կոչվում են իջնող): Քանի որ առկա է բաց արտասանությունից անցում փակի, մենք այդ հնչյունական իրողությունը կկոչենք փակվող երկբարբառակերպ: Հիշենք, որ չեշտակիր վանկում այս երկբարբառակերպի դրսևորումը դեպքերի մի մասում ուղղակիորեն պայմանավորված էր հաջորդող բաղաձայնի արտաբերական առանձնահատկությամբ, այն է՝ լեզվի ամբողջական, առջևի և միջին մասերի միաժամանակյա բարձրացմամբ դեպի կոշտ քիմքը (նման փակ արտասանություն ունեն ժ, շ, ջ, ճ, չ բաղաձայնները): Իհարկե, այս բաղաձայնները պայմանավորում են երկբարբառների արտասանության՝ անմիջապես իրենց նախորդող հատվածի առավել փակ արտասանություն, որի հետևանքով էլ ստացվում է փակվող երկբարբառակերպ: Բնականաբար ասվածը վերաբերում է միայն այս դիրքերին. այլ դեպքերում, երբ հնարավոր են և՛ է ~ ի, և՛ և ~ ի դրսևորումները, փակվող է երկբարբառակերպի հանդես գալը պայմանավորված է հնչույթաբանական գործոններով, իմաստատարբերակման պահանջով:

Շեշտակիր վանկում և երկբարբառակերպի դրսևորումը նույնպես դեպքերի մի մասում ուղղակիորեն պայմանավորված էր հաջորդող բաղաձայնի արտաբերական առանձնահատկությամբ, այն է՝ լեզվի ծայրի իջեցումով կամ միջին մասում ձևավորված խորը գոգավորությամբ (նման բաց արտասանություն ունեն, օրինակ, ղ, խ, ռ բաղաձայնները): Հասկանալի է, որ երկբարբառակերպի արտասանությունը անմիջապես բաղաձայնից առաջ պետք է ավելի բաց լիներ, այսինքն՝ երկբարբառակերպի արտասանության սկիզբը չէր կարող նույնքան կամ ավելի բաց լինել, որքան ավարտն էր. հետևաբար և ~ ն բացվող երկբարբառակերպ էր (լեզվաբանության մեջ այսպիսի երկբարբառները կոչվում են բարձրացող): Եվ քանի որ e ~ յ փակ միայն ի ձայնավորն է, ուրեմն և երկբարբառակերպը սկսվում էր ի ~ յին մոտ արտասանությամբ և ավարտվում e պարզ ձայնավորին մոտ կամ

նրանից ավելի բաց արտասանությամբ: Չի բացառվում նաև, որ և երկբարբառակերպը կարող էր սկսվել e պարզ ձայնավորին մոտ արտասանությամբ և ավարտվել նույն այդ ձայնավորի ավելի բաց արտասանությամբ: Հնարավոր է, որ հինհայերենյան շրջանում տարբեր տարածքներում գործածել են և երկբարբառակերպի այս երկու տարբերակներն էլ (այդ մասին կխոսվի իր տեղում՝ օգտվելով ժամանակակից հայերենի բարբառների ընձեռած նյութից):

Ինչևէ, թերևս կարելի է ասել, որ հին հայերենն ուներ փակվող է և բացվող և երկբարբառակերպներ, և գրաբարյան շեշտակիր վանկում է և և գրերով արտահայտվող հակադրությունը փակվող և բացվող երկբարբառակերպների հակադրությունն էր:

Ասվածը հավաստելու համար բերենք ևս մեկ - երկու փաստարկ: Հայտնի է, որ ձայնավորից առաջ է, և գրերն ունեին տարբեր արժեքներ. է - ն առանձին վանկ էր ներկայացնում (էակ, էանց), իսկ և - ն հաջորդ ձայնավորի հետ հանդես էր գալիս նույն վանկում՝ կազմելով երկբարբառ կամ եռաբարբառ (որդեակ, արդեաւք): Է.Աղայանը նշում է, որ երկբարբառի բաղադրիչի կամ բաղաձայնի դերում ի - ն վերածվում է յ - ի. «եա երկբարբառի ու եայ, եաւ կապակցությունների մեջ և գրով արտահայտվել է յ ձայնորդը. իսկ այդ նշանակում է, թե դա լոկ ուղղագրական նշանակություն ունի: Մեսրոպյան ուղղագրության մեջ յ - ն բաղաձայնից հետո գրվել չէր կարող, և որովհետև եա, եաւ, եայ միշտ հաջորդում էին բաղաձայնի, ապա՝ նա պետք է փոխարինվեր մի որևէ տառով: Առավել նպատակահարմար էր այդ դեպքում գործածել և, քան թողնել ի, որովհետև վերջինս ձայնավորից առաջ գրվելու դեպքում միշտ էլ կարդացվում էր իբրև վանկարար ձայնավոր»[303]: Դիտարկումը հետաքրքրական է, բայց մեկնաբանությունը՝ անհամոզիչ. պարզվում է՝ և - ն այս դեպքում փոխարինող «մի որևէ տառ» է, որի գրությունը ավելի նպատակահարմար է, քան ի տառինը: Մինչդեռ երևույթը կարելի է բացատրել՝ ճիշտ պատկերացնելով շեշտակիր վանկում և գրով արտահայտվող հնչյունական իրողության էությունը: Հասկանալի է, որ է երկբարբառակերպը և ի ձայնավորը հաջորդ

[303] Նշվ. աշխ., էջ 91:

ձայնավորի հետ իսկապես չէին կարող լինել նույն վանկում, որովհետև է - ն ի - ավերջ էր, վանկվող, իսկ ի - ն էլ վանկ էր, ուստի դրանց և հաջորդ ձայնավորի միջև անպայման վանկասահման էր անցնելու: Եթե և - ն լիներ պարզ ձայնավոր, ապա նրա և հաջորդ ձայնավորի միջև էլ պետք է անցներ վանկասահման. չէ՞ որ արդի գրական հայերենի է պարզ ձայնավորը հաջորդ ձայնավորի հետ նույն վանկում չէ՝ էակ, մանրէաբան: Մնում է ընդունել, որ գրաբարում ձայնավորից առաջ գրվող և - ն ներկայացնում էր բացվող երկբարբառակերպ՝ ie սերտ արտասանությամբ, որի e տարրը, առավել բացվելով, հնչտությամբ ձուլվում էր հաջորդ ա - ին, իսկ i տարրը թուլ, միջին մի իրողություն էր ի ձայնավորի և յ բաղաձայնի միջև, որը և թուլ էր տալիս ձևավորելու երկբարբառ կամ եռաբարբառ: Այսպիսով, ձայնավորից առաջ և - ի գրությունը գրաբարում պայմանավորված էր այդ գրի հնչյունական արժեքով և ոչ թե հետևանք էր ավելի հարմար տարբերակի բացակայության: Որ եա երկբարբառի մեջ առաջին բաղադրիչը և գրով արտահայտվող և յ - ի վերածված ի չէր, երևում է նաև չեչոտափոխական ու պատմական հնչյունափոխություններից. ատեան - ատենի, դղեակ - դղեկի, ցորեան - ցորեն, բարեաւ - բարեւ, սեաւ - սեւ: Այս մասին վկայում է և Հ. Մուրադյանը՝ գրելով. «Հին եա - ի արտասանության մեջ առաջին բաղադրիչը ավելի շուտ ընկալվում է որպես e - ի և i - ի միջին արտաբերությամբ մի հնչյուն: ...նրա առաջին բաղադրիչը, հիմնական վանկարարը չլինելով հանդերձ, այնուամենայնիվ ունեցել է e ձայնավորի արտասանությանը մոտ արժեք, որի պատճառով էլ գրության մեջ արտահայտվել է և տառով»[304]:

Բերված փաստարկները կարող են անբավարար թվալ, և կարող է հարց ծագել, թե ինչո՞ւ, այնուամենայնիվ, չէր կարող է - ն լինել միայն չեչտակիր վանկում դրսևորվող երկբարբառակերպ, իսկ և - ն՝ և՛ անչեչտ, և՛ չեչտակիր վանկերում դրսևորվող պարզ ձայնավոր: Հարցին պատասխանելու համար ընդունենք, թե չեչտակիր վանկում և - ն պարզ ձայնավոր էր. այդ դեպքում անհասկանալի է մնում, թե ինչու այդ ձայնավորի համար պետք է անհնար լիներ չ, ժ, ճ, ջ բաղաձայններից առաջ հանդես գալը,

[304] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 143:

երբ այդ դիրքերում թե՛ ավելի փակ ի, թե՛ ավելի բաց ա, թե՛ այլ կարգի ձայնավորների համար սահմանափակում չկար, օրինակ՝ ակիչ, աւիչ, բաշ, բաժ, գիժ, բիժ, աղիճ, արճիճ, բարգաւաճ, գաճաճ, աջ, աղիջ, գաջ, լիճ, ալոճ, ալոջ, բողբոջ, գուճ, դրուժ և այլն: Անտարակուսելի է, որ նշված բաղաձայններից առաջ ոչինչ չէր խանգարում պարզ e ձայնավորի դրսևորմանը (ինչպես որ էր դրաբարյան անշեշտ վանկում և է արդի հայերենում): Ուրեմն շեշտակիր վանկի և - ն պարզ ձայնավոր չէր, այլ բացվող երկբարբառակերպ, որի դրսևորումը նշված դիրքերում իսկապես անհնար էր, որովհետև դրանցում բաղաձայնը իրենից առաջ պահանջում էր ոչ թե բացվող, այլ փակվող երկբարբառակերպ: Եվ, վերջապես, ինչպես ղ, խ, ւ բաղաձայններն էին իրենցից առաջ բացառում փակվող է երկբարբառակերպի դրսևորումը, այնպես էլ շ, ժ, ճ, ջ բաղաձայններն էին իրենցից առաջ բացառում բացվող և երկբարբառակերպի դրսևորումը:

Այսպիսով՝ դրաբարը շեշտակիր վանկում ուներ է փակվող և և բացվող երկբարբառակերպներ, իսկ անշեշտ վանկում՝ դրանց տարբերության չեզոքացման առկայությամբ դրսևորվող գերհնչույթ՝ e պարզ ձայնավոր:

Այս իրողությունից բխում է հետևյալ օրինաչափությունը. միավանկ բառերի սկզբում և շեշտակիր վանկում դրաբարյան և - ն ուներ երկբարբառային արտասանություն, բազմավանկ բառերի սկզբում, ինչպես և բառամիջի անշեշտ վանկերում և - ն պարզ ձայնավոր էր:

5. է և ե երկբարբառակերպների հնչյունափոխությունը հայերենում

5.1. է, ե երկբարբառակերպների՝ շեշտի հետ կապված հնչյունափոխությունը

Քանի որ գրաբարում է, և երկբարբառակերպները հանդես էին գալիս միայն շեշտակիր վանկում, ուրեմն շեշտից զրկվելով՝ երկուսն էլ պետք է հնչյունափոխվեին: Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ շեշտազրկված է - ն սովորաբար դառնում էր ի, երբեմն էլ՝ և (պարզ ձայնավոր): Նշվում է նաև, որ

գրաբարյան չեշտազրկված ե - ն դեւ բառի դեպքում, իբրև բացառություն, ի էր դառնում, ղ, ռ բաղաձայններից առաջ սղվում էր, իսկ մնացած դեպքերում փոփոխության չէր ենթարկվում: Համակարծիք ենք Է.Աղայանի հետ, որ պարսկերենից փոխառված դեւ ձևում սպասելի էւ կապակցությունը «դարձել է եւ, որովհետև հայերենը չուներ էւ կապակցությունը»[305]: Կարծում ենք, բանավոր հայերենը վերցրել է հենց դէւ ձևը, որի հետևանքով էլ այդ բառում տեղի է ունեցել է > ի հնչյունափոխություն: Այսպիսով, գրաբարյան դեւ ձևում և գրով և երկբարբառակերպ չի ներկայանում: Ի դեպ, Բայազետի բարբառում այդ բառն արտասանվում է դ'էվ:

Ըստ երևույթին՝ չեշտազրկված ե երկբարբառակերպը գրաբարում սովորաբար վերածվում էր e պարզ ձայնավորի: Նման ենթադրության համար հիմք տալիս է, օրինակ, Բայազետի բարբառը. ասել - ասէլիք, գ'ըրել - գ'ըրէլու, խելք - խէլօք, պետ - պէտական, կեր - կէրա, տես - տէսա, ներկ - նէրկել, ծեփ - ծէփոն: Սակայն բարբառում շատ այլ դեպքերում չեշտազրկված ե - ն որևէ փոփոխության չի ենթարկվում. աներ - անների, թել - թելել, թելի, թեք - թեքութուն, սեվ - սեվնալ, տեղ - տեղական և այլն: Հնարավոր է՝ գրաբարում ևս որոշ դեպքերում չեշտազրկված երկբարբառակերպի պարզեցում տեղի չի ունեցել:

Հետաքրքրական իրողություն է ղ, ռ բաղաձայններից առաջ չեշտազրկված և երկբարբառակերպի անկումը (թիթեղն - թիթղան, թիթեռն - թիթռան): Ըստ երևույթին՝ ղ, ռ բաղաձայնները թույլ չեն տալիս չեշտազրկման հետևանքով իրենցից առաջ ավելի փակ հնչյունի դրսևորում, քան նախկինն էր: Ահա թե ինչու բացվող և երկբարբառակերպի դիմաց չեշտազրկման հետևանքով առաջին շարքի ձայնավոր չունենալու մղումով է թերևս, որ նշված դեպքերում տեղի է ունենում և երկբարբառակերպի անկում: Միևնույն ռ - ից առաջացած բ - ն չի խանգարում երկբարբառակերպի վերածմանը պարզ ձայնավորի. ձմեռն - ձմերան, եղեռն - եղերան: Բայազետի բարբառում, չնայած անշեշտ վանկում ղ, խ, ռ բաղաձայններից առաջ և - ն միշտ պահ-

[305] Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 137:

պանում է իր երկբարբառային արտասանությունը (սեղան, դեղին, նեխել, կեռել, ձեռագիր, ճեռօք, վեռատլյօտ), առանձին դեպքերում տեղի է ունենում միավանկ բառի ե - ի անկում. կեխտ – կըխտօտել, գրբ. սեղմ – սըխմել, գրկ. մեխ – մըխ, մըխել, տեռ – տըռել, ցեռ – ցըռել, գրբ. քերթ – քըռթել, ճեղ - ճըղել:

Ղ, ռ ձայնորդներից առաջ ե - ի սղվելու վերաբերյալ Հ.Մուրադյանը ենթադրում է, թե «այդ ե - ն, հատկապես ղ - ից առաջ, նախապես ունեցել է i – ի արժեք», ապա հանգում է այն մտքին, թե «նշված դիրքում ե - ն առաջացել է i - ից՝ նախապատմական շրջանում, միաժամանակ պահպանելով i - ի հնչյունափոխական հատկությունը»[306]: Եթե նույնիսկ ճշմարիտ լինի լեզվաբանի այս ենթադրությունը, ապա այն դարձյալ գալիս է հավաստելու, որ ղ, ռ բաղաձայնները իրենցից առաջ պայմանավորում են ըստ հնարավորին բաց արտասանություն ունեցող ձայնավոր. այդ է վկայում նախնական փակ i - ի անցումը ավելի բաց ե - ի: Ի դեպ, Գր. Ղափանցյանը ևս նկատել է, որ «հին «i» ձայնավորը այդ հետնալեզվային «ղ»-ից առաջ մեծ մասամբ դառնում է «ե» (Ներոս, Բարսեղ, ասեղ և նման բառերի մեջ»[307]:

Հայերենում ղ, ռ բաղաձայններից առաջ ըստ հնարավորին բաց հնչյունի դրսևորման միտումն արտահայտվում է տարբեր եղանակներով: Ահա են բազում օրինակներ, որոնցում կարելի է տեսնել ղ, ռ բաղաձայններից առաջ առավել բաց արտասանության ձգտումով ե - ի վերածում ա ձայնավորի: Նման օրինակներ նախ և առաջ վկայում է հին հայերենը. եղտիւր - աղտիւր, եղապ - աղապ, եղամայ - աղիմայ, եղիճ - աղիճ: Այդ կարգի դեպքերը շատ են բարբառներում. գրբ. եղունդն – Հճ. Ա՛ղունդ, գրբ. եղջիւր - Ակն. ախջիր, գրբ. բեռն, սխտեռն – Մլթ. փառ, սըսառ, գրբ. ձեռն – Հճ. ծառ, Սեբ. ձ՛Ա՛ռք, Պլ. ձառք, Բ. ձ՛Ա՛ռ, գրբ. քեռի – Խրբ., Բ. քԱ՛ռի և այլն: Այն, որ ղ, ռ բաղաձայնները պայմանավորում են նախորդող համեմատաբար բաց հնչյունական իրո-

306 Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 75:
307 Գր.Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Ե., 1961, էջ 243:

դուբյուն, ակնհայտորեն երևան են հանում Ագուլիսի, Զեյթունի, Հաճընի բարբառները: Ագուլիսի բարբառում չեշտակիր վանկում ե - ի դիմաց առկա է ի, բայց եթե հաջորդող բաղաձայնն է ռ կամ ղ, ապա ե - ի դիմաց դրսևորվում է ի - ի համեմատ ավելի բաց հնչյուն՝ e պարզ ձայնավոր. Զեյթունի և Հաճընի բարբառներում չեշտակիր վանկում ե - ի դիմաց կարող է դրսևորվել նաև ի, բայց ղ, խ, ռ բաղաձայններից առաջ այդ հնարավորությունը բացառվում է, և ե - ն կամ պահպանվում է, կամ վերածվում է - ի: Երևույթը նկատել է նաև Հ.Մուրադյանը: Նա նշում է, որ Սյունիք - Արցախ տարածքի որոշ խոսվածքներում այլ բաղաձայններից առաջ դրսևորվող ե > ի հնչյունափոխությունը ղ, խ, ր, ռ բաղաձայններից առաջ կանխվում է[308]:

Այս նույն միտումով պետք է բացատրել նաև բարբառների մեծ մասում եղբայր բառի դիմաց ա - ով սկսվող ձևերի առկայությունը. Ակն. Ասլ. Պլ. Սեբ. ախբար, Ագլ. Ախց. Կր. Ննխ. ախպար, Ալշ. Երև. Ղրբ. Մշ. Ջղ. Վն. ախպէր, Բ. ախպէր և այլն: Աճառյանը գտնում է, որ այս բոլոր ձևերը ծագում են նախնական *աղբայր ձևից, որը կարող է մեկնաբանվել կամ իբրև դրաբարին ժամանակակից բարբառային մի ձև, կամ իբրև եղբայր ձևից հաջորդ ա - ի առնմանությամբ ստացված մի ձև[309]: Հավանական երկու դեպքերում էլ, մեր կարծիքով, չի բացառվում նաև ղ - ի ազդեցությունը:

Ասվածը ոչ միայն հաստատում է նախորդ ձայնավորի վրա ղ, ռ - ի ունեցած ազդեցությունը, այլ նաև մի լրացուցիչ անգամ ենթադրել տալիս, որ դրաբարում այդ դիրքի ե միավորը չէր կարող նույնական լինել անշեշտ վանկի (ոչ ղ, ռ -ին նախորդող դիրքի) ե - ին:

5.2. է, ե երկբարբառակերպների պատմական հնչյունափոխությունը

Հայտնի է, որ հայերենի զարգացման ընթացքում հինհայերենյան է - ն և ե - ն ենթարկվել են պատմական հնչյունափոխության: Լեզվաբաններն արձանագրել են, որ երկբարբառների

[308] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 119:
[309] Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 16:

մենաբարբառացման ընդհանուր գործընթացում է երկբարբառակերպը վերածվել է ը պարզ ձայնավորի: Քանի որ այս փոփոխությունն ընդգրկել է հայերենի դրսևորման գրեթե բոլոր ձևերը, իսկապես պետք է կարծել, որ երևույթն ունի խոր արմատներ, այսինքն՝ գալիս է հին ժամանակներից (ըստ Է.Աղայանի՝ 5-րդ դարի 2-րդ կեսից): Ճիշտ է, որ է - ի մենաբարբառացումը ընդհանուր գործընթացի մի դրսևորում է, բայց, կարծում ենք, կարելի է մատնանշել գործոններ, որոնք իրենց հերթին կարող էին նպաստել հնչյունափոխությանը:

Նախ և առաջ՝ հավանաբար այդպիսի գործոն է եղել այն հանգամանքը, որ բառասկզբում ու բառամիջում անշեշտ վանկում բացակայել է է ~ և հակադրությունը, և այդ դիրքում հին հայերենն ունեցել է պարզ ձայնավոր: Այսինքն՝ պատմական հնչյունափոխությամբ է երկբարբառակերպն անցում է կատարել անշեշտ վանկում դրսևորվող իր ազատ տարբերակին: Թերևս դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ քերականական փոփոխության հետևանքով է - ն հանդես է եկել և - ի դիրքում. գրել - գրե-մք, գրե-յք - գրէք: Մեզ թվում է՝ գրէք տիպի ձևերում ի սկզբանե հնչել է պարզ ը ձայնավոր. ք - ն պետք է որ խանգարեր ըi արտասանությանը (ինչպես որ արմատական բառերի շեշտակիր վանկում է), իսկ քերականական իրողություններն էլ (յք վերջավորության յ - ի առկայություն, հնչյունաբանորեն քերականական իմաստը արտահայտելու ձգտում) պետք է բացառեին և երկբարբառակերպի դրսևորումը, մինչդեռ ը պարզ ձայնավորի դրսևորումը ք - ից առաջ արտասանական առումով առանձնակի լարում չէր պահանջի և միևնույն ժամանակ կբավարարեր քերականության պահանջը: Հասկանալի է, որ գրության մեջ ը պարզ ձայնավորը այս դիրքում չէր կարող արտահայտվել և գրով, որովհետև կկարդացվեր իբրև երկբարբառակերպ: Այդպես նաև է երկբարբառակերպը պետք է վերածվեր է գրով արտահայտվող ը պարզ ձայնավորի բոլոր այն դեպքերում, երբ բառի վերջում ավելանում էր -ք մասնիկ. անէծ - անէծք, վէր - վէրք, պէպ - պէպք, դէմ - դէմք, զէն - զէնք և այլն: Պարզ է, որ եթե լեզվի արտասանական բազան արմատական բառերում թույլ չէր տալիս շեշտակիր վանկում ք - ից և բաղաձայնական խմբից

առաջ է երկբարբառակերպի դրսևորումը, այդ բանը թույլ չէր տա նաև քերականական ձևերում, բայց, միևնույն ժամանակ, թե՛ բառապատկերը, թե՛ քերականական իմաստը արտահայտելու խնդիր կար, և ահա այդ երկու պահանջներն էլ բավարարող մի երրորդ միջոց կար, որը անշեշտ վանկի e պարզ ձայնավորն էր:

Եթե այս դատողությունները ճիշտ են, ապա դարձյալ հաստատվում է մեր այն պնդումը, որ գրաբարյան շեշտակիր վանկում ե դիրը ներկայացնում է երկբարբառակերպ. եթե շեշտակիր վանկում ե - ն լիներ պարզ ձայնավոր, ապա ք - յց և բաղաձայնական խմբից առաջ է - ն արտասանությամբ չէր տարբերվի ե - յց, և այդ դիրքերում է - ի դրությունը պայմանավորված կլիներ միայն ձևաբանությամբ, իսկ բարբառներում ընդհանրապես այդ իրողությունը չէր արտացոլվի: Մի շարք բարբառներում, որոնցում է ~ ե տարբերակում չկա, առկա է հենց այդպիսի իրավիճակ. օր.՝ Պլ. սիրէմ, սիրէս, սիրէ, սիրէնք, սիրէք, սիրէն. Թբ. սիրիմ, սիրիս, սիրէ, սիրինք, սիրիք, սիրին. Եր. սիրեմ, սիրես, սիրի, սիրենք, սիրեք, սիրեն:

Մինչդեռ Բայազետի բարբառում ե խոնարհման բայերի ըղձական ապառնու հոդնակի թվի երկրորդ դեմքում -ք վերջավորությունից առաջ ունենք e պարզ ձայնավոր՝ այլ դեմքերի և երկբարբառակերպի դիմաց: Այդպես է նաև Վանի և ե երկբարբառակերպ ունեցող այլ բարբառներում (որոշ դեպքերում ե - ի դիմաց առկա է ի).

Բայազետի բարբառ		*Վանի բարբառ*	
գ՝ըրեմ	գ՝ըրենք	ուզեմ	ուզենք
գ՝ըրես	գ՝ըրէք	ուզես	ուզէք
գ՝ըրա	գ՝ըրեն	ուզի	ուզեն

Ջեյթունի բարբառ		*Մարաղայի բարբառ*	
սիյմ	սիյնք	իւզելմ	իւզելնք
սիյս	սիյէք	իւզելս	իւզելէք
սիյե	սիյեն	իւզել	իւզելն

Երևույթի արձագանքները երևում են նաև ե երկբարբառակերպ չունեցող բարբառներում: Օրինակ.

Շամախի բարբառ	*Երզնկայի բարբառ*
սիրա՛ մ , սիրէս, սիրի	խըմի՛մ, խըմէս, խըմէ
սիրա՛նք՝, սիրէք, սիրա՛ն	խըմի՛նք, խըմէք, խըմի՛ն

Ակնհայտ է, որ Վանի, Բայազետի և մի շարք այլ բարբառներում շեշտակիր վանկում և երկբարբառակերպի առկայությունը ներկայացնում է նախնական վիճակ և ոչ թե հետևանք է e պարզ ձայնավորի հետագա հնչյունափոխության. հակառակ դեպքում ոչինչ չէր խանգարում, որ ըղձական ապառնու հոգնակի թվի երկրորդ դեմքում՝ մանավանդ երկբարբառակերպ պահանջող ք - ից առաջ, նույնպես տեղի ունենար արդեն պարզ ձայնավորի երկբարբառացում: Կարելի է առարկել, թե նշված դիրքում է - ն պահպանվել է քերականական պահանջով, բայց չէ՞ որ Թբիլիսիի բարբառում, օրինակ, քերականությունը թույլ է տվել, որ շեշտակիր վանկում ե > ի փոփոխությունն ընդգրկի նաև տվյալ քերականական ձևը. սիրիմ, սիրիս, սիրէ, սիրինք, սիրիք, սիրին: Մյուս կողմից՝ կարելի է նաև առարկել, թե շեշտակիր վանկում e պարզ ձայնավորի երկբարբառացման շրջանում դրէք տիպի ձևերում է - ն ունեցել է ei երկբարբառային արտասանություն, որն էլ խանգարել է է > և անցմանը: Բայց եթե է - ն երկբարբառային արտասանություն է ունեցել մինչև 5-րդ դարի առաջին կեսի ավարտը, ուրեմն շեշտակիր վանկի e պարզ ձայնավորի երկբարբառացումը պետք է տեղի ունեցած լինի առնվազն 5-րդ դարի առաջին կեսում, երբ դեռ է - ն ուներ ei արտասանություն:

Այսպիսով, կա՛մ ե - ն հին հայերենում շեշտակիր վանկում իրոք ունեցել է երկբարբառային արտասանություն, կա՛մ էլ նախնական e պարզ ձայնավորը երկբարբառային արտասանություն ձեռք է բերել նախքան է - ի մենաբարբառացումը, այսինքն՝ 5-րդ դարում կամ դրանից առաջ: Երևույթը հակառակ կերպով (նախ՝ է - ի մենաբարբառացում, հետո՝ ե - ի երկբարբառացում) ներկայացնողները դժվար թե կարողանան պատասխանել այն

հարցին, թե է երկբարբառակերպի մենաբարբառացումից հետո և բանավոր խոսքում միայն e պարզ ձայնավորի գործառութ յան պայմաններում («8-րդ դարում և դեռ նրանից էլ առաջ է և ե տառերի արտասանությունը նույնացել էր»[310]) բարբառախոս ժողովուրդը ինչպե՞ս կարողացավ զանազանել հին պարզ ձայնավորը նորից՝ առաջինը դարձնելով երկբարբառային հնչյուն, իսկ երկրորդը պահելով իբրև պարզ ձայնավոր: Քանի որ այդ հնարավոր չէր, հարկ է կրկին պնդել, որ նախքան է երկբարբառակերպի մենաբարբառացումը (5-րդ դար) գրաբարում շեշտակիր վանկում և գրով արտահայտվող իրողությունը եղել է երկբարբառային հնչյուն:

Վերադառնալով է - ի պատմական հնչյունափոխությանը՝ փաստենք, որ վերը նշված ուղիներով շեշտակիր վանկում e պարզ ձայնավորի ներկայությունը է - ի ընդհանուր մենաբարբառացման իրական հիմք էր: Հավանական է նաև, որ է - ի մենաբարբառացման գործընթացին կարող է նպաստած լինել բառավերջի յ - ի անկումը, որի հետևանքով բառավերջում պետք է մնար e պարզ ձայնավոր՝ ei > e:

Ի դեպ, Հ.Մուրադյանը հավաստում է, որ բառավերջի յ - ի անկման հնագույն վկայությունը տալիս է 6-րդ դարի մի տապանագրի բնագիր, որտեղ առկա են որդո և վաստակ գրություններ: Նա գտնում է նաև, որ եթե յ - ի անկման դեպքերը վկայվում են 6-րդ դարում, ուրեմն այդ երևույթը կար նաև 5-րդ դարում[311]:

Անդրադառնալով գրաբարյան ե - ի կրած պատմական փոփոխություններին՝ նախ նշենք, որ հայ լեզվաբանության մեջ ընդունված է կարծել, որ ե գրով արտահայտվող և պարզ համարվող հնչյունի զարգացումն ընթացել է է երկբարբառակերպի հնչյունափոխությանը հակադիր ուղղությամբ: Նման մի գործընթաց առավել հանգամանորեն փորձել է նկարագրել Հ.Մուրադյանը. «Ձայնավորների երկբարբառացման մեջ առավել հայտնի երևույթ է հին ո և ե պարզ ձայնավորների փոփոխությունը: Հայտնի է, որ հին հայերենի գրի առման շրջանում այս

[310] Է.Աղայան նշվ. աշխ., էջ 358:
[311] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 230-231:

տառերով արտահայտվող հնչյունները միանշանակ էին բառի մեջ գրաված բոլոր դիրքերում: ... Ակնհայտ է, որ այդ ձայնավորները բառասկզբի դիրքում կրել են փոփոխություն՝ պարզ ձայնավորից վերածվելով երկհնչյունների (o > vo, e > ye): Պատմական այդ փոփոխությունը, անշուշտ, տեղի է ունեցել ոչ միանգամից, այլ աստիճանաբար: Ըստ որում՝ պարզ ձայնավորից դեպի երկհնչյունային արտասանությունը կատարվել է և և ո ձայնավորների երկբարբառացմամբ»[312]: Հեղինակի կարծիքով՝ երկբարբառացումը նախ ընդգրկել է շեշտյալ վանկը՝ լինի դա բառասկիզբ, թե բառամեջ: Հետագայում միավանկ բառերի սկզբի հնչյունափոխությունը համաբանությամբ տարածվել է նաև բազմավանկ բառերի բառասկզբի դիրքի վրա[313]: Ապա Հ. Մուրադյանը ձգտում է գործընթացը ներկայացնել ավելի հանդամանորեն՝ գրելով. «Ե - ի ավելի սուղ արտասանության միտումը նրա արտաբերության մեջ առաջացրել է երկբարբառային հնչման երանգ (ie): Այս երանգը աստիճանաբար (կապված տեղի ու ժամանակի հետ) վերաճում է երկբարբառային ie - ի, որը նախ ընդգրկում է շեշտակիր վանկերը և հետո միայն տարածվում նաև շեշտից դուրս ընկած վանկերի վրա: Այստեղ նույնպես՝ երկբարբառացման ընթացքում բառասկզբի ու բառամիջի դիրքերի միջև առաջանում են արտասանության տարբերություններ: Բառասկզբի դիրքում ie երկբարբառի արտաբերության ընթացքում, նրանում առաջանում է y կիսաձայնի որոշակի երանգ, որը այլ վայրերում սկսում է ավելի ընդգծվել և ie - ն փոխարկվում է ye երկհնչյունի: Առանձին բարբառներում, երբ հակադարձ միտումով վերանում է երկբարբառացումը, բառասկզբի դիրքում ե - ի դիմաց մնում է ye երկհնչյունը, իսկ բառամիջում ե - ն վերստանում է իր e պարզ ձայնավորի արժեքը»[314]:

Եթե գրաբարյան երկբարբառների մենաբարբառացման ընդհանուր գործընթացում հասկանալի է է - ի՝ պարզ ձայնավոր դառնալու իրողությունը, ապա նույն այդ գործընթացի պայմաններում այնուամենայնիվ անհասկանալի է մնում պարզ համարվող և ձայնավորի հակադիր զարգացումը, ըստ որում՝

[312] Նշվ. աշխ., էջ 94:
[313] Նույն տեղում:
[314] Նշվ. աշխ., 103:

հնչույթաբանորեն նման զարգացումը ամենևին էլ պատճառաբանված չէր, այսինքն՝ է ~ ի վերածումը պարզ ձայնավորի չէր հանգեցնում շփոթի և իմաստների տարբերակման անհրաժեշտություն առաջ չէր բերում: Ի դեպ, թե՛ արդի գրական հայերենը և թե՛ մի շարք բարբառներ ունեն միայն պարզ է ձայնավոր և չունեն դրանով պայմանավորված անհամարմարություններ: Նշենք, որ ուսումնասիրողները սովորաբար չեն փորձել բացատրել, թե ինչու այսպես կոչված պարզ ե ~ ն վերածվեց երկբարբառային հնչյունի կամ երկհնչյունի, իսկ եթե անդամ փորձել են էլ (ինչպես վերևում տեսանք), ապա հանգել են անփաստարկ ենթադրություններին:

Լեզվաբանները թե՛ ձեռագրերում, թե՛ վիմագիր արձանագրություններում նկատել են է ~ ե ~ ի ուղղագրության բազմաթիվ խախտումներ, փոխառյալ բառերում փոխատու լեզվի հետ գրային անհամապատասխանություններ, երբեմն փորձել են այդ շեղումներով որոշել ենթադրյալ և պարզ ձայնավորի երկբարբառայնացման մոտավոր ժամանակը: Օրինակ, Հ.Մուրադյանը, հենվելով 6-րդ և 8-րդ դարերից վկայված համարվող մեկական օրինակների վրա, եզրակացնում է, թե «ե ~ ի հնչյունափոխության սկիզբը հասնում է մինչև VIII դարը»[315]:

Ս. Գյուլբուդաղյանը բերում է տարբեր դարերի մատյաններում ու դրքերում, վիմագիր արձանագրություններում է, և տառերի գրության մեջ շփոթության բազմաթիվ օրինակներ և ի վերջո կարծիք հայտնում, որ «մինչև ուշ միջնադար և տառը թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում ունեցել է ē հնչումը, պահել է ե դարի որակը, թեև տեղ-տեղ էլ հնչել է ye, ie ձևով: Բառասկզբի ե ~ ն միանգամից չի դարձել ye, ունեցել է իր փոփոխման աստիճանական ընթացքը. եղել է ժամանակ, որ նա ունեցել է և՛ ē, և՛ ye հնչումը, որն արտահայտվել է միջնադարի վերը բերված օրինակներում»[316]: Այնուհետև հավելում է. «Միջին դարերում այս տառերի գրությունը շատ էր շփոթված, որովհետև հնչմամբ երեթե նույնացել էին: Ուշ միջնադարում բառասկզբում ե ~ ն սկսել է ye հնչվել և այդ դիրքում էլ նրանց գրությունը կամաց-կամաց

[315] Նշվ. աշխ., էջ 108:
[316] Ս.Գյուլբուդաղյան, Նշվ. աշխ., էջ 147:

սահմանազատվել է: ԺԸ դարում այդ տառերի դրությունը բառասկզբում որոշակի է՝ ye հնչյունակապակցությունը գրվում է և տառով, իսկ e հնչույթը՝ է տառով»[317]:

Հր. Աճառյանը չի անդրադառնում ենթադրվող և > յե փոփոխության ժամանակին: Բայց և այդ փոփոխության մասին խոսելիս լեզվաբանը, մեր կարծիքով, անում է հակասական դիտողություններ: Նա նշում է, որ «և > յե ձայնափոխությունը հատուկ է միայն բառասկզբին (ելք և արևելք) և ոչ բառամիջին. այնպես որ մի կողմից ունենք եփել, բայց ներկան կեփեմ և ոչ թե կը յեփեմ»[318]: *Ապա որպես ապացույց այն բանի, որ 5-րդ դարում բառասկզբում և - ն ye չէր հնչում, ներկայացնում է «յ - նախդիրով գրչություննները. օրինակ՝ յԵգիպտոս, յերազի և այլն: Ինչպե՞ս էին կարդացվում այս բառերը, յյե՞, ինչ որ հնչել անկարելի է, թե յե, սկզբում յ լինելով բաղաձայն, չէ՞ որ յ նախդիրը պիտի դառնար ի. ինչպես՝ ի Յակոբ, ի յղեաց և այլն»* [319]: *Այնուհետև ավելացնում է. «Երբ և ձայնավորով սկսվող մի բառ մտնում է բարդության կամ ածանցման մեջ, նախաձայն և այլևս չի հնչվում ye , այլ է», և բերում է օրինակներ. երգ - համերգ, երջանիկ - ապերջանիկ, եփել - անեփ և այլն*[320]:

Ակնհայտ է, որ ժամանակակից հայերենի բառասկզբի յե հնչումը անկայուն մի իրողություն է, քանի որ իրենից առաջ մասնիկ կամ արմատ ընդունելով՝ այն վերածվում է e պարզ ձայնավորի: Այդ նույն գործընթացը կարող էր կատարվել նաև գրաբարում, որտեղ ևս բառասկզբի և - ն (թեկուզ և ye արտասանվող) ավելացող մասնիկից հետո կարտասանվեր e: Սակայն, ինչպես արդեն ցույց է տրվել, գրաբարում բազմավանկ բառերի սկզբում և - ն պարզ ձայնավոր էր, իսկ միավանկ բառերի սկզբում՝ երկբարբառակերպ (և ոչ թե ye), այսինքն՝ վերջին դեպքում էլ բառերը բաղաձայնով չէին սկսվում, և նրանցից առաջ նույնպես օրինաչափորեն պետք է տեղի ունենար ի նախդրի վերածում յ - ի:

---

[317] Նշվ. աշխ., էջ 182:
[318] Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, 6., էջ 595:
[319] Նշվ. աշխ., էջ 596:
[320] Նույն տեղում:

Հարցին անդրադարձել է նաև Գր. Ղափանցյանը: Նա գտնում է, որ հին «ե» տառը և՛ բառասկզբում, և՛ բառամիջում հնչել է որպես ը պարզ ձայնավոր, բայց հետագայում՝ թերևս 8 - 9 – րդ դարերից սկսած, «այդ հին ե (յ) հնչյունը ստանում է սկզբից բաղաձայն «յ» սոնանտը ..., այսինքն միջագգային տերմինով ասած, ենթարկվում է յոտիզացիայի»[321]: Ղափանցյանի կարծիքով՝ հնչյունական այդ փոփոխությունը բարբառներում տեղի է ունենում բառի բոլոր դիրքերում (չնայած ոչ բոլոր վայրերում), բայց գրական լեզվում ընդգրկում է միայն բառասկզբի դիրքը[322]:

Նշենք նաև, որ գրաբարի գրեթե բոլոր ձեռնարկներում ու դասագրքերում վկայվում է, որ և պարզ ձայնավորը գրաբարի ընդհանուր պատմական հնչյունափոխության հետևանքով բառասկզբում արտասանվում է յե, իսկ բառամիջում մնում է նույն արտասանությամբ:

Կարծում ենք՝ բերված տեսակետները բավարար են ցույց տալու, որ հայ լեզվաբանության մեջ, այնուամենայնիվ, չի հաջողվել հստակորեն ներկայացնել հին ե - ի զարգացման ընթացքը բառի տարբեր դիրքերում, համոզիչ բացատրել, թե ինչու պարզ համարվող ձայնավորը մենաբարբառացման ընդհանուր գործընթացում բռնեց երկբարբառացման ուղին, ինչու գրական լեզվում և բարբառներում առկա են տարբեր վիճակներ:

Իրականում հարցը չէր էլ կարող լուծվել, որովհետև սխալ էր մեկնակետը: Բայց երբ ընդունում ենք, որ հին հայերենի շեշտակիր վանկում ե - ն երկբարբառակերպ էր, իսկ անշեշտ վանկում՝ պարզ ձայնավոր, բացատրելի են դառնում հետագա գործընթացները թե՛ բարբառներում և թե՛ գրական լեզվում:

Նախ անդրադառնանք բառասկզբի դիրքերին: Միավանկ բառերի սկզբում, լինելով շեշտակիր վանկում, և - ն երկբարբառային հնչյուն էր: Ինչպես արդեն նշել ենք, տարբեր տարածքներում ե երկբարբառակերպը կարող էր լինել i - ասկիզբ կամ e - ասկիզբ, բայց երկու դեպքում էլ այն պետք է ավարտվեր ավելի բաց հնչյունական իրողությամբ: Երկու դեպքում էլ երկբարբա-

---

321 Գր.Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, ե., 1939, էջ 119:
322 Նույն տեղում:

ռային արտասանութիւնը թուլլ էր տալիս արտասանական փոփոխութիւնների արդիւնքում բառասկզբում ունենալ ավելի թավ արտասանութիւն և ի վերջո՝ յ - ի հավելում (ի դեպ, Բայազետի բարբառում ես դերանվան՝ ձայնորդային յ - ով արտասանութիւնը թերևս ներկայացնում է երկբարբառակերպից երկհնչյունի անցման միջին օղակը) : Եվ այդ է պատճառը, որ թե՛ և երկբարբառակերպ ունեցող և թե՛ չունեցող բարբառները միավանկ բառերի սկզբում որպես կանոն ունեն յ - ի հավելում. օրինակ՝ Վն.,Բ. յեղ, Ախց. Երև. Խրբ., Կր.,Մշ., Մրզ., Ննխ., Սլմ., Սչ., Սեբ., Տիգ. յէգ, Գոր., Ղրբ., Շմ. յէ՛գնը, Համշ. յիգ, Թբ. յի՛գը, Մշ., Խրբ. յէբ, Ալշ., Զգ. յեփ, Վն. յեփ. Ախց., Երև., Կր., Հճ., Ննխ., Պլ., Ռ., Սեբ. յէփ, Համշ., Մրզ., Թբ.յիփ և այլն: Բայց եթե է ~ և հակադրութիւն ունեցող բարբառներում յ - ի հավելումը կանոնական բնույթ ունի, ապա մյուս բարբառներում որոշ դեպքերում նման հավելում չի արձանագրվում. օրինակ՝ Վն. յեռալ, Բ. յեռ, Երև., Սլմ. յէռալ, Ալշ. յէռ, Թբ. յիր, բայց՝ Ննխ. էռք, Խրբ. ըռք, Պլ. էռք. Վն., Բ. յես, Երև., Ալշ., Կր., Հճ., Ղրբ., Մշ., Ննխ., Սչ. յէս, Թբ. յիս, բայց՝ Ախն., Պլ. էս, Խրբ. էս, յէս, Ագլ., Զթ., Մկ., Մղր. իս և այլն:

Առավել տարածված դեպքից՝ յ - ի հավելումից բացի, միավանկ բառերի սկզբում նկատվում են. ա) երկբարբառակերպի պարզեցում և վերածում ը պարզ ձայնավորի, բ) երկբարբառակերպի վերածում ի պարզ ձայնավորի: Նկատվում է նաև ե - ի վերածում ը - ի, բայց, կարծում ենք, այդ դեպքում դեր է խաղացել հնչյունական շրջապատը, մասնավորապես՝ հաջորդող ռ - ն:

Երկվանկ և բազմավանկ բառերի սկզբում ե - ից առաջ հայերենի բարբառներում, որպես կանոն, յ - ի հավելում տեղի չի ունեցել, որովհետև այդ դիրքում ե - ն երկբարբառակերպ չէր, այլ պարզ ձայնավոր:

Դիտարկումները ցույց են տվել, որ բարբառներում երկվանկ բառերի սկզբում ե - ն առավելապես հանդես է գալիս երկու դիրքում՝ ա) ղ, ռ բաղաձայններից առաջ, բ) ր ձայնորդից կամ այլ բաղաձայններից առաջ: Հր.Աճառյանը ցույց է տալիս, որ

Վանի բարբառում առաջին դիրքում ե - ից առաջ յ - ի հավելում տեղի է ունենում. օր.՝ յեղի, յեղինջ, յեղնիկ, յեղունգ, յեռալ, յեռանդ, յեռսուն[323]*: Երկրորդ դիրքում դրաբարյան ե - ի դիմաց առկա է պարզ e ձայնավոր. օր.՝ էրազ, էրակ, էրամ, էրան, էրտիս, էրտիւմ, էրէկ, էրթալ, էրկաթ, էրկէն, էրկանքյ, էրկինքյ, էրկու: Աճառյանը Վանի բարբառի բառամիջում երևան է հանում դուգահեռ իրավիճակ. «Այստեղ էլ սակայն կարելի է նկատել, որ ղ բաղաձայնից առաջ ընդհանրապես ե - ն մնում է ե, իսկ ը - ից առաջ՝ դառնում է է: Այս երևույթը զարմանալի կերպով նույնանում է բառասկզբի ե > ե կամ է ձայնափոխության պայմանների հետ»*[324]*: Ակնհայտորեն առկա է երևույթի դրսևորման ոչ թե պատահական մի նմանություն, այլ միասնական օրինաչափության արտահայտություն, այն է՝ Վանի բարբառում անշեշտ վանկում (լինի բառասկիզբ թե բառամեջ) ը - ից առաջ դրաբարյան ե - ին համապատասխանում է պարզ ձայնավոր, ղ, ռ բաղաձայններից առաջ բառամիջում առկա է երկբարբառակերպ, իսկ բառասկզբում՝ յե: Պարզ է, որ բառասկզբի յե - ն նախնական և երկբարբառակերպի փոփոխության արդյունք է: Այս նույն օրինաչափությունը գործում է Բայազետի բարբառում. օրինակ՝ էրազ, դ՛էրան, բայց՝ յեղունգ, յեռալ, սեղան, մեռըլոց: Երևույթի արձագանքները նկատվում են Ուրմիայի (Խոյի), Արարատյան բարբառներում: Այսպես. Ուրմ. էրազ, էրակ, էրամ, էրևալ, էրկու, բայց՝ յէղա, յէղունգ, յէռալ, յէռսուն*[325]*, Ար. էրկաթ, էրկանք, բայց՝ յէռէսուն, յէռալ*[326]*:*

Այլ բարբառներում այս իրողությունն արտացոլվում է մի փոքր այլ կերպ: Զեյթունի բարբառում դրաբարյան ե - ի դիմաց թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում որպես կանոն հանդես է գալիս ի, բայց ղ, ռ - ից առաջ թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում բացառվում է ի - ն, և հանդես է գալիս է կամ ե. այսպես՝ իս (ես), իփ (երբ), իյօղ (երազ), իյթօլ (երթալ), անիյ (աներ), չիյիփ (չերեփ), դիյիվ (աերև), բայց՝ էղօ (եղայ), էխբ՛այ (եղբայր), էռսուն (երեսուն), աղէղ (աղեղն), աաեղ, դ՛եղ, դ՛էղճ, դ՛էռ, մէխք,

---

[323] Հ.Աճառյան, Քննություն Վանի բարբառի, էջ 30:
[324] Նշվ. աշխ., էջ 33:
[325] Մ.Աասարյան, նշվ. աշխ., էջ 25:
[326] Ռ.Մարկոսյան, նշվ. աշխ., 1989, 58:

դ՛ԷղԸն, լԷղօփ, քԷռա և այլն[327]: Խարբերդի բարբառը գրաբարյան ե - ի դիմաց թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ բառերի սկզբում ունի է. օրինակ՝ ես > էս, երբ > էրի, երեսալ > էրվալ, երկու > էրդու: Սակայն ու - ից առաջ թե՛ բառամիջում և թե՛ բառասկզբում ե - ն դարձել է ա՛. օրինակ՝ բեռն > պա՛ր, կեռ > գա՛ր, երեսուն > եռեսուն > ա՛րսուն[328]:

Ճիշտ է, բարբառներում տարբեր բառեր ունեն տարբեր դրսևորումներ, բարբառային տարբեր երևույթների խաչաձևումներ հաճախ բոլորովին այլլազան իրողությունների հիմք են դարձել, սակավաթիվ բարբառներում առկա են բոլորովին տարբեր օրինաչափություններ (օրինակ, Ոզմի խոսվածքում բառասկզբում յ - ի հավելում կա ոչ միայն միավանկ բառերում), բայց, այնուամենայնիվ, ակներև է երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբում հինհայերենյան ե - ի զարգացման ընդհանուր պատկերը.

ա) հայերենի բարբառներում ընդհանուր առմամբ երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբում ե - ից առաջ յ - ի հավելում տեղի չի ունեցել.

բ) բարբառների մի մասում նշված դիրքում յ - ի հավելում տեղի ունեցել է, երբ ե - ին հաջորդում է ղ կամ ռ:

Ասվածը հիմնավորենք բարբառային օրինակներով. գրբ. երկան - Ալշ., Ախց., Երև., Կր., Մրզ., Սլմ, .Բ. էրկանք, Մկ., Վն. էրկանք՝, Խրբ., Մշ., Ռ., Սեբ., Տիգ. էրդանք, Ոզմ. յէրկանք՝, Հմշ. էրգոնք, Ագլ. ա՛րկան, Գոր., Ղրբ., Շմ., Ջղ. արկանք, Հճ. իյգօնք, Ջթ. իրգօնքքօր. գրբ. երթալ - Ալշ., Ախց., Խրբ., Կր., Մկ., Պլ., Սեբ., Սչ. էրթալ, Ոզմ. յէրթալ, Վն., Տիգ. էրթա՛լ, Մշ. էրդ՛ալ, Ջթ. իրթոլ, Ննխ. էրթալ, Երև., Բ., Ռ. էթալ և այլն:

Գրաբարյան եղունդն բառի դիմաց բարբառներն ունեն՝ Ջղ., Բ. յեղունդ, Սլմ. յէղունդ, Վն. յեղունդ՛, Ախց., Կր. էղունկ, Ագլ.,Հմշ. եղունք, Խրբ.,Մշ., Սեբ., Տիգ. ըղունդ, Ոզմ. յէղօնք և այլն: Եռալ բայի դիմաց բարբառներն ունեն՝ Վն.,Բ. յեռալ, Երև.,

---

327 Հ.Աճառյան, Քննութիւն Կիլիկիայի բարբառի, էջ 37-46:

328 Դ.Կոստանդյան, Խարբերդի բարբառի հնչյունաբանական և ձևաբանական հիմնական առանձնահատկությունները, Հայերենի բարբառագիտական ատլաս, 1, ե., 1962, էջ 243:

Սլմ., Ախց., Ոզմ., Ուրմ. յէռալ, Ակն, Մկ., Մշ. էռալ, Ալշ. եռալ, Մրզ. յէռռալ և այլն:

Բառամիջի անշեշտ վանկում ե գրով արտահայտվող հինհայերենյան e պարզ ձայնավորի դիմաց բարբառները որպես կանոն ունեն պարզ ձայնավոր, այսինքն՝ այս դիրքում հինհայերենյան ե պարզ ձայնավորն ընդհանուր փոփոխության չի ենթարկվել: Միայն առանձին դեպքերում ու որոշ խոսվածքներում հնչյունափոխական այլևայլ գործոնների ազդեցությամբ և - ի դիմաց հանդիպում են այլ ձայնավորներ, և ե երկբարբառակերպ ունեցող բարբառներում ղ, ռ - ից առաջ գրաբարյան և - ի դիմաց առկա է երկբարբառակերպ, մնացած բոլոր դեպքերում բառամիջի e պարզ ձայնավորը պահպանել է իր որակը. օրինակ՝ գրբ. բերան – Ննխ., Պլ., Թբ. բէրան, Ալշ., Ախց., Երև., Խրբ., Կր., Մշ., Սեբ., Սչ., Բ. բ՛էրան, Մկ., Շմ., Սլմ., Վն. պէրան, Ղրբ. պէ՛րան, պա՛րան, Հմշ. պէրօն, Ագլ. բաՙրաՙն, Ջթ. բ՛իրոն, Հճ. բ՛իյօն, Ոզմ., Ջղ. բ՛երան և այլն. գրբ. ձմեռուկ – Թբ. ձմէրուկ, Երև., Բ. ձ՛մէրուկ, Ննխ. ձմէրուդ, Խրբ., Մշ. ձ՛մէրուդ, Գոր. ծմէ՛րուկ, Ղրբ. ծմըէ՛րուկ, Ոզմ. ձ՛մեռօկ, Վն. ծմրիւկ, Հճ. ձ՛ՙմմՙյուդ և այլն. գրբ. դեղին - Երև., Ջղ., Բ. դ՛եղին, Ագլ., Ննխ., Պլ. դէղին, Ալշ., Ախց., Ակն, Խրբ., Կր. Հճ., Մշ., Սեբ., Սչ. դ՛էղին, Սլմ., Վն. տեղին, Մրզ., Շմ. տէղին, Ոզմ. դ՛էղէ՛ն, Թբ. դի՛ղին և այլն:

Ինչ վերաբերում է շեշտակիր վանկին, ապա այստեղ զարգացումներն ընթացել են երկու հիմնական ուղղությամբ. ա) նախնական և երկբարբառակերպի պահպանում, բ) և երկբարբառակերպի դիմաց պարզ ձայնավորի առկայություն:

Վերևում արդեն խոսել ենք և երկբարբառակերպ ունեցող բարբառների մասին. սրանց շեշտակիր վանկի և - ն թերևս առավել հարազատորեն է ներկայացնում հին հայերենի համապատասխան հնչյունական իրողությունը: Այս երկբարբառակերպը արտասանությամբ էականորեն տարբերվում է e պարզ ձայնավորից, ունի իր գործառական հստակ բաշխումը, արտաբերական կայունություն: Բերենք օրինակներ. գրբ. աներ - Ալշ., Մշ., Ջղ., Սլմ., Վն. աներ, գրբ. բեռն - Ալշ., Մշ., Ոզմ., Ջղ., Ջթ., Բ. բ՛եռ, Սլմ., Վն. պեռ, գրբ. թել - Ալշ., Հճ., Մշ., Ջղ., Սլմ., Վն., Բ. թել,

գրբ. աչակերտ – Մշ., Ջղ. աչկերտ, Սլմ., Վն. աչկեռտ, Ալշ. աչկերդ, գրբ. չերեփ - Ալշ., Մշ., Բ. չէրեփ, Սլմ., Վն. չիրեփ և այլն:

Ե երկբարբառակերպի դիմաց պարզ ձայնավորի առկայությունը բարբառների մյուս խմբում թերևս հետևանք է հայերենի երկբարբառների մենաբարբառացման ընդհանուր գործընթացի:

Ուսումնասիրողները գրաբարյան ե - ի դիմաց բարբառների մեծ մասում շեշտակիր վանկում արձանագրում են e պարզ ձայնավոր. օրինակ՝ գրբ. աներ - Ախց., Ակն, Երև., Խրբ., Կր., Պլ., Ռ., Սեբ. անէր, Գոր., Ղրբ., Շմ. Հանէր, Տիգ. Ընէր. գրբ. բեռն - Ապլ. բէ՛ռնը, Ղրբ., Շմ. պէ՛ռնը, Ննխ. բէռ, Ախց., Ակն., Երև., Կր. բ՛էռ, Սեբ. բ՛է՛ռ, Համշ., Մկ. պէռ, Ռ.,Տիգ. փէռ, Հճ. բ՛էր, գրբ. թել - Ախց., Երև., Խրբ., Կր., ՆՆխ., Շմ., Պլ., Ռ., Սեբ. թէլ, Ասլ. թէ՛լ, գրբ. աչակերտ - Երև. աչագէրդ, աչկէրտ, Ախց., Կր., Մկ. աչկէրտ, Ակն., Խրբ., Պլ., Ռ. աչդէրդ, Մրզ. աչկէրթ, Սեբ. աչդէդ, գրբ. չերեփ - Ախց., Երև., Խրբ., Կր., ՆՆխ., Ռ., Սեբ., Թբ. չէրէփ, Գոր., Ղրբ., Մրզ., Շմ. չիրէփ, Հճ. չիյյէփ:

Որոշ դեպքերում էլ այլևայլ գործոնների ազդեցությամբ շեշտակիր ե - ի դիմաց հանդես են գալիս ավելի բաց հնչյունական իրողություններ՝ ա , էչ, ը. օրինակ՝ գրբ. բեռն - Խրբ. բ՛ըռ, գրբ. աչակերտ - Ապլ. աչկառտ, գրբ. սև, բեռն, ձմեռն, ներկ – Հդրթ. սըէվ, պըէռ, ծըմըէռ, նըէրկ. գրբ. ձեզ, մեր, մեծ – Ղրբ. ծըէզ, մըէր, մըէծծ, գրբ. մեծ, բեռն, երբ, սիսեռն – Մլթ. մանճ, փառ, յաւի, սըսառ, գրբ. մեք, մեր, ձեր, մեզ, ձեզ - Սան. մընք, մըր, ծըր, մըզը, ծըզը:

Ինչպես արդեն նշվել է, բարբառախոս վայրերի մի մասում հնարավոր էր և երկբարբառակերպի նաև այնպիսի տարբերակի դրսևորում, որն իր արտասանության թե՛ սկզբով, թե՛ ավարտով ավելի բաց էր, հետևաբար՝ արտաբերական առումով պակաս կայուն ու հստակ: Այսպիսի հնչյունն ավելի ենթակա պիտի լիներ փոփոխության, ուստի և մենաբարբառացման ընդհանուր գործընթացում բնական էր նրա դիմաց պարզ ձայնավորի ի հայտ գալը:

Ենթադրում ենք, որ բարբառների այս խմբում և երկբարբառակերպի զարգացումները բխում են նախնական էº արտասա-

նուիթյունից և դրանում կատարված փոփոխութիւններից: Բնական է թվում, որ մենաբարբառացման ընթացքում պետք է պահպանվեր էր երկբարբառակերպի ավելի լիահունչ տարրը՝ *e* – ն, ահա թե ինչու բարբառների մեծ մասում չեշտակիր վանկի և - ն դարձել է *e* պարզ ձայնավոր, և նման բարբառներում վերացել է նախնական է ~ և տարբերակումը:

Որոշ բարբառներում և > է կամ և > ի փոփոխության պայմաններում առանձին դիրքերում (թերևս պայմանավորված հնչյունական շրջապատով կամ այլ հնչյունական օրենքներով) տեղի ունեցած և > ա, ա կամ ը փոփոխությունները, ըստ երևույթին, հետևանք են այդ բարբառներում որոշակի դիրքերում գործող՝ ավելի բաց արտասանության միտումի:

Հնարավոր է, որ հայերենի մի շարք բարբառներում (Ղարաբաղի, Հադրութի, Կարճևանի, Կաքավաբերդի, Մեղրու) դրաբարյան և երկբարբառակերպի դիմաց ըէ նշանով ներկայացվող հնչյունական իրողությունը (Է.Աղայանը այն բնութագրում է որպես «է և ը ձայնավորների միջին աստիճանը»[329], իսկ Ա.Ղաբիբյանը համարում է «երկբարբառային կոչտ է»[330]) իրականում ունի ոչ թե ըէ (ինչպես կարելի է ենթադրել գրությունից), այլ էը արտասանություն, որը կնշանակի, որ որոշ դիրքերում այդ բարբառներում պահպանվել է և երկբարբառակերպի նախնական արտասանությունը: Բայց քանի որ այդ բարբառներում դրաբարյան է - ի դիմաց ևս երբեմն առկա է ըէ արտասանություն (որը կարող էր դրաբարյան *ei* երկբարբառակերպի տարբերակ կամ զարգացման արդյունք լինել), հավանական է, որ երկուսի համար ընդհանրացել է ըէ արտասանությունը, կամ էլ այդ երկուսի արտասանությունն այնքան անորոշ տարբերություններ ունի, որ ուսումնասիրողները չեն կարողանում դրանք զանազանել:

Մի շարք բարբառներում և երկբարբառակերպի դիմաց չեշտակիր վանկում հանդես է գալիս ի. օրինակ՝ գրբ. աներ - Ագլ., Մկ., Ոզմ., Թբ. անիր, Հմշ. օնիր, գրբ. բեուն – Թբ. բի՛րը, գրբ. թել - Ագլ., Զթ., Մկ., Մրզ., Ոզմ., Տիգ., Թբ. թիլ, գրբ. աչակերտ - Տիգ.

---

[329] Է.Աղայան, Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 17:
[330] Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 45:

ԱՀԳիպրդ, Ոզմ., Թբ. աշկիբա, Զթ. էշգիպրդ, գրբ. չերեփ - Հմշ., Տիգ. չէրիփ, Ագլ., Մկ., Սվեդ. չիրիփ, Զթ. չիյիփ, չիրիփ:

Այս ի - ն ակնհայտորեն առաջացել է և երկբարբառակերպի՝ ie արտասանությամբ տարբերակից i բաղադրիչի արտասանության աստիճանական գերակշռման ճանապարհով:

Հ. Մուրադյանը Կարճևանի բարբառում գրաբարյան ե - ի դիմաց ի ձայնավորի հանդես գալը մեկնաբանում է այսպես. «ե - ի՝ ավելի նեղ ի ձայնավորի արժեք ձեռք բերելը կատարվել է ե - ի երկբարբառացման միջին օղակով, երբ երկբարբառի առաջին բաղադրիչը գերիշխող դիրք է ստացել երկրորդի նկատմամբ և մենաբարբառացումից հետո արդյունքում մնացել է ի»[331]: Ինչպես հետևում է բերված փաստարկներից, ե - ի երկբարբառացման միջին օղակ լինել չէր կարող, որովհետև շեշտակիր վանկում ե - ն ի սկզբանե երկբարբառակերպ էր. դրա մենաբարբառացումով էլ ստացվել է ի ձայնավորը:

Պետք է նկատի ունենալ, որ բարբառները չկանոնակարգված լեզվավիճակներ են, և հնչյունական օրենքներն ու օրինաչափությունները դրանցում ուղեկցվում են բազում բացառություններով, խաչաձևված են հնչյունական այլ օրենքներով, են-թակա են այլ բարբառների ու լեզուների ազդեցություններին:

Այնուամենայնիվ, կարող ենք ներկայացնել բանավոր, խոսակցական հայերենում հինհայերենյան է, և միավորների կրած պատմական փոփոխությունների հետևյալ ընդհանուր պատկերը:

1. Հինհայերենյան է երկբարբառակերպը որպես կանոն վերածվել է e պարզ ձայնավորի:

2. Անշեշտ վանկի՝ գրաբարում և գրով արտահայտվող պարզ ձայնավորը հիմնականում պահպանվել է նույնությամբ:

3. Միավանկ բառերի սկզբի և - ից առաջ սովորաբար տեղի է ունեցել յ - ի հավելում:

4. Երկվանկ և բազմավանկ բառերի սկզբում և - ից առաջ յ - ի հավելում բարբառներում նկատվում է, երբ և - ն նախորդում է ղ, ռ բաղաձայններին:

---

[331] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 103:

5. Շեշտակիր վանկի և երկբարբառակերպի զարգացումն ընթացել է հետևյալ ուղղություններով.

ա) երկբարբառակերպի պահպանում.

բ) երկբարբառակերպի մենաբարբառացում և վերածում ե պարզ ձայնավորի.

գ) երկբարբառակերպի մենաբարբառացում և վերածում ի պարզ ձայնավորի:

Առանձին բարբառներում մենաբարբառացումն ուղեկցվում է ավելի բազ տարբերակների դրսևորումներով:

Կենդանի խոսքում կատարված այս փոփոխությունների իրենց արտացոլումն են գտել գրաբարի «նոր» արտասանության կանոններում, որոնք ավանդաբար հասել են մեզ[332]*:*

Եվ այսպես, ներկայումս գրաբարյան տեքստերում՝

1. է տառը բոլոր դեպքերում կարդացվում է իբրև ե պարզ ձայնավոր.

2. ե տառը բառամիջում բաղաձայնից առաջ կարդացվում է իբրև ե պարզ ձայնավոր, իսկ ա ձայնավորից առաջ՝ իբրև յ ձայնորդ:

3. ե տառը թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ բառերի սկզբում կարդացվում է յե. բացառություն են կազմում օժանդակ բայի եմ, ես, ենք, են ձևերը, որոնք միշտ հանդես են գալիս իբրև հնչաբառի վերջին բաղադրիչ:

Նկատելի է, որ եթե առաջին երկու դեպքերում գրաբարյան «նոր» արտասանության հիմքում ընկած են բարբառներում առավել մեծ տարածում գտած իրողությունները, ապա երրորդ դեպքում առկա է տարբերություն բանավոր խոսքից, որտեղ յ-ի հավելում հիմնականում առկա է միայն միավանկ բառերի սկզբում:

Կարծում ենք՝ բանավոր խոսքից տարբերվող արտասանական նորմայի ընդունումը պայմանավորված է եղել երկու հանգամանքով:

1. Բառասկզբում յ-ի հավելումը փաստ էր միավանկ բառերում և հաճախ նաև երկվանկ ու բազմավանկ այն բառերի սկզբում, որոնցում ե-ին հաջորդում էին ղ կամ ւ բաղաձայն-

---

[332] Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 6:

նները: Բառասկզբում յ - ի հավելում ունեցող արմատները բառաթեքման ու բառաբարդման հետևանքով կարող էին իրենց արտասանությունը պահպանել՝ այդպիսով ընդլայնելով յե խմբով սկսվող բառերի ցանկը:

2. Արտասանական տարբերություններից խուսափելու, ամեն մի կոնկրետ դեպքում արտասանությունը ղանաղան հանգամանքներով չպայմանավորելու և, վերջապես, գրական միասնական արտասանություն ապահովելու համար լավագույն միջոց կարող էր լինել նույն տառը միևնույն դիրքում, անկախ վանկերի քանակից, միևնույն ձևով կարդալը:

Ջենք բացառում, որ այս հարցում կարող է դեր խաղացած լինել նաև այլ լեզուների ընդօրինակելու հնարավորությունը:

Հայտնի չէ, թե երբ և ինչ հանգամանքներում են գործողության մեջ մտել գրաբարի «նոր» արտասանության կանոնները: Միայն կարող ենք հիշատակել, որ 19-րդ դարի կեսերին Արսեն Բագրատունին պահանջում էր, որ ե - ն և ո - ն «բառամիջում պիտի հնչվեն է, օ և ոչ թե իե, վօ կամ ուօ. վերջին ձևով կարող են հնչվել միայն բառասկզբում»[333]: Որևէ հետևություն չենք կարող անել նաև Մ.Աբեղյանի հետևյալ դիտարկումից. «19-րդ դարի սկզբներից ի վեր գրաբար գրվածքները կարդում են մեզնում սովորաբար փոխված ավանդական արտասանությամբ, որի սկիզբը շատ վաղ է եղել»[334]: Ընդունելի է առկա իրավիճակին վ.Համբարձումյանի տված հետևյալ բնութագրումը. «Առանձնացվում է գրաբարի արտասանության երկու տեսակ՝ գրային (հին) եւ ավանդական (նոր): Գրային արտասանությունը, հասկանալի է, սկզբնական վիճակի արտահայտությունն է: Իսկ թե ինչ վիճակ (կամ վիճակներ) է արտահայտում ավանդականը, սկզբնականին հաջորդող որ ժամանակի վիճակը (կամ վիճակներն) է ներառում, դեռևս դժվար է ճշտիվ լուծված համարել: Այդուհանդերձ, պարզ է այն, որ այժմյան ավանդական արտասանությանն անհամեմատ մոտ է, գրեթե համընկնում է նոր գրական հայերենի արդի, մեր ժամանակներին հատուկ արտասանությանը: Ըստ այդմ պետք է ենթադրել, թե դարից դար գրա-

---

[333] Գ.Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, ե., 1974, էջ 455:
[334] Մ.Աբեղյան, նշվ. աշխ., էջ 11:

բարի ավանդական արտասանությունը բոլոր դեպքերում համընկնելիս է եղել տվյալ դարաշրջանի ընդհանուր գրական հայերենի արտասանությանը»[335]:

Ինչևէ, գրաբարյան արտասանության վերոբերյալ կանոնները անցել են ժամանակակից գրական հայերենին և գործում են՝ գրության մեջ առկա վիճակից անկախ:

5.3. է, ե տառերի գրության չեղումները և երկբարբառակերպների փոփոխությունների արտացոլումը դրանցում

է, ե գրերի ուղղագրության, հնչյունական արժեքի, հնչյունափոխական գործընթացների վերաբերյալ մեր դիտարկումները թույլ են տալիս նորովի անդրադառնալ ձեռագիր մատյաններում և վիմագիր արձանագրություններում այդ տառերի գրության չփոթին ու չեղումներին:

Արդեն ցույց ենք տվել, որ այլ լեզուներից գրավոր ճանապարհով կատարված փոխառություններում գրիչները է, ե տառերի գրությունը հիմնականում չեն չփոթել, այլ հարազատ են մնացել վերը նկարագրված գրության կանոններին: Սակայն 5-րդ դարից հետո ընկած ժամանակահատվածի թե՛ ձեռագիր մատյաններում, թե՛ վիմագիր արձանագրություններում ուսումնասիրողները նկատել են է, ե տառերի գրության կանոններից չեղումներ, դրանց չփոթության բազմաթիվ դեպքեր: Լեզվաբանները փորձել են նաև այդ չեղումների միջոցով գաղափար կազմել լեզվում տեղի ունեցած հնչյունափոխական երևույթների մասին:

Նախքան բուն չեղումներին անցնելը հարկ կա անդրադառնալու որոշ փոխառյալ բառերի, որոնց գրությունը գրաբարում, լեզվաբանների կարծիքով, չի արտացոլել փոխառու լեզվի իրավիճակը:

---

[335] Վ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 2004, էջ 32:

Հր. Աճառյանը նշում է, որ Երեմիա և Երուսաղեմ բառերը հունարենի համեմատությամբ ye հնչումն են ցույց տալիս զարմանալի կերպով[336]: Հ.Մուրադյանը փոխատու լեզվի ie երկհնչյունի դիմաց և գրի դրսևորման ամենահին վկայություններ է համարում Եղեկիել անձնանունը և եռեւս բառաձևը՝ դրանց միջոցով փորձելով ճշտել e > ie ենթադրյալ հնչյունափոխության ժամանակը[337]:

Այն, որ այս բառերի գրության մեջ տարօրինակ ոչինչ չկա, կարելի է հիմնավորել հետևյալ փաստարկներով.

1. Հին հայերենի բառասկզբին բնորոշ չի եղել երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբում յե գրությունը. Հր.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» յե կապակցությամբ սկսվում են մի քանի միավանկ բառեր (յեղ, յեղց, յեռ, յետ), միավանկ արմատներից ձևավորված բայեր (յենուլ), մատենագրության մեջ հազվադեպ հանդիպող փոխառյալ կամ անծանոթ բառեր (յեզդիլ, յեզեր, յելմուփ, յեղանջել, յեղկել, յեղնջումն, յեմռ, յեստարայ, յետել, յետկալ, յերջ և այլն)[338]:

2. բառասկզբի յե գրությունը նշված պայմաններում կարող էր ընկալվել իբրև ի նախդրի կիրառություն.

3. բերված բառերի սկզբում հունարեն ίε կապակցությունը կարող էր պարունակել թույլ, ձայնորդային արտասանություն ունեցող յ հնչյուն, մինչդեռ հայերենի բառասկզբում գրվող յ - ն, ի տարբերություն բառամիջի յ - ի, թավ արտասանությամբ բաղաձայն է.

4. գրաբարյան միավանկ բառերի սկզբում և գիրն ուներ ie երկբարբառային արտասանություն. նման արտասանությունը թերևս առկա էր նաև երկվանկ ու բազմավանկ այն բառերի սկզբում, որոնք և ունեին ղ կամ ռ բաղաձայններից առաջ. միաժամանակ՝ և գիրը ie արտասանություն արտահայտող միակ միջոցն էր:

Այսպիսով, ճիշտ է, որ գրաբարում և գիրը երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբում որպես կանոն կարդացվում էր իբրև

[336] Հ.Աճառյան, Հայոց գրերը, էջ 575:
[337] Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 104-105:
[338] Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 393-398:

պարզ ձայնավոր, բայց և փոխառյալ բառերի սկզբի ie կապակցությունը հնարավոր էր արտահայտել միայն ե գրով:

Պետք չէ նաև բացառել, որ հավանական է՝ հիշյալ բառերը կարդացվել են հայերենի կանոնների համաձայն, և դրանցում բառասկզբում արտասանվել է ոչ թե երկբարբառակերպ, այլ e պարզ ձայնավոր: Կարծում ենք՝ դրա վկայությունն կարող է լինել ձեռագրերում բառասկզբի ե - ի դիմաց է տառի զուգահեռ գրությունը: Այլ բառերի հետ միասին Հ.Մուրադյանը բերում է նաև հետևյալ օրինակները. եկեղեցի // էկեղէցի, Երուսաղէմ // էրուսաղէմ[339] :

Է և Ե տառերի գրության ընդունված կանոններից 5-9 – րդ դարերում կատարված շեղումներին հանգամանորեն անդրադարձել է Ս.Գյուլբուդաղյանը: Նա բերում է ե - ի և է - ի ուղղագրությունից շեղված բառերի երկու ցուցակ: Առաջինը՝ բաղկացած 94 միավորից, ներկայացնում է այն բառերը, որոնցում է - ի փոխարեն գործածված է ե տառը: Երկրորդ ցուցակում ներկայացվում է 20 բառ, որոնցում ե - ի փոխարեն գործածված է է տառը[340]:

Նախ անդրադառնանք այն դեպքերին, որոնցում է - ի փոխարեն գրված է ե: Այդ կարգի 94 դեպքերից 74-ը անցյալ անկատար ժամանակի բայաձևեր են, որոնցում ի, իր, ին վերջավորություններից առաջ գրված է ե. օրինակ՝ գիտեի, գիտեիր, գիտեին, եի, եին, կամեին, կազմեին, մտանեին, ուտեին և այլն: Հայտնի է, որ Ա.Մեյեն կարծիք է հայտնել, թե անցյալ անկատարի հնագույն ձևը ե - ով է եղել (ոչ թե դրէին, այլ՝ դրեին): Մ. Աբեղյանը ևս գտնում է, որ նախնական են թե, եթե, եի, եիր, դրեի ձևերը[341] : Է.Աղայանը, համաձայն չլինելով այդ տեսակետին, գտնում է, որ հին ձեռագրերում առկա է է և ե տառերի գործածության չփոթում[342]: Կիսելով վերջին տեսակետը՝ կարծում ենք, որ գրության այս սխալը, գրողի չիմացությունից զատ, կարող է պայմանավորված լինել նաև այլ գործոններով, ինչպիսիք են.

---

339 Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 104:
340 Ս.Գյուլբուդաղյան, նշվ. աշխ., էջ 44-45:
341 Մ.Աբեղյան, նշվ. աշխ., էջ 13:
342 Է.Աղայան, Գրաբարի քերականություն, 1, ա, էջ 358-359:

ա) անշեշտ վանկում է ~ և հակադրության բացակայությունը և միայն ը պարզ ձայնավորի դրսևորման հնարավորությունը ի սկզբանե նախահիմք էր այդ դիրքում է, և գրերի անկաշկանդ գործածության համար. թե՛ և, թե՛ է գրությունները անշեշտ վանկում, միևնույն է, կարդացվելու էին իբրև ը պարզ ձայնավոր.

բ) անշեշտ վանկի՝ և գրով արտահայտվող ը պարզ ձայնավորը և հաջորդող ի ~ ն այսպես թե այնպես կարդացվելու էին իբրև ե-յի (այդպես է և արդի հայերենում):

Այլ կերպ ասած՝ ոչինչ (բացի ուղղագրության համապատասխան կանոնը, որը չէր դիտակցվել գրիչների կողմից) չէր խանգարում նշված դիրքում է ~ ի փոխարեն և ~ ի գրությանը:

Այս նույն կերպ է բացատրվում Հռիփսիմեի, Մատթեոս բառերում և ~ ի գրությունը է ~ ի փոխարեն:

Ավելացնենք, որ գրության այս չփոթը դեռևս ոչինչ չի ասում է, և գրերի հնչյունական արժեքի մեջ կատարված տեղաշարժերի մասին:

Բառերի մեկ այլ խմբում է ~ ի փոխարեն և է գրված բացարձակ բառավերջում. օրինակ՝ եթե, երկոտասանե, ընդարձակե, թե, խլե, ոչ կարե և այլն: Գրության այս չփոթն արդեն կարող էր նշանակել բառավերջում յ ~ ի անկում և է ~ ի մենաբարբառացում: Ինչպես նշվել է, և երկբարբառակերպի դրսևորման համար հին հայերենում նախապայման էր հաջորդող բաղաձայնի առկայությունը: Բացարձակ բառավերջում այդ նախապայմանը չկա, ուրեմն և դիրը այդ դիրքում ազատ կարող էր ներկայացնել է երկբարբառակերպի մենաբարբառացման հետևանքով առաջացած պարզ ը ձայնավոր: Իրավացի է Հ.Մուրադյանը, երբ գրում է. «Արդեն իսկ հին գրական հայերենի եղռասական շրջանում գրաբարյան է ~ ն կորցնելով իր երկբարբառային բնույթը՝ նույնանում է և ձայնավորի հետ: Այս հիմքի վրա ը ~ ն սկսում է հանդես գալ նաև բառավերջի դիրքում»[343]:

Միայն թե պետք է նկատի ունենալ, որ գրաբարում նախապես և ձայնավոր հանդես էր գալիս միայն անշեշտ վանկում:

---

[343] *Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 65:*

Մյուս կողմից՝ հնարավոր է, որ իսկապես թե, եթե բառերի վերջում ի սկզբանե գրվել է և (որը հաջորդող հնչյունի բացակայության պայմաններում պետք է կարդացվեր իբրև ը պարզ ձայնավոր)՝ որպես հաջորդող յ - ի բացակայության նշան. չէ՞ որ միավանկ մի շարք դերանուններում (սա, դա, նա, քո) և սպասարկու ահա, ապա բառերում ա, ո ձայնավորներից հետո յ - ն բացակայում էր, ուրեմն ինչո՞ւ այն չէր կարող բացակայել և - ից հետո թե, եթե սպասարկու բառերի վերջում:

Կարասցեք, յիշեցեք ձևերում և - ի գրությունը նշանակում է պարզ ձայնավորի առկայություն, որը, սակայն, կարող էր պայմանավորված լինել ոչ այնքան է - ի պատմական հնչյունափոխությամբ, որքան ք - ից առաջ է երկբարբառակերպի արտասանության անհնարինությամբ: Մենք արդեն պատճառաբանել ենք, թե ինչու ք - ից առաջ գրվող է - ն պիտի կարդացվեր իբրև պարզ ձայնավոր: Այդ նույն կերպ և գրով պարզ ձայնավոր է արտահայտված բազաձայնական խմբից առաջ խորագետք բառում: Հնարավոր է, որ այս դեպքերում գրիչները չեն կարողացել տարբերակել արմատների և ածանցված ու թեքված բառաձևերի համար առանձին կանոնները և արմատների համար գործող կանոնը (ք - ից և բազաձայնական խմբից առաջ գրվում է և) տարածել են ոչ արմատական ձևերի վրա, մանավանդ որ ը պարզ ձայնավորի արտահայտիչը (թեկուզ միայն անշեշտ վանկում) և տառն էր:

Այս խմբի մի շարք այլ բառերում առկա են թերևս այլ հանգամանքներով չպայմանավորված գրչության սխալներ. օրինակ՝ ամեն (կրոն.), թեպետ, Հռոմայերեն, Յովհաննես:

Ինչպես նշեցինք, Ս. Գյուլբուդաղյանը և - ի փոխարեն է - ով գրված 20 բառ է ներկայացնում: Դրանցից չորսում գրության սխալ չկա, և է - ն գրված է հենց իր տեղում. Գաղիղէա, Հրէից, Հրէաստան, մարգարէին: Բառերի մեծ մասում է - ն գրված է անշեշտ վանկերում, որտեղ արտասանության մեջ հնարավոր է միայն ը պարզ ձայնավոր. օրինակ՝ աւգնէսցէ, Էրուսաղեմ, Էսայի, էթե, էհար, խաւսէցի, խնդրէցէ, կէցէ, հայցէցե, Մովսէսի, փարիսէցի, փարիսէցւոյ: Նշանակում է՝ է գիրը այդ բառերում արտահայտում է պարզ ձայնավոր, որն էլ իր հերթին հուշում է, որ

առկա է երկբարբառակերպի մենաբարբառացում: Մյուս չորս դեպքերում՝ ասէն, էն, եղէն, սիրէմ, չփոթը հետևանք է կա՛մ արմատական ու քերականական ձևերը չտարբերակելու, կա՛մ էլ ուղղակի գործ ունենք գրչության սխալների, վրիպումների հետ:

Է, ե տառերի գրության մեջ նկատված այս չեղումները ուսումնասիրողներին հանգեցրել են այն եզրակացության, որ 5-րդ դարից հետո է, և միավորների արտասանական տարբերությունը սկսել էր վերանալ: Ըստ Է.Աղայանի՝ 8-րդ դարից առաջ է և և տառերի արտասանությունը նույնացել էր[344]: Ս.Գյուլբուդաղյանն արձանագրում է, որ «դեռ Զ-Է դարերում և, է տառերը գրավորում չփոթված են, նույնիսկ բառասկզբում»[345]:

Մեր կարծիքով՝ որևէ հիմք չունենք խոսելու 5-8-րդ դարերում է, և տառերի արտասանության լիակատար նույնացման մասին: Այդ միավորներն ի սկզբանե չէին տարբերվում անշեշտ վանկում, այդ դիրքում չարունակում են չտարբերվել և նշված դարերում: Ուղղակի է երկբարբառակերպի մենաբարբառացման հետևանքով հնարավոր է դառնում անշեշտ վանկի ե պարզ ձայնավորի արտահայտությունը նաև է տառով: Ուրեմն, ստեղծվում է մի իրավիճակ, երբ անշեշտ վանկի ե պարզ ձայնավորը կարելի էր արտահայտել և՛ է, և՛ և տառերով:

Ինչ վերաբերում է շեշտակիր վանկին, ապա այդ դիրքում է, և միավորների չփոթի վերաբերյալ հիմնավոր փաստեր դոյություն չունեն: Ուղղակի այդ դիրքում է - ի մենաբարբառացման հետևանքով փոխվում է հակադրության բնույթը. նախնական է երկբարբառակերպ - և երկբարբառակերպ հակադրությանը փոխարինելու է գալիս ե պարզ ձայնավոր - և երկբարբառակերպ հակադրությունը:

Այսպիսով, է, և գրերի ուղղագրությանը վերաբերող՝ հիշյալ դարերի չեղումները վկայում են մեկ բան. 5-րդ դարից հետո տեղի է ունենում է երկբարբառակերպի մենաբարբառացում:

Այնուհետև Ս. Գյուլբուդաղյանը է, և տառերի գրության չեղումների օրինակներ է բերում 10-17 - րդ դարերին վերաբերող ձեռագիր մատյաններից, վիմագիր արձանագրություններից ու

[344] Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 358:
[345] Ս.Գյուլբուդաղյան. նշվ. աշխ., էջ 45:

հիշատակարաններից[346]: Նախ ակնհայտ է, որ անշեշտ վանկում նախորդ շրջանում դիտարկված երևույթները շարունակում են դրսևորվել, չնայած 12-րդ դարից, ինչպես վկայում է հեղինակը, քերականները ձգտել են վերականգնել դասական ուղղագրությունը[347]: Այս դարերում ոչ միայն չեն վերանում է, և տառերի գրության չեղումները, այլ նաև ի հայտ են գալիս նոր չեղումներ:

11-րդ դարից վկայված գրավոր խոսքում սկիզբ է առնում և 12-13-րդ դարերի գրություններում ավելի ու ավելի տարածում ստանում շեշտակիր վանկի է-ի դիմաց ե գրի գործածությունը: Ս.Գյուլբուդաղյանի բերած օրինակներից մեր ասածն են հավաստում հետևյալները. պետք, մեջ, կես, այսպես, որպես, նոյնպես, աստուածասեր, աղուես, տեր, դեմ, Ներսես և այլն[348]: Անկասկած է, որ շեշտակիր վանկում ե գրի այսպիսի ներթափանցումը է-ի դիրք չէր կարող պայմանավորված լինել սոսկ շփոթությամբ. այս իրողությունը վկայում է տեղի ունեցած հնչյունափոխության մասին:

Ինչպես վերևում տեսանք, 5-9-րդ դարերի չեղումները երևան հանեցին է երկբարբառակերպի մենաբարբառացման իրողությունը: Շեշտակիր վանկում գրաբարյան է-ին արդեն համապատասխանում էր պարզ ձայնավոր: Այդ ընթացքում շեշտակիր վանկում է ~ և գրության չեղումները մասնակի բնույթ ունեին, որովհետև է-ի պարզ արտասանությանը հակադրվում էր և-ի երկբարբառային արտասանությունը: 11-րդ դարից սկսած՝ շեշտակիր վանկ՝ է-ի դիրք է ներթափանցում և տառը, որը վկայում է, որ տեղի է ունեցել շեշտակիր վանկում և երկբարբառակերպի մենաբարբառացում, և և տառը ևս արդեն բոլոր դիրքերում կարող է ներկայացնել ե պարզ ձայնավոր: Ահա այս շրջանից սկսած՝ կարելի է խոսել է և և գրերի լիակատար շփոթի մասին: Ս.Ավագյանը վկայում է, որ «Ժ – ԺԴ դարերի վիմական բնագրերում և միջին հայերենի գրական հուշարձաններում ե, է հնչյունների և գրերի նույնացումը համատարած է դառնում և տարածվում բոլոր բառերի վրա: Այդ գրերը բոլոր դիրքերում

[346] Նշվ. աշխ., էջ 133-147:
[347] Նշվ. աշխ., էջ 133:
[348] Նշվ. աշխ., էջ 137-139:

վոխարինում են իրար բառասկզբում, բառամիջում և բառավերջում, միջձայնավորային կամ միջբաղաձայնային վիճակում»[349]: *Սակայն, իհարկե, գրավոր խոսքի բոլոր դրսևորումներում չեղումները միևնույն ծավալը չունեն: Ինչպես հավաստում է Ս.Գյուլբուդաղյանը, հատկապես բարբառային արտասանության հետևանքով առաջացած չեղումները հանդիպում են գերազանցապես վիմագիր արձանագրություններում, իսկ մատենագրության մեջ չեղումները ավելի քիչ են*[350]:

Ի դեպ, և երկբարբառակերպի մենաբարբառացման գործընթացը չի ընդգրկել միջին հայերենի բոլոր դրսևորումները: Կիլիկյան հայերենում և երկբարբառակերպի առկայություն նկատել է Յոզեֆ Կարստը[351]: *Հր.Աճառյանը նշել է, որ միջին հայերենում չեշտակիր վանկում հանդես էր գալիս ie հնչյունական կազմությունն, իսկ չեշտից դուրս՝ պարզ ձայնավոր*[352]: *Ե - ի երկբարբառային արտասանությունը ի հայտ է գալիս նաև Ծր. Ռիվոլայի բառարանում (Հեր > Հիեր, դետ > դիետ)*[353]:

Նշենք, որ և երկբարբառակերպի մենաբարբառացումն այդպես էլ իր ավարտին չհասավ, չընդգրկեց հայերենի բոլոր դրսևորումները, և, ինչպես արդեն նկատվել է, ժամանակակից հայերենի բարբառների մի մասում և երկբարբառակերպը ունի իր հստակ դրսևորումները, իսկ այլ բարբառներում դեռևս պահպանվում են դրա արձագանքները:

Ինչևէ, կարելի է արձանագրել, որ համաձայն գրավոր աղբյուրների՝ և երկբարբառակերպի մենաբարբառացումը հայերենի բարբառների մի մասում սկսվել է 11 - րդ դարից:

Ձեռագիր մատյանները, հիշատակարանները կամ վիմագիր արձանագրությունները հնարավորություն չեն ընձեռում պարզելու, թե երբ է տեղի ունեցել միավանկ (նաև՝ որոշ երկվանկ) բառերի սկզբում և երկբարբառակերպի վերածումը երկհնչյունի: Ս.Գյուլբուդաղյանը, բերելով Հր.Աճառյանի՝ վերը մեր դիտարկած փաստարկները և - ով սկսվող բառերից առաջ ի նախդրի կի-

---

[349] Ս.Ավագյան, նշվ. աշխ., էջ 99:

[350] Ս.Գյուլբուդաղյան. նշվ. աշխ., էջ 144-145:
[351] Յ.Կարստ, նշվ. աշխ., էջ 27-29:
[352] Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 239:
[353] Տե՛ս Ս.Գյուլբուդաղյան. նշվ. աշխ., էջ 145:

բառուԹյան վերաբերյալ, պնդում է, որ մինչև ուշ միջնադար՝ ընդհուպ մինչև 18-րդ դարը, բառասկզբի ե - ն հնչել է իբրև պարզ ձայնավոր[354]: Գուցե Թե այս ենԹադրուԹյունը ճիշտ է երկվանկ ու բազմավանկ բառերի համար, բայց բարբառներում միավանկ բառերի սկզբում յ - ի հավելումը, մեր կարծիքով, ավելի վաղ տեղի ունեցած երևույԹ է: Ճիշտ է, դեռևս գրաբարյան շրջանում, նույնիսկ 5 - րդ դարում առանձին բառեր գործածվել են՝ բառասկզբում նաև ունենալով ոչ նախդրային ծագում ունեցող յ՝ յերկար, յեղանակ, յետ[355], սակայն պարզ է, որ նախքան յ > հ հնչյունափոխուԹյունը և երկբարբառակերպով սկսվող բառերի սկզբում յ հնչել չէր կարող, հակառակ դեպքում այն կդառնար հ. հայերենում առկա են օրինակներ, երբ բառասկզբի նախնական յե խմբի յ - ն դարձել է հ. դրբ. յեղ – հեղափոխել, դրբ. յենուլ – հենել: Ռ.Ղազարյանը բառասկզբի ե - ի դիմաց յե գրուԹյան օրինակներ է բերում 13-րդ դարի մի բժշկարանից և Ամիրդովլաթ Ամասիացու (15-րդ դար) աշխատուԹյունից. յելնէ, յերկայն[356]: Հնարավոր է՝ սրանցում առկա է յ - ի՝ հնուց եկող հավելում (վերևի օրինակների պես), և յ - ն այդ օրինակներում պետք է որ կարդացվեր հ, ինչպես որ է, օրինակ, Բայազեթի բարբառում. դրբ. ելանել - Բ. հ'ըլնել, դրբ. երկայն - Բ. հէրկէն: Մյուս կողմից՝ քանի որ բառասկզբի յ - ն այդ շրջանում կարդացվում էր հ, նշված բառերում յ - ն կարող էր նշանակել բառասկզբում տեղի ունեցած հ - ի հավելում: Միջին գրական հայերենում Ռ.Ղազարյանի նկատած՝ յ - ի հավելում ունեցող յերեք, յերկաթ, յերկու ձևերում[357] բառասկզբի յ - ն չէր կարող լինել հ – ի արտահայտիչ, որովհետև բարբառային նման ձևեր մեզ հայտնի չեն: Բարբառները չունեն նաև այդ բառերի՝ յ - ով սկսվող ձևեր: Մնում է ենԹադրել, որ դրանք սկզբնավորվող գրական նոր արտասանուԹյան արտահայտուԹյուն են: Մեզ համար ավելի կարևոր է Ռ.Ղազարյանի հիշատակած յերբ ձևը[358], որը հաստատապես հավաստում է ե > յե փոփոխուԹյան առ-

[354] Ս.Գյուլբուդաղյան. նշվ. աշխ., էջ 146:
[355] Նույն տեղում:
[356] Տե՛ս Ռ.Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Ե., 2001, էջ 47:
[357] Նույն տեղում:
[358] Տե՛ս նշվ. աշխ., էջ 49:

կայութիյունը: Եթե նկատի ունենանք, որ այդ ձևը գործածվել է հայ բժշկապետ Գրիգորիսի (12 - րդ դարի վերջ - 13 - րդ դարի առաջին կես) բժշկարանում, կարող ենք պնդել, որ 12 - րդ դարում բառասկզբի ե > յե անցումն արդեն իրողութիյուն էր:

Թանի որ Հ.Մուրադյանը յ > հ փոփոխութիյան սկիզբը տեսնում է 11 - րդ դարում[359], ուրեմն ե > յե փոփոխութիյունը մինչև այդ չէր կարող տեղի ունեցած լինել: Միևնույն ժամանակ, յ > հ փոփոխութիյունը 11 - րդ դարում պետք է ավարտին հասած լիներ, որովհետև այդ դարից սկսած՝ հայերեն են ներթափանցում արաբաթուրքական բառեր, որոնց սկզբի յ - ն այլևս հ չի դառնում. օրինակ՝ յօրղան, յախընջի, յօնջա, յարա, յախա, յավաշ և այլն: Այս բառերի շարքում կան նաև յե կապակցութիյամբ սկսվող միավորներ՝ յեթիմ, յեմիշ, յեսիր, յերիշ և այլն: Կարծում ենք՝ յ հնչյունով սկսվող բառերի ներթափանցումը բանավոր հայերեն պետք է բառասկզբի ե երկբարբառակերպից առաջ յ հնչյունի հավելման ճանապարհով: Այսպիսով, 11 - րդ դարից սկսած՝ հնարավոր է դառնում միավանկ և որոշ երկվանկ բառերի սկզբում ե երկբարբառակերպի վերածումը երկհնչյունի:

Հասկանալի է, որ ժամանակագրորեն ե երկբարբառակերպի վերածումը երկհնչյունի պետք է կատարվեր նախքան նրա մենաբարբառացումը: Հավանական է, որ ե > ye փոփոխութիյունն է հենց սկզբնավորել ե երկբարբառակերպի մենաբարբառացումը. բարբառների մի մասում ստացված բառասկզբի ye խմբում e — ն արդեն ունեցել է պարզ ձայնավորի արժեք, և այդպիսով ե երկբարբառակերպի դիրք է ներթափանցել e պարզ ձայնավորը, այդտեղից էլ շեշտակիր այլ վանկերում ևս սկիզբ է առել մենաբարբառացման գործընթացը:

Այսպիսով, կարելի է ներկայացնել է, ե երկբարբառակերպների կրած պատմական հնչյունափոխութիյունների հետևյալ ժամանակագրական պատկերը.

1. է երկբարբառակերպի մենաբարբառացում (5-րդ դարից սկսած).

2. միավանկ ու որոշ երկվանկ բառերի սկզբում ե երկբարբառակերպի վերածում երկհնչյունի (11 - րդ դար).

---

[359] Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 229:

3. բարբառների մի մասում ե երկբարբառակերպի մենաբարբառացում (11 - րդ դարից սկսած):

է, ե երկբարբառակերպների պատմական զարգացումը բարբառներում կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով.

Երկբարբ. հնչյուն	դիրք	ընդհանուր պոլիընթաց	դործոն	հնչյունափոխ.	ժամանակ
է (ei)	բոլոր	մենաբարբառացում	*գրչք,անչ.ք տիպի ձևերում e պարզ ձայն. առկայութ.*	ei > e	5-րդ դարից սկսած
ե (ie կամ eɔ)	մխա-վանկ բառերի սկիզբ	բառասկզբի արտասանության ուժգնացում	փոխառություն ներ	*ie կամ* eɔ>ye	11-րդ դար
	այլ դիրքերում վանկ	մենաբարբառացում	ե > յե հնչյունափոխ ություն.	ie կամ eɔ >e կամ i	11-րդ դարից սկսած

Ծանոթություն 1. *Անշեշտ վանկում ե - ն պարզ ձայնավոր էր, ուստի աղյուսակում այդ դիրքն ընդգրկվել չէր կարող:*

Ծանոթություն 2. *Աղյուսակն արտահայտում է միայն երկբարբառակերպների կրած փոփոխությունները, հետևաբար այն չի արտացոլում որոշ բարբառներում ե երկբարբառակերպի առկայությունը:*

Ծանոթություն 3. *Աղյուսակում ներկայացված են մեր կողմից հնարավոր համարված հնչյունափոխական դործոնները, որոնք կարող են և վճռորոշ դեր խաղացած չլինել հնչյունափոխության դործընթացում:*

Եզրակացություններ

1. Մեսրոպյան այբուբենի է, և տառերը (գրերը) գրաբարում ունեին կիրառության ոլորտների բաշխման հետևյալ պատկերը:

է և ե տառերը կարող էին գրվել.

ա) միավանկ բառերում (բառի սկզբում կամ բառամիջում)՝ մեկ բաղաձայնից առաջ.

բ) երկվանկ ու բազմավանկ բառերի շեշտակիր վանկում՝ մեկ բաղաձայնից առաջ:

Այս երկու դիրքերում է - ի կամ և - ի դրսևորվելը պայմանավորված էր հնչյունաբանական (հնչյունական միջավայր) կամ հնչույթաբանական (իմաստատարբերակիչ դեր, ծագումնաբանություն) գործոններով:

Միայն է տառ էր գրվում.

ա) երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբում՝ ձայնավորից առաջ.

բ) բառամիջի վանկասահմանում՝ ձայնավորից առաջ.

գ) բառավերջի (միավանկ և բազմավանկ բառերի) բաղաձայնական խմբից առաջ, եթե այն ձևավորվում էր վերջնավանկի է ունեցող բառի վերջում քերականական մասնիկի (օր.՝ -ք) հավելումով.

դ) բառավերջում:

Եթե առաջին երեք դեպքերում է - ի գրությունը պայմանավորված էր բառակազմական, քերականական գործոններով, ապա չորրորդ դեպքում դեր էր խաղում հայերենի բառավերջի արտասանական յուրահատկությունը:

Միայն և տառ էր գրվում.

ա) բառավերջի (միավանկ և բազմավանկ բառերի) բաղաձայնական խմբից առաջ (բացառությամբ է տառի գրության գ կետը ներկայացնող դեպքերի).

բ) շեշտակիր վանկում ձայնավորից (ա) առաջ.

գ) անշեշտ վանկում (բառասկիզբ, բառամեջ) բաղաձայնից առաջ:

Առաջին երկու դեպքերում և - ի դրսևորումը պայմանավորված էր հնչյունաբանական գործոններով, իսկ վերջին դեպքում և գրվում էր ուղղագրական հիմունքով:

2. Է և Ե գրերը հին հայերենում ունեին հնչյունական տարբեր արժեքներ:

Է գիրը ներկայացնում էր ei արտասանությամբ երկբարբառակերպ թե՛ շեշտակիր վանկում, թե՛ ձայնավորից առաջ եղած դիրքերում:

Ե գիրը ներկայացնում էր.

ա) ie կամ eə արտասանությամբ երկբարբառակերպ՝ շեշտակիր վանկում,

բ) e պարզ ձայնավոր՝ անշեշտ վանկում:

3. Է և Ե միավորները զրաբարում գտնվում էին հետևյալ հարաբերությունների մեջ.

ա) շեշտակիր վանկի՝ հնչյունական շրջապատով չպայմանավորված դիրքերում է ~ ն և ե ~ ն ունեին առանձին հնչույթների արժեք (կարող էին գտնվել միևնույն պայմաններում).

բ) շեշտակիր վանկի՝ հնչյունական շրջապատով պայմանավորված դիրքերում է ~ ն և ե ~ ն ներթահնչույթներ էին՝ փոխբացառող բաշխման հարաբերությամբ (մեկը չէր կարող հանդես գալ մյուսի դիրքում).

գ) շեշտակիր վանկից դուրս՝ ձայնավորից առաջ, և բացառական բառավերջում է ~ ե հակադրությունը չեզոքանում էր, և գերհնչույթի դերում հանդես էր գալիս է ~ ն:

դ) շեշտակիր վանկից դուրս՝ բաղաձայնից առաջ, է և ե երկբարբառների հակադրությունը չեզոքանում էր, և գերհնչույթի դերում հանդես էր գալիս ե դրով արտահայտվող e պարզ ձայնավորը:

4. Հինհայերենյան է և ե միավորների արժեքներն ու փոխհարաբերությունները բարբառներում արտացոլվում են երկու կերպ.

ա) ե երկբարբառակերպը պահպանած մի շարք բարբառներում, չնայած է ~ ի արժեքի փոփոխությանը՝ մենաբարբառացմանը, է ~ ե զրաբարյան փոխհարաբերությունը դրսևորվում է բավականին օրինաչափ եղանակով.

բ) ե երկբարբառակերպը չպահպանած մի շարք բարբառներում է ~ ե զրաբարյան փոխհարաբերությունը դրսևորվում է անուղղակի միջոցներով՝ շեշտակիր ու անշեշտ վանկերի հնչյունափոխական զանազանություններով, որոշ դեպքերում (ոլ,ու բա-

ձաձայններից առաջ) հնչյունների դրսևորման յուրահատկություններով և այլն:

5. է, ե երկբարբառակերպներն ունեցել են պատմական զարգացման տարբեր ընթացք:

է երկբարբառակերպը մենաբարբառացման է ենթարկվել հայերենի բոլոր դրսևորումներում:

ե երկբարբառակերպն ունեցել է հետևյալ զարգացումները.

ա) հայերենի բարբառների մեծ մասում միավանկ բառերի (ինչպես նաև որոշ երկվանկ բառերի) սկզբում վերածվել է երկհնչյունի.

բ) որոշ բարբառներում շեշտակիր վանկում պահպանել է երկբարբառային արտասանությունը, այլ բարբառներում մենաբարբառացել է՝ առավելաբար վերածվելով e կամ i պարզ ձայնավորի, երբեմն էլ՝ հնչյունական այլ իրողության:

Միավանկ բառերի սկզբում ե երկբարբառակերպի անցումը երկհնչյունի՝ հիմք է դարձել, որ գրական լեզվում նաև երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբի՝ ե գրով արտահայտվող e պարզ ձայնավորը վերածվի երկհնչյունի:

6. Հնչյունափոխական տարբեր իրողությունների համադրումը, ձեռագիր մատյաններում և վիմագիր արձանագրություններում եղած շփոթի ու շեղումների դիտարկումը թույլ են տալիս մոտավորապես որոշելու է, ե երկբարբառակերպների պատմական հնչյունափոխությունների ժամանակը: Այդ փոփոխություններն ըստ էության ունեցել են հետևյալ ընթացքը.

ա) 5 - րդ դարի երկրորդ կեսից սկիզբ է առել է երկբարբառակերպի մենաբարբառացումը, որն ընդգրկել է հայերենի բոլոր դրսևորումները.

բ) 11 - րդ դարում սկիզբ է առել միավանկ ու որոշ երկվանկ բառերի սկզբում ե երկբարբառակերպի վերածումը երկհնչյունի. այս փոփոխությունը ընդգրկել է հայերենի դրսևորումների մեծ մասը.

գ) 11 - րդ դարից սկիզբ է առել նաև ե երկբարբառակերպի մենաբարբառացումը բարբառների մեծ մասում. մի շարք բարբառներում այն տեղի չի ունեցել:

Резюме

В работе обстоятельно дается характеристика употребления месроповских букв ը, ե, по-новому представляются правила орфографии этих букв в грабаре. Благодаря фонетико-фонологическому анализу и использованному диалектическому материалу становится возможным уточнить фонетическое значение месроповских букв ը, ե в разных позициях слова.

На этом основании описывается также дальнейшее развитие фонетических явлений, обозначаемых буквами ը, ե в армянском языке.

Результаты исследования обобщенно представлены в следующих выводах.

1. Буквы ը, ե месроповского алфавита в грабаре имели четкое распределение сфер применения.

Буквы ը и ե могли писаться:

а) в односложных словах (в начале или середине слова) перед одним согласным

б) в двусложных и многосложных словах в ударном слоге перед одним согласным.

В этих двух позициях проявления ը или ե обусловлены фонетическими (звуковое окружение) или фонологическими (смыслоразличительная роль, этимология) факторами.

Буква ը писалась:

а) в начале двусложных и многосложных слов перед гласным;

б) на стыке слогов внутри слова перед гласным;

в) на конце слов (односложных и многосложных) перед группой согласных, если она образовывалась в конце слова, имеющего в последнем слоге ը, прибавлением грамматической частицы (напр.:- ը);

г) в конце слов.

Если в первых трех случаях написание ը было обусловлено словообразовательными, грамматическими факторами, то в

четвертом случае играло роль своеобразие произношения конца слова в армянском языке.

Буква ъ писалась:

а) на конце слов (односложных и многосложных) перед группой согласных (за исключением случаев, представленных выше в пункте *в* написания буквы ը);

б) в ударном слоге перед гласной ա (а);

в) в безударном слоге (начало слова, середина слова) перед согласным.

В первых двух случаях проявление ъ было обусловлено фонетическими факторами, а в последнем случае ъ писалось в соответствии с орфографией.

2. Письмена ը и ъ в древнеармянском языке имели различные фонетические значения.

Буква ը представляла *ei* по произношению дифтонгоид как в ударном слоге, так и в позициях перед гласным.

Буква ъ представляла:

а) *ie* или *eə* по произношению дифтонгоид в ударном слоге,

б) *e* монофтонг в безударном слоге.

3. Единицы ը и ъ в грабаре находились в следующих отношениях:

а) в позициях ударного слога, не обусловленных фонетическим окружением, ը и ъ имели значение отдельных фонем (могли находиться в одних и тех же условиях);

б) в позициях ударного слога, обусловленных фонетическим окружением, ը и ъ были аллофонами, находились в отношении взаимоисключающей дистрибуции (один не мог выступать в позиции другого);

в) вне ударного слога - перед гласным и в абсолютном конце слова противопоставление ը - ъ нейтрализовывалось и в роли архифонемы выступала ը ;

г) вне ударного слога - перед согласным противопоставление дифтонгов ի̯-ե нейтрализовывалось и в роли архифонемы выступал монофтонг *е*, обозначаемый буквой ե .

4. Значения и взаимоотношения древнеармянских единиц ի̯ и ե отражаются двумя способами:

а) сохранившихся в ряде диалектов дифтонгоид ե, несмотря на изменение значения է - монофтонгизацию, грабарное взаимоотношение ի̯ - ե проявляется достаточно закономерным путем;

б) в ряде диалектов, не сохранивших дифтонгоид ե, грабарное взаимоотношение ի̯ - ե проявляется косвенным путем – многообразием звуковых изменений в ударных и безударных слогах, в некоторых случаях (перед согласными ղ,ն) своеобразием проявления звуков и т.д..

5. Дифтонгоиды ի̯ и ե имели разное историческое развитие.

Дифтонгоид ի̯ подвергся монофтонгизации во всех проявлениях армянского языка.

Дифтонгоид ե имел следующее развитие:

а) в большей части армянских диалектов в начале односложных слов (так и некоторых двухсложных слов) превратился в дифтонг;

б) в некоторых диалектах в ударном слоге сохранил дифтонгическое произношение, в других диалектах монофтонгизировался, большей частью превращаясь в монофтонги *е* или *і*, иногда - в другие фонетические явления.

Переход дифтонгоида ե в дифтонг стал основанием для того, чтобы и в литературном языке в начале двусложных и многосложных слов монофтонг *е*, обозначаемый буквой ե, превратился в дифтонг.

6. Сопоставление различных звукоизменительных явлений, наблюдения за смещением и отклонениями, имеющимися в рукописях и надписях на камнях, позволяют приблизительно

определить время исторических звукоизменений дифтонгоидов ի, ե.

Полагаем, что эти изменения имели следующий ход развития:

а) со второй половины пятого века начинается монофтонгизация дифтонгоида ի , которая охватила все проявления армянского языка,

б) в одиннадцатом веке начинается превращение дифтонгоида ե в дифтонг в начале односложных и некоторых двухсложных слов, это изменение охватывает все проявления армянского языка,

в) с одиннадцатого века начинается также монофтонгизация дифтонгоида ե в большей части диалектов, в ряде диалектов это изменение не имело места.

Summary

In the work the detailed description of the functions of letters ⴑ and ⴍ created by Mashtots is given, and the rules of their orthography in grabar (Old Armenian language) are presented in a new way. It became possible to define the phonetic value of the letters ⴑ and ⴍ in different positions in a word due to the phonetic and phonemic analyses, and dialectical materials used. Based on this the further phonetic development of those letters in Armenian is given, as well.

The results of this study are summarized in the following comments:

1. The letters ⴑ, ⴍ in the alphabet created by Mashtots had clear division of usage in grabar (Old Armenian language).

The letters ⴑ, ⴍ could be used in the following cases:

a) in monosyllabic words (at the beginning or in the middle of a word) followed by a consonant sound;

b) in a stressed syllable of a disyllabic or multisyllabic word followed by a consonant sound.

In these two positions the use of ⴑ or ⴍ depends on phonetic factors (sounds preceding and following) and some phonological ones (meaning differentiating or semantic role and etymology).

The letter ⴑ was used in the following cases:

a) at the beginning of a disyllabic or multisyllabic word, followed by a vowel sound;

b) as a last letter of a syllable in the middle of a word, followed by a vowel sound;

c) at the end of a word (monosyllabic or multisyllabic), in front of a consonant group in the case it is formed in the end of a word that has the letter ⴑ in its last syllable by adding a grammatical ending, e.g. –ⴒ.

d) at the end of the word.

In the first three cases the use of the letter ⴑ depends on some word-formative and grammatical factors while in the fourth case the word-end pronunciation peculiarity of the Armenian language has an important role.

The letter ⴍ was used in the following cases:

a) followed by a consonant letter-combination at the word-end, with the exception of the cases when the letter ⴑ was used mentioned above in point c;

b) followed by the vowel (ա) in a stressed syllable:

c) followed by a consonant sound in an unstressed syllable at the beginning or in the middle of a word.

In the first two cases the use of the letter ե depends on phonetic factors, and in the last one the letter ե was used based on orthographical and spelling principles.

2. The letters է and ե had different phonetic values in Old Armenian.

In both cases when in a stressed syllable and when followed by a vowel sound, the letter է was pronounced like the diphthong *ei*.

The letter ե was pronounced as follows:

a) as like diphthongs *ie* or eə in a stressed syllable;

b) as the simple vowel sound *e* in an unstressed syllable.

3. The relationship between the letter units է and ե was the following:

a) in a stressed syllable the letters է and ե were valued as separate phonemes when their use didn't depend on the sound surroundings (sounds preceding and following), and they could equally be used in the same conditions;

b) in a stressed syllable the letters է and ե were valued as subphonemes and in a so called inter-exceptional relation when one of them couldn't be used in the presence of the other. This occurred when their use depended on the sound surroundings;

c) outside the stressed syllable and followed by a vowel sound, and in the absolute word-end the է-ե contradiction was neutralized. In this case the letter է was used as an arch-phoneme;

d) outside the stressed syllable and followed by a consonant sound, the contradiction between the diphthongs was neutralized, and the simple vowel sound *e* was used as an extra-phoneme.

4. The values of the Old Armenian letter units է and ե and their interrelationships in dialects were presented in two ways:

a) in a number of dialects where the letter ե was pronounced like a diphthong the interrelation between է and ե was rather regular though the letter է was pronounced like a monophthong;

b) in a number of dialects where the diphthong-like letter ե wasn't kept, the interrelation between Old Armenian է and ե was presented by indirect ways – by a variety of sound interchange in stressed and unstressed syllables, in some cases with peculiarities of sounds followed by the consonants ղ and ռ, and so on.

5. The diphthong-like sounds է and ե had different ways of historical development.

The diphthong-like sound ի became monophthongized in all the forms of the Armenian language.

The diphthong-like sound ե had the following types of development:

a) in most Armenian dialects it changed into a diphthong at the beginning of monosyllabic words /some disyllabic words, as well/;

b) in a number of dialects it kept remaining in stressed syllables as a diphthong-like sound; in some other dialects it became monophthongized and changed mostly into a simple vowel sound e or i; sometimes underwent entirely different phonetic change.

The diphthongization of the diphthong-like sound e caused the simple vowel sound e in the literary Armenian presented by the letter ե to change into a diphthong at the beginning of disyllabic and multisyllabic words, as well.

6. The comparison of different sound interchange processes, and the observation of confusion and mistakes in manuscripts and epitaphs let us define the approximate time for historical sound interchange of the diphthong-like sounds ի and ե. In our opinion, those changes took place according to the following process:

a) from the middle of the 5th century, the monophthongization of the diphthong-like sound ե started, and this happened in all forms of Armenian;

b) in the 11th century, the diphthong-like sound ե began to change into a diphthong at the beginning of monosyllabic words and some disyllabic ones; this change happened in most forms of Armenian;

c) from the 11th century in most Armenian dialects started also the monophthongization of the diphthong-like sound ե; this change didn't happen in a number of dialects.

Բառացանկ

է, ե ունեցող բառերի

(Գրաբար - Վանի բարբառ - Բայազետի բարբառ)

ԳՐԱԲԱՐ	ՎԱՆ	ԲԱՅԱԶԵՏ
Ազատել	ազատել	ազատել
Ալևոր	խալիվոր	խալիվոր
Ածելի	արծըլի	ուռծըլի
Աղեղն	անանակ	անըղնակ
Աղուէս	աղվէս	ազվէզ
Ամեն /այն/	հըմէն	հ՛ըմէն
Աներ	աներ	աներ
Անէծք	անէծք	անեակ
Անձրև	անձրեվ	անձրեվ
Աչակերտ	աշկեռտ	աշկեռտ
Ասեղն	ասեղ	ասեղ
Արեգակն	արեկյանկ	արեքակ
Արեւ	արեվ	արեվ
Աւել	ավել	ավել
Աւելել	ավիլել	ավլել, ավվել
Աւել/ի/	ավել	հ՛ավել
Աւելորդ	ավիլ՞որթ	հ՛ավելնոռթ
Աւետարան	ավէդրան	ավէդրան
Աւերակ	ավերակ	ավեր
Աւերել	ավիրել	ավիրել
Բաղեղն	պաղեղ	բ՛առեղ
Բարեկամ	պարէկամ	բ՛արէկամ
Բարեկենդան	պարկէնդանքյ	բ՛արիկէնթան
Բեմ	փէմ	բ՛եմ
Բեռն	պեռ	բ՛եռ
Բերան	պէրան	բ՛էրան
Բերդ	պեռթ	բ՛եռթ
Բերել	պիրել	բ՛էրել

Գետ	կյետ	դ՛նտ
Գետին	կյետին	դ՛էտին
Գերան	կյէրան	դ՛էրան
Գերանդի	կյէրընդի	դ՛էրընդի
Գերեզման	կյէրէզման	դ՛էրէզման
Գերի	կյերի	դ՛էրի
Գէշ	կյէշ	դ՛էշ
Գիշեր	կիշեր	դ՛իշեր
Գոմէշ	կյէօմէշ	դ՛օմէշ
Գռեհ	գյըռեխ	գըռնխ
Դեղ	տեղ	դ՛նղ
Դեղել	տեղել	դ՛նղել
Դեղին	տեղին	դ՛նղին
Դեւ	դէվ	դ՛էվ
Դէզ	տէզ	դ՛էզ
Դէմ	տէմ	դ՛էմ
Եզն	յեզ	յեզ
Ելանել	էլնել	հըլնել
Եկն	էկա	էկա
Եղայ	էլա՛	հէլա
Եղբայր	ախպէր	ա՛խպէր
Եղի /ցորեն/	յեղի	յեղա
Եղիճ	յեղինջ	յեղըռճիկ, ա՛ղինջ
Եղնիկ	յեղնիկ	յեղնիկ
Եղունդն	յեղունգյ	յեղունգ
Եմ	եմ	եմ
Եռ	յեռ	յեռ
Եռալ	յեռալ	յեռալ
Ես	յես	յես
Երազ	էրազ	էրազ
Երախայ	—	էրէխա
Երակ	էրակ	էրակ
Երամ	էրամ	էրամ
Երանի	էրանէկ	էրնէկ
Երան /քամի/	էրան	էրան
Երբ	յեփ	յեփ
Երդ	—	յերք
Երդիք	էրսխա	հէոթխս
Երդնուլ	հէրսըվնա՛լ	հօռթըվալ
Երդումն	էօրսխում	հօռթում
Երեկոյ	իրիկուն	հիրկուն

Երես	իրես	հիրես
Երեսուն	յեռասուն	յեռասուն
Երերալ	էրէրալ	էրէրմանք
Երեւիլ	էրէվալ	էրէվալ
Երեք	իրեքյ	իրեք
Երէկ	էրէկ	հէրէկ
Երթալ	էրթ՚ալ,էթ՚ալ	էթալ
Երինջ	էրէնջիկ	էրինջ
Երկաթ	էրկաթ	էրկաթ
Երկայն	էրկէն	հէրկէն
Երկանք	էրկանքյ	էրկանք
Երկինք	յէրկինքյ	յերգինք
Երկիր	յէրկիր	յերկիր
Երկիւղ	--	յերզուղ
Երկու	էրկու	էրկու
Եփել	իփիլ	էփել
Էգ	էքյ	էք
Էշ	էշ	էշ
Ընկեր	ինգյեր	հընգեր
Թեթեւ	թեվթըր	թեթըվ
Թել	թել	թել
Թեւ	թեւ	թեվ
Թեւի	թեւի	թեվի
Թէ	թէ	թէ
Թիթեռնիկ	թըռթըռնէկ	թիթըռնեկ
Լեզու	լէզիւ	լիզու
Լեղակ	լօղակ	լօղակ
Լեղի	լեղի	լեղի
Խաչերկաթ	խառճկաթ	խառճըկաթ
Խելացի	խէլացի	խէլացի
Խելք	խելք	խելք
Խեղդել	խեխտել	խեխտել
Խեղճ	խեխճ	խեխճ
Խէժ	խիժ	խիժ
Ծեփ	ձեփ	ձեփ
Ծեփել	ձիփել	ձէփել
Միածեռնակ	ձիձեռնակ	ձիճըռնեկ
	ճճրռնեկ	ճիճըռնեկ
Կանեփ	կանաւփ	կէնամփ
Կեղծաւոր	կէղձավոր	կեխծավոր
	կեղծավոր	

Կեռ	կեռ	կեռ
Կեր	կեր	կեր
Կէս	կէս	կէս
Կիւրակէ	կիւրակի	կիւրեղի
Կորեակ	կորեկ	կօրեկ
Համեմ	խամնմ	խամնմ
Հայելի	խայլիկ	խաղլի
Հանել	խանել	խանել
Հանելուկ	խանելիւկ	խանէլուկ
Հնձանիլ	խէղնել, խէձնել	խէղնել
Հեղեղ	խղեղ	խեղեղ
Հետ	խետ	խէտ
Հերիսայ	խարիսա	հիւրիսաւ
Հերկել	խերկ, խերկել	խերկ
Հերու	խէրու	խէրու
Հրեշտակ	խրէշտակ, խրիշտակ	խրիշտակ
Ձեռք	ձեռ, ձեռքյ	ձ՛եռ, ձ՛եռք
Ձեւ	ձեվ	ձ՛եվ
Ձեւել	ձիվել	ձ՛եվել
Ձէթ	ձէթ	ձ՛էթ
Ձմեռն	ձմեռ	ձ՛ըմեռ
Ձմերուկ	ձմըրկ	ձ՛ըմէրուկ
Ձուաձեղ	ձվազեղ	ձ՛ըվաձեղ
Ճեղք	ճեխքյ	ճեխք
Ճննճ	ճննջ	ճննջ
Մեղաւոր	մեղավոր	մեղավոր
Մեղր	մեղր	մեղըր
Մեղք	մեխքյ	մեխք, մեխակ
Մեռանիլ	մեռնել	մեռնել
Մերկ	մօրկ մերկ	մօրէ մերկ
Մինք	մեննքյ	մեննք
Մէջ	մէչ	մէչ
Մէջք	մէչք	մէչկ
Մժեխ	մժիկ	մժեխ
Մողէզ	մօղօզիկ	օցմօղօզիկ
Յետ	յետ ,հիտիվ	յետ, հիտեվ
Նեխիլ	նեխել	նեխել
Նեղ	նեղ	նեղ
Նեղանալ	նեղանալ	նեղանալ
Ներկել	նիրկել	նէրկել
Ներքս	ներս	նեռս
Շերեփ	չիրեփ	չէրեփ
Շերտ	չեռտ	չեռտ
Շէկ	չէկ	չէկ

Շէն	չէն	չէն
Որբևայրի	վոռպէվէրի	վոռփէվէրի
Ուղեղ	ուղնդ, ուղող	ուղնդ, Հըղօղ
Զորեքշաբթի	քյէօրէօշպիթ	չօրէքշափտի
Պատկեր	պատկերքյ	պլատկերք
Պէս	պէս	պէստ
Պէտք	պէտք	պէտկ
Պճեղն	պճեղ	պճեղ
Սեամ	չեմքյ	չեմ
Սեաւ	սեվ	սեվ
Սեղան	սեղան	սեղան
Սեր	սեր	սեր
Սերմն	սերմ	սերմ
Սէգ	սէգ	սէգ
Սէր	սէր	սէռ
Սիսեռ	սիսեռ	սիսեռ
Սկեսուր	կլխուր	կլխուր
Սկեսրայր	կէսրէր	կէսրար
Սառնշ	սառեճ	սառեճ
Վախենալ	վիխէնալ	վախէնալ
Վառեակ	վիռէկ	վառեկ
Վարժապետ	վիրժիպետ	վառժապետ
Վեր	վեր	վեր
Վերայ	վէրէն, վէր,	վըրէն
Վերջ	վերչ	վեռչ
Վեց	վեց	վեց
Տաշեղ	տաշեղ	տաշեղ
Տեղ /ի/	տեղ	տեղ
Տեսակ	տէսակ	տէսակ
Տեսանել	տիսնալ	տէնալ
Տէր	տէր	տէր
Ցերեկ	ցէրէկ	ցէրկ
Ցեց	ցեց	ցեց
Ցորեան	ցորէն	ցօրեն
Փեթակ	փէթիկ	փէթիկ
Փեսայ	փէսա	փէսա
Փետել	փիտել	փիդել
Փետուր	փիտուր	փիդուռ
Քենի	քյենի	քէնի
Քեռի	քյեռի	քեռի, քաւռի
Քերել	քյիրել	քէրել
Քերթել	քյըրթել	քըռթել
Օրէնք	օրէնքյ	օրինք

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ., Գրաբարի քերականություն, Ե., 1936:
Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1958:
Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974:
Աղաբեկյան Մ., Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, ՀԲԱ, պրակ 3, Ե., 2010:
Աղայան Է., Գրաբարի քերականություն, 1, ա, Ե., 1964:
Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
Աղայան Է., Մեղրու բարբառը, Ե., 1954:
Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Ե., 1954:
Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4 Բ, Ե., 1961
Աճառյան Հ.,Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Ե., 1971:
Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, Մոսկվա - Նոր-Նախիջևան, 1911:
Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, 1-4, Ե., 1971 – 1979:
Աճառյան Հ., Հայոց գրերը, Ե., 1984:
Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 1 – 2, Ե., 1940 – 1951:
Աճառյան Հ., Քննություն Կիլիկիայի բարբառի, Ե., 2003:
Աճառյան Հ., Քննություն պոլսահայ բարբառի, Ե., 1941:
Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի, Ե., 1952:
Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979:
Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989:
Ասատրյան Մ., Լոռու խոսվածքը, Ե., 1968:
Ասատրյան Մ., Ուլմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962:
Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն (X – XIV դդ.), Ե., 1973:
Ալեմիքեան Գ., Միւրմէլեան Խ., Ալգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ա - Բ, Վենետիկ, 1836 – 1837:
Բաղդասարյան Ս., Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973
Բաղդասարյան Ս., Մշո բարբառը, Ե., 1958:
Բաղրամյան Ռ., Դերսիմի բարբառային քարտեզը, Ե., 1960:
Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Ե., 1964:
Բաղրամյան Ռ., Հայերեն բարբառներ (Սևանա լճի ավազանի խոսվածքները), Ե., 1972:

Գյուլբուդաղյան Ս.. Հայերենի ուղղագրության պատմություն, Ե., 1973:
Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957:
Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966:
Զաքարյան Հ., Մաշտոցը՝ լեզվաչինարար, Նյութեր մաշտոցյան գրերի 1600-ամյակին նվիրված գիտաժողովի, Ե., 2005:
Թոխմախյան Ռ., Ժամանակակից հայերենի չեչտի բնույթը, «Լեզվի և սճի հարցեր», պրակ 3, Ե., 1975:
Խաչատրյան Ա.Ե., Բարբառների քննության Աճառյանի սկզբունքները, ՊՀՀ, Թ. 1, Ե., 1976:
Խաչատրյան Ա.Հ., Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Ե., 1988:
Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Ե., 2004:
Խաչատրյան Վ., Վարդենիսի բարբառը, Ե., 2004:
Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002:
Կոստանդյան Դ., Երզնկայի բարբառը, Ե., 1979:
Կոստանդյան Դ., Խարբերդի բարբառի հնչյունաբանական և ձևաբանական հիմնական առանձնահատկությունները, Հայերենի բարբառագիտական ատլաս, 1, Ե., 1962:
Համբարձումյան Վ., Գրաբարի ձեռնարկ, Ե., 2004:
«Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան», Ե., 2008:
Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 1, Ե., 1982:
Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2, Ե., 1985:
Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977:
Հանեյան Ա., Եղեսիայի բարբառը, Հայերենի բարբառագիտական ատլաս, 1, Ե., 1982:
Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, Ե., 1978:
Ղազարյան Ռ., Մինչին գրական հայերենի բառապաշարը, Ե., 2001:
Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Մինչին հայերենի բառարան, Ա-Բ, Ե. 1987 - 1992:
Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981:
Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:
Ղափանցյան Գր., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939:
Ղափանցյան Գր., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Ե., 1961:
Մադաթյան Ք., Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985:
Մարգարյան Ալ., Գորիսի բարբառը, Ե., 1975:
Մարկոսյան Ռ., Արաբատյան բարբառ, Ե., 1989:

Մեժունց Բ., Շամշադին - Դիլիջանի խոսվածքը, Ե., 1989:
Մեյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978:
Միքայելյան Ժ., Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն), Ե., 2009
Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Ե., 1953:
Մուրադյան Հ., Կաքավաբերդի բարբառը, Ե., 1967:
Մուրադյան Հ., Կարճևանի բարբառը, Ե., 1960:
Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Ե., 1982:
Մուրադյան Մ., Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայկերենի բարբառագիտական ատլաս, 1, Ե., 1982:
Մուրադյան Մ., Շատախի բարբառը, Ե., 1962:
Պետոյան Վ., Սասունի բարբառը, Ե., 1954:
Պողոսյան Ա., Հադրութի բարբառը, Ե., 1965:
Ջահուկյան Գ., Լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1960:
Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Ե., 1974:
Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:
Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
Ջահուկյան Գ., Ջրույցներ հայոց լեզվի մասին, Ե., 1992:
Ա.Սարգսյան, Հայոց լեզվի բարբառային ատլաս, Պրակ Ա, Ե., 2008:
Վարդանյան Ա., Նախիջևանի բարբառային քարտեզը, Վիեննա, 2000:
Зиндер Л., Общая фонетика, Москва, 1979:
Лайонз Дж., Введение в теоретическую лингвистику, Москва, 1978.
Мсерианц Л., Этюды по армянской диалектологии, I. Сравнительная фонетика мушского диалекта в связи с фонетикою Грабара, Москва, 1897.
Новое в лингвистике, выпуск V, М., 1970.
Общее языкознание (Внутренняя структура языка), М., 1972.
Трубецкой Н., Основы фонологии, Москва, 1960.
Vaux Bert, The Phonology of Armenian, Clarendon press, Oxford, 1998.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզուներ

արաբ. – արաբերեն
գրբ. – գրաբար
թրք. – թուրքերեն
միջ. հյ. – միջին հայերեն
պհլ. – պահլավերեն
պրսկ. – պարսկերեն
ռուս. – ռուսերեն
քրդ. – քրդերեն

Հայ բարբառներ

Ագլ. – Ագուլիս
Ալշ. – Ալաշկերտ
Ախց. – Ախալցխա
Ակն. – Ակն
Ասլ. – Ասլանբեկ
Աստրխ. – Աստրախան
Ար. – Արարատ
Բ. – Նոր Բայազետ
Գոր. – Գորիս
Դ. – Դիադին
Երև. – Երևան
Զթ. – Զեյթուն
Թբ. – Թբիլիսի
Խ. – Խոյ-Մարաղա
Խրբ. – Խարբերդ
Կր. – Կարին
Հդրթ. – Հադրութ
Հճ. – Հաճըն
Համշ. – Համշեն
Ղրբ. – Ղարաբաղ
Մլթ. – Մալաթիա
Մկ – Մոկք
Մղր. – Մեղրի
Մշ. – Մուշ
Մրղ. – Մարաղա
ՆՆխ. – Նոր Նախիջևան
Շմ. – Շամախի
Ոզմ. – Ոզմ
Պլ. – Պոլիս
Ջղ. – Ջուղա
Ռ. – Ռոդոսթո
Սեբ. – Սեբաստիա
Սլմ. – Սալմաստ
Սչ. – Սուչավա
Սսն. – Սասուն
Սվեդ. – Սվեդիա
Վն. – Վան
Տիգ. – Տիգրանակերտ
Ուրմ. – Ուրմիա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք.....3

ՄԱՍ 1

Հայ բարբառների ուսումնասիրության մի քանի հարցերի շուրջ.....4
Բարբառի ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ.....14
Ընդհանուր հայերենյան լեզվական հատկանիշները բարբառներում..21
Տարբերակայնությունը իբրև բարբառի կարևոր հատկանիշ.....29

ՄԱՍ 2

Ա. Ձայնավորի դրսևորումները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը».....37
Հ ~ Ø համապատասխանությունը հայերենի բարբառներում.....63
Հայերենի բարբառներում ցուցական դերանունների դրսևորման առանձնահատկությունների մասին.....76
Բայի սեռը Բայազետի բարբառում.....95
ԵՄ բայը Բայազետի բարբառում.....108
Ոսոսվածքային առանձնահատկություններ Բայազետի բարբառում.114

ՄԱՍ 3

ՄԵՍՐՈՊՅԱՆ Է, Ե ԳՐԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ.....121
Նախաբան.....121
1. Հայ լեզվաբանական միտքը մեսրոպյան այբուբենի է, ե գրերի հնչյունական արժեքի և ուղղագրական յուրահատկությունների մասին.....123
2. է, ե գրերի ուղղագրական յուրահատկությունները դրաբարում և դրանց պատճառաբանվածությունը.....132
2.1. է, ե գրերի բաշխումը ըստ բառային դիրքերի.....133
2.2. է, ե գրերի դրսևորումները արմատական շեշտակիր փակ վանկում.....142
3. Գրաբարյան է, ե գրերի հնչյունական համապատասխանությունները բարբառներում.....153
4. Գրաբարյան է, ե գրերի հնչյունական արժեքները.....171
5. է և ե երկբարբառակերպների հնչյունափոխությունը հայերենում.....179
5.1. է, ե երկբարբառակերպների՝ շեշտի հետ կապված հնչյունափոխությունը.....179
5.2. է, ե երկբարբառակերպների պատմական հնչյունափոխությունը.....182

5.3. է, ե տառերի դրության չեղումները և երկբարբառակերպների փոփոխությունների արտացոլումը դրանցում.....200
Եզրակացություններ.....211
Резюме.....214
Sumary.....218
Բառացանկ է, ե ունեցող բառերի
(Գրաբար – Վանի բարբառ – Բայազետի բարբառ).....221
Օգտագործված գրականություն.....226
Համառոտագրություններ.....229

ՎԻԿՏՈՐ ԼԻՊԱՐԻՏԻ ԿԱՏՎԱԼՅԱՆ

ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВИКТОР ЛИПАРИТОВИЧ КАТВАЛЯН

ВОПРОСЫ АРМЯНСКОЙ ДИАЛЕКТОЛОГИИ

На армянском языке
Ереван "Айастан" 2014

Խմբագիրը՝ Վահագն Սարգսյան
Համակարգչային մակետը՝ Տաթևիկ Գրիգորյանի
Կազմի ձևավորումը՝ Սոնա Մազաքյանի

Տպագրությունը՝ «Եգեա» տպագրատան



Ստորագրված է տպագրության՝ 03.11.2014թ.:
Չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 14.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 200:
Գինը՝ պայմանագրային:

«Հայաստան» Հրատարակչություն. Երևան, Իսահակյան 28

[2500 տ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0465827

A II
102862